

ԲԱՊԴՐԱՏՈՒԻՆԵՐ

272

Սոյն հատորը կը հրատարակուի
հովանաւորութեամբ Ա.ՄՆ-ի Արեւելեան շրջանի
եւ
Գանատայի Կիլիկեան Թեմի Առաջնորդ
Բարձրաշնորհ Տ. Մեսրոպ Արբեպս. Աշճեանի
եւ
մեկենասութեամբ՝
տէր եւ տիկին Քարլ եւ Էմմա Սողոյեաններու

РАФАЭЛ МАТЕВОСЯН

БАГРАТУНИ

ИСТОРИКО - РОДОСЛОВНАЯ ЭНЦИКЛОПЕДИЯ

RAFAEL MATEVOSSIAN

THE HOUSE OF BAGRATOUNI

HISTORIC - GENEALOGICAL ENCYCLOPAEDIA

ИЗДАТЕЛЬСТВО '' АНАИТ'' 1997 '' ANAHIT '' PUBLISHERS

ՌԱՖԱԵԼ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ԲԱԳՐԱՏՈՒՆԻՆԵՐ

ՊԱՏՄԱ - ՏՈՀՄԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՆՐԱԳԻՏԱՐԱՆ

30020



ԳՐԱԴԱՐԱՆ
Բ
11-7 ԱՄՍՈՑ

"ԱՆԱՀԻՏ" ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, 1997

ԳՄԴ63·3(2Հ)g2
Մ 151

Խմբագիր՝ Ա.Ս.ՈՍԿԱՆՅԱՆ

ՄԱԹԵՎՈՍՅԱՆ Ռ.Ի.
Մ 151 Բագրատունիներ, պատմա-տոհմաբանական հանրագիտարան /խմբ.՝ Ա.ՈՍԿԱՆՅԱՆ/-եր.: «Անահիտ»:1997.- 136 էջ, 52 լուսանկ., 8 գուն. պատկեր:

Մ 0503020913
710(01) - 97 97

ԳՄԴ 63·3(2Հ) g2

©Ռ.Մաթևոսյան,1997
All rights reserved

ԱՌԱՋԱԲԱՆ

Հասարակության հետաքրքրությունը մեր ժողովրդի հեռավոր և մոտ անցյալի, նրա մշակութային արժեքների հանդեպ զգալիորեն աճել է, իսկ հանրամատչելի հանրագիտարանների փոքրաթվակազմ հոդվածները միայն մասամբ են բավարարում այդ պահանջը: Այդ առումով մասնագիտական-թեմատիկ հանրագիտարանների լույս ընծայումը /ինչպես հումանիտար, այնպես էլ տեխնիկական գիտությունների գծով/ թելադրված է այսօրվա գիտատեխնիկական առաջընթացի պահանջով:

Ընդհանուր բնույթի հանրագիտարաններում անհնար է անդրադառնալ նեղ մասնագիտական հարցերին /գործիչ, հաստիտուտ, իրադարձություն/, մինչդեռ դրանց վերաբերող տեղեկությունները անհրաժեշտ են մասնագետներին, ինչ խոսք, կարող են հետաքրքրել նաև ընթերցող լայն շրջաններին:

Դեռ ավելին. մի կողմից գիտության տվյալ բնագավառի վերջին շրջանի հետազոտությունների արդյունքները, նոր մոտեցումները չեն արտացոլված համահավաք հանրագիտարաններում, մյուս կողմից՝ նույնիսկ թեմատիկ /ասենք պատմության/ հանրագիտարանը ի վիճակի չէ բավարար խորությամբ ընդգրկելու բոլոր կարևոր իրադարձությունները, որոնք տեղի են ունեցել հայ ժողովրդի պատմության երեքհազարամյա ժամանակաշրջանում: Այդ հանգամանքը հուշում է, որ թեմատիկ /տվյալ դեպքում Հայաստանի պատմությանը վերաբերող/ հանրագիտարանները պետք է լինեն ընդհանուր բնույթի /բազմահատոր/ և այն համալրող ավելի նեղ մասնագիտական բնույթի /միահատոր/, որևէ դարակազմիկ հիմնախնդրի նվիրված հանրագիտարաններ: Մեր կարծիքով, այդպիսի հիմնախնդիրներ են «Հայ ժողովրդի ծագումը», «Ուրարտու» և այլն:

Մասնագիտական թեմատիկ հանրագիտական գրականության տարատեսակներից են առանձին արքայատոհմերին կամ իշխանատոհմերին նվիրված հանրագիտարանները: Այդպիսի տոհմերից գիտական հետազոտությունների այսօրվա վիճակով առաջնությունը պատկանում է Բագրատունիներին: Քանի որ շատ մանրակրկիտ ուսումնասիրված է նրանց ինչպես գահակալության, այնպես էլ անկման շրջանների գործունեությունը, մինչդեռ մյուս արքայատոհմերինը /Երվանդունիներ, Արտաշեսյաններ, Արշակունիներ/ լուսաբանվում է միայն գահակալության ժամանակահատվածների առումով: Թեպետ կան հավաստի փաստեր, որ թագավորությունն ընկել է, բայց տոհմը շարունակել է գոյատևել: Այսպես, օրինակ, Վահան Մամիկոնյանի բանակում ծառայող պատմիչ Ղազար Փարպեցին հիշատակում է Ներսես Երվանդունի իշխանին /մեկը Ատոմյան նահատակներից/: Այսպիսի փաստեր կան նաև Արտաշեսյանների և Արշակունիների մասին:

Բագրատունիները այդ տեսանկյունից շատ ավելի բախտավոր եղան: Նրանց պատմական ուղու գծագիրը հոծ է /իհարկե, աննշան խզումներով/ մ.թ.ա. VIIդ. մինչև մ.թ. XIդ., իսկ Կյուրիկյան-Բագրատունիներինը՝ ավելի հոծ և ավելի երկար: Դրանում մեծ ծառայություն ունեն հայ պատմաբանասիրության անվանի ներկայացուցիչներ Միքայել Չամչյանը, Ղուկաս Ինճիճյանը, Ղևոնդ Ալիշանը, Մաղաքիա Օրմանյանը, Նիկողայոս Ադոնցը, Լեոն, Հակոբ Մանանդյանը, Հովսեփ Օրբելին: Օտարներից՝ Նիկողայոս Մառը, Մարի Բրոսեն, Յոզեֆ Մարկվարտը և ուրիշներ: Ժամանակակից գիտնականներից պետք է նշել արտասահմանում աշխատող պրոֆ. Կիրիլ Թումանովին:

Մեծ դրվատանքի են արժանի հայ պատմաբանների հետազոտական աշխատանքները, որոնք կատարվել են Հայաստանում վերջին տասնամյակների ընթացքում: Այդ աշխատանքներն ամփոփվել են «Հայ ժողովրդի պատմության» ակադեմիական հրատարակության 1-3 հատորներում:

Ներկա հատորում հեղինակը փորձել է շարադրել Բագրատունիների պատմությանը վերաբերող նյութը՝ սկսած տոհմի ծագումից մինչև XIIIդ.:

Հատորը բաղկացած է 7 բաժիններից, փոքր հավելվածից և տոհմածառից:

Բաժիններից առաջինը անձնանունների հոդվածաշար է: Այստեղ հոդվածներ են

տրված տոհմի այն գործիչների մասին, որոնք պետական կամ ռազմական ոլորտում այս կամ այն չափով կարևոր դեր են կատարել:

Բաժինը՝ ըստ դարաշրջանների տրոհված է ենթաբաժինների, որոնցից յուրաքանչյուրի մեջ դարաշրջանի սահմաններում անունները տրված են այբբենական կարգով:

«Անձնանուններ» բաժնում տեղ չգտած անձնանունները նշված են «Տոհմածառի» մեջ:

Հատորի երրորդ մասը /բաժիններ 5--7, Հավելված/ բաղկացած է մի քանի ծավալուն բաժիններից, որոնց նյութը վերաբերում է Բագրատունյաց Հայաստանի ժամանակաշրջանում Բագրատունիների գործունեության տարբեր ոլորտներին:Այս բաժիններում նյութը տրված է թեմատիկ սկզբունքով, ոչ այբբենական կարգով և ըստ կարևորության: Տոհմաբանական ուսումնասիրությունը ամբողջական չի լինի, եթե չտրվի տոհմի ազգաբանական աղյուսակը «Տոհմածառը», առանց որի հնարավոր չէ ամբողջացնել տոհմի գործունեության առանձին փուլերը, ծյուղավորումը, տոհմի գոյատևման ժամանակագրական շրջանակները և այլն:

Բագրատունյաց տոհմի ամբողջական տոհմածառը առաջինը կազմել է Ռուսաստանի կայսերական ակադեմիայի աշխատակից Մարի Բրոսեն դեռևս 1844թ. (Bulletin de l'Acad. Imper., I, 1844), ապա 1851թ. (VIII-XIIդդ.): Ավելի ուշ /1895/ գերմանացի արևելագետ Ֆ.Յուստին վերահրատարակել է Բրոսեի կազմած ամբողջական տոհմածառը: Այնուհետև գերմանացի նշանավոր արևելագետ-հայագետ Յ. Մարկվարտը Բագրատունիներին նվիրված ուսումնասիրության մեջ / 1903/ կազմել է տոհմածառ, որն ընդգրկում է VI-IXդ. կեսերը: Հաջորդը՝ Ներսես Ակինյանը 1930թ. կազմել է V-IXդդ. տոհմածառը /450-850/, վերջապես Կ.Թումանովը «Հայաստանի Որոնդյանները» աշխատության մեջ /1963՝ անգլերեն, 1967թ. թարգմանաբար հայերեն/ կազմել է տոհմածառ, սկսած 314թ. մինչև VIIIդ. վերջերը:

Մենք փորձ ենք անում ներկայացնել լրացված, ամբողջական տոհմածառ սկսած մ.թ.ա. VIIIդ. /Ուրարտուի շրջան/ մինչև XIIIդ. /Բագրատունի-Կյուրիկյանների վերջին շրջանը/:

Օգտվել ենք նշված գիտնականների կազմած տոհմածառերից, կատարելով անհրաժեշտ լրացումներ և ուղղումներ: Բագրատունիների ճյուղավորումների «ծառերը» նպատակահարմար ենք գտել տալ գլխավոր աղյուսակից զատ, տոհմածյուղերին հատկացված հոդվածներում:

Սույն աշխատությունը հեղինակային բնույթի հանրագիտարան է, ի տարբերություն ավանդական հանրագիտարանների սկզբունքի, հեղինակը առանձին դեպքերում արտահայտում է իր կարծիքը կամ դիտողությունները որոշ հարցերի շուրջ, երբ գտնում է անհրաժեշտ:

Աշխատության թեմատիկ բաժինների հոդվածները ընտրված են նրանց կարևորության աստիճանով՝ տվյալ պատմաշրջանի որևէ իրադարձությունը կամ երևույթը բացատրելու համար:

Տոհմաբանական հանրագիտարան մեզանում հրատարակվում է առաջին անգամ, և, չնայած հեղինակը աշխատել է ընդգրկել բոլոր հանգուցային կարևոր հարցերը, այնուհանդերձ, հնարավոր են բացթողումներ: Սակայն հեղինակը հուսով է, որ այս հանրագիտական հատորը օգտակար կլինի ընթերցողներին՝ և առանձնապես ոչ մասնագետ ընթերցողին՝ ավելի մոտիկից առնչվելու Հայաստանի հնագույն նախարարական-արքայական տոհմի պատմությանը, նրա կատարած ազգօգուտ գործերին և ճակատագրին:

Վերջում ցանկանում ենք նշել, որ Բագրատունիների վերջին շառավիղ Կյուրիկյանների ասպարեզից հեռանալուց հետո Բագրատունյաց տոհմի ներկայացուցիչները կարող էին գոյատևել այլ ազգանվան տակ: Պետք է որոնել նրանց հաջորդներին:

ԲԱԺԻՆ I

ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐ

Ա. ՈՒՐԱՐՏԱԿԱՆ ՇՐՋԱՆ

1. ԲԱԳԱԴԱՏԻ, Մանա /Մաննա/ երկրի թագավոր (VIIIդ. վերջ, մ.թ.ա.): Սկզբնապես թագավորել է Մանայի Ումիլդիշի շրջանում, ապա 716թ. ապստամբել Մանայի թագավոր Ազա Բ-ի դեմ /որը հավանաբար իր հայրն էր/ և գրավել գահը: Սակայն Ասորեստանի թագավոր Սարգոն Բ-ն, որի դաշնակիցն էր Ազան, հարձակվեց Մանայի վրա և սպանեց Ազա Բ-ին, իսկ գահը հանձնեց վերջինի եղբայր Ուլլուսունուին: Սարգոնի գրած արձանագրությունից երևում է, որ Մանա երկիրը գտնվել է Ուրարտուի և Ասորեստանի ռազմաքաղաքական պայքարի ոլորտում: Չնայած Ուլլուսունուն Սարգոնի դրածոն էր, նա շուտով ապստամբեց Ասորեստանի դեմ, բայց պարտվեց:

Ռուսա Ա թագավորը ծանր պարտություն կրեց, ավերվեց ամբողջ երկիրը, Մուսասիր /Արդինի/ սրբավայրը, իսկ Ռուսան ինքնասպան եղավ:

Սարգոնի արձանագրության շնորհիվ հայտնի են Մանայի թագավոր Բագադատին, նրա հայրը, պապը և եղբայրը /Ազա, Իրանզու, Ուլլուսունու/: Գր. Ղափանցյանը հանգում է այն եզրակացության, որ Սեբեոսի հիշատակած Բագարատ Փառազյանը, որպես Բագրատունիների նահապետ և անվանադիր, ունի մանայական ծագում, նկատի ունենալով Ռուսա Ա-ի /735-713 մ.թ.ա./ ժամանակակից մանայական թագավոր Բագադատիին: Հնչյունաբանորեն Բագարատը ստացվել է Բագադատից: Այսպիսով, ի դեմս Բագադատի և նրա ազգակիցների մեզ ներկայանում են Բագրատունյաց տոհմի հնագույն չորս ներկայացուցիչները:

Գրկ. *Գր. Ղափանցյան*, Ուրարտուի պատմությունը, եր., 1940, էջ 203, 204, 218, 219: *Ասյան Շահնազարյան*, Բագրատունյաց նախարարական տոհմի ծագումը: ՊՊԹ «Աշխատություններ», հ.1, եր., 1948, էջ 190-192:

2. ԲԱԳԲԱՐՏՈՒ /Բագմաշտու, Արուբանի/, Ուրարտուի կազմի մեջ մըտնող Մուսասիր երկրի գլխավոր աստվածությունը, պտղաբերության, արհեստներն ու արվեստները հովանավորող աստվածուհի: Մուսասիրն Ուրարտուին միացվելուց հետո վերջինի գլխավոր աստված Խալդեն դարձել էր նաև Մուսասիրի գլխավոր աստվածը, իսկ տեղական աստվածուհի Բ-ն՝ նրա կինն ու կանացի կրկնօրինակը: Բ-ի պատկերը հայտնի է հնագիտական գտածոներից /ուրարտական ոսկերչական իրեր, բրոնզե թիթեղներ և այլն/:

Թոփրախ-Կալեում գտնված ոսկե մեդալյոնի վրա պատկերված է գահին բազմած աստվածուհի, ձեռքին կենաց ծառի ճյուղ, նրա առջևում աղոթող կին: Նման պատկեր ունեն նաև Թեյշեբաինիում գտնված արծաթյա մեդալյոնները, ընդ որում նրանցից մեկում աստվածուհու գլխավերևում տեղադրված են լրացուցիչ նշաններ /«դիֆֆինիտներ»/՝ աստղ և կիսալուսին: Ռ-ն պատկերվում էր նաև Խալդեի հետ միասին: Վանում գտնվել է Ռ-ի բրոնզե արձանիկը /պահվում է ՀՀ Պատմության թանգարանում/: Բնորոշ է, որ արձանիկում աստվածուհու զարդերից է կախիկ, որի կոթին քանդակված է առյուծ: Առյուծը Խալդեի գաղափարագիրն էր, միաճգամայն օրինաչափ է նույն գաղափարագրի պատկերը նրա կրկնօրինակի զարդերում: Ուրարտական թագավորների խորհրդանիշերից էին նաև կենաց ծառն ու սկավառակը /գունդը/, Թոփրախ-Կալեում գտնված կախազարդ պահպանակի վրա պատկերված է Ռ-ն, աղոթող կին և զոհաբերվող այծ, պահպանակի եզրամասերում, աստվածուհու երկու կողմից, տեղադրված են կենաց ծառեր:

Ռ-ի պաշտամունքի կենտրոնը եղել է Մուսասիր /Արդինի/ քաղաքի Խալդեի տաճարը, այստեղ պահվում էին ուրարտական թագավորների գանձերը, դրված էին Խալդեի և Ռ-ի արձանները, այդ թվում ոսկե կնքամատանի աստվածուհու հրամանները կնքելու համար /հայտնի է Սարգոն Բ ասորեստանյան թագավորի արձանագրությունից/: Այդ մատանին ամենայն հավանականությամբ օգտագործվել է որպես Մուսասիրի թագավորների կնիք, իսկ հետագայում նվիրաբերվել աստվածուհուն: Նման կնիքներում պատկերվում էին աստվածուհու /թագավորի/ պատկերը կամ նրա խորհրդանիշը, ուստի կնքամատանու պատկերը պետք է համընկներ մեդալյոնների պատկերի հետ: Ուսումնասիրողների մեծ մասի կարծիքով «Բագբարտու» դիցանունը իրանական ծագում ունի, կապվելով «Բագ»՝ աստված բառի հետ, իսկ մյուս վանկը տարբեր հեղինակներ բացատրում են տարբեր ձևով: Մասնավորապես Գր. Ղափանցյանը անունը կարդում է Բագբարտու /Բագբարբու/ և վերագրում նրան իրանական ծագում, բացատրում այն որպես «bag» /«բաժ», բաժանել/ և «bar» /«կրել, բերել»/ և թարգմանում՝ «բաժինը կրող»: Մյուս ուսումնասիրողները Բագբարտու անունը բացատրում են «bag» «աստված»/ և «bar» /«բերք»/, իսկ լրիվ անունը՝ «պտղաբերության աստվածուհի» ձևով:

Իրանական լեզվական ազդեցությունը բացատրվում է /ինչպես ցույց է տվել Ն. Ադոնցը/ Մուսասիրի և իրանական ցեղերի հարևանությամբ:

Ն. Ադոնցի վարկածի հետևությամբ Մուսասիրի տիրակալները պետք է լինեին այն ազնվական տոհմի ներկայացուցիչները, որոնք անտիկ շրջանում հանդես էին գալիս որպես Բագբարտունիներ: Վաղ միջնադարում Բագբարտունիների տիրույթները գտնվում էին Հայաստանի հարավային մասում՝ Անգեղ տուն, և Ատրպատականին հարող շրջանները: Անկասկած, նրանց էր

պատկանում նաև Մանա երկիրը /հանգամանք, որի վրա մինչ այժմ ուշադրություն չի դարձվել/, քանի որ Մանայի թագավոր Բագադատին Բագբարտունյաց ցեղից էր և այսօրվա վիճակով տոհմի նահապետը: Իսկ Մանան և Մուսասիրը անմիջական հարևան «երկրներ» էին, և նրանց բնակչության ցեղակցությունը միանգամայն հավանական է: Մենք «Բագբարտու» անունը բացատրում ենք որպես Բագ /բ/ ար-տու՝ «ար»-ի աստված: Հնչյունաբանական օրինաչափությամբ, ինչպես Ուր-ար-տու-ից առաջանում է Ար-ար-ատ՝ Արարատ երկրանունը և այլ տեղանուններ, այնպես էլ Բագ-բար-տու-ից առաջանում է Բագ-ար-ատ /Բագարատ/ - Բագրատունի անունն ու ազգանունը: Նրանում «ունի» ուրարտական վերջածանցը վկայում է տոհմի ուրարտական ծագումը: Նման եզրակացության համար լրացուցիչ փաստարկներ են հանդիսանում ուրարտական /հին Հայաստանի սեպագիր/ և հաջորդ դարաշրջանների հերալդիկ խորհրդանշանները: Գառնիում գտնված հելլենիստական դարաշրջանի քարե կնիքի /գեմմայի/ վրա պատկերված է գահին բազմած կին մարդու մարմնով և առյուծի գլխով: Ձեռքում բռնած է կենաց ծառի ճյուղ, որից աջ քանդակված է ոճավորված գավազան, գլխավերևում գնդաձև սկավառակ:

Հնագույն ժամանակներում աստվածները պատկերվում էին կենդանիների կերպարանքով, ապա՝ մարդու մարմնով և կենդանու գլխով: Աստիճանաբար աստվածները ընդունում են մարդու կերպարանք, իսկ նրանց նախատիպ կենդանիները հարատևում են որպես տվյալ աստվածությանը նվիրված կենդանի /օր.՝ Թեյշեբա աստծուն՝ ցուլը, Խալդեին՝ առյուծը և այլն/: Այդ կենդանիների պատկերները հանդիպում են ուրարտական կնիքների, ծոնական առարկաների, սպառազենի և այլ առարկաների վրա: Գառնիի գեմմայի պատկերը կրկնօրինակում է Բագբարտուի ուրարտական մեդալյոնների կերպարը: Նույնատիպ են ինչպես կեցվածքը /գահի հետ/, այնպես էլ մանրամասները /կենաց ծառ, գավազան, գլխավերևի գունդ-սկավառակը/: Կնիքը պատկանել է ժամանակի ազնվական տոհմերից որևէ մեկին և կրել է այդ տոհմի խորհրդանիշը: Կնոջ առյուծատիպ գլուխը /առյուծ գաղափարագիր/, սկավառակը և մյուս դեֆինիտները նմանեցնում են Գեմմայի կնոջ կերպարը ուրարտական աստվածուհուն, սակայն Գեմմայում նախկին աստվածության կերպարը վերարտադրված է հնագույն պատկերացումների ազդեցությամբ: Այդ պատկերացումները դեռևս գործում էին հելլենիստական դարաշրջանում: Մենք գտնում ենք, որ Գառնիի քարե կնիքի վրա պատկերված է Բագբարտուի կերպարը և որ այդ կնիքը պատկանել է ուրարտական շրջանից հելլենիստական շրջան հարատևած ազնվական տոհմին: Այդ տոհմը պետք է լիներ Բագրատունին: Տոհմը ուրարտական ծագում ունի, իսկ Բագբարտու աստվածությունը հանդիսանում է տոհմի անվանադիր:

Գրկ. *Б. Пиотровский,* Искусство Урарту, М., 1962; *Э. Грантовский,* Ранняя история иранских племен Передней Азии, М., 1970. *Գր. Ղափանցյան,* Ուրարտուի պատմությունը, եր., 1940, *Նիկողայոս Ադոնց,* Հայաստանի պատմություն, եր., 1972: *Ս. Համյանկյան,* Վանի թագավորության պետական կրոնը, եր., 1990:

բ. ԱՆՏԻԿ ՇՐՋԱՆ ԵՎ ՄԻՋՆԱԴԱՐ

1. **ԱԽՇԱՀՐՍԱՐՏ** - անտիկ շրջանում առ այսօր հայտնի առաջինը Բագրատունյաց տոհմից: Արտաշես Ա-ի օրոք (189-160մ.թ.ա.) թագադիր ասպետ, **ՆԻԿԵՓՈՐ** թագադիրի հայրը:

Գրկ. *А. Периханян,* Арамейская надпись из Зангезура, ՊԲՀ, 1965, հ.4: Հայ ժող. պատմ., հ. 1, 1971:

2. **ԱՍՈՒԴ** /Աշոտ/ (Ի.մ.թ.ա.), թագադիր ասպետ Տիգրան Մեծ Բ-ի օրոք, հրաժարվեց կատարել թագավորի պահանջը և երկրպագել կուռքերին, այդ պատճառով ենթարկվեց խոշտանգման:

3. **ԲԱԳԱՐԱՏ** (Ի.մ.թ.ա.), ասպետ, Տիգրան Մեծի զորավար, Սելևկյաններից ևվաճված Ասորիքի կառավարիչ /ստրատիգ/, Անտիոք Նստավայրով: Հայ-հռոմեական պատերազմի ժամանակ, երբ զորավար Լուկուլլոսը ներխուժել էր Հայաստան, օգնության հասավ Տիգրանին: Ն. Ադոնցը առաջինը Բ-ին համարեց Բագրատունյաց տոհմի նահապետ և այդպես էր կարծվում մինչև 1965թ. Զանգեզուրի արամեական արձանագրության հայտնաբերումը /տես «ԱԽՇԱՀՐՍԱՐՏ» և «ՆԻԿԵՓՈՐ» հոդվածները/:

Գրկ. *Նիկողայոս Ադոնց,* Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, եր., 1987:

4. **ԲԱԳԱՐԱՏ-ՇԱՄԲԱՏ**, պատմահայր Մովսես Խորենացին հիշատակում է Շամբատ /Սմբատ/ անունով, որին հայոց թագավոր Հրաչյան ազատել է Բաբելոնի թագավոր Նաբուգոդոնոսորի գերությունից և բնակեցրել Հայաստանում:

Գիտնականների կարծիքով նշված Շամբատը համապատասխանում է Սեբեոսի /Անանունի/ հիշատակած Բագարատ Փառազյանին, որը ժամանակակից էր Տրդատ Ա Արշակունի թագավորին: Բ-Շ-ն, հետևելով Ադիաբենի թագավորներին, ընդունել էր նախնական քրիստոնեության ուսմունքներից մեկը, որը նույնացվում էր Մովսիսական /հրեական/ կրոնի հետ: Բ.-ն մասնակցել է Տրդատ Ա-ին Մեծ Հայքի թագավոր օծելու արարողությանը որպես թագադիր ասպետ, ապա նշանակվել երկրի արևմտյան կողմի կուսակալ, որտեղ «հայերեն լեզուն վերջանում է» /այն է՝ Անգեղ տուն, Տմորիք, Կորճայք, Մարաց ամուր աշխարհ, Գողթն, Պարսպատունիք և Սպեր գավառներում/:

Գրկ. Iranisches Namenbuch von Ferdinand Justi, Marburg, 1895, էջ 57, 58: Հայ ժող. պատմ., հ.1, եր., 1971, էջ 747, 835-836, 880: *Հ. Մելիքյան,* Ադիաբենի պետությունը և Հայաստանը, եր., 1980, էջ 129: Р. Манасерян, К вопросу о вероисповедании населения городов Армении (Iв. до н.э.-IVв. н.э.), ՊԲՀ, 1989, N 2:

5. **ԲԱԳԱՐԱՏ**, որդի Փառնավազի, Արամենակի սերնդից, սրա եղբայրն էր Բագամը, որդին՝ Բյուրատր, թոռը՝ Ասպատր: Բ-ի որդիները ժառանգեցին հայրական տիրույթները արևմուտքում, այն է՝ Անգեղ տունն: Հիմնվում է Բագրատունիների Անգեղ տան իշխանությունը:

Գրկ. Պատմութիւն Սեբէոսի, աշխատասիրությամբ Գ. Աբգարյանի, եր., 1979

6. **ԵՆԱՆՈՍ**, (մ.թ. Ի.) թագակապ ասպետ, ըստ Խորենացու Միջագետքի կառավարիչ, փրկագին ստանալու պայմանով ազատ արձակեց Տիգրան Մեծի ժամանակ գերված հրեաների քահանայապետ Հիրկանոսին, որը պետք է հանձնվեր թագավորին: Սակայն Հիրկանոսը Հրեաստանում սպանվեց, իսկ Արշամ թագավորը պատվից զրկեց Ե-ին և բանտ նետեց: Գնթունյաց տոհմի նահապետը ամբաստանեց Ե-ին, որի պատճառով Ե-ը ենթարկվեց խոշտանգումների: Ի վերջո նա կատարեց թագավորի պահանջը, հրաժարվեց հրեական կրոնից և երկրպագեց արեգակը: Դրանից հետո նա վերահաստատվեց նախկին պաշտոնում, բայց հետացվեց Միջագետքից:

Ուներ Սեներքիա անունով եղբայր և երկու որդի:

Գրկ. *Մովսես Խորենացի,* Հայոց Պատմություն, II, ԻԴ

7. **ՆԻԿԵՓՈՐ**, անտիկ շրջանում առ այսօր հայտնի առաջին Բագրատունի Ախշահրսարտի որդին, թագադիր ասպետ Արտաշես Ա թագավորի օրոք: Հիշատակվում է 1965թ. Զանգեզուրում հայտնաբերված արամեերեն արձանագրության մեջ, որը գրված է Արտաշեսի օրոք գյուղական համայնքների միջև տեղադրվող սահմանաքարի վրա:Նույնն է **ՍՄԲԱՏ ԲԱԳՐԱՏՈՒՆՈՒ** հետ /N 8/:

Գրկ. *А. Периханян,* Арамейская надпись из Зангезура, ՊԲՀ, 1965, N 4:

8. **ՍՄԲԱՏ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ** (Ի.մ.թ.ա.), Արտաշեսյան պետության խոշոր զինվորական և պետական գործիչ, Արտաշես Ա թագավորի (189-160մ.թ.ա) հավատարիմ զինակիցը, թագադիր ասպետ: Արտաշեսի մանկության ժամանակ նրա դայակն էր, երվանդ Վերջինի հալածանքների պատճառով փախցրեում է նրան Իրան, ապա երկուսով վերադառնում են Հայաստան և պատերազմում Երվանդի դեմ: Ս.Բ-ն պարտության է մատնել Երվանդի բանակը և գրավել մայրաքաղաք Երվանդաշատը, ապա գրավել է Բագարանը և սպանել քրմապետ Երվազին: Նրա օժանդակությամբ գահակալում է Արտաշեսը, ինքը դրվում նոր հարստության /դինաստիայի/: Ս.Բ-ն եղել է թագավորական տան և պետության հուսալի պատվարը, ճնշել է Փայտակարանում /«Կասբից երկիր»/ ծագած ապստամբությունը, վրաց արքայի գերությունից

ազատել է արքայորդի Զարեհին: 168 մ.թ.ա. Մեծ Հայքին է միացրել /վերամիավորել/ Սելևկյանների զավթած Տմորիքը: Ծառայությունների համար արժանացել է մեծ պարգևների /ստացել է ստրուկներ, դաստակերտներ՝ Մասիսի մերձակայքում և այլուր/: Ս.Բ-ն հիշատակվում է Արտաշեսին նվիրված ժողովրդական վեպում /արքան նրան ուղարկում է ալանների թագավորի մոտ խնդրելու արքայադուստր Սաթենիկի ձեռքը/: Գիտնականների կարծիքով, Ս.Բ. նույնանում է Զանգեզուրի արամեերեն արձանագրություններում հիշված Նիկեփորին/ «Նիկեփոր» հունարեն նշանակում է «հաղթող»/:

Գրկ. Հայ ժող. պատմ. հ. 1, 1971, էջ 516, 520, 531-532, 537-538, 547, 649, 893-895:

ՎԱՂ ՄԻՋՆԱԴԱՐ

9. ԱՍՊԵՏ, Բագրատունյաց տոհմից, հիշատակում է պատմիչ Ագաթանգեղոսը, առանց անունը նշելու: Համապատասխանում է Տրդատ Գ-ի օրոք Սմբատ ասպետին: 301թ. Գրիգոր Լուսավորչի շքախմբի կազմում ուղևորվել է Կեսարիա Գրիգորին կաթողիկոս ձեռնադրելու առիթով:

10. ԲԱԳԱՐԱՏ, ասպետ, մասնակցել է 335թ. Օշականի ճակատամարտին, որում Հայաստան ներխուժած մագքութների Սանեսան թագավորի բանակը ջախջախիչ պարտություն է կրել, իսկ Սանեսանը սպանվել է:

Գրկ. *Փավստոս Բուզանդ*, Հայոց պատմություն, III, Է:

11. ԲԱԳԱՐԱՏ ԱՍՊԵՏ, 353թ. Ներսես եպիսկոպոսի շքախմբի կազմում ուղևորվել է Կեսարիա, ուր Ներսեսը ձեռնադրվել է կաթողիկոս:

12. ՍԱՀԱԿ ԱՍՊԵՏ, Վաղարշակ Արշակունի թագավորի /Պապի որդու/ աներ, Սպերի իշխան (380-ական թթ.): 387թ. Հայաստանի բաժանումից հետո սկզբնապես Արշակ Գ-ի /արևմտյան/ մասում էր, ապա անցավ Խոսրով Գ-ի մոտ /արևելյան մասը/ և նրանից ստացավ սպարապետի պաշտոնը:

Զորքով օժանդակել է Արշակ Գ-ի հակառակորդ նախարարներին, որոնք հափշտակել էին Արշակի գանձերը և փորձում էին տեղափոխել այն Խոսրովի մոտ: Պատերազմ է ծագում Հայոց երկու թագավորների միջև, Արշակը պարտվում է:

Գրկ. *Մովսես Խորենացի*, Հայոց պատմություն,III, ԻԳ-ԻՋ:

13. ՍՄԲԱՏ ԱՍՊԵՏ, /Բագարատի որդի/, սպարապետ՝ Պապ թագավորի օրոք: Նրա առաջնորդությամբ հայոց զորքը փայլուն հաղթանակ տարավ Ջիրավի ճակատամարտում: Պարսից բանակում հայերի դեմ կռվող Մեհրուժան Արծրունին գերի է ընկնում Սմբատին: Սպարապետը նրան մահապատժի է ենթարկում, շիկացած շամփուրը պսակի ձևով դնում է գլխին և ասում. ,,Քեզ պսակում եմ, Մեհրուժան, որովհետև դու ձգտում էիր Հայոց վրա թագավորել և իմ՝ ասպետիս պարտքն է քեզ պսակել իմ հայրենի իշխանության կարգով,,:

Գրկ. *Մովսես Խորենացի*, Հայոց պատմություն, III, Է:

14. ՍՄԲԱՏ ԱՍՊԵՏ, տես Ասպետ /N9/:

V ԴԱՐ

15. ՍԱՀԱԿ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ, Սասանյանների դեմ 482-484թթ. ապստամբության /Վահանանց պատերազմ/ ղեկավարներից, Հայոց մարզպան 482թ.: Ապստամբության խնդիրն էր՝ թոթափել կախումը Սասանյան Իրանից և վերականգնել պետականությունը: 482թ., սկսելով ռազմական գործողությունները, ապստամբները կազմել են կառավարություն, Վահան Մամիկոնյանը /Վարդան Մամիկոնյանի եղբոր որդին/ նշանակվել է շարժման ընդհանուր ղեկավար և սպարապետ, իսկ Ս.Բ-ն՝ մարզպան և «տանուտեր Հայոց»: Ս.Բ-ն մասնակցել է 482թ. ապրիլին Ներսեհապատ գյուղի /Արտազ գավառ/ ճակատամարտին, որտեղ հայերը փայլուն հաղթանակ են տարել: Այդ ճակատամարտում Ս.Բ-ն հայկական բանակի կենտրոնական զորամասի հրամանատարն էր: Սակայն շուտով դրան հետևեց Ճարմանայնի դաշտի /Կուրի հովիտ/ ճակատամարտը /Հայաստանի և Վրաստանի սահմանում/, ուր Վահան Մամիկոնյանը վրաց Վախթանգ թագավորի կանչով օգնության էր գնացել նրան: Ճարմանայնի ճակատամարտում ուժերը խիստ անհավասար էին, այդ և մի քանի այլ պատճառներով ապստամբները ծանր պարտություն կրեցին, իսկ Ս.Բ-ն զոհվեց:

Ս.Բ-ն պատվիրել է պատմիչ Մովսես Խորենացուն գրելու «Հայոց պատմություն»: Շարադրանքում պատմիչը հաճախ դիմում է իր մեկենասին, պատասխան տալով նրա խնդրանքներին կամ հանձնարարականներին: Խորենացին մեծարում է մեկենասին, շեշտում, որ իրենից առաջ և իր ժամանակ ապրող Հայոց աշխարհի ցեղապետներն ու իշխանները չեն հրամայել գրելու

այսպիսի պատմական հիշատակարաններ, իսկ այժմ ինքն է /Ս.Բ-ն/ այդպիսի մարդ: Դիմելով մեկենասին, պատմիչը գրում է. ,,Ուրեմն դու պետք է ճանաչվես բոլոր քեզանից առաջ եղածներից վեհագույն և բարձրագույն գովեստների արժանավոր,,: «Պատմություն հայոցը» Մ. Խորենացին համարում է անմահ հիշատակ Ս.Բ-ին և նրա հաջորդներին:

Գրկ. *Մովսես Խորենացի,* Պատմություն Հայոց, եր., 1991, գիրք առաջին, գլ. Ա.: *Մանուկ Աբեղյան,* Հայոց հին գրականության պատմություն, գիրք առաջին, «Երկեր», հ.Գ, եր., 1968, էջ 286-291:

16. ՏԻՐՈՑ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ, 450-451թթ. Վարդանանց պատերազմի ժամանակ մարզպան Վասակ Սյունեցու համախոհներից: Հիշատակվում է մեկ անգամ պատմիչ Ղազար Փարպեցու «Հայոց պատմության» մեջ:

VI ԴԱՐ

17. ԱՇՈՏ /ԱՐՇՈՏ/ ԱՍՊԵՏ, որդի Վարազ-Տիրոց Բագրատունու, մասնակցել է 554թ. Դվինի եկեղեցական ժողովին:

18. ՊԱՊ, որդի Աշոտի /N17/, 601թ. կանչվել է Տիզբոն 6 այլ հայ իշխանների հետ պարսից Խոսրով Պարվեզ շահի կողմից և արժանացել մեծ պատիվների:

19. ՍՊԱՆԴԻԱՏ, ասպետ, մասնակցել է 506թ. /կամ 510/ Վաղարշապատի ժողովին:

20. ՎԱՐԱԶ-ՏԻՐՈՑ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ, հայր Աշոտի /N 17/:

21. ՍՊԵՐԻ ԲԱԳՐԱՏՈՒՆԻՆԵՐ

VII ԴԱՐ

22. ԱՇՈՏ, պատրիկ, Հայոց իշխան, Գրիգոր Մամիկոնյանից հետո ստանձնել է իշխանի պաշտոնը՝ 685-689թթ.,·Բագրատունիների տոհմական ուստան Դարոյնքում կառուցել է եկեղեցի: Զոհվել է արաբների դեմ մղած մարտի ժամանակ:

23. ՍՄԲԱՏ, որդի Վարազ-Սահակի /N 26/: 643թ. Ս-ից օգնություն են խնդրել արաբներից պաշարված Արծափ բերդի ապաստանյալները: Հավանաբար բյուզանդական կայսր Կոստանդինը այս Սմբատին էր նշանակել Հայոց իշխան Թեոդորոս Ռշտունու փոխարեն:

24. ՍՄԲԱՏ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ, ԲԱԶՄԱՀԱՂԹ /Խոսրով Շում/, /Քչիկ Բագրատունու որդի/, տաղանդավոր զորավար, ազդեցիկ քաղաքական գործիչ: Բյուզանդիայի հակահայ քաղաքականությունից դժգոհ հայ նախարարների հետ մտել է ծառայության պարսից Խոսրով Պարվեզ շահին, հայկական զորամասով հաղթական պատերազմներ է մղել Պարսկաստանի հյուսիսային սահմաններում քուշանների և այլ վայրկատու ցեղերի դեմ, 600-607թթ. վարել է Վրկանից աշխարհի մարզպանի պաշտոնը: Նախորդ դարերում այստեղ բռնությամբ բնակեցված Վրկանի հայկական բնակչությունը մոռացել էր մայրենի լեզուն և հավատը: Ս.Բ-ն օժանդակել էր նրանց հայկական նկարագրի վերականգնմանը: 607թ. Ս.Բ-ն արձակվել է Հայաստան և վարել Հայոց մարզպանի պարտականությունները, կրել է «տերանց զինվոր» պատվանունը, կառավարման մասնակից է դարձրել եղբայրներին՝ Գիգին և Վրթանեսին /ՎՐԹԱՆԵՍ ՔԵՐԹՈՂ/, որը կաթողիկոսի տեղապահն էր: 607թ. Դվինում հրավիրեց եկեղեցական ժողով, որը կաթողիկոս ընտրեց Աբրահամ Աղբաթացուն, միաժամանակ խիստ միջոցներ մշակեց քաղկեդոնության /Բյուզանդիայի կրոնա-քաղաքական ազդեցության/ դեմ: Ս.Բ-ն փորձել է ազդել վրաց կաթողիկոս Կյուրիոնի վրա, ստիպել նրան հրաժարվելու քաղկեդոնություն ընդունելուց և հայ եկեղեցուց անջատվելու մտադրությունից: Նա հատուկ թուղթ գրեց Կյուրիոնին, որին վերջինը խուսափողական պատասխան տվեց: Վերանորոգել է Դվինի ս. Գրիգոր եկեղեցին, որը ավերվել էր Vդ. պատերազմների ժամանակ: 608թ. շահը նրան ետ կանչեց Պարսկաստան, նորից կառավարեց Վրկանից աշխարհը, կռվեց քուշանների և այլ ցեղերի դեմ, նրա հրամանատարության տակ էին հայկական 2000-անոց զորամաս և հայ զորավարներ: Հաջագործությունների համար շահից ստացավ «Խոսրով Շում» /«Խոսրովի ուրախություն»/ պատվանունը: 610թ. Խոսրով շահը նրան հրավիրում է բնակվելու մայրաքաղաք Տիզբոնում, ուր Ս.Բ-ն մնում է մինչև կյանքի վերջը: 615թ. Տիզբոնում հրավիրվում է եկեղեցական ժողով, ուր քննվում է պարսկաճպատակ քրիստոնյաների դավանաբանական միասնության հարցը, այդ ժողովի ընթացքի և որոշումների վրա մեծ ազդեցություն է ունեցել Ս.Բ-ի դիրքորոշումը: Ս.Բ-ի աճյունը թաղված է Կոգովետ գավառի Դարոյնք /Լեոն գրում է Դարույնս/ գյուղի Բագրատունիների տոհմական գերեզմանոցում:

Գրկ. *Լեո,* Հայոց պատմություն, հ. 2, «Երկեր», հ. 2, եր., 1967, էջ 224, 228-231, 235: *Ն.Ակինյան,* Կյուրիոն կաթողիկոս Վրաց, Վե.: *Հո. Ջանփոլադյան,* Սմբատ Խոսրով-Շուամ Բագրատունի, եր., 1943:

25. ՍՄԲԱՏ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ /Մանվելի որդի/, Բյուզանդիայի դեմ ապստամբության ղեկավար: Մորիկ կայսեր օրոք /582-602/ կայսրությունը վարում էր Հայաստանի ռազմական ուժը վերացնելու, հայերին հուսադավության պարտադրելու քաղաքականություն: Նախարարների զորամասերը տեղափոխվում էին Թրակիա և այլ վայրեր, ուր նրանք ստիպված էին մասնակցելու գրեթե բոլոր սահմաններում մղվող անվերջ պատերազմներին: Կայսրության հակահայ քաղաքականությունը հանդիպում է ուժեղ դիմադրության, հայ ազնվականությունը փորձում է դիմակայել բռնություններին, նախապատրաստում է ապստամբություն: Շարժումը գլխավորում է Ս.Բ-ն: Նրա զորամասը, հասնելով Խաղտիք, ըմբոստանում է և չի շարունակում հանապարհը: Ապստամբները որոշում են պայքարել, նույնիսկ զոհվել, քան կռվել Թրակիայում: Կայսրությունը շտապ միջամտում է և արգելում դեպքերի ծավալումն ու խորացումը, կայսրը շռայլ խոստումներ է տալիս, որոնք ապակողմնորոշում են հայ զինվորներին, իսկ Ս.Բ-ն ուղարկվում է Հայաստան: Զնայած զինված ելույթ տեղի չի ունենում, այս խռովությունը նպաստում է պայքարի ծավալմանը Արևմտյան Հայաստանում: Նույն Ս.Բ-ու գլխավորությամբ նախապատրաստվում է նոր ապստամբություն, որը նպատակ է դնում վերականգնելու հայկական թագավորությունը: Սակայն ըմբոստ նախարարների միջև միաբանություն չկար, դրա պատճառներից մեկը ուժերի անհավասարությունն էր: Շարժումը պառակտվում է, ձերբակալվում են Ս.Բ-ն և մյուս ղեկավարները, այս անգամ ևս կանխվում է զինված ելույթը: Ս.Բ-ուն տեղափոխում են Կոստանդնուպոլիս, ուր պալատական դատարանի որոշմամբ նա և յոթ այլ նախարարներ պետք է կրկեսում մենամարտեին գիշատիչ գազանների դեմ: Ս.Բ-ն հաղթում է երեք գիշատիչների, այդ թվում և առյուծին, որից հետո արժանանում Մորիկ կայսեր «ողորմածության», ստանում է ներում: Նա աքսորվում է հեռավոր կողմ, ապա ուղարկվում Աֆրիկա՝ զինվորական ծառայության: Բանասերների և պատմաբանների մի մասը այս Ս.Բ-ուն նույնացնում են Սմբատ Խոսրով-Շումի հետ, մյուսները զանազանում: Տարակարծիքները ամփոփված են Վ. Իսկանյանի մենագրությունում:

Գրկ. *Վ. Իսկանյան*, Հայ-բյուզանդական հարաբերությունները IV-VIIդդ., Եր., 1991, էջ 370-394:

26. ՎԱՐԱԶ-ՍԱՀԱԿ, հայր Սմբատի /N 23/, հավանաբար որդի Սմբատ Խոսրով-Շումի:

27. ՎԱՐԱԶ-ՏԻՐՈՑ, ասպետ, որդի Սմբատ Խոսրով-Շումի, Հայաստանի մարզպան 628-632թթ.: Ատրպատականի կուսակալի թշնամության պատճառով ստիպված է եղել անցնել Տարոն, իսկ այնտեղից Կոստանդնուպոլիս: Հերակլ կայսրից ստացել է պատրիկի կոչում և այլ պարգևներ: Սակայն 635թ. մասնակցել է Հերակլի դեմ կազմակերպված դավադրությանը, անհաջողությունից հետո աքսորվել Աֆրիկա: Հերակլի մահից հետո /641/ վերադարձել է Կոստանդնուպոլիս, 645-ին փախել Հայաստան /Տայք/, դարձել հայոց իշխան, բայց շուտով մահացել է: Թաղված է Դարոյնքում: Վ.Տ-ի որդին էր Սմբատ ասպետը, որը բյուզանդական ծառայության մեջ էր Կոստանդնուպոլսում:

Գրկ. *Ն. Բասմաջյան*, Ժամանակագրական պատմություն հայոց, Կ.Պոլիս, 1914, էջ 4: *Վ. Իսկանյան*, Հայ-բյուզանդական հարաբերությունները IV-VIIդդ., էջ 442, 453, 467-468:

28. ՎԱՐԱԶ-ՏԻՐՈՑ, հավանաբար որդի Սմբատ Բագրատունու /N 23/, թոռ Վարազ-Սահակի:

VIII ԴԱՐ

29. ՍՄԲԱՏ /Բյուրատյան/, որդի Վարազ-Տիրոցի, Հայոց իշխան 691-726: VIIIդ. առաջին տասնամյակում կտրուկ փոխվում է Արաբական խալիֆայության քաղաքականությունը Հայաստանում, համեմատաբար մեղմ և գիջողական քաղաքականությանը փոխարինում են կրոնական հալածանքներն ու հարկային կեղեքումը: 703թ. ամռանը բռնկվում է ապստամբություն Հայոց իշխան Ս-ի գլխավորությամբ: Ս-ը մի խումբ համախոհներով օգնություն ստանալու համար փորձում է անցնել բյուզանդացիների մոտ: Սակայն նրանց հետապնդում է 8000-նոց արաբական մի զորամաս, որի դեմ նակատամարտ է տեղի ունենում Վարդանակերտ գյուղի մոտ /Արաքսի մոտ, Արարատ լեռան մոտակայքում/: Արաբները կատարյալ պարտություն են կրում, հաղթողները մեծ ավար են վերցնում և կայսրին ևվեր ուղարկում արաբական նժույգներ: Հաղթանակի առթիվ կայսրը Ս-ին շնորհում է կյուրապաղատի պատիվ: Դրանից հետո Ս.-ն համախոհների հետ ամրանում է Տայք նահանգի Թուխարք ամրոցում, իսկ ապստամբությունը շարունակվում է երկրի տարբեր շրջաններում: Սակայն 705թ. Սմբատը պարտություն է կրում արաբներից, նույն թվականին Նախիջևանի և Խրամ գյուղի եկեղեցիներում նենգաբար ոչնչացվում են մեծ թվով հայ նախարարներ /այդ թվում և Բագրատունիներից/ /«Նախիջևանի աղետ»/, որից հետո Ս.-ը ստիպված է լինում Տայքից անցնել բյուզանդացիների սահմանները /Փոթի նավահանգիստ/ և այնտեղ մնալ 6 տարի: 703թ. ապստամբությունը չնայած շոշափելի արդյունք չտվեց, այնուամենայնիվ նպաստեց ազատագրական պայքարի ծավալմանը: Ս-ն ուներ Աշոտ անունով եղբայր, Վասակ և Բագարատ անունով որդիներ:

Գրկ. *А. Тер-Гевондян*, Армения и Арабский халифат, Ер., 1965.

30. ԱՇՈՏ ԿՈՒՅՐ, Հայոց իշխան 732-750թթ., /Վասակի որդի Սմբատ Բագրատունու թոռը, N 27/, /մահ. 761թ./:

Ուղևորվել է Դամասկոս և խալիֆ Հեշմից խնդրել վճարել հայկ. հեծելազորի վարձը, որը բավարարվել է: 737թ. հայկ. հեծելազորով մասնակցել է Մրվան ոստիկանի արշավանքին խալարների դեմ: VIIIդ., խալիֆայության ժամանակավոր թուլացման շրջանում, Մամիկոնյանների խմբավորումը նախապատրաստում էր ապստամբություն, բայց Ա-ը դեմ էր, և հարաբերությունները Բագրատունիների և Մամիկոնյանների միջև գնալով սրվում են, քանի որ Բագրատունիները զգուշանում էին ապստամբելուց: Սակայն 748-749թթ. ապստամբական տրամադրությունը համակել էր նախարարներից շատերին, և Աշոտը ստիպված էր միանալ նրանց: Նրանք ամրանում են Տայքում և նույնիսկ գրավում Կարին քաղաքը: Սակայն շուտով Ա-ն հեռանում է ապստամբներից, որի պատճառով ապստամբների պարագլուխ Գրիգոր Մամիկոնյանը նրան կուրացնում է: Ա-ը պատմության մեջ մտել է Աշոտ Կույր մականունով:

Գրկ. Տես նախորդ հոդվածի գրականությունը:

31. ՍԱՀԱԿ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ, իշխան հայոց 753-770թթ.:

32. ՍՄԲԱՏ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ, սպարապետ /Աշոտ Կույրի որդի, N 30/, 770-ից՝ փաստացի Հայոց իշխան, 774-775թթ. Խալիֆայության տիրապետության դեմ Մեծ ապստամբության մասնակից: Ապստամբների մի մասի, այդ թվում նրանց պարագլուխ Մուշեղ Մամիկոնյանի, Ս.Բ-ունու և այլոց նպատակն էր անկախության վերականգնումը: Մյուս մասը /Սահակ Բ-ունու որդին՝ Աշոտը/ նպատակահարմար չէին գտնում ապստամբել, հաշվի առնելով Խալիֆայության ռազմական գերազանցությունը: Ս.Բ-ն մասնակցել է 775թ. երկու ճակատամարտերին, որոնք վճռել են ապստամբության ելքը: Ապստամբությունը պարտություն է կրել, Ս.Բ-ն զոհվել է Բագրեվանդի ճակատամարտում:

Գրկ. *Հ. Մարկվարտ*, Հայ Բագրատունեաց ճյուղագրութիւնը: Վն., 1913: *А. Тер-Гевондян*, Армения и Арабский халифат, Ер., 1965.

33. ՎԱՍԱԿ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ, Աշոտ Կույրի որդի, Սմբատ Բագրատունու /N32/ եղբայր և գինակից, 774-775թթ. ապստամբության մասնակից: Բագրեվանդի ճակատամարտից հետո, խուսափելով արաբների հետապնդումից, անցել է Կղարջք, ուր հիմնել է նոր իշխանություն /տես Բագրատունիները Վրաստանում/: Որդին էր Ատրներսեհը, թոռը՝ Աշոտ Կյուրապաղատը:

Գրկ. Տես նախորդ հոդվածի գրականությունը:

IX ԴԱՐ
Առաջին կես

34. ԱՇՈՏ ՄՍԱԿԵՐ, Քաջ, Սմբատ Բագրատունու որդի /N32/: Հայոց իշխան 806-826թթ.: Ա.Մ-ի օրոք սկսվում է Բագրատունիների ճզորացման նոր շրջան, նա զգալիորեն ընդարձակում է տոհմական տիրույթները ի հաշիվ VIIIդ. վերջում թուլացած կամ ասպարեզից հեռացած նախարարական տների, Կամսարականներից դրամով գնում է Արշարունիքը /ուր Դարոյնքից տեղափոխում է ապարանքը/ և Շիրակը, տիրանում Մամիկոնյանների տիրույթ Տայքի մի մասին, կառուցում այնտեղ Կալմախ ամրոցը, որը դառնում է իր կայաններից մեկը /այնտեղ էր բնակվում իր ընտանիքը/: 806թ. խալիֆ Հարուն ալ-Ռաշիդը ճանաչում է նրան Հայոց իշխան: Համառ պայքար է մղել արաբական «կայսիկ» ցեղի առաջնորդ Ջահապի դեմ, որը ժամանակավորապես գավթել էր Արշարունիքի մի մասը: Ջահապը փորձում է տիրանալ նաև Տարոնին, բայց Ա.Մ-ի եղբայր սպարապետ Շապուհը պարտության է մատնում նրան: IXդ. 20-ական թթ. Տարոնում հաստատվում է Ա.Մ-ի որդի ՍԱՀԱԿԸ: Ա.Մ-ի վտանգավոր մրցակիցն էր մեկ այլ ամիրա Սևադա /նույնպես կայսիկ ցեղից/, որն ամուսնացած էր Բագրատունյաց տոհմից Արուսյակ անունով իշխանուհու հետ և հավակնում էր նրանց տիրույթներին: Ռազմական ընդհարման ժամանակ սպանվում է սպարապետ Շապուհը, երկու տարի անց մահանում է Ա.Մ-ը, պայքարը շարունակում է նրա որդի Սմբատ սպարապետը: Ա.Մ-ը IXդ. առաջին կեսի Բագրատունիների ամենանշանավոր գործիչն է, նրա նվաճումները հիմք հանդիսացան հետագայում ազատագրական պայքարի վերջնական հաղթանակի համար: Ա.Մ-ի որդիներն էին Բագարատը, Սմբատը, Սահակը և Դավիթը, դուստրը՝ Հռիփսիմեն:

Գրկ. *Լեո*, Հայոց պատմություն, «Երկեր», հ.2, էջ 411-414, 416-418: *Ն. Ադոնց*, Բագրատունյաց փառքը, «Պատմական ուսումնասիրություններ», Փարիզ, 1948:

35. ԲԱԳԱՐԱՏ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ, Հայոց իշխանաց իշխան 826-851թթ.: Բ-ի օրոք Տարոնի Բագրատունիները ձեռք էին բերել տոհմի գահերեցությունը, նա վճռականորեն միջամտեց կաթողիկոս Հովհաննես Կոտայեցու /Օվայեցու/ ընտրությանը, որն հաստատվեց աթոռին միայն Բ-ու համաձայնությամբ: Համախմբեց հարավային Հայաստանի գահերեց իշխաններին և գլխավորեց ֆեոդալների ճզոր խմբավորում: Բ-ի և նրա եղբայր Սմբատ սպարապետի միջև մրցակցություն էր գնում առաջնության համար, Բ-ն կողմնակից էր հոր՝ Աշոտ Մսակերի ըմբռնության և գինված պայքարի գծին, Սմբատը հակված էր ավելի զուսպ գործելակերպի: Պատմաբան Լեոյի դիտողությամբ այդ շրջանում Բագրատունիների քաղաքականությունը բաժանված

էր երկու ճյուղի: 850թ. Բ-ի կարգադրությամբ հայ իշխանները Հայաստանի սահմանից ետ վերադարձրին արաբ հարկահան և ոստիկան Աբուսեթին /Ա-բու-Սայիդ/, խոստանալով հարկը ինքնուրույն ուղարկել խալիֆին: Այդ միջադեպը արաբների հետ ընդհարման պատճառ է դառնում, Բ-ու և նրա դաշնակից Աշոտ Արծրունու զորքը ջարդում է Բաղեշի ամիրա Մուսային /Մուսա իբն-Զուրաթ/: Սա ըմբոստություն էր արաբական իշխանությունների դեմ, այդ պատճառով Հայաստան է մտնում պատժիչ զորք՝ նոր ոստիկան Յուսուֆի գլխավորությամբ: Սա նենգաբար ձերբակալում է Բ-ին ու նրա ազգակիցներից մի քանիսին և ուղարկում Սամառա /խալիֆի ամառային նստավայր/, միայն Բ-ի որդիներին՝ Դավթին և Աշոտին հաջողվում է փախչել Սասուն: Ավերվում է Տարոնը: Սակայն 851-852թթ. ծմռանը ըմբոստացած սասունցիները սպանում են Յուսուֆին Մուշ քաղաքում, Բ-ի կառուցած ս.Փրկիչ եկեղեցում: Բ-ն աքսորավայրից այլևս չի վերադառնում և այնտեղ էլ մահանում է:

Գրկ. Տես նախորդ հոդվածի գրականությունը:

36. **ՍԱՀԱԿ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ**, Տարոնի Բագրատունի առաջին իշխան, Աշոտ Մսակերի որդի: 815թ. պայքարել է Խուրամյան աղանդավորների դեմ, որոնք պարտվելով խալիֆի զորքերից, ներխուժել էին Տարոն: Ս-ը պարտության է մատնել թշնամուն:

Գրկ. *Լեո*, «Երկեր», հ.2, էջ 415-416:

37. **ՇԱՊՈՒՀ ՍՊԱՐԱՊԵՏ**, Աշոտ Մսակերի եղբայր, նրա զինակիցը, պայքարել է արաբ /կայսիկ և այլ/ ամիրայությունների դեմ, նպաստել Բագրատունիների հզորացմանը IXդ. առաջին քառորդում: Զոհվել է կայսիկ Սևադա /Սավադ բին-Աբուլ-Համիդ Ջահհաֆի/ դեմ մղած ճակատամարտում (824):

38. **ՍՄԲԱՏ ՍՊԱՐԱՊԵՏ**, Խոստովանող /արաբները անվանում էին Աբուլ-Աբբաս/, Աշոտ Մսակերի որդի, 820-ական թթ.-855 վարում էր Հայոց սպարապետի պաշտոնը: Գլխավորում էր հյուսիսային և կենտրոնական Հայաստանի իշխանների խմբավորումը: 826-827թ. մասնակցել է Կավակերտի ճակատամարտին:

Արաբական իշխանությունների հանդեպ վարում էր զգույշ քաղաքականություն, ճգտելով ռազմական բախումների առիթ չտալ: 851թ. ապստամբության ժամանակ /Մուշի կոտորած/ ապստամբներին չմիացավ: 852թ. ապստամբությունը ճնշելու նպատակով մեծ զորքով Հայաստան մտավ նոր ոստիկան Բուղան, որպես խալիֆի հանդեպ լոյալ պաշտոնյա, Ս-ն ստիպված էր միանալ նրան, ուղեկցել նրա զորքին, ցույց տալ ճանապարհները, իշխանների ամրոցները: Այլ կերպ նա չէր կարող ապացուցել իր հավատարմությունը: Սակայն Ս-ի «հավատարմությունը» արտաքուստ էր, նա անտարբեր չէր ոստիկանի վայրագությունների հանդեպ, նրա միջնորդությամբ ազատվեցին Վասպուրականի գերիների մի մասը, հովանավորեց Գուրգեն Աբուպելճ Արծրունի իշխանին: 855թ. Ս-ն Երազգավորսում հրավիրեց եկեղեցական ժողով, ուր կաթողիկոս ընտրվեց Զաքարիա Զագեցին: Բուղայի պատժիչ ճեռնարկումներն ու դաժանությունները չընկճեցին հայ ժողովրդին, 855թ. Մութավաքիլ խալիֆը նրան ետ կանչեց, բայց վերադառնալով Բուղան իր հետ տարավ գերված շատ հայ իշխաններ, այդ թվում և Ս-ին, որին Բաղդադում ենթարկեցին ճերբակալեցին: Երկար ժամանակ բանտում պահելուց հետո խալիֆը հայ իշխաններից պահանջեց կրոնափոխություն, հակառակ դեպքում սպառնում էր մահապատժով: Ս-ը, /նրա քույրը, Հովհան խութեցին և ուրիշներ/ մերժեցին, Ս-ն մահացավ բանտում (859 կամ 860թ.), թաղվեց տեղական քրիստոնյաների կողմից, ըստ ավանդության՝ Դանիել Մարգարեի գուբի վրա կառուցած եկեղեցում: Մահից հետո կոչվեց «Խոստովանող» /որպես քրիստոնյա հավատի նահատակ/: Որդիներն էին Աբասը, Աշոտը, Շապուհը և Մուշեղը:

IX ԴԱՐ
Երկրորդ կես

39. **ԱԲԱՍ ՍՊԱՐԱՊԵՏ**, Սմբատ սպարապետի /N38/ որդի, Աշոտ Ա. Բագրատունու /N40/ եղբայրն ու զինակիցը: 863թ. պարտության է մատնել Արշարունիք ներխուժած կայսիկ ցեղի առաջնորդ Շահապին: Կաղզվանի մոտ կայացած ճակատամարտում թշնամու զորքն ամբողջությամբ ոչնչացվել է: Նա ձերբակալել է հայերի դեմ դավադրություն նախապատրաստող ոստիկան Ահմադին /Ահմադ իբն-Խալդ/ և վտարել նրան Դվինից /ոստիկանը հեռացվել է Հայաստանից/:

890թ. Աշոտ Ա. թագավորի մահից հետո գահը ժառանգում է նրա ավագ որդին՝ Սմբատ Ա.-ն: Սակայն Աբասը փորձում է տիրանալ գահին, այդ պատճառով սկսվում է գահակալական պայքար, որի ժամանակ թշնամանում են հարաբերությունները Ա.-ի և վրաց իշխան Ատրներսեհի /վերջինը Սմբատ Ա.-ի թոռնորդին էր մոր կողմից և փորձում էր հաշտեցնել մրցող կողմերին/, ինչպես նաև կաթողիկոս Գևորգ Գառնեցու հետ, որը պաշտպանում էր օրինական գահաժառանգի իրավունքները: Ռազմական ընդհարում է տեղի ունեցում մրցակիցների միջև, սակայն ի վերջո Ա.-ը ստիպված է լինում հաշտվել իրողության հետ և ճանաչել Սմբատի գահակալումը:

40. **ԱՇՈՏ Ա.**, Հայոց թագավոր 885-890թթ., /իշխանաց իշխան 862-885/, Սմբատ սպարապետի /N38/ որդին: Բագրատունյաց ժամանակաշրջանի և

ողջ հայ միջնադարի խոշոր պետական գործիչներից մեկը: Սկզբնապես փոխարինել է հորը սպարապետի պաշտոնում /855-862/: Քաղաքական կողմնորոշմամբ խիստ հետևել է հոր գծին՝ «հանդարտեցնել երկիրը, նրան տալ կատարելապես օրինապահ հպատակի կերպարանք, այս էր նրա հանդուգն և խոհեմ գործունեության ամենագլխավոր առարկան» /Լեո/: Այդ զգուշությունը, անշուշտ, թելադրված էր Բուղայի արշավանքի հետևանքներով՝ միայն կատարյալ զգուշությունը կարող էր փրկել գերի հայ իշխաններին և զերծ պահել երկիրը նոր ավերածություններից:

Միաժամանակ Ա-ն աստիճանաբար համախմբում է իր շուրջ տեղում մնացած և գերությունից վերադարձող /857-59թթ./ հայ իշխաններին: IXդ. կեսերին միայն Բագրատունիները կարող էին երկրի ֆեոդալական ուժերի համախմբողի և կազմակերպողի դերը ստանձնել, դառնալ նրանց պարագլուխը: Մյուս կողմից խալիֆայությունը, հաշվի առնելով Արմինիա փոխարքայության հետ, 862թ. փոխարքայության փաստացի կառավարումը հանձնում է հայ Բագրատունիների գահերեցին՝ Աշոտին, հռչակելով նրան ամբողջ Արմինիայի /Հայ, Վրաց, Աղվանից մինչև հյուսիսայինի Կովկաս/ իշխանաց իշխանը: Արաբ ոստիկանի ֆունկցիաների զգալի մասը անցնում է Աշոտին՝ հարկահանություն, իշխանների փոխհարաբերությունների կարգավորում և այլն: Ոստիկանը, որը դեռևս մնում էր Դվինում, միայն վերահսկողի դեր է կատարում: Հայաստանը ձեռք է բերում ինքնավարություն:

Այդ շրջանում ձևավորվում է քաղաքական հարաբերությունների համակարգը Բագրատունիների և ֆեոդալական ազնվականության միջև, որի հիմքում ընկած էին վասալական կապերը գերադասի /սյուզերենի/ հետ, առաջ է գալիս Բագրատունյաց «տերությունը», այն գլխավորում է «տերը»՝ Աշոտ իշխանաց իշխանը, որը նանաչվում է «առաջինը» մյուս իշխանների հանդեպ /«առաջինը հավասարների մեջ»/: Առավել ազդեցիկ իշխանական տների՝ Արծրունիների և Սյունեցիների հետ Ա-ը հաստատում է խնամիական կապեր, ավելի ամուր կապվելով նրանց հետ՝ նրա դուստրերից Սոփին Արծրունի մեծ իշխան Գրիգոր-Դերենիկի կինն էր, իսկ Մարիամը՝ Գեղարքունիքի /Սյունիք/ իշխան Վասակ-Գաբուոյի; Դուստրերից մեկը կնության էր տրվել Կողբջքի Բագրատունի իշխան Գուարամին:

Արաբները երբեմն փորձեր էին անում վերականգնել նախկին դրությունը Հայաստանում, ոստիկան Ահմադ իբն-Խալդը և Պարտավի ամիրան դավադրություն են կազմակերպում, նպատակ ունենալով Դվինում կոտորել հայ իշխաններին, սակայն Ա-ը կանխում է դավադրությունը, իսկ նրա եղբայրները՝ Աբասն ու Շապուհը վտարում են Ահմադին Հայաստանից: 880թ. Գուարամի աջակցությամբ Ա-ը վտարում է Տփղիսից արաբ ամիրային: Դրանից հետո նա ճնշում է կայսիկ և ութմանիկ ցեղերի առաջնորդների ըմբոստությունը /Խլաթ, Բերկրի, Մանազկերտի շրջաններում/, որոնք ոստիկան Ահմադի դաշնակիցներն էին: Ա-ը վերջ է տալիս նաև որոշ հայ իշխանների ներքին կալվածատիրական վեճերին /Արծրունի Գրիգոր-Դերենիկի և Գուրգեն Ապու-Պելճի, Գրիգոր-Դերենիկի և Տարոնի Աշոտ իշխանի/: Ա-ի փաստացի իշխանությունը Հայաստանում այնքան իրական էր, որ հայ հասարակության բոլոր խավերում հաստատում է Ա-ին թագավոր հռչակելու և անկախությունը վերականգնելու գաղափարը: Երկրի ներսում նրան արդեն համարում էին թագավոր /Սևանի և Գառնիի 874 և 879թթ. արձանագրություններ/: Որոշ գիտնականների կարծիքով 869թ. հրավիրված Շիրակավանի եկեղեցական ժողովում արդեն հայ իշխանները Ա-ին ճանաչել էին թագավոր և դիմել խալիֆին, խնդրելով թագ շնորհել նրան: Երկար ձգձգումից հետո խալիֆը բավարարում է հայերի դիմումը, հաշվի առնելով Արմինիայում տիրող իրավիճակը և խալիֆայության ներքին ու արտաքին բարդ իրադրությունը: Արաբական կայսրության տարբեր ծայրամասերում, մասնավորապես Պարսկաստանում և Ատրպատականում բռնկվում էին ապստամբություններ, ծանր պատերազմ էր գնում Բյուզանդիայի դեմ: Արաբական իշխանությունները գտնում էին, որ ներկա պայմաններում Հայաստանի միջոցով է հնարավոր իր ազդեցության տակ պահել Արմինիա փոխարքայությունը և այն պատվար դարձնել պարսկական և Ատրպատականի անջատողական շարժումների դեմ: Մութամիդ-Բիլլահ խալիֆը ոստիկան Ինա իբն-Շեյխի միջոցով Աշոտ իշխանաց իշխանին հանձնեց թագ և արքայական զգեստներ:

Պատմիչ Հովհաննես Դրասխանակերտցին գրում է, որ Ա-ը մեծ հանդիսավորությամբ Բագարանում թագավոր թագադրվեց, կաթողիկոս Գևորգ Գառնեցին պսակեց նրան «թագավոր ի վերա Ասքանազեան ազգին»: Նույնպես բյուզանդական կայսր Վասիլ /Բարսեղ/ Ա-ն թագ է ուղարկում Ա-ին, դրանով իսկ տեղի է ունենում Հայաստանի անկախության միջազգային ճանաչումը: Արաբական պատմիչը իր կողմից նույնպես վկայում է Աշոտի թագադրությունը: ,,Խալիֆն ընդառաջելով հայ ժողովրդի ցանկությանն ու կամենալով թագավոր Հայաստանի կոչմանը համապատասխան ամենաբնտիր նվերն ընծայել իր ուժեղ դաշնակից Աշոտին, հիջրայի 272 /885-886թթ./ նրան է ուղարկում թագ և ծիրանի... Վասիլ Արշակունի կայսրը, ձգտելով Աշոտ թագավորի հետ բարեկամության, նրան ուղարկում է նման ընծաներ,,: Ա-ի օծումը, համաձայն Վ. Հակոբյանի մանրազնին տոմարական քննության, տեղի է ունեցել 884թ. օգոստոսի 26-ին, ավելի հավանական է 885թ., նույն օրը:

Հայաստանի պետականության վերականգնումը IXդ. վերջին քառորդում խոշոր պատմական իրադարձություն էր հայ ժողովրդի պատմության մեջ, չորս ու կես դար նա հերոսական պայքարով և մեծագույն զոհաբերություններով գնում էր դեպի այդ օրը: Միջնադարյան Հայաստանի պատմության մեջ սկսվում է նոր դարաշրջան, որը ժողովրդի հիշողության մեջ մնաց Բագ-

բատուհիների թագավորություն, Բագրատունյաց Հայաստան, Անիի թագավորություն անուններով: Ա-ի որդիներն էին Սմբատը /թագաժառանգ/, Շապուհը, Սահակը, Դավիթը, դուստրերը՝ Սոփին և Մարիամը:

Գրկ. *Միհայել Չամչյան*, Հայոց պատմություն, հ. Ա, Վենետիկ, 1784 /վերատպությամբ՝ Երևան, 1985/: *Ղ. Ալիշան*, Հուշիկք հայրենյաց հայոց, Վնտկ, 1869, հ. Ա, էջ 405-518: *Լեո*, Հայոց պատմություն, հ. 2, էջ 492-510: *Նիկողայոս Ադոնց*, Բագրատունյաց փառքը, «Պատմական ուսումնասիրություններ», Փարիզ, 1948: *Б. Аракелян*, Гарни, I, Ереван, 1951. *Վ. Հակոբյան*, Մանր ժամանակագրություններ, հ. 2, էջ 160-162: Հայ ժողովրդի պատմություն, հ. 3, եր., 1976:

IX - X ԴԱՐԵՐ

41. ԴԱՎԻԹ, որդի Աշոտ Ա թագավորի, Սմբատ Ա-ի օրոք վարում էր իշխանաց իշխանի կարևոր «գործը» /պաշտոնը/: Նրա գործավարությունից մանրամասներ հայտնի չեն, բայց պատմիչ Հովհաննես Դրասխանակերտցու կարճ վկայությունից երևում է, որ Դ-ը արքունիքում ուներ մեծ հեղինակություն:

42. ՇԱՊՈՒՀ ՍՊԱՐԱՊԵՏ, որդի Աշոտ Ա թագավորի, իշխանանիստն էր Բագարանը: Շ. Ս-ին տրված էր նաև «Տէրանց տէրի» պաշտոնը և որպես արքունիքի ներկայացուցիչ նա թագավորի անունից կարգավորում էր իշխանների ներավատական վեճերն ու այլ հարցեր /օր.՝ 886-ին լուծեց Վասպուրականի իշխան Գրիգոր-Դերենիկ Արծրունու ժառանգների խնդիրը/: 903թ. քրոջ՝ Սյունյաց իշխանուհի Մարիամի հետ գործակցած Դեղարքունիքում կառուցել է Վանեվանի եկեղեցին: Շ-ի որդին էր Աշոտ Շապուհյանը /N 44/, դուստրերից մեկը կնության էր տրված Տարոն, մյուսը՝ ոստիկան Ավշինին:

43. ՍՄԲԱՏ Ա, Հայոց թագավոր (890-914), Աշոտ Ա-ի հաջորդն ու որդին: Ս-ի գահակալության առաջին տարիները անցել են խաղաղ, բայց օրակարգի խնդիրն էր ամրապնդել պետականությունն ու հասնել լիիրավ անկախության, քանի որ Հայաստանը դեռևս շարունակում էր որոշ հարկ վճարել խալիֆայությանը, իսկ նրա թագավորներին de jure պետք է հաստատեր խալիֆը: Այդ ուղղությամբ էլ նա վարում է ներքին և արտաքին քաղաքականությունը, նրան երկար ժամանակ հաջողվում է պահպանել վասալ իշխանների համախմբվածությունը: Միայն 908թ. միասնությունը խախտվեց՝ ծագեց Արծրունիների և Սյունեցիների վեճը Նախիջևանի համար: Սմբատն այն լուծեց ճօգուտ վերջիններիի, Արծրունիները ըմբոստացան, և սկիզբ առավ նրանց և Բագրատունիների մրցակցության երկարատև մի շրջան: Հակամարտության պատճառը միայն Նախիջևանի խնդիրը չէր, դա միայն առիթ էր:

Xդ. սկզբին Վասպուրականի իշխանությունը այնքան ուժեղ էր, որ Արծրունիները հավակնեցին ամբողջ Հայաստանի թագավորությանը Բագրատունիների փոխարեն: 908թ. խախտվեց հայ իշխանների միասնությունը, թուլացավ պետությունը, ներքին քաղաքականության մեջ Սմբատ Ս-ը կրեց առաջին լուրջ անհաջողությունը: Ինչ վերաբերում է արտաքին քաղաքականությանը, ապա Սմբատը հետևողականորեն ձգտում էր ազատվել արտաքին կախումից, և այդ հողի վրա նրա հարաբերությունները թշնամացան արաբական իշխանությունների հետ /խալիֆի և նրա փոխարքաների՝ Ատրպատականի ամիրաների, որոնց հանձնարարված էր Հայաստանի և Անդրկովկասի վերահսկողությունը/:

Ռազմական բախումներ սկսվեցին Սմբատի գահակալության համարյա սկզբից: 892թ. Սմբատը ազատագրեց Դվինը, 894թ. նա ընդհարվեց Ատրպատականի Ավշին ամիրայի հետ, Արարատյան դաշտավայրի Դողս գյուղի մոտ /ներկայիս Նույնանուն գյուղը/ տեղի ունեցավ ճակատամարտ, ամիրան ծանր պարտություն կրեց և միաուժամանակ հանգիստ թողեց Հայաստանը:

Սակայն 896թ. Սմբատը պարտվեց հյուսիսային Միջագետքի ամիրայից, և դրանից օգտվեց Ավշինը: Նա նորից ներխուժեց Հայաստան և կարճ ժամանակով գրավեց Կարսը: Այնուհանդերձ Սմբատին հաջողվեց դիմագրավել թշնամուն: Նա մնում էր Անդրկովկասի ամենագեղեցիկ գահակալը, այդ ժամանակ է, որ նա թագ է տալիս վրաց իշխան Ատրներսեհին և ճանաչում նրան Վրաց թագավոր: 902թ. նա ճնշեց Խլաթ-Մանազկերտի կայսիկ արաբների ապստամբությունը:

Հայաստանի համար կարևոր նշանակություն ունեին հարաբերությունները նաև Բյուզանդական կայսրության հետ: Այստեղ Սմբատի քաղաքական գիծը նույնպես էապես տարբերվում էր նախորդից:

Մինչև Սմբատի գահակալումը Բագրատունիները կայսրության հետ ունեին միայն դիվանագիտական շփումներ, Սմբատը որդեգրեց այլ քաղաքականություն՝ ձգտելով ազատվել կախման վերջին լծակներից, նա կողմնորոշվեց դեպի Բյուզանդիա, հուսալով նրա օգնությամբ հասնել նպատակին: Առաջին քայլերը որոշ չափով դիվանագիտական էին. 892թ. գրավելով Դվինը, ոստիկանին ուղարկեց կայսրին որպես նվեր:

Հաջորդ քայլը ավելի լուրջ էր՝ Բյուզանդիայի հետ կնքվեց ռազմական դաշինք, որով Սմբատը իրեն համարում էր կայսրության «բարեկամ», տեղի է ունենում որոշ մերձեցում կայսրության հետ: Խալիֆայությունը բնականաբար չէր կարող հանդուրժել դեպքերի նման զարգացումը, առիթի էր սպասում հարվածելու Հայաստանին: Առիթ հանդիսացավ միջֆեոդալական պայքարը Արծրունիների և Բագրատունիների միջև:

908թ. Նախիջևանի միջադեպից հետո Վասպուրականի մեծ իշխան Գագիկ Արծրունին դիմեց արաբներին, խալիֆն ու Ցուսուֆը, օգտվելով հարմար

առիթից, Հայաստանի թագավոր ճանաչեցին Գագիկին, հակադրելով նրան Սմբատ Բագրատունուն: Զբավարարվելով դրանով, Յուսուֆը մտավ Հայաստան և մեծ ավերածություններ կատարեց: Արաբական իշխանության հետ ընդհարումը դարձավ անխուսափելի, վճռական ճակատամարտը տեղի ունեցավ 910թ. Նիգ գավառի Ձկնավաճառ վայրում /ներկայիս Ապարանի մոտ/, դժբախտաբար դավաճանության պատճառով Սմբատը պարտություն կրեց /դավաճանեց հայոց բանակում կովող սևորդիկ ցեղի զորամասը/: Մանըր վիճակ ստեղծվեց Սմբատի և ամբողջ երկրի համար՝ հայ իշխաններից շատերը հեռացան թագավորից և առանձնացան իրենց ամրոցներում, երկիրը ավերվում և ամայանում էր: Սմբատը այդպես էլ չկարողացավ վերականգնել վասալ իշխանությունների գինակցությունը: Անօգնական, պաշարված մնալով Կապույտ ամրոցում /Արշավանիք գավառ/ նա կամավոր հանձնվեց Յուսուֆին, հուսալով թե դրանով վերջ կդրվի ավերածություններին: Սակայն նրա հույսերը չարդարացան. ամիրան շարունակում էր ավերումները, իսկ ինքը՝ Սմբատը ենթարկվեց խոշտանգումների և սպանվեց Դվինում 914թ.: Իր եղերական նահատակության պատճառով կոչվեց «Նահատակ»:

Այսպես ավարտվեց անկախ Հայաստանի Բագրատունի երկրորդ թագավորի համարյա քառորդդարյա գահակալությունը, որի ընթացքում նա հետևողականորեն անց էր կացնում իր քաղաքական ծրագիրը:

Սմբատի գահակալումը Հայաստանի անկախության հաստատման գործընթացում նշանավորեց նոր փուլ: Արդեն վերականգնվել էր պատակնությունը, երկրի ներսում և օտարների կողմից Բագրատունիները ճանաչվել էին իշխող դինաստիա /գահատոհմ/: Բայց դա դեռ լիիրավ անկախություն չէր, որովհետև Հայաստանը այնուամենայնիվ մնում էր կիսակախյալ վիճակում, յուրաքանչյուր նոր գահակալի իրավունքը ճանաչում էր խալիֆը: Սմբատը ձգտում էր ազատվել այդ կախումից և դառնալ սուվերեն /ինքնիշխան/ գահակալ:

Սմբատի նպատակը, իհարկե, բաղձալի էր, բայց իրավիճակը աննպաստ: Ինչպես ցույց տվեցին հետագա դեպքերը, դեռևս վաղաժամ էր նախորդի գծից շեղվելը և խալիֆայության հետ առճակատման գնալը: Ճիշտ է. խալիֆայությունը Xդ. սկզբին առաջվա հզոր կայսրությունը չէր, բայց պետք է նկատի ունենալ, որ խալիֆայության նախկին մասերը անջատվելով, ստեղծել էին նոր կիսանկախ կամ անկախ ամիրայություններ /Ատրպատական, Տփղիսի արաբական, Խլաթ-Մանազկերտի և այլն/: Նրանք հաճախ կամ համագործակցում էին խալիֆների հետ, կամ սեփական ագրեսիվ նկրտումներով հիմնականում թշնամական վերաբերմունք ունեին Հայաստանի նկատմամբ:

Հակադրվելով խալիֆայությանը՝ Սմբատը հույս ուներ, թե կստանա վերջինի գլխավոր ախոյան Բյուզանդիայի աջակցությունը: Իհարկե, այդ հարցում նրան կարելի է հասկանալ և արդարացնել: Բյուզանդիան ինքը

շահագրգռված էր Հայաստանն ու «Արմինիայի» բոլոր երկրները կտրել իսլամական աշխարհից, տարածել իր քաղաքական ազդեցությունը արևելքում: Բայց սպասվող օգնությունը չհասավ, Սմբատը մնաց մենակ հզոր ախոյանի դեմ, իսկ հայկական բանակը առաջվա ուժը չուներ հայ հակադիր խմբավորումների հակամարտության պատճառով:Այդ հանգամանքները պայմանավորեցին նրա պարտությունը: Նրա գլխավոր սխալը խալիֆայության ուժի թերագնահատումն է և կայսրությանը չափից ավելի վստահելը: Նրա պայքարը ավարտին հասցրեց իր հաջորդը, իսկ Սմբատը մտավ Հայոց պատմության մեջ որպես անձնուրաց գործիչ և մեծ հայրենասեր, որը շատ բան արեց երկրի հետագա առաջընթացի համար:

Գրկ. Տես Աշոտ Ա., Հայոց թագավոր /N40/ հոդվածի գրականությունը:

X ԴԱՐ
Առաջին կես

44. ԱՐԱՍ, Հայոց թագավոր 929-953թթ., Աշոտ Բ-ի եղբայրն ու հաջորդը, մինչև գահակալումը՝ իշխանաց իշխան: Աշոտ Բ-ի զինակիցն էր Յուսուֆ ոստիկանի և ըմբոստ իշխանների դեմ մղած կռիվներում: Գահակալել է 929--ին, մայրաքաղաքը Երազգավորսից տեղափոխել իր իշխանանիստ Կարսը: Նրա գահակալության տարիներին ավարտվել էին պատերազմները խալիֆայության դեմ, սկսվել էր խաղաղ մի շրջան, որը տևեց մոտ մեկ դար: Երկիրը հնարավորություն ստացավ բնականոն զարգացման համար: Ա-ը ձեռնամուխ եղավ բարեկարգումների, որոնք պետք է կայունացնեին պետության ներքին վիճակը: Փորձ է արվում Կարսը դարձնել պետության մշտական մայրաքաղաք և կաթողիկոսի նստավայր: Այստեղ կառուցվում է Մայր տաճար /Առաքելոց եկեղեցի/, կաթողիկոս է ընտրվում Վարագավանքի առաջնորդ Անանիա Մոկացին: Նա Ռշտունիքից /Վասպուրական/ տեղափոխվում է Կարս: Սա կարևոր փոխհամաձայնություն էր Բագրատունիների և Արծրունիների միջև՝ առաջինները համաձայնում էին, որպեսզի կաթողիկոսի աթոռը զբաղեցնի Արծրունիների հոգևոր առաջնորդը, իսկ երկրորդները համաձայնում էին, որ աթոռը նորից հաստատվի Կարսում /Բագրատունիների ոստանում/: Այդ համաձայնությունը վկայում է նախկին մրցակիցների մերձեցումը, նրանց քաղաքական համագործակցությունը երկու տասնամյակ տևող պայքարից հետո: Դրա դրսևորումներից է 930թ. Այրարատ՝ Արաքսի հովիտ ներխուժած Լաշքարի ամիրայի դեմ Գագիկ Արծրունու օգնությունը: Միացյալ ուժերով թշնամին Դվինի մոտ պարտության մատնվեց: Այսպիսով, Ա-ի ժամանակ Բագրատունիների մայրաքաղաքը նորից սկսում է համահայկական կենտրոն ճանաչվել, բայց շուտով, հանգամանքների բերումով, մայրաքաղաքը տեղափոխվում է Անի: Ա-ը մի շարք բարեփոխումներով սկիզբ դրեց պե-

տության ուժեղացմանը, պատմիչ Ասողիկը գրում է, որ "Աբաս խաղաղութեան և շինութեան պատճառ եղեալ աշխարհիս Հայոց": Խաղաղությունը խախտվել է մեկ անգամ միայն, երբ արխազաց Բեր թագավորը ներխուժել է Հայաստան: Սակայն Ա-ի գահակալության տարիներին Բյուզանդիայում սկսվում է կրոնական հալածանք հայ հոգևորականության դեմ, շատ եկեղեցականներ կայսրության հայաբնակ շրջաններից անցնում են Հայոց թագավորության սահմանները, հիմնում նոր վանքեր:

45. ԱՇՈՏ ՇԱՊՈՒՀՅԱՆ, «Բռնավոր», Շապուհ սպարապետի որդին /N42/, հորից հետո ստանձնեց սպարապետի պաշտոնը /Խդ. սկիզբ/: Տիրույթներն էին Բագարանը, Կողբը /ուր կառուցել է եկեղեցի/: Քաջամարտիկ զորավար էր, սակայն դեմ էր Սմբատ Ա-ի բյուզանդամետ քաղաքականությանը, գտնելով, որ արդարացված չէ թագավորի հակադրությունը խալիֆայությանը: Գլխավորել է հայ իշխանների խմբակցությունը, որը կողմնակից էր խալիֆայության հանդեպ լոյալ դիրք պահպանելուն: Ջկնավաճառի ճակատամարտից հետո դրացիական հարաբերություններ է հաստատել արաբ փոխարքա Յուսուփի հետ: Հայ պատմագիտության մեջ այդ քայլը համարվում է դավաճանություն, սակայն այդ մոտեցումը հիմնավորված չէ: Աշոտ Բ երկաթին կայսեր կողմից թագադրելուց հետո, արաբները Ա.Շ-ին ճանաչեցին Հայաստանի թագավոր՝ որպես Բյուզանդիայի դաշնակից Աշոտ Բ-ին /արքայորդուն/ հակադիր գահակալ: Երկու գահակալների միջև սկսվում է պայքար, Ա.Շ-ը պարտվում է Աշոտ արքայորդուց և հեռանում քաղաքական կյանքից:

46. ԱՇՈՏ Բ ԵՐԿԱԹ, Հայոց թագավոր 914-929թթ., Սմբատ Ա-ի ավագ որդին և հաջորդը: Բագրատունյաց Հայաստանի նշանավոր պետական ու ռազմական գործիչ, քաջ զորավար: Ժառանգեց իշխանությունը երկրի համար շատ ծանր ժամանակ՝ ոստիկան Յուսուփի զորքերը գրավել էին բազմաթիվ շրջաններ, գյուղերն ու քաղաքները ավերված էին: Օրվա խնդիրն էր վտարել թշնամուն և պահպանել պետականությունը:

Ա-ը վճռական պայքար սկսեց թշնամու դեմ, հարվածեց նրա զորքերին տարբեր վայրերում՝ Բագրևանդում, Շիրակում, Գուգարքում, պաշարեց Տփղիսը և ջարդեց տեղի արաբ ամիրային, ապա մտավ Աղստևի հովիտ և վտարեց այնտեղ պատսպարված արաբական ջոկատներին: Այդ հաղթանակներից հետո հայկական զորքը և վրաց Ատրներսեհ թագավորը հոչակեցին նրան թագավոր հոր փոխարեն: Սակայն Յուսուփի ավերածությունները ու դաժանությունները շարունակվում էին: Հայաստանի ծանր վիճակը, այստեղ արաբական իշխանության վերականգնման վտանգը անհանգստացնում է Բյուզանդիային, պատրիարք Նիկողայոսը նամակ է գրում կաթողիկոս Հովհաննես Դրասխանակերտցուն, առաջարկում միավորել Հայաստանի, Վիրքի և Աղվանքի ուժերը, խոստանում է, որ կայսրը օգնական զորք կուղարկի

հայերին: Կաթողիկոսը իր կողմից գրում է կայսրին և օգնություն խնդրում: Շուտով կաթողիկոսն ու Ա-ը հրավեր են ստանում կայսրից գնալ Կոստանդնուպոլիս: Ա-ը մեկնում է, իսկ կաթողիկոսը նախընտրում է չգնալ, վախենալով, որ կմեղադրվի հունադավանության հարելու մեջ: Կայսր Կոստանդինը /Կոստանդին VII Միրանածին/ Ա-ին ընդունում է արքայական պատիվներով, նրան վերաբերվում են ոչ որպես գահերեց իշխանի, այլ «իբրև զթագաւորացուն բողբոջ գրեթե ընդ իւրով իսկ Կայսր զնա հարթայարմար ցուցանէր»: Ա-ը թագադրվում է կայսեր կողմից, ճանաչվում Հայաստանի թագավոր, ստանում օգնական զորք, մեծ պատիվներ և վերադառնում հայրենիք:

Հայրենիքում իշխանների մեծամասնությունը /բացի Արծրունիներից և Աշոտ Շապուհյանից/ ճանաչում է նրան օրինական գահակալ:

Սակայն արաբները Ա-ին հակադրում են մրցակից խմբակցության պարագլուխ Աշոտ Շապուհյանին և թագադրում նրան Հայաստանի թագավոր, երկուսի միջև ծագում է պատերազմ, առժամանակ կաթողիկոսը հաշտեցնում է նրանց: Սկսվում է նոր փուլ երկիրը թշնամուց ազատագրելու, հայ իշխանական դասը օրինական արքայի շուրջ համախմբելու պայքարում: Ա-ին այդ հաջողվում է, չնայած նրա առջև կային բազմաթիվ արգելքներ:

Պայքարելով արտաքին թշնամիների դեմ, Ա-ն ստիպված էր միաժամանակ ճնշել ներքին խռովությունները՝ Տփղիսի արաբական ամիրայության հետ սահմանապահ Շամշուլդե ամրոցի կառավարիչների /Գնթունի երկու եղբայրների/, Ուտի «գավառ-ի» /վարչական միավոր/ կառավարիչ Մովսեսի, Ա.Շապուհյանի հրահրած նոր կռիվը: Սակայն արքայորդի Ա-ի հաղթանակները ստիպում են արաբական իշխանություններին իրատեսորեն գնահատել իրադրությունը և նախապատվությունը տալ արքայորդուն: Իրենց կողմը գրավելու նպատակով ոստիկան Յուսուփը խալիֆի անունից թագ է տալիս վերջինիս /թագը հանձնվում է հարսանեաց հանդեսի ժամանակ/: Սակայն դրանից հետո էլ պայքարը Ա. արքայորդու և արաբների միջև շարունակվում է: Չեն դադարում ներքին խռովությունները, Ա-ը դավաճանության կասկածանքով Կայան բերդում բանտարկում է Գեղարքունիքի իշխան Վասակին: Շուտով ընդհարում է տեղի ունենում Ա-ի և նրա աներոջ՝ Փառիսոսի իշխան Սահակ Սևադայի միջև, վերջինը պարտվում է և կուրացվում: Բռնագրավվում են նրա տիրույթները: Ա-ի դիրքերը Հայաստանում և ամբողջ Անդրկովկասում գնալով ամրանում են, և խալիֆը նրան ճանաչում է շահինշահ /թագավորաց թագավոր/ Հայաստանի և ամբողջ նախկին Արմինիայի՝ /Հայոց, Վրաց և Աղվանից/: Դրանից հետո մյուս Ա-ը, /Ա. «Բռնավոր», Շապուհյան/ ստիպված է լինում զիջել առաջնությունը արքայորդուն: Նրանց միջև Դվինում հաշտություն է կնքվում: Սակայն դրանից հետո Ա. շահինշահը կրում է մի քանի ռազմական անհաջողություններ, Ուտի «գավառում» շտապողականության և անզգուշության պատճառով նա ընկնում է փակու-

ղու մեջ և չի կարողանում ճնշել նոր կառավարիչ /իր իսկ կողմից նշանակված/ Յլիկ Ամբամի խռովությունը, ընկնում ծանր կացության մեջ և մեծ դժվարությամբ ազատվում շրջապատումից: Օգտվելով նոր իրադրությունից՝ արաբական զորքերը վերսկսում են հարձակումները /924-925/: Ա.-ն ամրանում է Սևանա կղզու ամրոցում, իսկ Դվինի ոստիկան Բեշիրը /մեծ ոստիկանի տեղապահը/ ճամբար է դնում լճի ափին, կղզու դիմաց: Բեշիրը մտադրվում է գերի վերցնել թագավորին, սակայն վերջինը փոքրաթիվ ջոկատով անսպասելի գրոհում է արաբների ճամբարը: Տեղի է ունենում ծովամարտ, ուր Ա.-ը փայլուն հաղթանակ է տանում: Բ.-ը գայրացած ցանկանում է վրեժխնդիր լինել գավառի /Մարագ գավառ/ բնակչությունից, որը պատսպարվում է Խոսրովի անտառի անառիկ Գեղի բերդում: Բ.-ը հարձակվում է բերդի վրա, բայց այստեղ նրա զորքը կատարյալ պարտություն է կրում թագավորի զորավար Գևորգ իշխանից /Գևորգ Մարզպետունի/ (925թ.):

Վերջին երկու հաղթանակները նոր լիցք են հաղորդում ժողովրդի ազատագրական պայքարին, շուտով խալիֆայությունը ստիպված է լինում դադրեցնել զորքերը և ճանաչել Հայաստանի ինքնիշխանությունը: Այսպիսով, Հայաստանը ազատվում է կախվածության վերջին լծակներից: Դրանում ճակատային դեր ունի Ա.-ի գլխավորած ազատագրական շարժումը, նրա ռազմական հաղթանակները ու դիվանագիտական հմտությունը: Նա ստանձնեց երկրի կառավարումը այն ժամանակ, երբ հայ իշխանները, ուրեմն և պետության ռազմական ուժը, պառակտված էին երկու խմբավորումների միջև: Նա շարունակեց իր նոր արտաքին կողմնորոշումը դեպի Բյուզանդիա, ստացավ նրանից որոշ ռազմաքաղաքական օգնություն, բայց կայսերական բանակը շատ շուտով հեռացավ Հայաստանից: Կայսրությունը հետապնդում էր սեփական շահերը, որոնք բնավ չէին նպաստում հայ-բյուզանդական սերտ համագործակցությանը: Մյուս կողմից Ա.-ը կարողացավ մրցակից խմբավորումը թեքել իր կողմը, և Ա. Բռնավորը, փաստորեն, մնաց մենակուսի, չնայած արաբների հովանավորությանը, նա չկարողացավ ճանաչվել իշխանների կողմից գերագույն սյուզերեն /գերադաս/ և Բագրատունի ազգապետ: Իր հաղթանակներով Ա. շահնշահը պայքարը հասցրեց հաղթական ավարտի, անձնական քաջության համար կոչվեց «Երկաթ» և այդ պատվանունով մնաց ժողովրդի հիշողության մեջ:

Գրկ. *N. Adonz*, Ašot Erkat ou de Fer, roi d'Arménie de 913 à 929, "Etudes Arméno-Byzantines", Lisbonne, 1965. Տես նաև Աշոտ Ա. հոդվածի գրականությունը:

47. ՄՈՒՇԵՂ, Սմբատ Ա. Հայոց թագավորի որդի, նրա զինակիցը, մասնակցել է Ձկնավաճառի ճակատամարտին, կռվել է քաջաբար, բայց գերի է ընկել, ենթարկվել չարչարանքների, ապա թունավորվել: Սպարապետ Աշոտ Շապուհյանը նրա մարմինը տեղափոխել է Բագարան, ուր և թաղվել է:

X ԴԱՐ
Երկրորդ կես

Անիական շրջան

48. ԱՇՈՏ Գ ՈՂՈՐՄԱԾ, Հայոց թագավոր 953-977թթ., Աբաս թագավորի որդին և հաջորդը: Շարունակել է հոր բարեփոխումներն ու ավելի լայնածավալ ընթացք տվել դրանց: Ամենագլխավոր բարեկարգումներից էր մշտական մայրաքաղաքի հիմնումը: Այդպիսին պետք է լիներ Կարսը, ուր Ա.-ը գահակալել է 8 տարի (953 - 961): Սակայն մայրաքաղաքի անվտանգության խնդիրները թելադրել են նոր տարածաշրջան ընտրել նրա համար, 953-ին Ա.-ը փորձ է արել Շադդադյաններից վերագրավել Դվինը, սակայն անհաջողությունից հետո 961թ. գահանիստը տեղափոխել է Շիրակ՝ Անի: Այդ առթիվ Անիում կազմակերպվել է մեծ շքահանդես: Տարիներ անց այստեղ հաստատվել է նաև կաթողիկոսի նստավայրը:

Ա.-ն արմատական վերակառուցման է ենթարկել պետության կառավարման համակարգը, սահմանամերձ խոշոր երկրամասերը՝ Վանանդ-Արշարունիքն ու Տաշիր-Ձորագետը ստացել են հատուկ քաղաքական կարգավիճակ, նրանք վերածվել են փոխարքայությունների, իսկ կառավարումը հանձնվել է արքայի մերձավորներին, եղբորը՝ Մուշեղին և որդուն՝ Գուրգենին:

Ա.-ի օրոք առաջին անգամ կիրառվել է գահակցությունը, թագաժառանգ Սմբատը դարձել է թագավոր-գահակից:

Մեծ փոփոխություններ են տեղի ունենում պետական կառուցվածքում՝ կազմալուծված ունիայի փոխարեն ձևավորվում է նոր տիպի համագործակցությունը՝ Ա.-ը և արքունիքը նախկին ունիայի անդամներին «դաշինքներով» /«ուխտերով»/ կապում են Շիրակի ֆեոդալական տան հետ, առաջ է գալիս ավատական թագավորությունների և խոշոր իշխանությունների դաշնապետությունը /ֆեդերացիան/, որը գլխավորում է Բագրատունյաց թագավորությունը: Ավատական /երկրամասերում առաջացած տոհմական տիրույթների սահմաններում/ թագավորությունների թագավորները /Վասպուրականի, Կարսի և մյուս/ և առավել ազդեցիկ իշխանները Ա.-ին ճանաչում են համահայկական քաղաքական հիերարխիայի /սանդուղքի/ ավագ, պարագլուխ՝ «առաջինը հավասարների մեջ»: Դաշնապետության բանակը պատերազմի ժամանակ մեծ ուժ էր ներկայացնում, որը կարող էր հակադրվել ամենազորեղ թշնամուն: Նրա ուժը դրսևորվեց առանձնապես 974թ.՝ բյուզանդական կայսր Հովհաննես Զմշկիկի արևելյան արշավանքի ժամանակ: Կայսրը Միջագետքում հաղթական պատերազմից հետո մտել էր Հայաստան և հասել մինչև Մուշ /Տարոն/: Նրան ընդառաջ էր գնացել 80-հազարանոց դաշնապետության բանակը Ա.-ի գլխավորությամբ: Զմշկիկը գերադասել է չընդհարվել, դաշինք է կնքել Ա.-ի հետ և հեռացել երկրից:

950-ական թթ. վերջում պետության ներսում տեղի են ունեցել անջատողական դրսևորումներ: 958թ. Ա.-ի հանձնարարությամբ կաթողիկոս Անանիա Մոկացին այցելել է Սյունիք և խաչեն, թագավորի անունից տեղի գաճերեցցներից հավատարմություն պահանջել Հայոց թագավորին, իսկ նրանց եկեղեցական թեմերից՝ կաթողիկոսարանին: Այդ շրջանում հաջողվել է պահպանել պետության միասնությունը, նշված երկու իշխանությունների վասալական կապը Ա.-ի հետ: Բագրատունի Հայոց թագավորի հետ Արծրունիների և Սյունիների կապը ավելի սերտացնելու նպատակով նրանց գաճերեցներին տրվել են արքունի կարևոր գործակալություններ /օր. Արծրունիներին՝ Հայոց իշխանի և այլն/: Անանիա Մոկացու մահից հետո (968) կաթողիկոսական աթոռում Ա.-ի օժանդակությամբ ընտրվել է Սյունյաց եպիսկոպոս Վահանը (968-969), սակայն վերջինը մեկ տարի անց ընդհարվել է Ա.-ի հետ, հեռացվել աթոռից: Ա.-ի հրամանով նոր կաթողիկոս է ընտրվել Ստեփանոս Գ Սևանցին (969-972):

Ա.-ի գահակալության տարիները առանձնահատուկ կարևորություն ունեն Բագրատունյաց Հայաստանի համար, նա, հենվելով իր ունեցած սոցիալ-քաղաքական բազայի վրա, կարողացել է կասեցնել ֆեոդալական մասնատվածության խորացումը, ֆեոդալական ավագանուն համախմբել Բագրատունի ազգապետի շուրջը, միավորելով նրանց մեկ պետության /դաշնապետության/ մեջ: Դա Ա.-ի մեծագույն ծառայությունն է իր հայրենիքի հանդեպ: Ա.-ը ոչ միայն «Ողորմած» է /բարերար/, այլև մեծ «Բարեվորոգիչ» /ռեֆորմատոր/, որի բարեվորոգումները բխում էին ժամանակի պահանջներից, և ժողովրդի բոլոր խավերը գիտակցում էին դրանց անհրաժեշտությունը:

Գրկ. *Լեո*, Հայոց պատմություն, հ. 2, «Երկեր», հ. 2, էջ 577-591: *Մ. Օրմանյան*, Ազգապատում, հ. Ա., կ. Պոլիս, 1912, էջ1106-1110: *Հ. Անասյան*, Հայկական մատենագիտություն, հ. I, Եր., 1959, էջ1028-1029: *Ռ. Մաթևոսյան*, Բագրատունյաց Հայաստանի պետական կառուցվածքն ու վարչական կարգը, Եր., 1990:

49. ԳՈՒՐԳԵՆ, Աշոտ Գ Ողորմածի կրտսեր որդի, Բագրատունիների Լոռվա ճյուղի հիմնադիր, Լոռվա թագավոր /տես ԿՅՈՒՐԻԿՅԱՆՆԵՐ հոդվածը «Բագրատունիների տոհմաճյուղեր» բաժնում/:

50. ՄՈՒՇԵՂ, Աշոտ Գ Ողորմածի եղբայր, Բագրատունիների Կարսի ճյուղի հիմնադիր, Կարսի թագավոր /տես «Բագրատունիների տոհմաճյուղեր» բաժնում/:

51. ՍՄԲԱՏ Բ ՏԻԵԶԵՐԱԿԱԼ, Հայոց թագավոր 977-990թթ., շահնշահ, Աշոտ Գ Ողորմածի ավագ որդին և հաջորդը: 950-ական թթ. հոր գահակիցն էր «Հայոց թագավոր-գահակից» կարգավիճակով և մասնակից էր պետության

կառավարմանը: Որպես արքունիքի ներկայացուցիչ կառավարում էր «Տաշիր երկիրը», կրտսեր եղբոր՝ Գուրգենի հետ իրականացնում վարչական բարեփոխումները Տաշիր-Ձորագետում: 977-ին ժառանգելով հոր գահը՝ գահակալել է Անիում, Ս-ի գահակալական առաջին տարիներին խառնակ վիճակ էր Բյուզանդական կայսրության փոքրասիական /արևելյան/ ճահճագներում՝ 976թ. հայազգի Վարդ Սկլերոսի գլխավորությամբ ապստամբել էր փոքրասիական ազնվականության այն մասը, որը խիստ դժգոհ էր կայսր Վասիլ Բ-ից: Կայսեր բանակը երկու պարտություն էր կրել, որից հետո բյուզանդական իշխանությունները որոշել էին թիկունքից հարվածել ապստամբներին և այդ նպատակով օգտագործել տեղական դաշնակից ֆեոդալներին: Տայքի իշխանությունը /կյուրապաղատությունը/ դաշնակցեց կայսրությանը, բայց Հայոց թագավորությունը պահպանեց չեզոքություն, Ս-ի այդ քայլի շնորհիվ երկիրը զերծ մնաց կողմերից որևէ մեկի հետ հնարավոր բախումներից: Բայց մյուս կողմից Փոքր Ասիայում ստեղծված իրավիճակից օգտվեցին որոշ մահմեդական ամիրայություններ, 982-ին Դելմաստան /Կասպից ծովի արևմտյան ափ/ ամիրա Աբլահաթը /Աբուլ-Հայջա/ արշավեց Հայաստան, գրավեց Դվինը, հասավ մինչև Շիրակ և ավերեց Հոռոմոսի վանքը: Ս-ը կարողացավ նրա դեմ դուրս բերել Գողթնի ամիրա Աբուտլուփին /Աբուդուլաֆ/, որից Դելմիկ ամիրան պարտվեց և փախուստի դիմեց: Տարիներ անց, 987-ին ներխուժեց Ատրպատականի ամիրան նույնպես Աբլհաճ անունով և նորից գրավեց Դվինը: Ս-ը գերադասեց ռազմավար /«հարկ»/ տալ և խուսափել պատերազմից: Որպես Անդրկովկասի ֆեոդալական հիերարխիայի պարագլուխ /շահնշահ/ 988-ին միջամտեց վրաց և աբխազաց գահակալների միջադեպին /Աբխազիայում տեղի իշխանները կուրացրել էին թագավոր Թևդոսին և հեռացրել նրան գահից/: Ս-ի և Տայքի Դավիթ Կյուրապաղատի օգնությամբ 978թ. գահակալել էր Բագրատը՝ վրաց թագավոր Գուրգենի որդին: /978-ից աբխազաց, 1008-1014՝ վիրա-աբխազաց թագավոր/: Սակայն 988 Բ-ի և իր հոր միջև գժտություն է տեղի ունենում, և Գուրգենը օգնություն է խնդրում Ս-ից: Վերջինը մեծ զորք է հավաքում՝ նրա կազմում էին Վասպուրականի, Սյունիքի, Կարսի, Տարոնի, Արցախի գահակալներն ու իշխանները: Հակառակորդները ճամբար են դնում Կուրի ափերին: Սակայն ճակատամարտ տեղի չի ունենում՝ հայ-վրացական բանակի զգալի գերակշռությունը ստիպում է Բ-ին խուսափել կռվից և հաշտության դաշինք կնքել:

Ս-ը պաշտպանում է Բագրատունի «ազգապետի» և գերադասի /այուզերենի/ իրավունքները նաև երկրի ներսում: Նրա և Կարսի Մուշեղ թագավորի միջև վեճ է ծագում Շատիկ ամրոցի պատճառով /Ճակատք գավառ/, որը տրված էր Կարսի գահակալին պայմանական տիրության իրավունքով: Մ-ի ինչ-որ անօրինական գործողությունների պատճառով Ս-ը խլում է ամրոցը, բայց Կարսի կառավարիչը դիմում է Դավիթ Կյուրապաղատին: Վերջինի միջ-

ներդությամբ Ս-ը վերադարձնում է ամրոցը, բայց հետագայում Կարսի Բագրատունիները /Ս-ի կամ Գագիկ Ա.-ի օրոք/ կորցնում են Շատիկը: Ս-ը մեծ շինարարական աշխատանքներ է կատարել Անիում և այլ վայրերում: Նա սկսել է Մայր տաճարի կառուցումը Անիում /ավարտվել է հաջորդի՝ Գագիկ Ա.-ի օրոք/: Մայրաքաղաքի զգալի ընդարձակման պատճառով Աշոտ Գ.-ի կառուցած պարիսպները այլևս չէին ապահովում նրա պաշտպանությունը, Ս-ը կառուցել է նոր հզոր պարիսպներ /«Սմբատյան»/, որոնք այժմ էլ կանգուն են:

Ս-ի գահակալության տարիները բնորոշ են երկիրը պատերազմներից զերծ պահելու խիստ ընդգծված ձգտումով՝ հնարավոր ամեն ինչ անել պահպանելու խաղաղ կացությունը և չբնդհարվել հարևան պետությունների հետ /Բյուզանդական կայսրություն, արաբա-քրդական ամիրայություններ/: Դրանում հասնելու համար Ս-ը պատրաստ էր որոշ դեպքերում «հարկ» /գումար տալ/ և այդ եղանակով հեռացնել ներխուժած օտար զորքը Հայաստանից: Նրա այդ գիծը առիթ է տվել ժամանակակից պատմիչին /Ասողիկ/ գրելու, որ "էր խաղաղութիւն և շինութիւն աշխարհիս Հայոց", իսկ ժամանակակից պատմաբաններից շատերը դրանում տեսել են նրա թուլությունը: Առանձնապես կտրուկ է արտահայտվել Լեոն, բնութագրելով նրան որպես «ոչ պատերազմասեր», խաղաղությունը պահպանելու համար նա կատարում էր իրենից ուժեղների կամքը:

Ս-ի իսկական նշանակությունը, ըստ Լեոյի, պետք է որոնել ներքին շինարար քաղաքականության մեջ, նկատի ունենալով Ս-ի կառուցումները, Լեոն եզրակացնում է, այդպիսի բեղմնավոր գործունեության համար նրան հարկավոր էր երկարատև խաղաղություն: Լեոն տարակուսում է, որ Ս-ը կրում էր «տիեզերակալ» տիտղոսը: Նման բնութագիրը սխալ է և ելնում է թագավորի գործելակերպի արտաքին տպավորությունից: Ս-ը կարող էր անհրաժեշտության դեպքում զորակոչել բոլոր հայ գահերեցներին և կազմակերպել ուժեղ բանակ /ինչպես 988-ին/, իսկ Անդրկովկասի /նախկին արաբական Արմինիայի/ գահակալները նրա հետ հաշվի էին նստում վիճելի խնդիրներ լուծելիս: Ինչ վերաբերում է ամիրայությունների հետ նրա վարած տակտիկային /այստեղ առավել ցայտուն է դրսևորվել կռիվներից խուսափելու նրա գիծը/, ապա դա Ս-ի ռազմավարական քաղաքականությունն էր՝ յուրաքանչյուր գահակալ ընտրում է իր գործելակերպը, ելնելով մի շարք հանգամանքներից: Պետք է նշել, որ, այնուամենայնիվ, Լեոն մասամբ վերանայեց իր կարծիքը Ս-ի վերաբերյալ. դիտելով Անիի ավերակները և նրանց տպավորությամբ նա գրել է, որ "այսպիսի ամրություններ ծրագրող, գլուխ բերող թագավորը չէր կարող վատասիրտ ու հաղթվող լինել": Ս-ին համարում է Բագրատունիների մեջ ամենախրոխտ գահակալը: Ս-ի պատկերաքանդակները տեղադրված են Սանահնի և Հաղպատի վանքերի գլխավոր եկեղեցիների հակատներում /առաջինում՝ տեղական տարազով, որպես թագավոր-գահակից, երկրորդում՝ չալմայով (թագով) և արաբական արքայական զգեստով՝ որպես շահնշահ: Չալմայի վրա քանդակված է արաբերեն արձանագրություն՝ «Շահնշահ Անիի, թագավոր»/:

Գրկ. *Ղ. Ալիշան*, Շիրակ, Վնտ., 1881: *Լեո*, Հայոց պատմություն, հ. 2, «Երկեր», հ. 2: *Նույնի՝* Անի, «Երկեր», հ. 8, եր., 1985, էջ 269-270: *Արամ Տեր-Ղևոնդյան*, Հաղպատի արաբերեն արձանագրությունը և Բագրատունի թագավորների տիտղոսները, ԳՍ «Լրաբեր», 1979, հ. 1: *Ռ. Մաթևոսյան*, Տաշիր-Ջորագետ, եր., 1982, էջ 56-68:

X - XI ԴԱՐԵՐ

52. ԳԱԳԻԿ Ա., Հայոց թագավոր, շահնշահ (990-1020): Բագրատունի գահակալներից ամենազորեղը, որի օրոք Բագրատունյաց թագավորությունը հասավ իր հզորության գագաթնակետին: Ռազմատնտեսական ուժն ու վերելքը նախապատրաստված էր նախորդ գահակալների՝ Աշոտ Գ.-ի և Սմբատ Բ.-ի բարեկարգումներով և ներքին ու արտաքին հեռատես, նպատակասլաց, արդյունավետ քաղաքականությամբ: Պատմիչ Արիստակես Լաստիվերտցին բնութագրում է Գ.-ին որպես "այր հզօր և յաղթող ի պատերազմունս. սա ի խաղաղութեան կալաւ զաշխարհս Հայոց": Այս շրջանում հարևան ամիրայությունները խուսափում էին թշնամական գործողություններից, իսկ Բյուզանդիան զբաղված էր Բուլղարիայի նվաճումով: Գ.-ը մեծ ուշադրություն է դարձրել հայ գահակալների և Բագրատունի շահնշահի կապերը /վասալա-սյուզերենական հարաբերությունների համակարգը/ ավելի ամրապնդելուն, այդ նպատակով խնամիական կապերով մերձենում էր նրանց հետ. նրա դուստր Խուշուշը կնության էր տրված Վասպուրականի թագավոր Սենեքերիմին, իսկ ինքը ամուսնացած էր Սյունյաց արքայադուստր Կատրամիդեի հետ: Դա ավելի մոտեցրեց Սյունիքը Բագրատունիների հետ, 1016թ. Սյունյաց Վասակ թագավորը /Կատրամիդեի հայրը/ դիմեց կաթողիկոս Սարգիս Սևանցուն, խնդրելով վերականգնել Սյունյաց մետրապոլիտությունը, որ վերացվել էր Անանիա Մոկացու հրամանով: Գագիկի և Կատրամիդեի միջնորդությամբ խնդրանքը բավարարվում է, նորոգվում է Սյունյաց հոգևոր աթոռը նախկին կարգավիճակով: Գ.-ի օրոք խռովություններ են բարձրացրել Բագրատունի կրտսեր տները, Կարսի և Կյուրիկյան թագավորները փորձել են թուլացնել կախումը «ազգապետ» շահնշահից: 1001թ. ըմբոստացել էր Լոռվա /Տաշիր-Ջորագետի/ թագավոր Դավիթը, իսկ 1010-ական թթ.՝ Կարսիցը: Երկուսի ըմբոստությունն էլ ճնշվել է Գ.-ի կողմից՝ 1001թ. նա արշավել է Տաշիր, ապա Աղստևի հովիտ, գրավել Դավթի ամրոցները: Վերջինը ստիպված է եղել հնազանդվել «ազգապետին», բայց նրանից խլվել է տիրույթների զգալի մասը /Աղստևի հովիտը՝ Աղստև «գավառ»/, այդ պատճառով Դավիթը ստացել է «Անհողին» անունը: Կարսի կառավարիչների հետ հարաբերությունները այնքան էին վատացել, որ Գ.-ը Մուշեղի ժառանգներից /Մուշեղյաններից/ խլեց իշխանությունը և Կարսում կառավարիչ /թագավոր/

նշանակեց իր կրտսեր որդի Աբասին: Գ-ը Բագրատունյաց թագավորությանը միացրել է մի քանի գավառներ և ամրոցներ ի հաշիվ Վայոց ձորի, Խաչենի և Փառիսոսի: 1003թ. Փառիսոսի տարածքի մի մասը անցնում է Բագրատունիներին, մյուս մասը զավթում է Շադդադյան քրդական ամիրայությունը: Փառիսոսի թագավորությանը մնում է նրա հողերի չնչին մասը: Գ-ը մեծ հեղինակություն ուներ Անդրկովկասում և որպես շահնշահ տեղական գահակալների պարագլուխն էր, նրանց միջև հաստատվել էր ռազմաքաղաքական համագործակցության սկզբունքը:

Տայքի կյուրապաղատ /իշխան/ Դավիթը արաբներից գրավել էր Մանազկերտը, որի պատճառով Ատրպատականի ամիրա Մամլանը, դաշնակցելով այլ ամիրաների հետ, արշավել է Հայաստան Մանազկերտը ետ խլելու նպատակով: Մ-իի հակահարված տալու նպատակով Գ. շահնշահի գլխավորությամբ կազմակերպվել է զորահավաք, որին մասնակցել են Դավիթ Կյուրապաղատը, Կարսի Աբաս Ա-ն և վրաց Բագարատ թագավորը: Տեսնելով զորահավաքի թվական մեծ գերակշռությունը, Մ-ն գերադասել է առանց ճակատամարտի հեռանալ Հայաստանից: 998թ. Մ-ն երկրորդ փորձն է կատարում գրավելու Մանազկերտը, Գ-ն օգնական զորք է ուղարկում Դավիթ Կյուրապաղատին, Ապահունիքի Ծումբ գյուղի մոտ ամիրան ծանր պարտություն է կրում և դիմում փախուստի:

Հայաստանի հզորությունը պայմաններ է ստեղծում տնտեսական և մշակութային առաջընթացի չընդհատվող զարգացման համար. Անիում Բագրատունիներն ու Պահլավունիները կառուցում են պալատներ և եկեղեցիներ, Գ-ը կառուցում է Զվարթնոցատիպ ս. Գրիգոր /«Գագկաշեն»/ եկեղեցին, ուր դրվում է նրա տուֆակերտ արձանը, 1001թ. Կատրամիդեն ավարտում է Մայր տաճարի կառուցումը, կառուցվում են քարավանատներ, կամուրջներ և այլ շինություններ: Գ-ն ակնհայտ անկախ է պահում իրեն Բյուզանդական կայսրության հանդեպ՝ 1000թ. մահանում է Դավիթ Կյուրապաղատը, և կայսր Վասիլ Բ-ն անձամբ ժամանում է Հայաստան, տիրանալու նրա տիրույթներին, որոնք Դավիթը կտակել էր /ստիպված/ կայսրին: Ճանապարհին նրան ներկայանում են աբխազաց, վրաց և մի քանի հայ թագավորներ /հայերից՝ Կարսի Աբասը, Վասպուրականի Սենեքերիմը/, արաբ որոշ ամիրաներ, ստանում նրանից պատիվներ և բյուզանդական տիտղոսներ: Բագրևանդի Վաղարշակերտ քաղաքում կայսրը որոշ ժամանակ սպասում է Գ. շահնշահի այցին, սակայն վերջինը չի ներկայանում, պատմիչ Ասողիկը գրում է, որ Գ-ն "իբրեւ փոքրութիւն համարեալ զգնալն իւր առ նա": Գ-ի քրոջ որդի Աբուսահլ Արծրունին այդ կապակցությամբ չարախոսում է կայսրին, ի պատասխան դրան Գ-ը նրամայում է որդուն՝ Հովհաննեսին, գրավել Աբուսահլին պատկանող Կոգովիտ և Ծաղկոտն գավառները: Գ-ը հետևողականորեն իրագործում էր միասնական պետության պահպանման և ամրապնդման գիծը՝ ամուր դաշնա-

պետության շրջանակներում, նա համախմբում էր հայ ֆեոդալական ազնվականությանը՝ ավատական թագավորներին /Վասպուրական, Սյունիք/, գահերեց իշխաններին /Պահլավունիներ, Խաչեն, Տարոնի անկախ մասը/ և ֆեոդալների միջին խավին Շիրակի շահնշահների տան շուրջ, կտրուկ քայլերով ճնշում Բագրատունի կրտսեր ճյուղերի անհնազանդության դրսևորումները: Բարձր էր Հայաստանի միջազգային հեղինակությունը, Գ-ի հանդուգն վերաբերմունքը դեպի կայսրը, որը համարվում էր բոլոր քրիստոնյա գահակալների «գերադասը», շատ խոսուն փաստ է՝ Գ-ն արհամարհեց իր քայլի հնարավոր բացասական հետևանքները և կայսեր պատասխան քայլերը:

Գրկ. *Միխայել Չամչյանց*, Հայոց պատմություն, հ. Բ, Վնտ., 1785, էջ 871-896: *Լծն*, Հայոց պատմություն, հ. 2, «Երկեր», հ. 2: *Հ. Մանանդյան*, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, «Երկեր», հ. Գ, եր., 1977, *Հ. Հարությունյան*, Հայաստանը IX-XIդդ., եր., 1959: *Ռ. Մաթևոսյան*, Բագրատունյաց Հայաստանի պետական կառուցվածքը: *René Grousset*, Histoire de l'Arménie des origines a 1071, Paris, 1973, p. 518-540.

XI ԴԱՐ
Առաջին կես

53. ԱԲԱՍ, Գագիկ Ա շահնշահի կրտսեր որդի: Տես «Բագրատունիների տոհմանյուղեր»:

54. ԱՇՈՏ Դ, Հայոց թագավոր 1020-1041թթ., Հովհաննես-Սմբատի գահակից, Գագիկ Ա շահնշահի միջնեկ որդի: Գ-ի օրոք եղբայրների հետ մասնակից էր երկրի կառավարմանը և ուներ «թագավորի» տիտղոս-պաշտոնը: Հոր մահից հետո գահը և Անին ժառանգեց ավագ եղբայր Հովհաննես-Սմբատը, բայց Ա-ը հոր կողմից նշանակված էր ավագ որդու գահակիր: Սակայն Հովհաննեսը բռնատիրել էր Ա-ի իրավունքները և չէր թողնում նրան մոտենալ Անի: Դրա հետևանքով Ընդց միջև սկսվեց գահակալական պայքար: Միջամտում են Բագրատունի և Փահլավունի ազդեցիկ իշխանները, կաթողիկոս Պետրոս Գետադարձը և հաշտեցնում եղբայրներին: Ըստ համաձայնագրի Հովհաննեսին տրվեց Անին և կենտրոնական գավառները, իսկ Ա-ը թագավորեց «Դրուց աշխարհում» /Շիրակ-Այրարատից դուրս/: Եղբոր մահից հետո վերջինի բաժինը պետք է անցներ Ա-ին և նա թագավորելու էր Անիում: Այսպիսով, Բագրատունյաց թագավորությունում հաստատվեց երկիշխանություն /այլ ոչ թե թագավորությունը բաժանվեց երկու մասի, ինչպես սխալ մեկնաբանվում է պատմագիտության մեջ/: 1020-1041թթ. կար երկու հայոց թագավոր, Ա-ին ենթակա էին «Վրաց և Պարսից»՝ Վրաց թագավորությանն ու Ատրպատակա-

նին սահմանակից շրջաններ: Գահակալական պայքարը, բացի իշխանատենչ հավակնություններից, պայմանավորված էր քաղաքական բարդ իրավիճակով՝ 1020-1021թթ. վճռաբեկ տարիներ էին Բագրատունյաց թագավորության ճակատագրի համար. Հովհաննեսը կտակել էր թագավորությունը Բյուզանդական կայսրին /կայսր Վասիլ Բ-ի ակնհայտ սպառնալիքի տակ/: Ա-ն, ամենայն հավանականությամբ, դեմ էր կտակին «Տրապիզոնի պայմանագիր», քանզի նա էր տիրանալու ապագայում Հովհաննեսի բաժնին:

Պետության ճակատագիրը կարգավորելու նպատակով Ա-ն այցելեց Բաղդադ և Կոստանդնուպոլիս: Հայտնի չեն նրա բանակցությունների արդյունքները, հայտնի է միայն, որ նա կայսրից ստացավ օգնական զորք և հաջողությամբ պայքարեց հարևան ամիրայությունների դեմ, որոնք զավթել էին նրա տիրույթների մի մասը: 1041թ. Ա-ն անսպասելի մահացավ, թողնելով իր բաժինը 16-ամյա ժառանգ Գագիկին: Նա թաղվեց Անիում՝ տոհմական դամբարանում, հանգամանք, որը հաստատում է Ա-ի օրինականությունը: Քսանամյա գահակալության շրջանում Ա-ը մշտապես ձգտել է մտնել Անի, քանզի միայն անիական աթոռը ճնարավորություն կտար նրան լուծելու պետության բախտորոշ խնդիրները: Նա փորձեց նույնիսկ հեղաշրջում կատարել՝ ձևացնելով մահամերձ հիվանդ, հրավիրեց Հովհաննեսին Թալին /որն այդ ժամանակ նրա ամրոցն էր և հավանաբար նստավայրը/, ապա գերեվարեց և հրամայեց իր վասալ իշխաններից Ապիրատ Պահլավունուն սպանել նրան: Սակայն Ապիրատը չկատարեց հրամանը և ազատ արձակեց Հովհաննեսին: Այնուամենայնիվ, Ա-ը մասնակիորեն հասավ իր նպատակին, ստիպելով, որ Հովհաննեսը կազմի երկրորդ կտակը և իրեն ճանաչի Անիի ժառանգ: 1020-1021թթ. Հայաստանում ստեղծված բախտորոշ իրավիճակում, երկրի համար, որպես թագավոր, պետության ղեկավար, անկասկած, նախընտրելի էր Ա-ը, պատմիչ Արիստակես Լաստիվերտցու խոսքերով նա «արի էր և քաջասիրտ, հաղթող պատերազմներում», իսկ Հովհաննեսը «մարմնով տարտամ և թուլամորթ պատերազմում»: Ա-ը կհասներ իր բաղձանքին, եթե անսպասելի և վաղաժամ մահը չկասեցներ նրա պայքարի հետագա ընթացքն ու ավարտը:

Գրկ. *Տես Գագիկ Ա, Հայոց թագավոր* հոդվածի գրականությունը:

55. ԳԱԳԻԿ Բ, Հայոց թագավոր 1042-1045թթ., շահնշահ, Աշոտ Դ-ի որդի: Գրավեց գահը համաձայն իր հոր և հորեղբոր /Հովհաննես թագավորի/ կնքած համաձայնագրի: Մինչ նրա գահակալումը բյուզանդական կայսր Միխայիլը Հովհաննեսի կտակի համաձայն պահանջեց իրեն հանձնել Անին /թագավորությունը/, զորք ուղարկեց գրավելու քաղաքը, բայց բյուզանդական բանակը ծանր պարտություն կրեց Անիի մատույցներում: Արքունիքում այդ ժամանակ բախվել էին երկու խմբավորումներ՝ ազնվականության մի մասը, սպարապետ Վահրամ Պահլավունու գլխավորությամբ, պաշտպանում էր օրինական ժառանգի՝ Գ-ի իրավունքները, մյուսը՝ բյուզանդամետ՝ ազդեցիկ պալատական, Հովհաննեսի հոգաբարձու Վեստ Սարգսի գլխավորությամբ, գործում էր հօգուտ Բյուզանդիայի: Վ. Սարգիսը նույնիսկ ձգտում էր գրավել գահը, բայց Պահլավունիները՝ Վահրամ սպարապետի և Գրիգոր Մագիստրոսի առաջնորդությամբ Անի մտցրին Գ-ին և Պետրոս կաթողիկոսի հետ նրան հուչակեցին թագավոր: Վ. Սարգիսը շարունակեց պայքարը, զավթեց արքունի գանձարանը և ամրացավ Սուրմարի ամրոցում, սակայն երիտասարդ թագավորը գրավեց ամրոցը, և Սարգիսը ստիպված եղավ հրաժարվել իր հավակնություններից: Գ-ը ներեց նրան և վերականգնեց դիրքը արքունիքում: Այնուհետև երկիրը մաքրվեց Պարսկաստանից ներխուժող սելջուկ ավազակախմբերից՝ Գ-ը և Գրիգոր Մագիստրոսը Բջնիի մոտ վճռական ճակատամարտում ջարդեցին ելուզակներին և վտարեցին երկրից: Այսպիսով, սկզբնական շրջանում Գ-ը հաղթում է ներքին հակառակորդներին և կայունացնում երկրի վիճակը:

Սակայն շուտով դրությունը փոխվում է ի վնաս Գ-ի՝ Բյուզանդիայի նոր կայսր Կոստանդին IX Մոնոմախը նորից պահանջում է Անին, նա ձգտում է ուժի միջոցով լուծել պահանջախնդիրը՝ բյուզանդական զորքը չորս անգամ արշավում է Անիի վրա, բայց մշտապես պարտություն կրում: Այնուհետև կայսրը դիմում է դիվանագիտական ծուղակի՝ հրավիրում է Գ-ին Կոստանդնուպոլիս՝ իբր բանակցությունների, երդվում Ավետարանով և ս.Խաչով՝ խոստանալով ճանաչել նրա իրավունքները և բարեկամական դաշինք կնքել նրա հետ /«վասն սիրոյ և տեսութեան»/: Գ-ը, հաշվի առնելով բյուզանդացիների նենգությունը, երկար ժամանակ չի համաձայնում, բայց Վ. Սարգիսը և նրա խմբավորումը համոզում են թագավորին չվախենալ և ընդունել կայսեր հրավերը, երդվում են, որ հավատարիմ կմնան իրեն: Հակառակ դրան Վահրամ սպարապետը կտրուկ դեմ էր մեկնելուն: Սակայն, ի վերջո, Գ-ը որոշում է մեկնել, ըստ երևույթին չցանկանալով վատացնել հարաբերությունները և հավատալով կայսեր երդմանը: Այդ պատճառով վատանում են հարաբերությունները Գրիգոր Մագիստրոսի հետ: Ստանալով բոլոր իշխաններից հավատարմության «երդման գիր» և նշանակելով կաթողիկոսին իր փոխանորդ, նա մեկնում է Կոստանդնուպոլիս: Այնտեղ նրան ընդունում են մեծ շուքով, որոշ ժամանակ պատվով պահում: Սակայն բյուզանդամետ խմբավորումը խախտում է երդումը, կազմում է «Թուղթ», ըստ որի Անին հանձնվում է կայսրին, և քաղաքի բանալիների հետ ուղարկում Մոնոմախին: Ստանալով «Թուղթը» կայսրը պահանջում է Գ-ից հանձնել թագավորությունը: Գ-ը կտրուկ մերժում է, մեկ ամիս մնում պալատում մեկուսի վիճակում, ի վերջո, ճարահատյալ հանձնում է Անին /և թագավորությունը/, փոխարենը ստանում մի քանի ամրոցներ Կիլիկիայի և Կապադովկիայի սահմանամերձ շրջանում /Պիզու, Կոլոնպադատ և այլն/: Շիրակից նոր վայր են տեղափոխ-

վում նաև նրա «տունը», ազգականներն ու վասալ իշխանների մի մասը իրենց զորամասերով: Առաջանում է նոր իշխանություն, որը գոյատևում է մինչև 1079թ.: Կապադովկիայում նա շրջապատված էր բյուզանդական թշնամի ֆեոդալներով, հաճախ բախվում էր նրանց հետ: Նա սպանում է Կեսարիայի մետրապոլիտ Մարկոսին, որը հայերին վիրավորելու համար շանը անվանել էր Արմեն: Վտարանդության մեջ Գ-ն ուղիներ էր որոնում վերադառնալ Անի, նրան հաջողվում է իր ավագ որդի Հովհաննեսին փեսայացնել Անիի բյուզանդական կառավարչին /անունը աղբյուրում չի նշված/, այդ արվում էր որոշակի նպատակով: Հովհաննեսը մտավ Անի, բայց պատմիչ Վարդանի վկայությամբ Անիում «հանգիստ չգտավ» և մեկնեց Կոստանդնուպոլիս:

Գագիկը կրկնեց փորձը, երբ արդեն Անին անցել էր սելջուկների ձեռքը: Պատմիչ Մատթեոս Ուռհայեցին գրում է, որ սուլթան Ալփասլանը որոշ պայմաններով պատրաստ էր Անին վերադարձնել իր տիրոջը. «խորհեցաւ գնալ / Գագիկը/ առ Ալփասլան սուլտանն պարսից և տիրանալ աթոռոյ թագաւորութեանն տանն Հայոց, զի բազում անգամ կոչէր զԳագիկ սուլտանն, և նա յաղագս քրիստոնեական հաւատոյ արգելեալ լիներ»:

Ինչպես երևում է այս տողերից, սուլթանի պայմաններից մեկը մահմեդականության ընդունումն էր, իսկ Գագիկը չէր համաձայնում: Այնուհանդերձ, Գագիկը ինչ-որ ձևով համաձայնության եկավ Ալփասլանի հետ, այդ մասին շատ հակիրճ տեղեկացնում է Վարդանը, որը Գագիկի թոռ Աշոտի մասին գրում է. "Եւ սա չոգաւ առ սուլտանն հրամանակ կայսեր, և ետ նմա զԱնի և ներքինի ոմն ազգական Մանուէէի դեղավ սպան զնա, և մարմինն բերաւ ի Կոստանդնուպոլիս: Եւ նախքան զգալն մեռեալ որդւոյն՝ մեռաւ հայրն և բարձան թագակալքն Անւոյ այսու օրինակաւ":

Որքան հնարավոր է պատկերել այս դեպքը, Գագիկի թոռ Աշոտը եկավ Անի այն ժամանակ, երբ քաղաքը արդեն պատկանում էր Շադդադյաններին /որոնք գնել էին Ալփասլանից/, իսկ քուրդ ներքինին, վախենալով Բագրատունի օրինական ժառանգի ներկայությունից, թունավորել է նրան: Բացի այդ, ուշագրավ մանրամասն է, որ Աշոտը եկել էր սուլթանի մոտ կայսեր հանձնարարությամբ:

Գագիկ Բ-ի թոռ Աշոտի ժամանումը Անի եղավ Բագրատունիների տոհմական կենտրոնը և իրենց մայրաքաղաքը վերականգնելու վերջին փորձը, աղբյուրներում այլևս նման տեղեկություններ չկան:

1079թ. բյուզանդական ֆեոդալներ Մանդալե եղբայրները Կիզիստրա ամրոցում գերում են Գ-ին, հայ իշխանները /Գագիկը՝ Կարսից տեղափոխված թագավորը, Արծրունի արքայազն Ատոմն ու Ապուսահլը և ուրիշներ/ պաշարում են ամրոցը և փորձում փրկել Գ-ին, բայց չեն կարողանում: Գ-ն սպանվում է ամրոցում, ամիսներ անց հայերին հաջողվում է նրա մարմինը տեղափոխել Պիզու և թաղել վանքում: Այսպիսի անարդարացի դժբախտ վախճան

ունեցավ Բագրատունի վերջին ազգապետի և շահնշահի փորձություններով լի կյանքը: Գ-ի վրեժը լուծում է Կիլիկիայի հայ իշխան Թորոս Ա-ն (1100-1129), սպանելով Մանդալե եղբայրներին:

Զնայած երիտասարդ տարիքին, Գ-ը դրսևորեց իրեն որպես անճնուրաց պետական գործիչ, նրա առանձին քայլերը, որոնք այսօր կարող են գնահատվել որպես սխալ և բախտորոշ երկրի ճակատագրի համար, ժամանակին թելադրված էին Հայաստանի արտակարգ բարդ միջազգային դրությամբ: Բյուզանդիայի ագրեսիան, սելջուկ հորդաների մոտալուտ ներխուժումը դրել էին երկիրը երկու ոսխների միջև: Դժվար է ասել, թե ինչպիսին կլիներ Հայաստանի վիճակը, եթե Գ-ը Կոստանդնուպոլիս չգնար, որքան ժամանակ հնարավոր կլիներ դիմադրել կայսրության հարձակումներին: Բոլոր դեպքերում Գ-ի մեկնումը պետք է դիտել որպես անկախությունը փրկելու ծայրահեղ քայլ:

Գրկ. *Կ. Կոստանյանց*, Տեր Պետրոս Ա. Գետադարձ, Վաղարշապատ, 1897, տես նաև Գագիկ Ա. հոդվածի գրականությունը:

56. ՀՈՎՀԱՆՆԵՍ-ՍՄԲԱՏ, Հայոց թագավոր 1020-1041թթ., շահնշահ, Գագիկ Ա-ի ավագ որդի: Գահակալության սկզբից նեթ նրա և եղբոր՝ Աշոտ Դ-ի միջև պայքար սկսվեց իշխանության համար: Ավագության կարգով Հ-ը ժառանգել էր Անին և շահնշահի իրավունքները, բայց հայրը նրան գահակից էր կարգել Աշոտին /մանրամասն տես ԱՇՈՏ Դ հոդվածը/:

Ի վերջո, հայ ազնվականության և կաթողիկոս Պետրոսի միջնորդությամբ կայանում է համաձայնություն՝ Հ-ին բաժին է հասնում Անին և կենտրոնական մի շարք գավառներ /Այրարատյան դաշտը, Շիրակը, Կայանը (Աղստևի հովիտ), Արագածոտնը, Տավուշը և այլն: Իսկ Ա-ին՝ «Դրուց աշխարհը» /Հ-ի բաժնից դուրս ծայրագավառները/: Հ-ի թագավորությունը սկսվում է միջազգային բարդ իրավիճակում՝ Բյուզանդական կայսրությունը Բուլղարիան նվաճելուց հետո ամբողջ ուշադրությունը բևեռում է «արևելքի» վրա՝ օրակարգի հարց էր դառնում Հայաստանի /որից հետո Վրաստանի, Կովկասի/ նվաճումը: 1021թ. ծմռանը կայսր Վասիլ Բ-ն անձամբ գալիս է «արևելք»՝ Կարին և այնտեղից պահանջում Հ. Ս-ից իրեն ժառանգել Անին և Կարսը: Միաժամանակ կայսրը պատերազմ է սկսում վիրա-աբխազաց թագավոր Գեորգի Ա-ի դեմ Դավիթ Կյուրապաղատի ժառանգության համար: Ռազմական գործողությունները հիմնականում մղվում են արևմտյան Հայաստանի տարածքում /Տայք, Վանանդ, Բասեն/, իսկ Գ-ին օգնում է Հ. Ս-ին: Սակայն Գեորգին պարտություն է կրում, հետևանքները ծանր էին ինչպես Գ-ի, այնպես էլ Հայաստանի համար: Երկիրը կանգնած էր բյուզանդական բանակի ներխուժման և ավերման սպառնալիքի առջև, Հ-ն ստիպված էր կատարել կայսեր պահանջը, նա 1021-1022թթ. ծմռանը կաթողիկոս Պետրոս Գետադարձին ուղարկում է Տրապիզոն, որտեղ էր այդ ժամանակ Վասիլը, պատմիչ Արիս-

տակես Լաստիվերտցին գրում է, որ նա պատվիրել է Պետրոսին "Գրէ գիր և տուր կտակ թագաւորին, զի յետ իմոյ վախճանին՝ զիմ քաղաքս և երկիրըս նմա տաց ի ժառանգութիւն": Այսպիսով, գրվեց Հայաստանի «գիր կորստության»: Պատճառը անշուշտ բյուզանդական ներխուժման և երկրի ավերման սպառնալիքն էր: Այսպիսով, Հ-Ս թագավորը կազմել է երկու պարտավորագիր՝ առաջինը 1020թ. Աշոտ Դ-ի հետ և կտակել իր բաժինը եղբորը: Այդ պարտավորագրի համաձայն 1042թ. Հ-Ս-ի բաժինը անցավ Ա-ի որդի Գագիկ Բ-ին և երկու բաժինները միավորվեցին: Երկրորդ գիրը, այսպես կոչված «Կտակը», կազմվել է 1021-1022թթ. ձմռանը Տրապիզոնում, նրանով Հ-ը իր բաժինը /իր իրավասության ենթակա Բագրատունյաց թագավորության մի մասը/ «կտակել» է կայսր Վասիլ Բ-ին: Աղբյուրների տվյալները և երկու բաժինների միավորման փաստը վկայում են, որ Հովհաննեսը կատարել է առաջին գիրը /այդ մասին ուղղակի ասված է Սեբաստիայում 1041թ. գրված արձանագրության մեջ, որ Հ-ն «...ետ զթագաւորութիւն իւր որդւոյ եղբօր իւր, որ կոչի Գագիկ»: Հ-ի «կտակը» հօգուտ Վասիլ կայսրի կատարվել է սպառնալիքի տակ և որպես միակ միջոց փրկելու երկիրը ավերածությունից: Սակայն նա մտադիր չի եղել կատարելու այդ «կտակը» և հանձնել է իր բաժինը Բագրատունի օրինական ժառանգին: Ուստի անարդարացի չեն Հ-ին տրվող պիտակները՝ «խղճուկ», «թուլամորթ» և նման բառեր: /Լեոն չափազանցելով Հ-ի մեղքը գրում է, որ "այդ խեղճ և անկարող մարդը տարավ իր հետ, գերեզմանի ափը հասցրեց Շիրակի փոքրիկ պետությունը"/:

Հ-ի «կտակը» խիստ դժգոհություն է առաջացնում արքունիքում, Բյուզանդիայի հակամետ խմբավորումը և անձամբ Վահրամ Պահլավունին անշուշտ մեծ դեր են կատարել, որ Հ-ը չի կատարել «կտակը»: Հակասություններ են առաջ եկել նույնիսկ Հ-Ս-ի և կաթողիկոսի միջև, վերջինը 1037թ. Անիից հեռանում է Վասպուրական, չորս տարի անց թագավորը կեղծ խոստումներով համոզում է նրան վերադառնալ, բայց Անիում ձերբակալում և պահում է Բջնի ամրոցում: Նրա փոխարեն Հ-ի հրամանով կաթողիկոս է ընտրվում Սանահնի եպիսկոպոս Դիոսկորոսը: Սակայն սույն ընտրությունը հոգևորականությունը օրինական չի համարում և չի ենթարկվում նրա կարգադրություններին, ի վերջո Հ-ն ստիպված է լինում 1038թ. Անիում եկեղեցական ժողով հրավիրել և Պետրոսին վերահաստատել աթոռին: Այդպես, արտաքինից խաղաղ, բայց ներքուստ լարված վիճակը տևեց մինչև 1041թ., երբ մահացան Հ-Ս-ն և նրա եղբայր Աշոտը: Գահը 1042-ին անցավ Գագիկ Բ-ին:

Գրկ. *Կ. Կոստանյանց*, Տեր Պետրոս Ա Գետադարձ, Վաղար-ս, 1897: *Գարեգին Հովսեփյան*, Հիշատակարանք ձեռագրաց, Աճեթիխաս, 1951, էջ 223: *Տես* նաև Գագիկ Ա հոդվածի գրականությունը:

XI ԴԱՐ
Երկրորդ կես

57. ԱՇՈՏ, Գագիկ Բ-ի թոռ, Վարդան պատմագրի հաղորդմամբ Անիի անկումից հետո հոր ջանքերով երկու անգամ եկել է Անի. առաջին անգամ հոր /Հովհաննեսի, N58/ հետ և այնտեղից միասին մեկնել են Կոստանդնուպոլիս: Երկրորդ անգամ Գագիկը համաձայնության է եկել սուլթան Ալփասլանի /կամ Մելիքշահի/ հետ և թոռանը՝ Ա-ին ուղարկել Անի /քաղաքը ստացել է սուլթանի հրամանով/: Սակայն այդ ժամանակ Անին պատկանում էր Շադդադյան քուրդ ամիրաներին /որոնք գնել էին այն Ալփասլանից/, և հավանաբար Մանուչէ ամիրայի հրամանով Ա-ին թունավորում է պալատական ներքինին: Նրա դին տեղափոխում են Կոստանդնուպոլիս: Ա-ը և նրա հայր Հովհաննեսը Բագրատունի «ազգապետների» շառավիղի վերջին ուղիղ ներկայացուցիչներն էին, նրանց մահով ժամանակակիցների պատկերացմամբ վերացան Անիի թագակալները:

Գրկ. *Միխայել Չամչյանց*, Պատմութիւն Հայոց, հ. Բ, էջ 673:

58. ՀՈՎՀԱՆՆԵՍ, Գագիկ Բ-ի որդի, հոր աջակցությամբ ժամանել է Անի, նպատակ ունենալով վերականգնել Բագրատունիների իրավունքները:

Գրկ. *Լեո*, երկեր, հ. 2, էջ 682, 690:

Գ. ԲԱԳՐԱՏՈՒՆԻ ՏՈՀՄԱՁՅՈՒՂԵՐ

Կարսի ճյուղ

ՄՈՒՇԵՂ, Կարսի առաջին թագավոր 961-984թթ. և ճյուղի հիմնադիր, Աշոտ Գ Ողորմած շահնշահի /N48/ եղբայր: Ա-ի կողմից նշանակվել է Բագրատունյաց ոստանի Բյուզանդական կայսրությանը /Կարին բանակաթեմ/ սահմանակից շրջանների կառավարիչ՝ թագավորի կարգավիճակով: Մ-ը երկրամասի հողերի հանդեպ ժառանգական իրավունք չի ունեցել, բայց շահընշահի համաձայնությամբ կարող էր գահը հանձնել իր որդուն: Նա ձգտում էր ազատվել «ազգապետի» վերահսկողությունից, այդ հողի վրա հարաբերությունները թշնամացել են Սմբատ Բ Տիեզերակալի հետ: Վերջինը խիստ դժգոհում է /«գոռում» է/ վասալի անհնազանդությունից և խլում նրանից Շատիկ ամրոցը: Մ-ն օգնության համար դիմում է Տայքի Կյուրապաղատ Դավթին, որը ժամանում է Շիրակ և միջնորդում կողմերին, ամրոցը վերա-

դարձվում է և առժամանակ վեճը կարգավորվում է: Սակայն Կյուրապաղատի հեռանալուց հետո Մ-ը շահինշահի դեմ է լարում Դելմաստանի Աբլնաճ ամիրային, որը մտնում է Շիրակ և ավերածություններ կատարում /982/:

Այնուհետև Կարսում թագավորում են ևս չորս թագավոր: Մ-ին հաջորդում է որդին՝ Աբաս Ա Կարսեցին (984-990 կամ 998): Ա-ը ձեռնարկում է անհրաժեշտ միջոցառումներ երկրամասում կարգն ու կանոնը հաստատելու, մասնավորապես ավազակությանը վերջ տալու համար, այդ պատճառով պատմիչ Ասողիկը գովեստով է արտահայտվում նրա մասին: Արշարունիք գավառում Ա-ը կառուցում է Շիրիմ վանքը, այնտեղ պայմաններ ստեղծում կրոնամշակութային կենտրոն հիմնելու համար, գործում է նաև Թրին-կուսանոց վանքը /ուր կրոնավորում է Ա-ի մայրը/: 988-ին մասնակցել է Մամլանի ամիրայի դեմ առաջին զորահավաքին: Ըստ պատմիչ Ասողիկի, 998թ. մասնակցել է Մամլանի դեմ կազմակերպված երկրորդ զորահավաքին, իսկ 1000թ. հանդիպել կայսր Վասիլ Բ-ին:

Սակայն, ևույն Ասողիկի վկայությամբ, Ա-ը գահակալել է ընդամենը 6 տարի /մինչև 990թ./, և նրան հաջորդել է 6-ամյա որդի Գագիկը: Սա Գագիկ Ա Կարսեցին է, որի գործունեությունից որևէ մանրամասներ հայտնի չեն: Սրա օրոք նորից սրվում են հարաբերությունները «ազգապետի» հետ, և այս անգամ Գագիկ Ա շահինշահը դիմում է կտրուկ միջոցի՝ նա զրկում է Մուշեղի ցյուղը /Մուշեղյաններին/ իշխանությունից և Կարսի թագավոր նշանակում իր կրտսեր որդի Աբասին: Աբաս Բ Կարսեցին գահակալել է մինչև 1049թ.: 1045թ. Անիի անկումից հետո Կարսի ցյուղին են անցնում շահինշահի և «ազգապետի» իրավունքները /մինչև Կարսի անկումը 1065թ./: Հաջորդ և Կարսի վերջին թագավորն էր Ա-ի որդին՝ Գագիկ Բ Կարսեցին (1049-1065): Սրա օրոք սելջուկները ներխուժում են Կարսի թագավորություն, Գ-ի զորքը սկզբում հակահարված է տալիս, բայց սուլթան Ալփասլանը պահանջում է նրանից հնազանդություն: Թշնամու ավերածություններից խուսափելու նպատակով Գ-ը սուլթանի դեսպաններին ընդունում է սև զգեստավորված՝ իբր սգո նշան սուլթան Տուղրիլ բեկի մահվան առթիվ: Տուղրիլ՝ եղբայրը՝ սուլթան Ալփասլանը այցելում է Գ-ին Կարսում, իսկ վերջինս մեծ հյուրասիրություն է կազմակերպում նրա զինվորների համար: Դա սելջուկներին Կարսից հեռացնելու փորձ էր:Բայց քանի որ ներխուժման վտանգը չի վերանում, ուստի Գագիկը 1065-ին Կարսը /թագավորությունը/ հանձնում է կայսր Կոստանդին Դուկասին (1059-1067), փոխարենը ստանալով Ծամնդավ, Լարիսա, Ամասիա, Կոմանա և այլ քաղաքներ ու գյուղեր Կիլիկիայում, նրա մոտ են տեղափոխվում վասալ ազատներից /իշխաններից/ շատերը, հիմնվում է նոր իշխանություն, որը Գ-ի մահից հետո (1081) ևվանում են սելջուկները: Գ-ի հեռացումով սպառվում է Կարսի ցյուղը: XIդ. արտագրված Կարսի Ավետարանում նկարված է Գ-ի ընտանեկան մանրանկարը:

Մուշեղ (961–984)
Աբաս Ա Կարսեցի (984–990 կամ 998)
Գագիկ Ա Կարսեցի (990–?)
Աբաս Բ Կարսեցի (1020–1049)
Գագիկ Բ Կարսեցի (1049–1065)

Գրկ. *С. Еремян,* Присоединение северо-западных областей Армении к Византии в XI веке. *Ի. Մաթևոսյան,* Բագրատունյաց Հայաստանի պետական կառուցվածքը..., էջ 161-164: *Աստղիկ Գառդյան,* Հայկական մանրանկարչություն: Դիմանկար: եր., 1982, նկ. 2:

Կյուրիկյաններ
/ԼՈՌՎԱ ՃՑՈՒՂ/

ԳՈՒՐԳԵՆ, Լոռվա /Տաշիր-Ձորագետի/ առաջին թագավոր, 966-991թթ., Կյուրիկյան կամ Լոռվա ցյուղի հիմնադիր, Աշոտ Գ Ողորմածի կրտսեր որդի: 950-ական թթ. հոր կողմից նշանակվել է կառավարիչ Տաշիր-Ձորագետում որպես օգնական ավագ եղբորը՝ Սմբատին, որը արքունիքի ներկայացուցիչն էր այս երկրամասում, Ս-ի հետ իրագործել է վարչական բարեփոխումներ և կազմակերպել փոխարքայություն: Բարեփոխումները ավարտվել են 966-ին / գուցե ավելի շուտ/, և Գ-ը հոր կողմից նշանակվել է փոխարքա թագավոր-կառավարիչ: Գ-ը 974-ին մասնակցել է Աշոտ Ողորմածի գլխավորած զորահավաքին, որը դիմակայեց բյուզ-ն կայսր Ձմշկիկի ներխուժմանը Հայաստանի կենտրոնական շրջանները: Նրա քաղաքական գործունեությունից այլ մանրամասներ հայտնի չեն, Սանահնի գրառումների մատյանում /«Քյոթուկ»/ նշված է, որ Գ-ն Ամենափրկիչ եկեղեցուն նվիրել է ջահ: Որպես թագավոր վերջին անգամ հիշատակվում է 991թ.: Կյանքի վերջում իշխանությունը հանձնել է Դավիթ որդուն, իսկ ինքը 8 տարի կրոնավորել է Սանահնի վանքում: Գ-ի անունը Լոռվա բարբառով արտասանվել է Կյուրիկե, որից առաջացել է տոհմանյուղի անունը: Նրա պատկերաքանդակները ագուցված են Սանահնի և Հաղբատի գլխավոր եկեղեցիների ճակատներին:

Գրկ. Տես Դավիթ Անհողին հոդվածի գրականությունը:

ԴԱՎԻԹ ԱՆՀՈՂԻՆ, Լոռվա թագավոր 996-1048թթ., Գուրգենի որդին և հաջորդը: Սկզբից ևեթ պայքար է մղել հարևան՝ Տփղիսի արաբական և Գանձակի Շադդադյան ամիրայությունների դեմ. Շադդադյան փախստականներ 1003թ. գրավել էր Փառիսոսի մի մասը, ծանր պարտություն է կրել Դ-ից: Ձնշել է ներքին ըմբոստությունները, այդ թվում՝ արևելյան սահմանամերձ շրջանների կառավարիչ մարզպան Դեմետրի խռովությունը, որը ձգտում

էր տիրանալ Տաշիրին և ինքնակամ գավառի կառավարիչ նշանակել իր որդուն: Դ-ը պարտության մատնեց Դեմետրին, խլեց նրանից Գագը և բոլոր կալվածքները: Դ-ի ռազմական հաջողությունները, երկրամասի տնտեսական զարգացումը դրդում են Դ-ին ավելի ինքնուրույն լինել Բագրատունի «ազգապետի» հանդեպ, 1001թ. նա ըմբոստանում է Գագիկ Ա շահնշահի դեմ, բայց նպատակին չի հասնում՝ Դ-ն մեծ զորքով մտնում է Տաշիր, ապա Անդստան գավառ, գրավում Դ-ի ամրոցները, վերջինը ստիպված դիմում է Սարգիս կաթողիկոսի միջնորդությանը: Շահնշահի պահանջով վերականգնվում է նախկին վասալական կախվածությունը՝ «ազգապետ» - վասալ թագավոր /«հայր-որդի»/ սկզբունքով: Բայց, այնուամենայնիվ, Դ-ից հարքունիս խլվում է տիրույթների զգալի մասը /Անդստևի հովիտը/: Այդ պատճառով Դ-ն ստանում է «Անհողին» մականունը: Այնուհանդերձ, ժամանակի ընթացքում նա մասամբ վերականգնում է իր ռազմատնտեսական ուժը, 1030թ. օգնության է հասնում վիրա-աբխազաց թագավոր Բագրատ Դ-ին Փատլունի նոր հարձակման ժամանակ: 1040թ. Լոռին ենթարկվում է ծանր փորձության՝ Դվինի Շադդադյան ամիրա Ապուսուարը /Աբու-լ-Ասվար/ ներխուժում է թագավորության սահմանները և գրավում զգալի տարածք: Դ-ը սեփական ուժերով չի կարողանում դիմադրել նվաճողին, օգնության են հասնում Հովհաննես-Սմբատ շահնշահը, Կապանի /Սյունիք/ և Վիրա-աբխազաց թագավորությունները: Տեղում կազմվում է 20000-անոց աշխարհազոր, միացյալ ուժերով թշնամին ջախջախվում և վտարվում է երկրից: 1041-1042թթ., Անիում թափուր գահի պայքարի շրջանում, Դ-ն իր հավակնություններն է ունեցել, երկու անգամ մտել Շիրակ, նույնիսկ ավերել բնակավայրեր, բայց Անիի «գլխավորները» չեն ընդունել նրա հավակնությունը շահնշահի գահին: Դրանից հետո Դ-ն ասպարեզից հեռանում է, նրա գահակալության վերջը ընդունված է 1048թ.:

Գրկ. *Ղ. Մովսեսյան*, Լոռիի Կյուրիկյան թագավորների պատմությունը, Վնն., 1923: *Ռ. Մաթևոսյան*, Տաշիր-Զորագետ, Եր., 1982:

ԿՅՈՒՐԻԿԵ Ա, Լոռվա թագավոր 1048-1089թթ., Դավիթ Անհողինի որդին և հաջորդը: Կ-ն գահակալել է, երբ սկսվել էին սելջուկների արշավանքները Հայաստան, 1064թ. սուլթան Ալփասլանը Աղվանքի կողմից մտել է Տաշիր և Վրաստան, երկիրը կողոպուտից փրկելու նպատակով Կ-ն հպատակվել է սուլթանին: Ալփասլանը կնության է խնդրել Կ-ի դստերը, թագավորը սկզբից մերժել է, բայց հետագայում սուլթանը պարտադրել է վիրա-աբխազաց թագավոր Բագրատ Դ-ին միջնորդելու, Կ-ն բարդություններից խուսափելու համար ստիպված է եղել համաձայնել:

Այդ ժամանակ է, որ Կ-ն կորցրել է իր նստավայր Շամշուլդեն, թագավորության նոր կենտրոն է դարձել Լոռի բերդը:

Անիի և Կարսի անկումից հետո Բագրատունիների ֆեոդալական կազմավորումներից պահպանվել էր միայն «Տաշիր երկիրը»՝ Լոռվա թագավորությունը: Սելջուկներից կրած պարտություններից հետո և նրանց դեմ միասնական հակատ ստեղծելու նպատակով Բյուզանդիան փոխում էր /ցավոք ուշացած/ քաղաքականությունը հայերի և վրացիների հանդեպ, նա հովանավորում է Կ-ին, նրան վերադարձվում է Անդստևի հովիտը, որը Գրիգոր Մագիստրոսը 1045թ. հանձնել էր կայսրությանը: Այդ շրջանում Կ-ն, որպես Բագրատունի «ազգապետի» և շահնշահի միակ հետնորդ, փորձում է համախմբել դեռևս գոյատևող հայկական ֆեոդալական իշխանությունները և /ինչպես ճիշտ նկատել է դրամագետ Ե. Պախոմովը/ կրկնել Շիրակի Բագրատունիների դերը, իհարկե, ավելի նեղ շրջանակներում: Նրան հաջողվում է Անի վերադարձնել կաթողիկոսական աթոռը, որը Անիից հեռացրել էր Կոստանդին Մոմախ կայսրը: 1081թ. Հաղբատի վանքում, հայ ազնվականության աջակցությամբ կաթողիկոս է օծվում Շիրակի եպիսկոպոս Բարսեղը՝ Բարսեղ Ա Անեցի /մինչև 1105թ. ձևականորեն աթոռակից Գրիգոր Վկայասեր կաթողիկոսին/: Սա կարևոր քաղաքական ակտ էր, այն մեծ ոգևորություն առաջ բերեց Հայաստանում: Կ-ի քաղաքական հավակնությունների և պետական ազգային դոկտրինայի ցայտուն դրսևորումներից էր դրամահատությունը: Նրա դրամները /պղինձ և արծաթ/ առայժմ միակն են Բագրատունիների դարաշրջանից: Դրամի առաջին երեսին /«ավերս»/ պատկերված է Քրիստոսի դեմքը, երկրորդ երեսին /«ռեվերս»/ տրված է հայերեն գրություն՝ "տեր օգնե՛ կորիկէ կորապաղատին": «Թագավոր» տիտղոսավորման փոխարեն Կ-ն այս դեպքում կրում է բյուզանդական կյուրապաղատ տիտղոսը: Դա մի կողմից բյուզանդական հովանավորության, մյուս կողմից Կ-ի կողմից կայսրության հետ մերձենալու արտահայտություն է: Միաժամանակ, Կ-ն ձգտում էր զերծ պահել երկիրը սելջուկների ասպատակություններից, Բարսեղ կաթողիկոսն ու Կ-ն 1080-ական թթ. վերջերին այցելեցին սուլթան Մելիք-շահին, չնայած դա որոշ դրական արդյունք տվեց, բայց այնուհանդերձ սելջուկների ներխուժումները շարունակվեցին, Կ-ի օրոք նրանք գավթեցին Գագ, Տավուշ և այլ բերդեր: Հատկապես տուժեց Անդստևի հովիտը:

Այսպիսով, Կ-ի գահակալության վերջում սկսվեց Լոռվա թագավորության տարածքի նվաճումը, որն ավարտվեց թագավորության անկումով 1113թ.: Կ-ից սկսած տոհմաբույրի ներկայացուցիչները թաղվում են Հաղբատում:


Գրկ. Տես Դավիթ Անհողին հոդվածի գրականությունը:

Կյուրիկեից հետո Լոռիում թագավորել են նրա որդիները՝ Դավիթն ու Աբասը, բայց սելջուկների սաստկացող հարձակումները անելանելի վիճակ են ստեղծել նրանց համար, 1113թ. եղբայրները Տաշիրից տեղափոխվել են

տոհմական տիրույթներ՝ Տավուշ և Գարդման գավառները և այնտեղ հիմնել երկու ոչ մեծ իշխանություններ: Երկուսն էլ իշխել են մինչև 1145թ. /Աբասը Տավուշում, որի գիծը մարել է նրա մահով/: Իսկ Դավթին Մածնաբերդում հաջորդում է որդին՝ Կյուրիկե Բ-ն /1145-1170/: Սա ուներ երկու որդի և հինգ դուստր: Որդիներից 12-ամյա Աբասը /Աբաս Բ՝ 1170-1176/ հաջորդել է հորը, իսկ Վասակը հիմնել է Նոր բերդի իշխանությունը Գարդման գավառում: Աբասը ամուսնացել էր Զաքարե ամիրսպասալարի քրոջ՝ Վանենու հետ, որը վաղամեռիկ /18-ամյա/ ամուսնու և Կյուրիկյան տոհմի հիշատակին կառուցել է Սանահնի կամուրջը: Աբասին հաջորդել է նրա զավակ-Աղսարթանը: Նրա օրոք Նոր բերդի իշխան Դավիթը փորձեց զավթել Մածնաբերդը, բայց ապարդյուն: Այնուհետև հաջորդ Կյուրիկյաններն էին Կյուրիկե Գ-ն և Աղսարթան Բ-ն /XIIIդ. 30-40-ական թթ./: Աղսարթանի եղբայրներ Փահլավանն ու Թաղիադինը և վերջինի որդի Սարգիսը այժմ մեզ հայտնի վերջին Կյուրիկյաններն են: Թ-ն 1250թ. մոնղոլական բանակում կռվող հայկական զորամասերում մասնակցել է մոնղոլական արշավանքներին և Նփրկերտի ու Բաղդադի գրավմանը:

Գրկ. *Ղ. Մովսեսյան*, Լոռիի Կյուրիկյան թագավորների պատմությունը: *Ռ. Մաթևոսյան*, Դիտողություններ Կյուրիկյանների պատմության վերաբերյալ, ՊՀԲ, 1968, N3: *Կ. Ղաֆադարյան*, Պատմա-հնագիտական դիտողություններ Նոր բերդի Կյուրիկյան իշխանության մասին, Արմֆանի «Տեղեկագիր», 1940, N4-5:

ԿՅՈՒՐԻԿՅԱՆՆԵՐԻ ՏՈՀՄԱԾԱՌԸ





1. Ուրարտական Բագբարտու աստվածուհու բրոնզե արձանիկ



2. Մեդալյոն՝ Բագբարտուի պատկերով



3. Հելլենիստական Գեմմա (քարե կնիք)



4. Սմբատ Ա. Բագրատունու որմնանկարը



5. Սմբատ Բ Տիեզերակալի և Գուրգենի՝ Լոռվա թագավորի բարձրաքանդակը (Հաղբատ)




6. Գագիկ Ա շահնշահի արձանը

7. Ալիքաձև ֆախտագծում

8-10. Կայան ամրոց.


Արմրդացմայրդ

հատակագիծը




11-13. Մանթաշ ամրոց.

մեծ աշտարակը




14. Գադարիկի արվեստ

Ալմաթցիների տուն



15. Տավուշ ամրոց



16-19. Գեղի ամրոց. ընդհանուր տեսք


Մոլորակների ուսումնասիրություն

Գիտությունների ակադեմիա






20. Լոռի ամրոց. պարսպաճատված




21. Թալինցքար ամրոց



22. Կարսի ամրոց




23. Մաղասբերդ ամրոց




24. Տիգնիս ամրոց



25. Ամբերդ



26. Բջնի ամրոց



27. Անի. Մայր տաճար

ԱՆԻ ՔԱՂԱՔԻ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ

ԿԱԶՄՎԱԾ Է Ֆ.Կ.ՄՈՍԵՎԻՉԻ ՀԱՅԱԿԱՀԳՅԻՒ ՓՈՔՐԱԴԻՐ ՕՐԻՆԱԿՆԵՐԻՑ, ՈՐՈՆՔ ԿՑՎԱԾ ԵՆ Հ.ՕՐԲԵԼՈՒ ԵՎ Ն.ՄԱՌԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

*) Ամենի հետաք և անմիջականորեն ընկալելու նպատակով քաղաքի կարևոր հուշարձանները հատակագծի վրա տրված են ռեեստանկարային հնարավորին հավիտ պահպանելով դրանց արտաքին տեսքը (որոշ բեպքերում՝ վերականգնված վիճակում)։

Հանկանալի պատճառով հատակագծի վրա նշանակված են միայն հնագույն ժամանակներից մինչև 1045 թվականը կերտված հուշարձանները։

ԿԱԶՄՈՂ Թ.Խ. ՀԱԿՈԲՅԱՆ

Հատակագծող՝ քարտեզագիր Գ.Թ.ՕՀՐԻՆՅԱՆ

0 100 200 300 400 500մ.

ԵՐԵՎԱՆ 1979թ.

Պաշտպանական պատնեշ

ժամատուն

Գալարուն եկեղեցի

Այրային եկեղեցի

Գագիկի տաճարը

Սյուներով (պիլոններով) շինք

Երկու հյուրանոց

սբ. Առաքելոց Նկնկեցի

Տաճար

սբ. Գրիգոր եկեղեցի

Տան ավերակ

Տիկին Հոռոմի եկեղեցի

Մանուչի մզկիթը

Աղքատների տնակներ

Մոտոգնտնյա կամարակապ սրահ

Ստոյգնտնյա կամարակապ սրահ

Փոկի եկեղեցի

Վանք

Քաղաքի

Կատրամիդե թագուհու գերեզմանը

Գեղեցիկ տաճարի ավերակ

Ատամածածին եկեղեցի

Աբելարիրի եկեղեցի

Հայգեուխի անկյուն

Պալատ

Գերեզմանոց

Ախուրյան գետ

Անի գետակ

Հս.

ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

- եկեղեցու ավերակներ
- ավ. Ավերակներ
- Ձիթհանք
- Բլուրներ

ՔԱՂԱՔԻ ԵՎ ԱՄՐՈՑԻ ԱԾՏԱՐԱԿՆԵՐ


ՄԻՋՆԱԲԵՐԴԻ	ԿՈՒՍԱՆԱՅ ԱՄՐՈՑԻ	ԱԾՈՒԻ ՊԱՐՍՊԻ
1,2. Կամարակապնյան	1,3. Քառակուսի	1. Ատամնավոր
3,4. Շրջանաձև	2,4. Շրջանաձև	2,3,4. Քառանկյուն

ԱՐՏԱՔԻՆ ՊԱՐՍՊԱՊԱՏԵՐԻ


7. Գլխավոր դռան արևմտյան արտաքին պարսպի
8. Գլխավոր դռան արևելյան արտաքին պարսպի
9. Գլխավոր դռան ներքին արևմտյան պարսպի
4. Կարսի դռան արևմտյան արտաքին պարսպի
5. Կարսի դռան արևելյան արտաքին պարսպի
6. Աշոտ իշխանաց իշխանի հին
10. Գայլեձորի անկյունային քառանկյուն
1. Իգաձորի
2. Խաչաձև
3. Իգաձորի քառանկյունի
12. Անի գետակի շրջանաձև
13. Քառանկյուն, ատամնավոր
11. Դվինի հին դռան

ԴԱՐՊԱՍՆԵՐ, ԴՌՆԵՐ ԵՎ ԴՌՆԱԿՆԵՐ

I Իգաձորի դարպաս
II Կարսի ներքին դարպաս
III Կարսի արտաքին դարպաս
IV Ներքին գլխավոր դարպաս
V Արտաքին գլխավոր դարպաս
VI Գայլեձորի դռնակ
VII Գայլեձորի դուռ
VIII Դուռ միջնաբերդի տակ
IX Ճաղկոյսաձորի դարպաս
X Գաղտնի դռներ




28-29. Կարս. Առաքելոց եկեղեցի




բարձրաքանդակ եկեղեցու թմբուկին



30-31. Սանահին. ընդհանուր տեսք




Գրիգոր Մագիստրոսի ճեմարանը



32. Հաղբատ




33. Սևանավանք




34. Երազգավորս. հարավային ճակատը




35. Հոռոմոսի վանք




36. Խորանաշատի վանք



37. Լոռի. Միխայելաձորի կամուրջը



38. Սանահնի կամուրջը




39. Բագրատունիների պետական զինանշանը (Անի)



40. Բագրատունյաց զինանշան (Անի)



41. Բագրատունյաց զինանշան (Կարսի Առաքելոց եկեղեցի)




42. Գագիկ Ա. շահնշահի զինանշանը (Հաղարծին)



43. Բագրատունյաց զինանշան (Թալինի ամրոց)



44. Լևոն Բ թագավորի զինանշանը (դրամ)




45. Բագրատունյաց զինանշան (Զորագետի կամուրջ, Լոռի)



46. Կիլիկիայի հայկական թագավորության զինանշանը (դրամ)



47. Լոռվա Կյուրիկյանների գինանշան (Սանահնի կամուրջ)




48. Կյուրիկյանների գինանշան (Սանահին, XII դ.)



49. Նոր Բերդի Վասակ Բ Կյուրիկյանի գինանշանը (Նոր Վարագավանք)



50. Նոր Բերդի Կյուրիկյանների գինանշան (Խորանաշատ)



51-52. Բագրատունյաց խորհրդանշանի աստիճանական զարգացումը ուրարտական շրջանից մինչև մ.թ.XIII դ.



53. Բագրատունիների և վասալ իշխանների զինանշանների խմբանկար



54. Գագիկ Բ Կարսեցի թագավորը՝ ընտանիքով



55. Սահակ Բագրատունի մարզպանը և Մովսես Խորենացին



56. Կիլիկիայի Լևոն Գ թագավորը



57. Զինաճշան. Սանդղկավանքի նկարչական դպրոց

58. Թագավորաց ցանկ (խաչվերմաս)

59. Կիլիկիայի Լևոն Գ թագավորը և Կերաց թագուհին



60. Բագրատունյաց գինանշան (տարբերակ)

Կախեթի ճյուղ

Կյուրիկյանները, Հայաստանի հյուսիսային սահմանները պաշտպանելուց բացի, ձգտում էին նաև ընդարձակել իրենց քաղաքական ազդեցության ոլորտը, այդ նպատակի համար օգտագործում էին ոչ միայն ռազմական, այլև դիվանագիտական միջոցները: Նրանց հաջողվեց հարևան վրացական Կախեթ-Հերեթի թագավորության գահին նստեցնել իրենց տոհմակցին՝ Դավիթ Անհողին. թագավորը ամուսնացած էր Կախեթի վերջին իշխան /քորեպիսկոպոս/ (976-1010) Դավթի դստեր հետ, 1038թ., Կախեթ-Հերեթի առաջին թագավոր Կվիրիկե Գ-ի մահից հետո Դավիթ Անհողինի որդի Գագիկը ժառանգեց գահը: Նրա մայրը /Զորակրցելը/ մահացած թագավորի քույրն էր, իսկ վերջինը արու զավակ չուներ:

Այսպիսով, Կյուրիկյանների մի ճյուղը իշխեց Կախեթում մինչև 1104թ. /66 տարի/: Գագիկին 1058թ. հաջորդեց որդին՝ Աղսարթանը /1058-1084/, նրա օրոք Կախեթ-Հերեթի թագավորությունը գտնվում էր ծանր վիճակում, սելջուկները ավերում էին Անդրկովկասի երկրները, Ա-ն ընդունեց մահմեդականություն, որպեսզի կանխի Ալփասլանի ներխուժումը, այնուհանդերձ սելջուկները մտան Կախեթ: Այնուհետև իշխեցին Կվիրիկե Դ-ն /1084-1102/ և Աղսարթան Բ-ն /1102-1103/, 1104թ. տեղական իշխանները հեռացրեցին Ա-ին գահից, և Կախեթը վերամիավորվեց Վրաստանին:

Դրկ. *Ղ. Մովսեսյան*, Լոռիի Կյուրիկյան թագավորների պատմությունը: *Г. Мкртумян*, Грузинское феодальное княжество Кахети в VIII-XIвв. и его взаимоотношения с Арменией, Ереван, 1983.

ԿԱԽԵԹԻ ՃՅՈՒՂԸ

ԳԱԳԻԿ (1038–1058)
ԱՂՍԱՐԹԱՆ Ա (1058–1084)
ԿՎԻՐԻԿԵ Դ (1084–1102)
ԱՂՍԱՐԹԱՆ Բ (1102–1103)

Տարոնի ճյուղ

852թ. Բագարատ իշխանաց իշխանի /N35/ որդիներն՝ Աշոտն ու Դավիթը, Բուղայի կողմից աքսորվում են Արաբիա, բայց 858-ին ազատվում և վերադառնում հայրենիք: Ա-ը ճանաչվում է Տարոնի իշխան /858-878/, սակայն

նրա և Արծրունիների միջև առաջ են գալիս հակասություններ, քանզի վերջինները նախընտրում էին Տարոնում իշխան տեսնել իրենց փեսային՝ Դավթին և դրանով իսկ իրենց ազդեցությունը ուժեղացնել Տարոնի իշխանությունում: Արծրունիներին հաջողվում է գերել Ա-ին և պահել Սևան ամրոցում, որից հետո Գրիգոր-Դերենիկ Արծրունու օգնությամբ իշխանությունն ընցնում է Դավթին /Դավիթ Արքայիկ/: Ա-ին հաջողվում է փախչել գերությունից, բայց նրա հետագա գործունեության մասին տեղեկություններ չկան: 878-ից իշխան է Դավիթը /878-895/: Այդ շրջանում Տարոնին սպառնում է Միջագետքի Շայբանիների արաբական ամիրայությունը: Դ-ի հաջորդ, նրա եղբորորդի Գուրգենը զոհվում է Շայբանի Ահմադ ամիրայի դեմ կռվելիս, իշխանությունը անցնում է Գրիգորին /899-936/: Վերջինի օրոք Բյուզանդիան ձգտում է ուժեղացնել իր ազդեցությունը Տարոնում, Գ-ն, նրա ազգակիցները /որդին, եղբայրը/ հրավիրվում են Կոստանդնուպոլիս: Ձնայած որոշ դժկամությամբ, Գ-ը մեկնում է մայրաքաղաք, ստանում մագիստրոսի պատիվ և Տարոնի ստրատեգի /զորավարի/ կոչումը: 930թ. նա տեսակցում է Ռոմանոս Լակապենոս կայսեր հետ: Նրա եղբայր Ապուգաղեմը Կոստանդնուպոլսում լինում է երկու անգամ, ստանում պատրիկի պատիվ, երկրորդ այցի ժամանակ ամուսնանում բյուզանդական իշխանավորի դստեր հետ, բայց շուտով մահանում: Կոստանդնուպոլսում Տարոնի իշխանավորները բնակվում էին այսպես կոչված «Բարբարոսի տանը», որի հատկացումը «արևելքի» իշխաններին համարվում էր առանձին շնորհ, իսկ գործնականում ծառայում էր որպես միջոց նրանց կայսրության հետ կապելու համար:


Բարեկամական նման հրավերները միայն արտաքին տպավորություն էին ստեղծում, իսկ իրականում նախապատրաստում Տարոնի կլանումը: «Բարբարոսի տունը» տրվում էր մերթ մեկին, մերթ մյուսին /Գրիգորին, հետո նրա եղբայր Ապուգաղեմին, ապա նորից Գրիգորին/, ի վերջո Գ-ը կայսր Ռոմանոսից խնդրում է «Բարբարոսի տան» փոխարեն իրեն կալվածք հատկացնել Եկեղյաց գավառում, արաբական ներխուժումներից հեռու վայրում: Դրա հետևանքով սրվում են հարաբերությունները Ապուգաղեմի տան հետ, Ապուգաղեմի որդի Թոռնիկը բողոքում է այդ գործարքի դեմ, գտնելով, որ «Բարբարոսի տունը» տրվում էր իր հորը, և Գ-ն իրավունք չուներ այն փոխանակելու և դիմացը այլ կալվածք ստանալու: Գ-ի մահից հետո Թոռնիկը տեսակցում է կայսեր հետ և ետ ստանում «բարբարոսի տունը», բայց կտակում Տարոնում իր կալվածքները կայսրությանը:

Իսկ իշխանի իրավունքները ժառանգաբար անցնում են Գ-ի ավագ որդի Բագրատին /936-940/, սա ևս գնում է Կոստանդնուպոլիս, ստանում պատրիկի պատիվը /տիտղոսը/ և Տարոնի զորավարի կոչումը: Նրան հաջորդում է եղբայրը՝ Աշոտը, չնայած վերջինը ուներ երկու որդի, նրա մահից հետո՝ 966թ. Տարոնը զավթում է Բյուզանդիան: Բյուզանդական պատմիչ Սկիլիցեսը

գրում է, իբր Աշոտի որդիները՝ Գրիգորն ու Բագարատը զիջեցին Տարոնը, փոխարենը ստանալով այլ կալվածքներ, իրականում նրանց ստիպել էին «զիջել» հայրենի երկիրը, ուստի պատահական չէ, որ 976թ. նրանք միացել էին կայսր Վասիլ Բ-ի դեմ բյուզանդական զորավար հայազգի Վարդ Սկլերոսի ապստամբությանը:

Գրկ. *Կոստանդին Միրանածին*, թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Հրաչ Բարթիկյանի, ե., 1970, էջ 4-10: *N. Adonz*, Les Taronites en Arménie et à Byzance, "Etudes Arméno-Byzantines", Lisbonne, 1965, էջ 197-263: Տես նաև Տարոնի իշխանություն հոդվածի գրականությունը:

ՏԱՐՈՆԻ ՃՅՈՒՂ



ԱՍՊԵՏՈՒՆԻ
/ԱՍՊԵՏՈՒՆԻՆԵՐԻ ՃՅՈՒՂԸ/

Բագրատունիների տոհմական պաշտոնից և տիտղոսից՝ «թագադիր ասպետությունից» առաջ եկած ազգանվան տարբերակ: Պատմիչները, /օր. Ագաթանգեղոսը/ Բագրատունի ազգանվան փոխարեն գործածում են «թագադիր ասպետ»: Ա-ն որպես նախարարություն նշված է Գահնամակում և Զորանամակում: Ա-ն Բագրատունիների իշխանական տունն էր, որը տիրում էր Սպերին, և Սպերի ճյուղն էր կրում Ասպեհունի անունը: Ն. Ադոնցի կարծիքով ասպետի պաշտոնը գոյություն ուներ արդեն Ուրարտական պետությունում, եթե այդպես է, ապա Բագրատունիների այս տունը պետք է ձևավորված լինի ուրարտական շրջանում: Բագրատունիների Ա-ի տունը, որպես

տոհմի առանձին ճյուղ, գոյատևեց բավական երկար, նրա ներկայացուցիչներին հիշում է բյուզանդական պատմիչ Պրոկոպիոս Կեսարացին /VIդ./, Յուստինիանոս Ա կայսեր դեմ 536թ. ապստամբության մասնակիցների թվում:

Գրկ. *Կ. Թումանով*, Հայաստանի Որոնդեաններ, ՀԱ, 1967, N7-9, էջ 360-362: Հայ ժողովրդի պատմություն, հ. 1, էջ 831: *Ն. Ադոնց*, Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, Եր., 1987, էջ 280, 284, 294, 322:

ՄՈԿՔԻ ՃՅՈՒՂ

Մոկքը փոքր նահանգ էր Հայաստանի հարավում, Բոհտան գետի հովտում: Արշակունյաց շրջանում պատկանել է տեղական իշխանական տոհմին, սակայն IXդ. առաջին կեսին անցել էր Բագրատունիներին: Մոկքում նոր իշխանության հաստատման մանրամասները հայտնի չեն, սակայն IXդ. երկրորդ քառորդում երկրամասը արդեն ենթակա էր Հայոց իշխան Աշոտ Մսակերի որդի Սահակին: Մոկքի Բագրատունիներից հայտնի են միայն Սահակի անմիջական հաջորդները, ըստ Ն. Ադոնցի, դրանք են

ՍԱՀԱԿ
|
ՍՄԲԱՏ
|
ՄՈՒՇԵՂ

ՍՊԵՐԻ ԲԱԳՐԱՏՈՒՆԻՆԵՐ

Սպերի՝ տոհմի «ձեռական» ապա ժառանգական տիրույթ, նրա «տեր» հանվանե հիշատակվում են՝

մ.թ.ա. IIդ. — ՍՄԲԱՏ ԱՍՊԵՏ /Արտաշես Ա-ի դայակ/
ՏՐԴԱՏ /Սմբատի դուստր Սմբատուհու թոռը/
մ.թ. IIդ. — ՏՐԴԱՏ, 163-164թթ. ապստամբության ղեկավար
IVդ. ——— ՍԱՀԱԿ /Վաղարշակ Արշակունու աներ/
VI-VIIդդ. —ՎԱՐԱԶՏԻՐՈՑ
ՍՄԲԱՏ

VIIIդ. ——— ՍՄԲԱՏ ԲՑՈՒՐԱՏՑԱՆ /զոհվ. 775/

ԱՇՈՏ ՄՍԱԿԵՐ ՇԱՊՈՒՀ
IXդ. Սպերի իշխանություն →ԱՇՈՏ
ՇԱՊՈՒՀ ՊԱՏՄԱԳԻՐ
ԻՇԽԱՆԻԿ /852թ./

Բագրատունիների անցումը Վրաստան

775թ. ապստամբության պարտությունից հետո Վասակ Բագրատունին, խուսափելով արաբների հետապնդումներից, անցնում է Կղարջք, ուր հետագայում հիմք է դնում Բագրատունյաց նոր իշխանությանը Արտանուջ կենտրոնով: Վասակի որդի Ատրներսեհը, իսկ գլխավորապես թոռ Աշոտը ընդարձակում են իրենց իշխանությունը: Աշոտը խելացի քաղաքականությամբ շահում է արաբների վստահությունը և խալիֆի կողմից նշանակվում Վրաց իշխան: Բյուզանդական Լևոն V հայազգի կայսրը /813-820/ իր կողմից Աշոտին շնորհում է Կյուրապաղատի տիտղոսը արաբներին հակակշռելու համար: Ն. Ադոնցի արտահայտությամբ Աշոտ Կյուրապաղատը Վրաստանի համար այն էր, ինչ որ Աշոտ Մսակերը Հայաստանի: Տոհմակիցների միջև կար համագործակցություն: Երբ արաբ ամիրա Ջահապը գրավեց Դվինը, Աշոտ Կյուրապաղատը դիմեց կայսրին օգնության համար, սակայն Լևոնի վերահաս մահը անկատար թողեց խնդրանքը: Աշոտը հաջողությամբ պայքարում էր Տփղիսի արաբ ամիրայության դեմ և Վարդան պատմագրի վկայությամբ կարողացավ "տիրել ի Կղարջաց մինչև ի Տփղիս, լեռնակողմամբ հանդերձ": Աշոտի իշխանությունը հարևան էր Աբխազաց թագավորությանը, Ա-ը իր դստերը կնության տվեց աբխազաց թագավոր Թևդասին: Արմինիայի ոստիկան Խալիդ իբն Եզիդը հաղթեց Աշոտին, և նա մտադրվեց գնալ Բյուզանդիա: Սակայն արաբների հետ ընդհարման ժամանակ, 830թ., Ա-ն սպանվում է:

Աշոտ Կյուրապաղատը ուներ երեք որդի՝ Ատրներսեհ, Բագրատ և Գուրգեն: Նրանցից յուրաքանչյուրը հիմք դրեց առանձին տոհմաճյուղի, և Աշոտի ֆեոդալական տունը ճյուղավորվեց: Աշոտ Կյուր-ի թոռնորդի Ատրներսեհը 899թ. թագ ստացավ Սմբատ Ա հայոց թագավորից:

Գրկ. *M. Brosset*, Additions et éclaircissements à l'Histoire de la Géorgie, SPb, 1850, Addition IX. *Հ. Մարկվարտ*, Վրական Բագրատունեաց ծագումը, Վնե., 1913, *Ն. Ադոնց*, Բագրատունիք Վրաստանում, «Պատմական ուսումնասիրություններ», Փարիզ, 1948, էջ 93-125: *Ա. Սարուխան*, Բագրատունյաց արքայական հարստությունը Վրաստանում, «ՀԱ», 1939, N7-12: *C. Toumanoff*, The Bagratids of Iberia from the eigth to eleventh century, "Le Muséon", Louvain, 1961, t. LXXIV, N1-2: Նույնի՝ Studies in Christian Caucasian History, Georgtown, 1963.

Լրացուցիչ

1-1ա. ԴԱՎԻԹ, 353թ. Ներսես եպիսկոպոսի շքախմբում ուղևորվել է Կեսարիա, Ներսեսին կաթողիկոս օծելու կապակցությամբ: Հիշատակում է միայն Xդ. մատենագիր Մեսրոպ Վայոցձորեցին Ներսեսի «Վարքում»:

Գրկ. Սոփերք Հայկական, հ. Զ, Վնտ., 1853, էջ 24:

24ա. ՎՐԹԱՆԵՍ ՔԵՐԹՈՂ, Բագրատունի, եղբայր Սմբատ՝ Խոսրով Շուրմի /N24/; եկեղեցական գործիչ, մատենագիր, կաթողիկոսի տեղապահ 604-607թթ.: Գեղեցիկ գրելաոճի համար կոչվել է «Քերթող», ժամանակակից է Հռիփսիմե տաճարի կառուցմանը /618/ և նկարագրել է շինարարության մանրամասները: Պայքարել է Հայաստանում VI-VIIդդ. տարածված պատկերամարտության դեմ, որը մերժում էր սրբապատկերների պաշտամունքը, գրել է հատուկ աշխատություն պատկերամարտիկների դեմ և այլ աշխատություններ:

Գրկ. *Ն. Ակինյան*, Վրթանես վարդապետ Քերթող և իւր երկասիրությունները: «ՀԱ», 1910, N1, 2: 1978, N1-12:

27ա. ՍՄԲԱՏ, ասպետ, սպաթար, որդի Վարազտիրոցի /N27/, Հայաստանի բյուզանդական մասի կառավարիչ 646-656թթ.: Կայսր Կոստանդին Բ-ն ճանաչել է նրա տանուտերությունը Սպերում: 653թ. նույն կայսեր Հայաստանում գտնվելու ժամանակ ի թիվս այլ բյուզանդամետ իշխանների /Տայքի, Բասենի/ Ս-ը ներկայացել է կայսրին: Խնամիական կապեր ուներ Արշակունիների տան հետ /ամուսնացած էր Մանվել Արշակունու դստեր հետ/:

Գրկ. Տես N27 հոդվածի գրականությունը:

ՅՈՎՆԱՆ ԽՈՒԹԵՑԻ /տոհմածառում չի նշված/, 851թ. Սասունի ապստամբների /խութեցիների/ ղեկավար, 850-851թթ. ձմռանը նրա աշխարհազորը կոտորեց Մուշ քաղաքում տեղակայված արաբական զորքը, սպանվեց նաև ոստիկան Յուսուփը: Հաջորդ տարի Բուղայի հալածանքների ժամանակ աքսորվեց Սամարա, ուր նրանից պահանջեցին կրոնափոխություն: Հովնանը մերժեց և նահատակվեց: Որոշ գիտնականներ Հովնանին համարում են Թոռնիկ Բագրատունու որդի, Բագարատ իշխանաց իշխանի /№35/ եղբորորդի:

Գրկ. *Ա. Տեր-Ղևոնդյան*, Արաբական ամիրայութ-ունները Բագրատունյաց Հայաստանում, եր., 1965, էջ 259: Հայ ժողովրդի պատմություն, հ. 2, եր., 1984, էջ 354:

ԲԱԺԻՆ II

ԲԱԳՐԱՏՈՒՆԻՆԵՐԻ ԾԱԳՈՒՄԸ

ՀԻՄՆԱՀԱՐՑԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Հայ նախարարական տոհմերի ծագումը պարզելու համար գիտնականների հիմնական աղբյուրը Մովսես Խորենացու հաղորդած տեղեկություններն են, որոնք շարադրված են նրա «Հայոց պատմության» մեջ: Մեզ զբաղեցնող Բագրատունիների ծագումնաբանության շուրջ պատմահայրն ունի վկայություններ, որոնք արդեն երկու դար գիտական շրջանառության մեջ են և ուսումնասիրողների յուրաքանչյուր նոր սերունդ մի նոր բան, նոր որակ է ավելացնում խորենացիագիտության այդ կարևոր բնագավառում:

Բագրատունիների տոհմի նախահայրը ըստ Խորենացու հրեա Շամբատն է, որին Բաբելոնի թագավոր Նաբուգոդոնոսորը գերի էր վերցրել, երբ նվաճել էր Երուսաղեմը:

Հայոց թագավոր Հրաչյան խնդրել էր Նաբուգոդոնոսորից ազատել նրան: Դրանից հետո Հ-ն Շ-ին բնակեցրել էր մեր երկրում: Պատմագիրն ասում է /Մար Աբաս Կատինաև/, որ սրանից սերվեց Բագրատունիների ցեղը /Պատմ. Հայոց. I, Իբ/: Վաղարշակ թագավորը /Արշակունի առաջին թագավոր Տրդատը/ Շամբատի ցեղից Բագարատին /Շամբատ Բագարատին/ տվեց արքունի բարձր պաշտոնը՝ - «զորավոր և իմաստուն Շամբատ Բագարատին, որ հրեաներից էր, իշխանություն տալով նրան՝ որդուց որդի թագադիր լինել Արշակունիներին, /և սահմանելով/ որ նրանից սերվող ցեղը Բագրատունի կոչվի նրա անունով, որ ներկայումս մեծ նախարարություն է մեր աշխարհում: Որովհետև այս Բագարատն առաջինը կամավորապես ինքն իր անձը ընծա բերեց Վաղարշակին, նախքան Արշակի /Վաղարշակի եղբոր՝ Պարթև թագավորի/ պատերազմները մակեդոնացիների հետ, երբ սա արքունի դռանն էր, իսկ /մեր երկրի/ արևմտյան կողմում, որտեղ հայերեն լեզուն վերջանում է, նրան նշանակեց կողմնակալ, բյուրերի և հազարների իշխան» /Հայոց Պատմ., II, Գ/:

Սակայն Խորենացին միաժամանակ հայտնում է, որ գոյություն ունի երկրորդ ավանդությունը կամ զրույցը, որը Բագրատունիներին համարում է սերված Հայկի սերնդից: Բայց պատմագիրը խրատում է մեկենասին /Սահակ Բագրատունուն/ չհավատալ նման «հիմար խոսքերին», որովհետև իբր «ոչ մի հետք կամ ապացույց չկա այդ խոսքերում, որ ցույց տա նրանց ճշմարտությունը» /II, Իբ/:

Սակայն Բագրատունիները մյուս տոհմերի համեմատ ունեն այն առավելությունը, որ նրանց ծագման մասին կա ևս մեկ հավաստի և վստահելի աղ-

բյուր՝ դա Անանունի կամ Մար Աբաս Կատինայի պատմության մի հատվածն է, որը կցված է Սեբեոս պատմիչի «Պատմությանը»:

Անանունը հաղորդում է Բագրատունիների նախնիների ծագումնաբանական ակունքը, որը սկիզբ է առնում Արմենակից՝ Զարեհ-որդի որդվոց Արամենակի, ապա Արմոգ, ապա Սարհանգ, ապա Շավաշ, ապա Փառնավազ:

Սա ծնում է Բագամին և Բագարատին, և Բագարատից ծնվում է Բյուրատը, նրանից Ասպատը: Եվ Բագարատի որդիները ժառանգում են իրենց ժառանգությունը արևմտյան կողմում, «այս ինքն է Անգեղ տուն», որովհետև «կոչեցաւ Բագարատ և Անգեղ» /Պատմութիւն Սեբեոսի, աշխատասիրությամբ Գ. Ագգարյանի, Ե., 1979, էջ 51/:

Արամենակի որդիներից էր Բագարատ Փառազյանը, մեծ նախարարը: Ըստ Անանունի, սա է դիմավորում Տրդատ Ա.-ին /Արշակ Փոքրին/, թագադրում է նրան և ննտեցնում գահին: Եվ թագավորը նշանակում է այս Բագարատին հայր արքայի և եղբայր, և տալիս է նրան տերության իշխանության /նույնը, էջ 54/:

Մ. Զամչյանից սկսած այս երկու պատմիչների տեղեկությունների հիման վրա, նախապատվությունը տալով մեկին կամ մյուսին, գիտնականները քննել են հարցը: Կատարված աշխատանքը ունի իր պատմությունը, ընդգրկում է պատկառելի մի ժամանակաշրջան և ենթակա է պարբերացման:

Այդ պարբերացումը իր փուլերով կարող է չհամընկնել ընդհանուր խորենացիագիտության զարգացման փուլերի հետ: Տվյալ դեպքում խոսքը վերաբերում է մեկ առանձին խնդրի ուսումնասիրման փուլերին:

I փուլ - Խորենացին համարվում է անառարկելի հեղինակություն՝ XVIII-XIXդ. առաջին կես.

Այս փուլում խնդրո առարկայի մասին արտահայտվել են Միքայել Զամչյանն ու Ղուկաս Ինճիճյանը:

II փուլ՝ XIXդ. վերջ: Քննվող հարցի շուրջ սկսվում է Խորենացու հաղորդումների քննադատությունը, համեմատությունը այլ աղբյուրների տվյալների հետ /Ա. Գարագաշյան, Գր. Խալաթյանց/:

III փուլ՝ - XXդ. առաջին քսանամյակ: Սույն հարցը դառնում է հատուկ քննության առարկա: Նոր բացատրություն է տրվում մենագրական աշխատություններում, որոնք նվիրված են պատմության ծավալուն հիմնահարցերին /Ն. Ադոնց, Լեո/:

IV փուլ՝ XXդ. կեսեր: Երևան են գալիս նոր մենագրական ուսումնասիրություններ, ուր հիմնահարցը քննվում է ավելի մանրազնին /Ա. Շահնազարյան/:

V փուլ՝ XXդ. երկրորդ կես, /մինչև 1980-ական թթ./: Ուսումնասիրությունների աղբյուրագիտական բազան ընդլայնվում է, շրջանառության մեջ են դրվում ուրարտագետների հարցադրումները, գտնվում է Զանգեզուրի արամեական արձանագրությունը: Լույս է տեսնում Կ. Թումանովի «Որոնդյանները Հայաստանում» մենագրությունը /1963, անգլերեն/:

VI փուլ՝ 1980-ական թթ.: Վերջին երկու տասնամյակներում տեղի է ունեցում առանձին հարցերի ավելի խորը քննություն:

Ժամանակագրական առումով հիմնահարցին առաջինը անդրադարձել է Միքայել Զամչյանը /XVIIIդ. վերջ/, ապա Ղուկաս Ինճիճյանը /երկուսն էլ Վենետիկի Մխիթարյաններ/: Նրանք, բնականաբար, հարցը շարադրել են ըստ Խորենացու, հիմնվելով նրա հաղորդման վրա: Որևէ դիտողություն հարցի շուրջ չեն անում:

Գրկ. *Միքայել Զամչյանց*, Պատմութիւն Հայոց, հ. Ա., Վնտ., 1784, էջ 181-182: *Ղուկաս Ինճիճյան*, Հնախօսութիւն աշխարհագրական Հայաստանեայց աշխարհի, հ. 2, Վնտ., 1835, էջ 96:

XIXդ. վերջում միաժամանակ լույս տեսան պատմաբան Ա. Գարագաշյանի և բանասեր Գր. Խալաթյանցի աշխատությունները՝ նվիրված Հայաստանի հին շրջանի պատմությանն ու բանասիրությանը: Նրանք անդրադարձել են նաև խնդրո առարկային և կատարել արժեքավոր դիտողություններ:

Ա. Գարագաշյանը սկզբունքորեն մերժում է Խորենացու փաստարկները, նրա տեսակետը մի քանի կարևոր կետերում համընկնում է իր ժամանակակից բանասեր Գր. Խալաթյանցի տեսակետին: Նախ, Գարագաշյանը ուշադրություն է դարձնում, որ Խորենացու նախորդները /Ագաթանգեղոս, Փավստոս Բուզանդ/ չեն նշում Բագրատունիների հրեական ծագումը: Բայց այնուամենայնիվ կար մի հին ավանդություն, ըստ որի Բագրատունիք և Գնթունիք պաղեստինացիք են: Սակայն, Խորենացու հաղորդմամբ, Գնթունի նահապետ Զորան, վիճելով և հակառակվելով Բագրատունի Ենանոսին, որն ընդվզել էր թագավորի դեմ և փորձում էր իր կողմը գրավել Գնթունի Զորային, առարկում է Ենանոսին. "Մինչև երբ խաբվեն հին զրույցներով և պառավանց առասպելներով, պաղեստինցի կարծելով մեզ": /«Ընդէր պատրիմք զրուցօք վաղըճուց և պառաւեալ առասպելօք, պաղեստինացի զմեզ վարկանելով», Խորեն., II, ԻԴ/: Գարագաշյանը մերժում է նաև Խորենացու անձնանունների վկայակոչումը, նա մատնանշում է, որ Սմբատ, Վարազ, Բագարատ և այլ անունները արիական են, Բագարատ նշանակում է աստվածատուր, Սմբատ՝ արծաթ /սիմ/ և պատ /շեն/, Վարազ նշանակում է հաղթող, Սասանյանների ժամանակ այն դարձել է Պերոզ, գործածվել է նաև բարդացված ձևով՝ Վարազտիրոց, Վարազվաղան, Վարազդատ և այլն:

Պրոֆ. Գր. Խալաթյանցը նույնպես չի ընդունում Խորենացու հաղորդումը Շամբատի մասին որպես հավաստի վկայություն, որը կարող է հիմք ծառայել տոհմի ծագումը պարզելու համար: Նրա կարծիքով Շամբատ-Վաղարշակի վերաբերյալ նյութը շարադրելիս Խորենացին հիմք է ունեցել Անանունի համապատասխան հաղորդումը Բագարատ Փառազյանի վերաբերյալ: Խորենացու մոտ ևս Բագարատը մեծ նախարար է, դիմավորում է թագավորին, ստա-

նում ասպետի և թագադիրի պատիվները: Սակայն Խորենացին ձևափոխում է Բագարատի ծագումը, Արամենեակի փոխարեն սերում է նրան Նաբուգոդոնոսորին ժամանակակից հրեա Շամբատից: Խալաթյանցը գտնում է, որ Բագրատունի իշխանների անունների համեմատությունը Աստվածաշնչի անունների հետ որպես ապացույց նրանց հրեական ծագման՝ ուշադրության արժանի չէ:

Այնպիսի բիբլիական անուններ, ինչպիսիք են Բագադիա, Վազարիա, Ասուդ, Շամբատ, որոնք համապատասխանում են հայկական Բագարատին, Վարազին, Աշոտին և Սմբատին, գոյություն չունեն /չհաշված հայերեն Հին Կտակարանում երկու անգամ հանդիպող «Ասովդ» անունը/: Եվ հակառակը՝ Աստվածաշնչում հանդիպող անուններ՝ Սենեկիա, Տուբիա, Ենանոս, Ազարիա և Սարիա - Բագրատունիների մոտ գործածական չէին:

Խալաթյանցը գտնում է, որ բացի բանասիրական դատողություններից, Խորենացին, հավանաբար, ուներ որոշակի նպատակադրում՝ իր պատրոններին՝ Բագրատունիներին, ինչ-որ պատճառով անհրաժեշտ էր սերել իրենց տոհմը աշխարհի հնագույն ժողովուրդ հրեաներից:

Այսպիսով, նշված երկու գիտնականները մերժում են Խորենացու վարկածը Բագրատունիների ծագման մասին:

Գրկ. *Ա. Գարագաշյան*, Քննական պատմություն հայոց, մ. Ա. Թիֆլիս, 1895, էջ 166, 170-173: *Г. Халатянц*, Армянские Аршакиды в "Истории Армении" Моисея Хоренского, ч. I, М., 1903, с. 26-28, 107. Նույնի՝ Армянский эпос в "Истории Армении" Моисея Хоренского, 1903, էջ 26-28, 107: М., 1896, с. 83, 162, 163.

Գերմանացի արևելագետ-հայագետ Յոզեֆ Մարկվարտի կարծիքով Բագրատունիների նախահայրն է Տիգրան թագավորի զորավար, Ասորիքի կառավարիչ նշանակված Բագարատը, հայկական ավանդությունը, որը պահպանվել է Մար Աբասի մոտ /Սեբեոսի «Պատմության» միջոցով/ Բագրատունիների նախահայր է համարում հենց այս Բագարատին:

Գրկ. I. Marquart, Eranšahr nach der Geographie des Ps. Moses Xorenaci, Berlin, 1901, էջ 174:

Հաջորդ քայլը կատարել է Ն. Ադոնցը, նա պարզել է Բագարատի անձը /խոսքը Բագարատ Փառազյանի մասին է, որին հիշում է Սեբեոսը/: Ըստ Ադոնցի նա նույնանում է հույն պատմիչ Ապիանոսի հիշատակած Տիգրան Մեծի ստրատեգ /զորավար/ Բագադատին, որին Տիգրանը նշանակել էր Կիլիկիայի և Ասորիքի կառավարիչ, երբ նվաճել էր այդ երկրները: Բագադատեսը ըստ Ն. Ադոնցի Բագրատունիների նախահայրն է, նրա հայր Փառնավազին հիշում է նաև Խորենացին Փառնուաս անունով որպես Հրաչյայի որդի և հաջորդ: Ի դեմս այս Բագարատի հաշտվում են երկու հակասական ավանդությունները Բագրատունիների ծագման մասին, նրա կարծիքով տոհմը ծագել է հայ-իրանական էթնիկ միջավայրում, տոհմի նախնական հայրենիքը Բագրևանդն է, Ատրպատականից ոչ հեռու: Ն. Ադոնցի կարծիքով Խորենացու վկայված ավանդությունը Բագրատունիների հրեական ծագման մասին պետք է համարել արձագանք այն իրողության, որ Տիգրան Մեծի ժամանակ Բագարատը կառավարիչ էր նշանակված սեմիտներով բնակեցված շրջանում:

Գրկ. *Նիկողայոս Ադոնց*, Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, Եր., 1987, էջ 458-459:

Շատ արժեքավոր նկատառումներ է անում Լեոն: Խորենացին առաջ է քաշում իր մեկենասի տոհմի առաջնությունը, տոհմային հոյակապության հարցում, ընդգծում է Լեոն, մեծ նշանակություն ունի բարձր և նվիրական ծագումը: Թվում է, որ այս ավանդությունն ստեղծվել է Խորենացու դարում, երբ Բագրատունիները առանձին թափով գործունեություն էին սկսել առաջնությունը Մամիկոնյաններից խլելու համար: Հրեական ծագման գրույցը ամբողջությամբ չի օգտագործվում հայկական աղբյուրներում և նրա լրիվ նշանակությունը ըմբռնելու համար պետք է նկատի առնել, թե ինչ ձև ստացավ այդ գրույցը Վրաստանում, ուր Բագրատունիների մի ճյուղը թագավորական գահ ստեղծեց իր համար: Այնտեղ բանը հասավ այն աստիճանի, որ Բագրատունիների ծագումը հասավ մինչև Դավիթ մարգարե, իսկ այս մարգարե թագավորի շառավիղը լինել, նշանակում էր ազդեցություն ունենալ Մարիամ Աստվածածնի հետ /վկայված է M. Brosset, Add. et éclair. à l'Histoire de la Géorgie, Peterb., 1851, p. 140/: Ահա և կրկնակի բարձր և նվիրական հեղինակություններ՝ ժողովրդի սերն ու համակրանքը գրավելու և գահն ամրացնելու համար:

Բայց Հայաստանում, շարունակում է Լեոն, գոյություն ուներ մի հին ավանդություն, ըստ որի Բագրատունիները բնիկ հայեր են, սերված Հայկ Նահապետից, սակայն Խորենացին հանձնարարում է իր մեկենաս Սահակ Բագրատունուն չհավատալ հայկական ծագման վարկածին: Խորենացու ամենամեծ ապացույցը՝ դա Բագրատունիների տոհմում տարածված Սմբատ անունն է, որը Շամբատ անվան հայացած ձևն է: Սակայն Լեոն վկայակոչում է օտար աղբյուրը /Պլինիոս/, որ Տիգրան Մեծի զորավարներից մեկի անունը Բագարատ էր, այդ անունը բաղկացած է Բագա-դատա բառերից՝ «Աստված տվեց», այդ բառերը սեմական լեզվին չեն պատկանում, այս Բագադատ զորավարն էլ պետք է համարվի տոհմի նախահայր /վկայակոչում է Н. Адонц, Армения... էջ 412: Հայերեն թարգմանություն՝ էջ 459/: Լեոն համամիտ է Ադոնցի այն վարկածին, որ Բագադատի երկար ժամանակ Հրեաստանին մոտիկ երկրներում պաշտոնավարելու հանգամանքը հետագայում դարձել է

մի խուլ արձագանք, որ հրեական ծագման հիմք է դարձել: Լեռն ենթադրում է, որ ոչ թե Սպերը, կամ Կոգովիտը, այլ Բագրևանդն է այն տարածաշրջանը, ուր կազմակերպվել է Բագրատունի տոհմը: Այդ ենթադրության օգտին է խոսում Բագարատ և Բագրավանդ անունների մոտիկ ազգակցությունը /վկայակոչում է Ն. Ադոնցին/:

Գրկ. *Լեռ*, «Երկեր», հ. 2, եր., 1967, էջ 489-491:

Թվարկված /և հաջորդ/ գիտնականների մոտեցումից տարբերվում է Ն. Մառի տեսությունը: Նա VIII-IXդդ. հայ ազնվականությունը բաժանում է երկու խմբի՝ այդ դարաշրջանում առաջնությունը անցնում է նոր, չնայած անկասկած բնիկ, բայց այնուամենայնիվ երիտասարդ տոհմերին, նրանց կողմն է հասարակական համակրանքը:

Նրանք նոր են և սոցիալական և ազգագրական միջավայրերով, որտեղից նրանք դուրս էին գալիս: Աշոտ, Սմբատ, Գագիկ անուններ կրողները ավելի շատ կապված էին հաբեթական աշխարհի հետ և ավելի թույլ՝ իրականի: Հին հայկական թագավորության հին հայկական ազնվականությունը, իր հայկական ավանդություններով, իր տեղը զիջում էր նոր ազնվականությանը, բայց վերջինը ոչ պակաս հավակնություններ ուներ կապվելու հայ թագավորների հետ, եթե ոչ ցեղական հատկանիշով, ապա իր ծառայություններով, իսկ սպասավոր պատմությունը ձգտում էր գունազարդել նոր իշխանական տների անցյալը: Բագրատունիների ծագման հարցում առաջ եկավ երկվություն՝ ոմանք, հին ավանդությների մարդիկ, ձգտում էին նրանց կապել տեղական ցեղերի հետ: Մյուսները՝ նոր, քրիստոնեական հայացքների մարդիկ, տարածում էին հուդայական թագավոր Դավթից ծագելու առասպելը, մի առասպել, որն արտացոլվել է նաև վրաց Բագրատունիների պատմության մեջ: Այս բոլոր հարցերի լուծումով, - գրում է Մառը, - մենք կգտնեինք այն լավագույն հիմքը, որի միջոցով կպարզվեր նոր ֆորմացիայի իշխանների հասարակական տիպը, նրանց գեղարվեստական հաշակը և ավանդությները, կպարզվեր, թե ինչպես էին առաջ գալիս այդ հաշակները, այսինքն մենք կկարողանայինք ստանալ նոր և հին իշխանական կյանքի դրվածքների տարբերության պատրաստի և իրական հիմնավորումը:

Գրկ. Н. Марр, "Ани", Ер., 1939, էջ 40-42:

Պր. Գր. Ղափանցյանը առաջինը Բագրատունիների ծագումը կապեց ուրարտական շրջանի հետ: Նրա կարծիքով Բագարատ Փառազյանը, որպես Բագրատունիների նահապետ և անվանադիր, կարող էր արտացոլել իր մանայական ծագումը, եթե նկատի ունենանք ուրարտական թագավոր Ռուսա Ա-ին

ժամանակակից Մանա երկրի թագավոր Բագադատիին /մ.թ.ա. 716թ./: Մանան Ուրարտուի կազմում էր և զբաղեցնում էր միջնադարյան Պարսկահայք /Նոր Շիրական/ նահանգի տարածքը /Ուրմիա լճի արևելյան եզերքի ավազան/: Նույն Բագադատիին հիշատակվում է ասորեստանյան թագավոր Սարգոն Բ-ի արձանագրություններից մեկում: Սա շատ ուշագրավ միտք է և պետք է որ ելակետ ծառայի տոհմի ակունքները պարզելու համար:

Գրկ. *Ղափանցյան*, Ուրարտուի պատմություն, եր., 1940, էջ 203, 219, հ. 1:

Ասլան Շահնազարյանը, հենվելով նախորդ հետազոտողների եզրակացությունների վրա, տվեց նրանց հետազոտությունների ամփոփում և իր հետևությունը: Նրա կարծիքով Խորենացու վկայությունները Բագրատունիների ծագման մասին առիթ են տվել լուրջ քննադատության և մեծ մասամբ մերժվել են: Նա համակարծիք է նախորդների այն տեսակետին, որ Խորենացու վկայված անունները չեն հաստատում պատմիչի վարկածը տոհմի օտար ծագման մասին. Բագրատունիները հեթանոսական և քրիստոնեական շրջաններում հալածանքների չեն ենթարկվել: Նա միանում է Ն. Ադոնցի կարծիքին, որ տոհմի նախահայրն է Տիգրան Մեծի ստրատեգ Բագարատը, մյուս կողմից Շահնազարյանը մատնանշում է ուրարտագետ Գր. Ղափանցյանի կարծիքը, որ մ.թ.ա. VIIIդ. վերջում ապրող Մանա երկրի թագավոր Բագադատին առընչվում է Բագրատունիների հետ: Աս. Շահնազարյանը գտնում է, որ ոչ Բագադատին և ոչ Շամբատը կամ Բագարատ Փառազյանը ոչ մի նշանավոր գործ չեն արել, որ նրանց անունով տոհմը ստանա իր անունը: Նա բաժանում է Ն. Ադոնցի վարկածը, որ տոհմի նախահայրը վերը նշված ստրատեգ Բագարատն է: Ուշադրության արժանի է ըստ Շահնազարյանի Բագրատունի ազգանվան կազմության ձևը, ազգանունը բաղկացած է «Բագարատ» և «ունի» բառերից:

Ուրարտագետների բացատրությամբ «ունի» բառը նշանակում է «տոհմ», այդ բառը նույն նշանակությամբ պահպանվել է հայերենում որպես հատուկ անունների վերջածանց, այդ ձևով են կազմված հայկական տոհմանունները՝ Արծրունի, Ռշտունի, Գնթունի, Բզնունի, Ամատունի, Արշակունի և շատ այլք: Այսպես, Արշակ՝ պահլավերեն բառ է և նշանակում է թագավոր, իսկ Արշակունի նշանակում է թագավորական տոհմ: Նույն սկզբունքով Բագրատունի նշանակում է Բագրատի տոհմ:

Այսպիսով, Աս. Շահնազարյանը միանում է Ն. Ադոնցի առաջարկած վարկածին և մի քանի լրացուցիչ փաստարկներով հաստատում նրա եզրակացությունը:

Գրկ. *Ասլան Շահնազարյան*, Բագրատունյաց նախարարական տոհմի ծագումը, Պետական պատմական թանգարանի «Աշխատություններ», հ. 1, Ե., 1948:

XXդ. երկրորդ կեսին սկսվում է նոր փուլ խնդրի պարզաբանման բնագավառում: Լույս են տեսնում մի քանի հոդվածներ, ուր ավելի են հստակեցվում հիմնահարցի հանգուցային կետերը:

1963թ. լույս տեսավ խոշոր կովկասագետ Կիրիլ Թումանովի մեծարժեք ուսումնասիրությունը, նվիրված հին հայկական արքայատոհմի՝ Երվանդունիների ծագմանը: Նրանում հեղինակը արժեքավոր նկատառումներ է անում նաև Բագրատունյաց տոհմի ծագման շուրջ:

Կ. Թումանովը նկատում է, որ Խդ. պատմիչ-կաթողիկոսից /Հովհ. Դրասխանակերտցի/ առաջ հայկական ոչ մի աղբյուր չի խոսում Բագրատունիների հրեական ծագման մասին: Եթե ոչ ինքը Խորենացին, ապա իր ժամանակ է զարգացել այդ տեսությունը և գրական տեսք ստացել: Հետագայում այս տեսությունը կարևոր փոփոխություններ է կրել, որպեսզի մյուս հարստությունների /դինաստիաների/ ծննդաբանական վեպերի փայլը ևսեմանա /օր.՝ Մամիկոնյանների հեն թագավորների և Արծրունիների արքայական ծագումը/:

Բագրատունիների ավանդությունը կապում է տոհմը Դավիթ թագավորի և մարգարեի հետ, ուղիղ գծով Ադամի հետ: Դա նշանակում է, որ Բագրատունիները ոչ միայն ամենահին, այլև աշխարհի ամենահարազատ հարստությունն են, տիրոջ և նրա մոր ազգականը: Այս մեկնաբանությունը առաջացավ, սակայն ոչ թե Հայաստանում, Բագրատունիների մոտ, այլ Վրաստանի, նրանց ազգակիցների, որոնց հիմնադիրն է հայոց իշխան Աշոտ Կույրի թոռ Ատրներսեհը /Վասակի որդին/:

Բագրատունիների Երվանդունի ծագումը արտահայտված է նրանց աստվածության միջոցով, Երվանդունիներին էր պատկանում Անգեղ տուն գավառը, բացի այդ նրանք իշխում էին Երասխածորում, ուր Երվանդ վերջինը կառուցեց Բագարանը /Աստուծո վայր/: Բագրևան գավառում էր Երվանդունիների մյուս սրբավայրը՝ Բագավանը /Աստծո տեղ/:

Թումանովի կարծիքով Երվանդունիների աստվածուհի Տորք Անգողը անկարկվում է baga բառով, որովհետև «Բագարատ»-ը այդ աստվածուհյունը պաշտողների մականունն է: Թվում է, որ Բագարան և Բագավան տեղանունները իրենց իմաստով Անգողի և Անգեղ տան համազորներ են, բոլորն էլ Երվանդունիների աստվածության անվիրական վայրեր:

Միաժամանակ գավառը, որը մոտ էր Երվանդունիների կենտրոնին, պետք է կոչվեր Բագարատի գավառ՝ «Բագրևանդ» այն պատճառով, որ Բագարատ անունը կրող Երվանդունի իշխանի ժառանգությունն էր: Ավելի ուշ այս երեվույթը ներմուծվեց քրիստոնեական մատենագրության մեջ, «Նախնական պատմություն Հայոցի» մեջ /Անանուն/ Բագարատը ներկայացված է իբրև շառավիղ արքունական ցեղի, որին հեթանոսները աստվածացնում էին իբրև Անգող:

Գրկ. *C. Toumanoff*, Studies in Christian Caucasian History, 1963: Հայերեն թարգմանություն՝ Որոնդյանները Հայաստանում, «ՀԱ», 1967, ապրիլ-սեպտեմբեր, էջ 195, 214-216, 365-366:

Կ. Թումանովի վարկածը Բագրատունիների և Երվանդունիների ազգակցական կապի մասին կարծեք հաստատում է 1965թ. հայտնաբերված արամեերեն արձանագրությունը, հայտնաբերված Զանգեզուրում: Այն գրված է Արտաշեսյան արքայատոհմի առաջին ներկայացուցիչ Արտաշես Ա-ի անունից, նրանում ասված է. "Արտաշես թագավոր, Երվանդունի, Բարեպաշտ, Զարեհի որդի և Նեկֆարը, թագադիր, Աիւշաիրսարտի որդի": Նեկֆար նույն Նիկեփոր անունն է, նրա պահլավերեն ձևը, նա թագադիր է, ուրեմն Բագրատունի: Այսպիսով, այժմ /1965-ից/ գիտությանը հայտնի է Բագարատից ավելի վաղ տոհմի ներկայացուցիչ /Բագարատից հարյուր տարի առաջ/:

Հայ ժողովրդի պատմության ակադեմիական հրատարակության մեջ /Ս. Երեմյանի հեղինակությամբ/ նոր բացատրություն է տրվում Շամբատ-Բագարատի առեղծվածին: Վերջինը, որ նույնանում է Անանունի Բագարատ Փառազյանի հետ, ժամանակակից էր Տրդատ Ա Արշակունուն և հետևելով Ադիաբենի թագավորներին, ընդունել էր հրեական կրոնը, ավելի ճիշտ՝ նախնական քրիստոնեության ուսմունքներից մեկը: Իբրև հայ ավագանու ներկայացուցիչ նա մասնակցել է Տրդատին Մեծ Հայքի թագավոր հռչակելու արարողությանը որպես թագադիր և ասպետ:

Գրկ. *А. Периханян*, Арамейская надпись из Зангезура, ՊՀԲ, 1965, N4: Հայ ժողովրդի պատմություն, հ. 1, եր., 1971, էջ 681, 747, 831, 835, 880:

Շամբատի կապը Ադիաբենի նախարարական ազնվականության հետ որպես ավելի հիմնավոր դրույթ ներկայացրեց Հ. Մելքոնյանը: Ըստ նրա վարկածի Հռոմի դեմ պայքարի տարիներին Տրդատ Արշակունու դաշնակիցը էր Ադիաբենի թագավորությունը, ադիաբենցի նախարարները իրենց զորքով մասնակցում էին ռազմական գործողություններին: Նրանցից ոմանք որպես վարձատրություն ստացել էին հողային կալվածքներ Հայաստանում և մնացել էին այստեղ: Միանգամայն հավանական էր, որ մնացածների թվում լինեին հայեր, որոնք ապրում էին Ադիաբենում, իսկ այժմ հաստատվել էին իրենց հայրենիքում:

Խորենացու հաղորդումը Շամբատի վերաբերյալ, գրում է Մելքոնյանը, խոսում է այն մասին, որ Շամբատ-Բագարատը Մծբինից Հայաստան եկած ադիաբենցի զորավարներից էր, նա թագակապ-թագադիր էր դարձել արդեն Մծբինում՝ /Տրդատ թագավորի առաջին մայրաքաղաք՝ 58թ./: Մելքոնյանը գտնում էր, որ Տրդատը օտարազգի ազնվականին այդպիսի բարձր պաշտոն չէր տա, դա կառաջացներ հայ նախարարության դժգոհությունը: Քանի որ Խորենացին օգտվել է Մար Աբաս Կատինայի գրքից, «հրեա» ասելով հասկա-

ցել է հավատը, այն է՝ հավատը ազգության իմաստով, քանի որ հնում /և միջնադարում/ մարդկանց ազգությունը որոշվում էր կրոնով կամ նրա այս կամ այն դավանանքով: Օր.՝ պատմիչ Հովսեպոս Փլավիոսը կարծում է, որ ադիաբենցիները հրեաների հայրենակիցներն են՝ նա նկատի ունի նրանց հավատի ընդհանրությունը:

Արդյո՞ք նույն ձևով պետք է հասկանալ Խորենացու վկայությունը՝ Ադիաբենի արքունիքում մեծամեծների մի մասը, թագավորի ու թագուհու հետևությամբ, ընդունել էին հրեական նոր վարդապետությունը, որը հետագայում կոչվեց քրիստոնեություն: Վկայակոչելով Ս. Երեմյանի վարկածը, որ Շամբատը Ադիաբենի թագավորների օրինակով հրեական կրոնը /նախնական քրիստոնեության ուսմունքներից մեկը/ ընդունած հայ է, Մելքոնյանը եզրակացնում է, որ Շամբատը Ադիաբենից եկած այն զորավարներից էր, որոնք դեռևս Ադիաբենում ընդունել էին հրեական նոր ուսմունքը: Ապրելով Հայաստանում՝ Շամբատը, ապա նրա որդիները, պահպանում էին իրենց հավատը, երկար ժամանակ չէին ընդունում հեթանոսությունը: Մելքոնյանը անում է շատ ուշագրավ ենթադրություն՝ հնարավոր է, որ Բագրատունիների շնորհիվ մ.թ. Ի դ. քրիստոնեական վարդապետության առաջին ծիլերը մուտք գործեցին Հայաստան և նրանց միջոցով այստեղ աստիճանաբար կազմակերպվել են քրիստոնեական համայնքներ: Ուստի Տրդատի հաջորդ թագավորները խիստ միջոցների են դիմել, նույնիսկ գլխատել տոհմի երկու անդամների /Խորենացու վկայությունը այդ մասին տես Հայոց պատմ. II, ԻԴ/: Այսպիսով, Հ. Մելքոնյանի դրույթը նորովի է մեկնաբանում Խորենացու հաղորդումները Շամբատի մասին և հնարավորություն ընձեռում պատմական ավելի լայն տեսադաշտով քննել խնդիրը:

Հ. Մելքոնյանի դրույթը լրացնում է Ռ. Մանանսերյանի վերջերս առաջարկած վարկածը: /Ձևայած առանձին կետերում վիճում է Մելքոնյանի հետ/: Ըստ նրա Բագարատ տոհմանունը իրանական-հնդեվրոպական անուն ունի, որը հիմք է տալի Շամբատի ծագումը համարել ոչ թե սեմիտական, այլ տեղական հայկական: Տվյալ դեպքում մենք գործ ունենք «պրոզելիտի»՝ նորադարձի հետ, որը համարվում էր «հրեա» որպես հայ-հուդայական կամ պարզապես վարդապետության հետևորդ: Պրոզելիտիզմը լայնորեն տարածված էր Հայաստանի հելլենիստական քաղաքներում, որոնք ունեին պոլիէթնիկ /բազմազգ, բազմաէթնիկ/ բնակչություն: Փավստոս Բուզանդի կողմից նշված հայկական քաղաքների բազմաքանակ հուդայական բնակչությունը զգալիորեն պրոզելիտիզմի հետևանք էր /այն է՝ որպես «հրեա» նշված են հայ, ինչպես նաև այլ ժողովուրդների ներկայացուցիչներ՝ հույներ, կապադովկիացիներ, որոնց այլ երկրներից վերաբնակեցրել էր Տիգրան Մեծը/:

Վերջին երկու աշխատությունները նոր ըմբռնում են հաղորդում մ.թ. I-IIդդ. Հայաստանում տեղի ունեցած կրոնա-դավանաբանական և նրան ուղեկից պրոցեսներին և նպաստում նախաքրիստոնեական դարերում տեղի ունեցած հասարակական-դավանաբանական երևույթները ավելի խոր և համակողմանի ուսումնասիրելուն և պարզաբանելուն:

Գրկ. *Հ. Մելքոնյան*, Ադիաբենի պետությունը և Հայաստանը, Եր., 1980, էջ 129-135: *Ռ. Մանասերյան*, К вопросу о вероисповедании населения городов Армении (Iв. до н.э.), ՊԲՀ, 1989, № 2.

Այսպիսով, Բագրատունյաց տոհմի ծագման խնդրի ուսումնասիրության պատմությունը կարելի է բաժանել երկու խոշոր շրջանների՝ առաջինը, երբ այն քննվում է ամբողջությամբ, որպես մեկ հիմնահարց, նրա բաղկացուցիչները դիտվում և քննվում են միասնաբար, որպես մեկ խնդիր: Երկրորդ՝ երբ քննություն է կատարվում հարցի առանձին կետերի /ենթահարցերի/ շուրջ:

Վերջին շրջանում նորովի, այսօրվա գիտության մակարդակով է պարզաբանվում տոհմի հիմնադրի պատմական միջավայրը, դարաշրջանի հասարակական մտածելակերպը: Առանձնապես կարևոր է պարզել տոհմի /ինչպես նաև մյուս հայկական նախարարական տոհմերի/ ակունքների խնդիրը: Ուրարտագետ Բ. Պիոտրովսկին կես դար առաջ /1945/ նշել է, որ հայ իշխանների հնագույն տոհմական ազգանունները կապված են Ուրարտուի հետ ոչ միայն արմատներով, այլև «ունի» ձևավորմամբ, այն է՝ ուրարտական բնորոշ վերջածանցով: Դրանից առաջ 1940թ. Բագրատունիների ուրարտական ծագումը մատնանշել է ուրարտագետ Գր. Ղափանցյանը, սակայն նրանից հետո աշխատանք չի կատարվել: Արծրունիների ուրարտական ծագումը դեռևս 1960թ. հիմնավորել է հնագետ-վիմագրագետ Ս. Բարխուդարյանը:

Վերը վկայված ուսումնասիրությունների արդյունքների հիման վրա կարելի է անել հետևյալ մի քանի լրացուցիչ դիտողությունները.

1. Շամբատը չէր կարող լինել տոհմի նախահայր, որովհետև նրա հիմնած տոհմը իր անունով կկոչվեր Շամբատունի կամ Սմբատունի, այնինչ տոհմը կրում է այլ ազգանուն:

2. Բագրատունիների տոհմին է պատկանում Անգեղ տունը: Խորենացին գրում է, որ այն սերվում է Հայկի թոռ Պասքամից /Հայոց պատմ., I, ԻԴ/: Տորքը, Անգեղ տան Բագրատունիների աստվածությունը, նույնպես սերում է նույն Պասքամից /II, Ը/: Այս վկայություններով Խորենացին ուղղակի հաստատում է Անգեղ տան հայկական ծագումը: Դրանից ինքնին բխում է հետևություն, որ անգեղցիների Սպերի, Բագրևանդի տոհմակիցները նույնպես սերում են Հայկից: Չի կարող պատահել, որ նույն տոհմի մի հատվածը ունենա հայկական, իսկ մյուս հատվածը՝ օտար ծագում: Խորենացին իր վկայությունների այս հակասությունը չի նկատել:

3. Բոլոր հիմքերը ունենք տոհմի ծագումնաբանական ակունքները որոնել ուրարտական /հնագույն հայկական/ ժամանակաշրջանում: Տոհմը կարող է ձևավորվել շատ ավելի շուտ, քան նրա նախարարությունը: Մեր կարծիքով տոհմի անվանադիր է հանդիսանում ուրարտական գլխավոր աստվածուհի Բագբարտուն՝ Խալդեի կինը /տես «Բագբարտու» հոդվածը «Ուրարտու» բաժնում/: Բագրատունիների տոհմական գինանշանը, նրա հորինվածքը, ակնհայտորեն կրում է ուրարտական հերալդիկայի ազդեցություն /տես «Զինանշաններ» բաժնում/:

ԲԱԺԻՆ III

ԲԱԳՐԱՏՈՒՆԻՆԵՐԸ ՄԻՆՉԵՎ IXԴ.

ա. ԲԱԳՐԱՏՈՒՆԻ ՏՈՀՄԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՈՒՂԻՆ ՄԻՆՉԵՎ IXԴ. ՎԵՐՋԸ

Բագրատունիների դերը Հայաստանի քաղաքական կյանքում հսկայական է, նրանց անցած պատմական ուղին հաշվում է ոչ թե դարեր, այլ հազարամյակներ, սկսած Ուրարտուից, այն է՝ Հայաստանի ձևագույն, սեպագիր շրջանից մինչև երկրի ավանումը Բյուզանդիայի կողմից և սելջուկների ներխուժումը /XIդ./: Հայ նախարարական-իշխանական տոհմերից ոչ մեկը, բացառությամբ Մամիկոնյան-Խաղբակյանների, չի գոյատևել այդքան երկար և չի թողել այդպիսի խոր հետք հայ ժողովրդի ճակատագրում, ինչպես Բագրատունիները:

Ասածը չպետք է հասկանալ որպես Բագրատունիների միակողմանի գովաբանում և նրանց հակադրում հայ մյուս նախարարական տոհմերին: Ոչ պակաս դեր են կատարել Երվանդունիները, Արտաշեսյանները, Արշակունիները կամ մյուսները: Բայց Բագրատունիներն ունեն միայն իրենց տոհմին հատուկ առանձնահատկություն: Մյուսները, օր. Երվանդունիներ-Արտաշեսյանները, կամ Արշակունիները տարբեր դարաշրջաններում հիմնել կամ վերականգնել են հայ պետականությունը, բայց նրանց գլխավորած թագավորությունների անկումից հետո երկրի քաղաքական կյանքում այլևս նշանակալից դեր չեն կատարել:

Այդ, իհարկե, չի նշանակում, որ նշված տոհմերը իսպառ վերացել են, նրանց շառավիղները գոյատևել են դեռ երկար ժամանակ: Երվանդունիների ներկայացուցիչները, օրինակ, հասել են մինչև մ.թ. Vդ., Վահանանց ապստամբության տարիներին /482-484/ Վահան Մամիկոնյանի զինակիցներից էր Ներսեհ Երվանդունին, Ներսեհապատի ճակատամարտի մասնակից:

Արշակունյաց թագավորության անկումից հետո այդ արքայատոհմի ներկայացուցիչները /գուցե և այլ ազգանվամբ/ գործում էին Հայաստանում, ինչպես նաև Բյուզանդիայում: Նրանց հերալդիկ նշանը քանդակված է Եղվարդի XIVդ. կառուցված ս.Աստվածածին եկեղեցու արևելյան ճակատին /նախատիպը IVդ. Աղցի Արշակունիների դամբարանում է/:

Խոսքը Հայաստանի քաղաքական անցուդարձում իրենց գահի անկումից հետո նախկինում հզոր տոհմերի ազդեցության մասին է:

Այլ է Բագրատունիների ուղին: Նրանք կարևոր դեր էին կատարում Արտաշեսյանների, ապա Արշակունիների օրոք և մարզպանական Հայաստանում: Այդ երեք դարաշրջաններում նրանք հանդես էին գալիս որպես ազդեցիկ քաղաքական ուժ, որը շատ հաճախ պետության /թագավորական տան/ պատվարն էր: Նրանք էին թագադիրները, իսկ մ.թ.ա. II-մ.թ. IIդդ. նաև սպարապետները: Բավական է հիշել Արտաշես Ա-ի դայակ Սմբատ Բագրատունուն, նույն թագավորի թագադիր Նիկեփորին: Մ.թ.ա. IIդ. մինչև 428թ. /Արշակունիների անկումը/ Բագրատունիների պաշտոնն էր՝ ասպետ Հայաստան երկրի, «որ էր իշխան և հրամանատար, ամենայն թագավորութեանն հրամանաց գլուխ, և հայր արքայի, և եղբայր, որում ետ իշխանութիւն տերութեանն այնորիկ» /Սեբեոս/: Այդ իշխանությունն ու պաշտոնը Տրդատ Ա Արշակունին հանձնել էր Բագարատ Բագրատունուն, վերահաստատելով տոհմի այն դիրքը, որն ուներ Արտաշեսյանների օրոք: Նման իշխանությամբ օժտված պաշտոնյան, փաստորեն, պետության երկրորդ գործիչն էր, ընդ որում, «հայր» պաշտոնը ըստ երևույթին IVդ., Փավստոս Բուզանդի մոտ հիշված «հայր մարդպետն» է:

Արտաշեսյանների, առանձնապես Արշակունիների և մարզպանական շրջանում Բագրատունիների հետ քաղաքական ազդեցությամբ կարող էին մրցել միայն Մամիկոնյանները: Վերջիններս IVդ. արդեն ձեռք էին բերել սպարապետության գործակալությունը և պահեցին այն անընդմեջ մինչև VIդ. վերջը: Մարզպանական շրջանում Հայաստանի քաղաքական կյանքը բախտորոշում էին հիմնականում Մամիկոնյանները, այդ երկուսի շուրջ էին համախմբված հայ մյուս նախարարական տները:

Մամիկոնյաններն ու Բագրատունիները երկու ուղղությունների առաջնորդներն էին, դեկավար ուժը և ոչ նրանց ստեղծագործողները: Դժվար է ուրանալ, միանգամայն իրավացի գրում է Ն. Ադոնցը, Մամիկոնյանների կարմիր հետքը մեր պատմության մեջ, Մամիկոնյան տոհմը երկար ժամանակ հայ ազգի բարեխոսն սիրտն էր: Մամիկոնյանների կարմիր դրոշը տանում էր դեպի քաղաքական ազատություն արյան ուղիներով՝ բռնության դեմ բրոնություն, ուժի դեմ ուժ, արյան փոխարեն արյուն, ահա այդ դրոշի նշանաբանը:

Արաբների հաստատվելուց հետո զգալիորեն առաջադիմում են Բագրատունիք և աստիճանաբար գրավում երկրի համակրությունը: Մամիկոնյան արծիվները, չնայած դեռևս շարունակում են խոյանալ մարտի դաշտերում, բայց երգիչներ չունեն: Պատմագիրները՝ Ղևոնդ, Հովհաննես Կաթողիկոս, Ասողիկ և այլք գովաբանում են բացառապես Բագրատունի իշխաններին, նրանց ջատագովներն են:

Բագրևանդի ճակատամարտը, նշում է Ն. Ադոնցը, հիմք դրեց նոր քաղաքականության, ըմբոստությունը տեղի տվեց խոհեմությանը: Մամիկոնյան կարմիր զինվորները իջան պատմության ասպարեզից: Երկու փայլուն աստղեր /Մուշեղ Մամիկոնյան և նրա հավատարիմ դաշնակից Ներսեհ Կամսարական/ ընկան հայ երկնակամարից, պատասխանատու դերում մնացին Բագրատունիք: Նրանք ոչ պակաս քաջ և հայրենասեր էին, բայց Բագրատունի

իշխանները միաժամանակ շրջանկատ էին և գործնական: Բունության դարեր էին, երբ կոպիտ ուժի հանդեպ հասարակական շահը հաճախ պահանջում էր լռել քան խոսել և տոկալ քան հուզվել: Սկզբում Բագրատունի Սմբատները Մամիկոնյանների նման սովոր էին ձեռքը պահել դաշույնի վրա, իսկ հետագայում Աշոտները ստիպված էին ձեռքը դնել նակատին: Խորաթափանց Բագրատունիք համակիր չէին ցնցումների, ընդունակ էին անգամ չարիք գործել ավելի մեծ չարիքը կանխելու համար: Մի քանի սերունդ Բագրատունիք հետեվեցին Աշոտ Կույրի թողած ավանդին: Սմբատը, վերջինի որդին, մասնակցեց 775թ. ապստամբությանը, թերևս այն պատճառով, որ Մամիկոնյանների փեսա էր: Բագրատունիների մասնակցությունը 774-775թթ. ապստամբությանը վարկաբեկիչ էր արաբների աչքում, դրանից հետո իշխանաց իշխան նշանակվեց Տաճատ Անձևացին /782-785/:

Խռովարար ցույցերից հետո արաբները հետամուտ եղան զորացնելու արաբական գաղութները Հայաստանում: Խալիֆները արաբական ցեղեր /կայսիկներ, ութմանիկներ/ են բնակեցնում երկրի հարավում, որպես իրենց տիրապետության բնական նեցուկ:

Սակայն, սկսած IXդ. սկզբներից, Հայաստանի կործանման տագնապալի ընթացքը աստիճանաբար կանգ է առնում, դրան նպաստում են խալիֆայության ներսում տեղի ունեցող խռովությունները, նվաճված ժողովուրդների ապստամբությունները, բայց առաջին հերթին հայ ժողովրդի ազատագրական պայքարի նոր վերելքը: Հայ իշխանները հետզհետե վերականգնում են իրենց ուժը, հատկապես Բագրատունիները, որոնք ամրացել էին երկրի արևմտյան լեռնային շրջաններում՝ Սպերում, Տայքում և այլուր: Նրանք բարեկամություն էին հաստատել Բյուզանդիայի հետ և կարող էին վտանգավոր լինել խալիֆայության համար:

Ուստի և խալիֆ Հարուն ալ-Ռաշիդը հարկադրված էր նրանց հանդեպ վարել զիջող քաղաքականություն: 806թ. ալ-Ռաշիդը Սմբատի որդուն՝ Աշոտ Մսակերին ճանաչեց Հայոց իշխան: Աշոտ Մսակերն ու Շապուհը սկիզբ դրեցին Բագրատունիների նոր մեծության, նրանց ոստաններն էին Դարոյնք ու Սպեր, մեկը մոտ Արևելյան /արաբական/, մյուսը Արևմտյան /բյուզանդական/ մեծ պետություններին: Այդ ոստանների վրա էին հենվում Բագրատունիները, նայած թե ում դեմ էին կռվում:

Մսակերը իջավ հրապարակ արաբական բունության ծանր օրերին՝ երկիրը ավերված էր, նյութապես և բարոյապես կազմալուծված, այդ վիճակից երկիրը հանեց Աշոտ Մսակերը, իր ընտանիքը /ուներ չորս որդի և երկու դուստր/ և եղբայրը: Մի քանի տարում նրանք իրենց իշխանության տակ դրեցին Շիրակը, Տարոնը, Արշարունիքը, բարեկամական կապեր հաստատեցին Վասպուրականի հետ:

Այսպիսով, բարեկամական և խնամիական ցանցով Աշոտը կապված էր

նախարարների հետ, նա ապահովել էր հարկերի կանոնավոր վճարումը, վերջ տվել իշխանների ներքին վեճերին, երկիրը սկսեց ազատ շունչ քաշել: IXդ. կեսերից փոխվում է խալիֆայության դիրքորոշումը հայերի հանդեպ, վերսկսված արաբա-բյուզանդական պատերազմներում հաջողությունը կայսրության կողմն էր, 862-ին Աշոտ Մսակերի թոռ Աշոտը նշանակվում է իշխանաց իշխան, նա իր քաղաքական ծրագրերի համար աշխատում է գրավել արաբ կառավարության վստահությունը, հավատարմության հաստատման ապացույցն էր խիստ զուսպ վերաբերմունքը կայսեր և նրա դաշնակիցների հանդեպ: 871-874, ապա 876-877թթ. նորից վերսկսվեցին պատերազմները, արաբական իշխանությունը իր զորության վայրէջքին հասած, ստիպված էր հարմարվել երկրի տրամադրությանը կուսակալ /ոստիկան/ նշանակելիս: Տրամադրության հայտարարը IXդ. կեսերին Աշոտ իշխանաց իշխանն էր, նա ակնածելի ուժ էր տեղի արաբ իշխանավորների և ոստիկանի աչքում: Կամ պետք էր ասպարեզը զիջել նրան, կամ փորձել հեռացնել վտանգավոր իշխանին: Բախումը անխուսափելի էր: Նոր կառավարիչ Մուհամեդ իբն Խալիդը դավադրություն է կազմակերպում վերացնելու հայ իշխաններին: Սակայն դավադրությունը բացահայտվում է և ոստիկանը հեռացվում երկրից: Այնուհետև հայ իշխանները դիմում են խալիֆին՝ Աշոտի թագ շնորհելու առաջարկով: Ոչ մի երաշխիք չկար, որ եթե դիմումը մերժվեր, իշխանաց իշխանը երեսը չէր թեքի արաբներից և բաղձալի թագը չէր ստանա կայսրից: Այս դեպքում Հայաստանը ընդմիշտ կանցներ արաբների ոխերիմ թշնամիներին: Մուտամիդ խալիֆը /ալ-Մուտամիդ՝ 870-892/ 885թ. բավարարեց հայերի դիմումը. Աշոտի թագադրությամբ փակվում է քաղաքական ապրումների մի ամբողջ շրջան, մի ամբողջություն: Սկսվում է մի նոր դարաշրջան, որն իրավամբ կոչվում է Բագրատունյաց Հայաստան:

Գրկ. *Նիկողայոս Ադոնց*, Քաղաքական հոսանքները հին Հայաստանում: Բագրատունյաց փառքը, տես «Պատմական ուսումնասիրություններ», Փարիզ, 1948: *Լեո*, Երկեր, հ. 2, եր., 1967, էջ 481-504: Հայ ժողովրդի պատմություն, հ. 3, եր., 1971, էջ 13-19: *А. Грен*, Династия Багратидов в Армении, ЖМНП, 1893, ноябрь.

Բ. ՏՈՀՄԱԿԱՆ ՏԻՐՈՒԹՆԵՐ

Բագրատունիների տիրույթները բաժանվում են մի քանի տեսակի՝ հայրենական-ժառանգական կալվածքներ /գավառներ կամ շրջաններ/, որոնք տոհմի տանուտիրական հողաբաժիններ էին և պատկանում էին տոհմին հնագույն ժամանակներից: Այդպիսիներից էին, օր. Բագրևանդը, Անգեղտունը: Մյուսը՝ ձեռական տիրույթներ, որոնք, ըստ ընդունված կարգի, նրանք ստանում էին թագավորներից արքունի բարձրաստիճան գործակալություններ /այդ թվում սպարապետություն, թագավորահայրի, ասպետություն և

ուրիշ/ վարելու համար: Այդպիսի տիրույթներից էր Սպերը:

Վերջապես՝ երրորդ խումբը կազմում էին այն տիրույթները, որոնք Բագրատունիները միացրել էին իրենց ոստանին, երբ հասել էին քաղաքական գերիշխանության Հայաստանում: VIII-IXդդ. նրանք տիրացան մի քանի տկարացած նախարարությունների հողերին, Արշարունիքն ու Շիրակը գնեցին Կամսարականներից /IXդ./, տիրացան Մամիկոնյանների տիրույթ Տարոնին /IXդ. սկիզբ/: IXդ. վերջում նրանք Վանանդը բռնագրավեցին տեղական իշխանությունից, IXդ. վերջում տիրացան նաև Տաշիր-Ձորագետին, որտեղ տեղական փոքր նախարարությունները կազմալուծվել էին VIIIդ., իսկ Xդ. նախ՝ Գեղարքունիքը /Աշոտ Բ-ի օրոք/, ապա՝ Վայոց ձորը /Xդ. վերջ/:

Նշված գավառների մեծ մասը, բացառությամբ Անգեղ տան, որը Միջագետքի Արաբական ամիրայության կազմում էր IX-XIդդ. գտնվում էին Բագրատունիների իշխանության ներքո:

Անգեղ տուն-Բագրեւանդ-Կոգովիտ

Բագրատունիների հնագույն տոհմական տիրույթները գտնվել են Հայաստանի հարավում և արևմուտքում: Սեբեոսը /Անանուն/ այդ մասին գրում է, որ Բագարատի որդիները ժառանգեցին իրենց ժառանգությունը արևմտյան կողմում, այսինքն Անգեղ տուն: Այնուհետև Սեբեոսն ու Խորենացին հաղորդում են, որ մեծ նախարար Բագարատ Փառազյանը պատվով դիմավորում է Արշակունի առաջին թագավոր Տրդատին /Խորենացու մոտ՝ Վաղարշակ, Սեբեոսի մոտ՝ Արշակ Փոքր/, մատուցում նրան նվերներ, պսակում նրան հայրենի թագով և նստեցնում ոսկեպատ գահին: Իր դստերը նա կնության է տալիս արքային: Տրդատը Բագարատին /Բագարատ-Շամբատին/ դարձնում է Հայաստանի ասպետ, հանձնում նրան «իշխան և հրամանատարի» բարձրագույն պաշտոնը, նշանակում է նրան հայր արքայի և արքունի բոլոր պաշտոնյաների կառավարիչ /«թագավորության հրամանաց գլուխ»/: Նրան տրվում է տերության իշխանությունը: Մովսես Խորենացին իր հերթին գրում է, որ Վաղարշակը /Տրդատ Ա./ այս Բագարատին մեր երկրի արևմտյան կողմում, ուր հայերեն լեզուն վերջնականում է, նշանակեց կողմնակալ՝ բյուրերի և հազարների իշխան /իմա՝ կառավարիչ/: Տգեղության պատճառով թագավորը նրա ցեղը կոչում է Անգեղ տուն:

Այսպիսով, Անգեղ տունը Բագրատունիների հնագույն տիրույթներից էր: Բացի այդ, Արշակունիների օրոք նրանց, որպես արքունի ծառայություն, հանձնարարված էր մի շարք ծայրագավառների կառավարումը՝ Կորճայքի, Տմորիքի, Մարաց ամուր աշխարհի, Գողթն-Մարանդ-Պարսպատունիքի և

Սպերի: Այդ գավառների մի մասը ժամանակի ընթացքում դարձան Բագրատունիների ժառանգական տիրույթներ:

Բագրատունիների մյուս հին տիրույթն էր Բագրևանդը, որը տարածվում էր Արածանիի երկու գլխավոր վտակների ավազանում: Ն. Ադոնցը պարզել է, որ գավառի և տոհմի անունը՝ Բագրևանդա-Բագրա-վանդա-Բագարատա ունեն նույն արմատը: «Վանդա» գունդ բառի հին ձևն է և ունի «տուն» իմաստը, այսպիսով Բագրևանդը տոհմի հնագույն բնակավայրերից է և տոհմի ձևավորման, առաջ գալու կենտրոնը /կամ կենտրոններից մեկը/:

Բագրևանդի նշանավոր վայրերից են Բագավանը /Դիցավան/, Նպատ լեռան ստորոտին, Արածանիի ձախ ափին: Այստեղ էր գտնվում հեթանոսական Հայաստանի նշանավոր տաճարներից մեկը /Բագին/: 301թ. Արածանիում, Բագրևանդի մոտ մկրտվել են Տրդատ Գ թագավորն ու նախարարները, Գրիգոր Լուսավորիչը քանդել է Բագինը և հիմնել ս.Հովհաննես Մկրտիչ վանքը:

Կոգովիտ գավառը գբաղեցնում էր Արաքսի աջ վտակ Մակու գետի ափերը: Այստեղ էր գտնվում Դարոյնք ամրոցը /այժմ Բայազետ/: Գավառում կար նաև Անգեղ ավան, որը չպետք է շփոթել Անգեղ-տուն գավառի հետ: Կոգովիտը նախապես պատկանել է Արշակունիներին, և Դարոյնքում պահվում էին արքայական գանձերը, սակայն VIIդ. այն արդեն անցել էր Բագրատունիներին, իսկ Դարոյնքը դարձել վերջիններիի հանգստարանը: Գավառի նշանավոր վայրերից էր նաև Բագարանը:

Ամենայն հավանականությամբ Բագրատունիներին պատկանում էր նաև Մաղկոտն գավառը:

Գրկ. *Ղուկաս Ինճիճյան*, Ստորագրութիւն հին Հայաստանեայց, Վնտ., 1822, էջ 402-413, 446-452: *Նիկողայոս Ադոնց*, Հայաստանը Հուստինիանոսի ժամանակաշրջանում, Եր., 1987, էջ 328, 340-342, 458-459:

Արշարունիք-Շիրակ-Վանանդ

Արշարունիքը կազմվեց Արաքսի այն գետեզրյա հատվածից, որը նախկինում Շիրակի մի մասն էր կազմում: Արշակունիների ժամանակ Բասենին, Վանանդին, Շիրակին տիրում էին նույնանուն իշխանական տները, հետագայում Շիրակը անցավ Կամսարականներին /նրանցից առաջ այստեղ էր Դիմաքսյանների մի ճյուղը/: Երասխածորը Կամսարական Արշավիր իշխանի անունով կոչվեց Արշարունիք, այստեղ էր Արտագերս նշանավոր ամրոցը:

Շիրակը գբաղեցնում էր Ախուրյան գետի հովիտը և ուշ շրջանում կոչվում էր Շորագյալ: Բասենը տարածվում էր մինչև Արաքսի ակունքները, հասնելով Սալքորա գյուղը: Արաքսի ափերին, Բասենի և Արշարունիքի միջև, տարածվում էին Աբեղյան, Գաբեղյան և Հավնունի իշխանությունները: Վերջին երեքը առաջացել էին Արշակունիների անկումից հետո:

Բագրատունիների տիրույթն էր նաև Այրարատը նեղ իմաստով՝ Այրարատյան դաշտը, Արագածոտնը, Կոտայքը /Երևան/ և նրանց հարող այլ շրջաններ: Xդ. սկզբին Բագրատունիները իրենց ոստանին միացրեցին նաև Գեղարքունիքը, իսկ հետագայում /Սմբատ Բ - Գագիկ Ա-ի օրոք/ նաև Վայոց ձորը:

Դրկ. Տես Ն. Ադոնցի և Ղ. Ինճիճյանի վերը նշված աշխատությունները:

Վանանդ

Վանանդը, Շիրակի հետ միասին, տարածվում էր Արշարունիքից հյուսիս, Ախուրյան գետի ավազանում, այն սկիզբ էր առնում Բասենի Սալքոր գյուղից և ձգվում մինչև Շիրակ: Նախապես այն կազմում էր Բասենի մի մասը և կոչվում էր Վերին Բասեն կամ «Անփայտ», այնուհետև վերակոչվել է Վանանդ և Արշակունյաց շրջանից պատկանել է նույնանուն նախարարությանը:

Վարչականորեն գավառը բաժանվում էր երկու մասի՝ Փորակ կամ Փոքր Վանանդ և Ջարիշատ: Փոքր Վանանդը կոչվում էր նաև Կարմիր Փորակ: Վանանդի բերդերից Vդ. հայտնի էր Կարնեճյացը: Ն. Ակինյանի կարծիքով Կարնեճյացը նույն Կարսն է: Գործածական Կարս, Կարուց անուններ տեղանվան հայցական և սեռական հոլովածներն են, Կարնեճյաց՝ հոգնակի սեռականը, այդ դեպքում ուղիղ ձևը պետք է լինի Կարնեճիք: Իսկ տարածված Կարս անունը եզակի հայցականն է՝ «զԿարս», բայց առանց «զ» նախդիրի: Կարնեճիք ամրոցը հիշատակվում է Vդ. և IXդ. /Գևորգ Գառնեցի կաթող. օրոք՝ 847-897/, իսկ այնուհետև նրա փոխարեն Վանանդում հիշատակվում է Կարսը:

Վանանդի հին բնակավայրերից է Իշևան գյուղը՝ Վարդանանց շարժման ջատագով և Վարդան Մամիկոնյանի նվիրյալ համախոհ Ղևոնդ երեցի ծննդավայրը:

Վանանդի հյուսիսային մասը գիտնականները անվանում են Ջարիշատ /Ջարիշատ Վանանդա/, արաբական տիրապետության շրջանում Վանանդի նախարարությունը մասնակցել է Հայաստանի քաղաքական կյանքին և հիշատակվում է VIII-IXդդ. ազատագրական պայքարի տարբեր դրվագներում: /օր. 703 Վանանդի Դրաշպետ գյուղի նահատամարտում/: Վանանդի ֆեոդալական իշխանությունը գոյատևել է մինչև IXդ. վերջը, նրա վերջին ներկայացուցիչներն են Վարդ-Մլեհը և նրա որդի Սահակը /հիշատակվում են 887թ. գրված Ավետարանի (Լազարյան կոչված) հիշատակարանում:

IXդ. վերջում Բագրատունիները բռնագրավեցին գավառը նրա տերերից /ըստ երևույթին ինչ-որ լուրջ պատճառով, որի մանրամասները հայտնի չեն/: 890թ. Վանանդի տերն էր Աշոտ Ա Բագրատունի թագավորի եղբայր Աբասը:

X-XIդդ. պատմական ակնարկը տես Կարսի թագավորություն հոդվածում:

Տաշիր-Ձորագետ

Լոռին /Տաշիրը/ և Ձորափորը զբաղեցնում էին Գուգարաց աշխարհի հարավ-արևելյան հատվածը՝ ներկա Փամբակ-Դեբեդի ավազանը և Աղստևի միջին հոսանքը: Նրանց հարում էին ավելի փոքր գավառները՝ Մոքսը, Կողբը, Կանգարքը և Ուտիքի Տավուշը: Համարյա բոլորը հնում հանդիսացել են առանձին, ոչ մեծ իշխանական տների սեփականությունը և որպես այդպիսիք հիշատակվում են արդեն Vդ. մատենագիրների մոտ: Ըստ Մովսես Խորենացու մ.թ. Iդ. Տրդատ Ա-ի ժամանակ Աշոցքն ու Տաշիրը ինքնուրույն «տերություն և սեփականություն էին», իսկ Կողբը, Մոքսը, Ձորը, Կանգարքը և Ջավախքի կեսը միասին՝ առանձին «ժառանգություն»: Եղիշեն, Ղազար Փարպեցին և Կորյունը նույնպես վկայում են, որ Տաշիրը պատկանում էր տեղական ֆեոդալական տոհմին, որին նրանք անվանում են «տաշրացիք»: Vդ. կեսերին այդ տոհմի ավագն էր իշխան Վրեյը, աղբյուրներում նա անվանվում է «Ցազգեն Տաշրեաց վրէն», «իշխան և նախարար ի տոհմեն Տաշրացեաց»:

387թ. Հայաստանի բաժանումից հետո /Բյուզանդիայի և Սասանյան Իրանի միջև/ երկրի ծայրամասային նահանգները Սասանյանները վարչականորեն միացրեցին հարևան երկրներին, Գուգարքը մտցվեց Վրաց մարզպանության կազմի մեջ, բայց Տաշիր գավառը մնաց Արշակունյաց թագավորության, իսկ 428-ից՝ մարզպանական Հայաստանի կազմում: Ամբողջ վաղ միջնադարում գավառի վարչական կենտրոնն էր Օձունը:

450-451թթ. Վարդանանց պատերազմների ժամանակ Վրեն իշխանը Վարդան Մամիկոնյանի համախոհներից էր, նա մասնակցել է Ավարայրի նախատամարտին, ապա ապստամբ մյուս նախարարների հետ աքսորվել Իրան:

Vդ. Մեսրոպ Մաշտոցը Տաշիրի իշխանի հրավերով գավառում հիմնել է դպրոցներ:

Տաշիրի իշխանական տունը, դատելով գավառի տեղանուններից, եղել է Մամիկոնյան տոհմի շառավիղը, Մամիկոնյանների հին /իսկական/ ազգանունն է «Խաղբակյան», այդ տոհմանունը արտացոլվել է գավառի տեղանուններում, օր. Հաղբատ գյուղ անունը կազմված է Հաղբ կամ Խաղբ հիմք անունից: Դսեղ գյուղանունը առաջացել է նույն Հաղբից, ձեռագրերում խ տառի փոխարեն սխալմամբ գրվել է Դ, իսկ Խա-ի փոխարեն Դս, այս ձևով առաջացել է Դսադ-Դսեղ անունը: Ջոջկան կամ Ճոճկան գյուղանունը առաջացել է Մամիկոնյանների տոհմական Ջոջիկ /մեծ, ավագ/ անունից:

Ձորափորը /Ձոր, նաև Ձորագետ/ զբաղեցնում էր Աղստև գետի միջին հոսանքը, գետի լեռնանովիտը /ներկայիս Դիլիջան-Իջևան/: Պատկանել է տեղական իշխանությանը, կենտրոնն էր Արքունաշեն գյուղը:

Նշված երկու գավառների բնակչությունը եղել է բացառապես հայկական,

նրանց իշխանությունները եղել են VIդ.՝ 572-591թթ. ազատագրական պայքարի դեկավար, Վարդան Մամիկոնյանի /Կարմիր Վարդանի/ դաշնակիցներ, 570-ական թթ. Բյուզանդիան նորից փորձ է անում իրագործել հայ և հույն եկեղեցիների միությունը /ունիան/: Նախարարական տներից ոմանք, ելնելով քաղաքական շահերից, տատանվում էին, իսկ մյուսները վճռական մերժում, նրանց թվում էին «հայերեցնախոս Տաշիր, Ջորոփոր և Գարդման կոչված գավառները» և Արցախը:

IXդ. կեսերին, Բուղայի արշավանքի ժամանակ, դեռ ապարեզում էին Գարդմանի ու Տավուշի իշխանները, բայց չկային Տաշիրի ու Ջորոփորի տերերը: Պետք է եզրակացնել, որ արաբական տիրապետության շրջանում, երբ խալիֆայությունը հայ նախարարությունների տնտեսական քայքայման ու ոչնչացման քաղաքականություն էր վարում, այդ իշխանությունները չդիմացան հալածանքներին և կազմալուծվեցին: Տաշիր-Ջորոփորը VIIIդ. ենթարկվում էին Տփղիսի արաբական ամիրայությանը, հավանաբար հենց այդ իշխանության ամիրաները և նրանց զորապետները գրավեցին տեղական հայ ազնվականության տիրույթները:

Արաբական շրջանից մեզ հայտնի են հոգևոր դասի մի քանի ներկայացուցիչների անուններ: Տաշիրի եպիսկոպոսական աթոռ՝ կենտրոնը եղել է Օձուն գյուղը, ուր VIդ. կառուցվել է աթոռանիստ եկեղեցի, բազմաթիվ եկեղեցիներ եղել են գավառի տարբեր վայրերում, որոնք մինչ այժմ կանգուն են, ինչպես նաև ներկայիս Սանահնի վանքի Ամենափրկիչ եկեղեցու տեղում, որից պահպանվել է միայն որմնամույթի խարսխի քարը:

Տեղական կղերը բարձր հեղինակություն էր վայելում և բարձր դիրք գրավում հոգևոր հիերարխիայում: Նրա ներկայացուցիչները երկու անգամ ընտրել են կաթողիկոսական աթոռին: Դրանք են Սահակ Ջորոփորեցին /677-703/ և Հովհաննես Գ Օձնեցին /717-728/: Սահակի հայրը Ջորոփորի Արքունաշեն գյուղից էր, ըստ երևույթին այդ բնակավայրը տեղական իշխանանիստ դղյակն էր, բայց հետագա դարերում աղբյուրներում չի հիշատակվում: Հովհաննեսը եղել է ժամանակի նշանավոր փիլիսոփա-գիտնական, վճռականորեն պայքարել է քաղկեդոնիզմի դեմ: Մնվել է Օձուն գյուղում:

X-XIդդ. պատմական ակնարկը տես Լոռվա կամ Կյուրիկյան թագավորություն հոդվածում:

Սպեր

Սպերը պատկանում էր Բագրատունիներին արդեն անտիկ շրջանում, կենտրոնն էր Սմբատավանը /ավելի ուշ շրջանում կոչվել է նաև Բաբերդ, Բայբուրդ/: Մ.թ.ա. IIդ. նրա տերերից Մովսես Խորենացին հիշատակում է

Արտաշես Ա թագավորի դայակ Սմբատ Բագրատունուն՝ Բյուրատի որդուն, որին պատկանում էր գավառն ու Սմբատական գյուղը /Պատմ. Հայոց, II, ՀԸ/ և Տրդատին /Սմբատի դուստր Սմբատուհու թոռանը/: Գիտնականների կարծիքով Սպերը սկզբից եղել է Բագրատունիների «ձեռական իշխանությունը» /տրվել է որպես վարձատրություն արքունիքում ծառայության՝ որևէ գործակալություն դեկավարելու դիմաց/, իսկ հետագայում դարձել է ժառանգական տիրույթ:

Մ.թ. IIդ. Հայաստանում կարճ ժամանակով թագավորել է Հռոմի դրածո Տիգրան Զ /60-61թթ./, որը հեռավոր առնչություն է ունեցել Արտաշեսյաններ ի հետ: Այդ տարիներին Հայաստանը թուլացնելու նպատակով Հռոմը նրա ծայրագավառները միացրել է հարևան պետություններին, Մեծ Հայքից անջատվել է նաև արմենոխալիբներով բնակեցված Սպերը և հանձնվել Պոնտոսի Պոլեմեն Բ թագավորին: Սակայն մի քանի տարի անց /66թ./ գավառը նորից վերամիավորվել է Հայաստանին:

Մ.թ. 163թ. Հռոմը նորից նվաճել է Հայաստանը, սակայն 163-164թթ. նրա դեմ բռնկվել է ապստամբություն, որը գլխավորել է Տրդատ Բագրատունի նախարարը: Հռոմեացիները պարտություն են կրել և գահակից կայսր Լուկիոս Վերոսը, որն անձամբ մասնակցել էր կռիվներին, օգնություն է խնդրել Իաղտիքում բնակվող հենիոխների թագավորից: Բայց հռոմեացիները նորից ծանր պարտություն են կրել, Տրդատը ճակատամարտում սպանել է հենիոխների թագավորին, իսկ կայսրը հրաշքով փրկվել նրա հարվածից: Սակայն, ի վերջո, հպատակությունը ճնշվել է, մյուս գահակից կայսրը՝ Մարկոս Ավրելիոսը, Տրդատին աքսորել է Բրիտանիա:

IVդ. Արշակունիների օրոք, Ս-ը մնում էր Բագրատունիների ձեռքում, նրա տիրակալներից Սահակ ասպետը 382թ. իր դստերը կնության է տվել Պապ թագավորի կրտսեր որդի Վաղարշակին: Ըստ Փավստոս Բուզանդի, սպարապետ Մանվել Մամիկոնյանը «առնէր հարսանիս և եղբօր նորին (Արշակ Գ-ի) Վաղարշակայ, և տայր նմա զոռւսւոր ասպետին Բագրատունոյ ի Սպեր գաւառէ...»/:

387թ. Հայաստանի բաժանումից հետո նրա արևմտյան մասը անցավ Բյուզանդիայի տիրապետության տակ, այստեղ 391 վերացվեց Արշակունիների իշխանությունը: Արևմտյան Հայաստանը բաղկացած էր մի շարք տարածքային միավորներից, որոնք ունեին քաղաքական, վարչական և ռազմական առանձնահատուկ կարգ, օգտվում էին տարբեր իրավունքներից ու արտոնություններից: Բաժանումից հետո կայսրությանը անցած մի մասում կազմվել էր վարչական միավոր Armenia Magna կամ Interior /Մեծ կամ Ներքին Հայք/, որի կազմում էին գլխավորապես Բարձր Հայքի գավառները, այստեղ կային հայկական նախարարություններ, որոնք զրկվել էին նախկին տոհմանուններից և կոչվում էին իրենց տիրույթ-գավառների անուններով՝ Սպերի, Դարա-

ճաղի, Մանճաճաղի, Եկեղյաց, Դերջանի և այլն /ընդամենը 11 գավառ/: Բայց այս մասը սատրապությունների մեջ չէր մտնում: Սպերում մնում էին Բագրատունիները, այն հատվածը ղեկավարում էր կայսրից նշանակված կոմեսը, որը , սակայն, չուներ ռազմական ուժ:

Այս մարզը դեռևս պահպանում էր տեղական հայկական վարչական-դատական և օրենսդրական ինքնատիպ կարգը: Հուստինիանոս Ա կայսեր ժամանակ /527-565/ նախկին ներքին Հայքը դառնում է Առաջին Հայք, վարչական վերափոխումների հետ սահմանափակվում են հայ նախարարների իրավունքները, որն առիթ է տալիս 536թ. ապստամբությանը:

Vդ. Մեսրոպ Մաշտոցը Սպերում բացում է դպրոցներ, վերակացուներ նշանակում Ղևոնդին և Ենովքին:

VIIդ. Սպերի իշխաններից հանվանե հայտնի են Վարազտիրոցը /N27/ և վերջինի որդի Սմբատը: Վարազտիրոցին կայսր Կոստանդ Բ 646թ. նշանակել էր Հայաստանի կառավարիչ, բայց նա շուտով մահացել էր: Սմբատին /N27ա/ նույն կայսրը հանձնել էր Սպերի տանուտեր և նշանակել բյուզանդական Հայաստանի կառավարիչ /646-656/: 653թ. Կոստանդը, իմանալով Թեոդորոս Ռշտունու և արաբների կնքած պայմանագրի մասին /652/, մեծ զորքով մտել էր Հայաստան, նրան ներկայացել էին կայսրության կողմնակից և Ռշտունուն հակադրվող հայ նախարարները, որոնց թվում էր նաև Սմբատը:

748թ. ապստամբության պարտությունից հետո բավական ժամանակ Սպերը մնում է արաբների տիրապետության տակ, անորոշ է, թե Բագրատունիները պահեցի՞ն իրենց ձեռքում գավառը, ըստ երևույթին պահեցին, որովհետև 774-775թթ. ապստամբության ժամանակ Սպերի տերն էր Սմբատ Բյուրատյանը: Պատմագիր Վարդանը հաղորդում է, որ Աշոտ Մսակերը քաջագործություններով նմանվում էր իր «նախնի» Սմբատին /Բյուրատի որդուն/՝ Սպերի Սմբատավան բերդի տիրոջը: Բագրևանդի նահատամարտից հետո հալածվող Բագրատունի իշխանների մի մասը ապաստան էր գտել Սպերում, գավառը ժառանգում է Մսակերի եղբայր Շապուհը: Այստեղից Բագրատունիները՝ Աշոտ Մսակերն ու Շապուհը սկսում են պայքարը արաբական ամիրայությունների դեմ:

IXդ. սկզբին վերսկսվում են արաբա-բյուզանդական կռիվները, կայսրությունը, աստիճանաբար՝ ետ մղելով արաբներին, գրավում է Հայաստանի արևմտյան շրջանները: Թեոփիլ կայսրը /829-842/ գրավում է Կովկասի Սևծովյան եզերքը, Սպերը, Բասենը, 837թ. կայսրը Սպերի իշխան է ճանաչում Շապուհի /Աշոտ Մսակերի եղբոր/ որդի Աշոտին, նրան հաջորդում է որդին՝ Շապուհ պատմագիրը: Այսպիսով բյուզանդա-արաբական սահմանագոտում կայսրության հովանավորությամբ նորից ոտքի է կանգնում Սպերի իշխանությունը, մեկը նրանցից, որոնք ծառայում էին կայսրությանը որպես պատվար արաբների դեմ:

IXդ. Սպերում հայտնի է ևս մեկ Բագրատունի իշխան՝ Իշխանիկը: 852թ. Սպեր է գալիս Արծրունի իշխաններից Գուրգեն Ապուսթելը, որին հետապընդում էր Բուղա ոստիկանը: Գուրգենը սկզբից գնում է Բագրևանդ, ապա գալիս է Սպեր: Իշխանիկը նրան ընդունում է բարյացակամ, Գուրգենը խլում է բյուզանդացիներից Արամանյակ ամրոցը, բայց բյուզանդական «արևելքի զորավարը» պատերազմում է Գուրգենի և Իշխանիկի դեմ և խլում նրանցից Արամանյակը:

Սպերի Բագրատունի իշխանությունը գոյատևում է մինչև XIդ. երկայել, նրա իշխանները կապված էին բյուզանդական կայսրության հետ, աստիճանաբար կորցնելով հայկական նկարագիրը, թեև բնակչությունը մշտապես պահպանել է ազգային դեմքը և նույնիսկ /ըստ Ալպոյաճյանի/ անջատողական հակումներ է դրսևորել: Գավառը և առանձնապես Սմբատավանը /Սմբատավանի շրջակայքում/ ծանր հարված են ստացել 1048թ.՝ սելջուկների ներխուժման և վայրագությունների ժամանակ: 1071թ., Մանազկերտի ճակատամարտում Բյուզանդիայի ծանր պարտությունից հետո Սպերը, արևմտյան Հայաստանի այլ շրջանների հետ, անցավ սելջուկների տիրապետության տակ:

Տոհմածառը տես անձնանունների բաժնում, էջ 63:

Գրկ. *Ա. Ալպոյաճյան*, Պատմական Հայաստանի սահմանները, Կահիրե, 1950, էջ 228-231: *Կ. Բասմաջյան*, Ժամանակագրական պատմություն Հայոց, Կ.Պոլիս, 1914, էջ 4: *Նիկողայոս Ադոնց*, Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում: Հայ ժողովրդի պատմություն, հ. 2, 3 /ԳԱ հրատարակչություն/: *Սարգիս Պետրոսյան*, «Ասպետ» տիտղոսի և «ասպետություն» գործակալության նախնական բնույթի պարզաբանման փորձ, ԳԱ «Լրաբեր», 1983, N4: *Վ. Խականյան*, Հայ-բյուզանդական հարաբերությունները IV-VIIդդ., Եր., 1991, էջ 114, 212, 213, 357, 397, 538, 559:

ՄԱՆԱ /Մանանա, Մատիենե/, «Երկիր» Հայաստանի և Ատրպատականի միջև, Ուրմիա լճից հարավ-արևելք, տարածվում էր մինչև Զագրոս լեռները: Մ.թ.ա. IXդ. վերջում այստեղ կազմավորվել է թագավորության, բազմաթիվ մանր «երկրների» միաձուլման հետևանքով: Մանա երկիրը կովախնձոր էր Ուրարտուի և Ասորեստանի միջև, նրանցից յուրաքանչյուրը ձգտում էր նվաճել այն: Ասորեստանի առաջին լուրջ փորձը 807-806թթ. հաջողություն չունեցավ, իսկ ուրարտական թագավոր Արգիշտի Ա-ին հաջողվեց հպատակեցնել Մանաև ու Ուրմիա լճից հարավ-արևելք ընկած մյուս երկրները: Մի քանի տասնամյակ Մանաև մնաց Ուրարտուի կազմում, բայց VIIIդ. վերջում Ասորեստանը կարողացավ իրեն ենթարկել այդ երկիրը: Ուրարտուն չի հաշտվում կորստի հետ, Ռուսա Ա-ն /մ.թ.ա. 735-713/ արշավում է Ուրմիա լճի ավազանը, 716թ. նա Ասորեստանի դրածո Ազա թագավորի դեմ հրահրում է Մանայի Ումիլդիշի «երկրի» թագավոր Բագադատիին: Սակայն Ասորեստանի Սարգոն Բ թագավորի օգնությամբ Մանայում գահակալում է Ասորեստանի դրածո Ուլլուսունաև: Ռուսան շարունակում է պայքարը, գրավում է Մանայի 22

ամրոցներ, պայքարը երկու տերությունների միջև գնալով սրվում է, վճռորոշ պատերազմը տեղի է ունենում մ.թ.ա. 714թ.: Սարգոնը հսկայական բանակով ներխուժում է Ուրարտու, ավերում ամբողջ երկիրը: Երբ ասորեստանյան բանակը մոտենում է Մանային, Ուլլուսունուն իր պաշտոնյաների և ազգակիցների հետ ընդառաջ է գնում Սարգոնին և հանդիպում վերջինիս սահմանային ամրոց Սիճիխինիի մոտ: Նա հպատակություն է հայտնում Սարգոնին, մատուցում է նրան լծկան ձիեր, բազմաթիվ անասուններ:

Այդ ժամանակ Ռուսան գտնվում էր Մանայի Ուիշդիշ մարզում, Ուառւշ անառիկ լեռան վրա նախապատրաստվում վճռական ճակատամարտին, որը տեղի ունեցավ նույն լեռան վրա: Ռուսայի բանակը պարտություն է կրում: Դրանից հետո Մանան մնում է ենթակա Ասորեստանին ուղիղ հարյուր տարի, մինչև մ.թ.ա. VIIդ. վերջը: Մ.թ.ա. 612-605թթ. Մեդիայի և Բաբելոնի հարվածներից, որոնց դաշնակից էին նաև հայերը, ընկնում է Ասորեստանը, բայց մինչև այդ, 616-615թթ. Մեդիայի թագավոր Կիաքսարը նվաճում է Մանան, և վերջինի թագավորությունը ընդմիշտ վերանում է:

Մանա երկիրը կարևոր դեր է կատարել Հին Հայաստանի պատմության մեջ: Մ.թ.ա. VI-IVդդ., երբ Հայաստանը Աքեմենյան տերության կազմում բաժանված էր երկու սատրապությունների /13 և 18/, Մանան 18-րդ սատրապության «երկրներից» էր:

Գիտնականների մի մասը գտնում է, որ հայ երվանդունիների արքայատոհմը ծագել է Մանայից սահմանակից Մուսասիր երկրից: Կարծվում է նաև, որ մեդական ու հին հայկական արքայատոհմերը դուրս են եկել Մատիենե-Մանայից, որոշ ուսումնասիրողների կարծիքով այստեղից է ծագում նաև Աքեմենյանների իրանական տոհմը:

Տես նաև Բագադատի հոդվածը:

Գրկ. Հայ ժողովրդի պատմություն, հ. 1, եր., 1971, էջ 36, 294, 303, 307, 312, 324-326, 430, 440, 452: *Б. Пиотровский*, Ванское царство, М, 1959.

ՄՈՒՍԱՍԻՐ /Մուծածիր/, «երկիր» և քաղաք Հայկական լեռնաշխարհի հարավ-արևելքում: Հիշատակվում է սկսած մ.թ.ա. VIIIդ. ասորեստանյան արձանագրություններում: Ասորեստանցիները անվանում էին Մուսասիր, իսկ ուրարտացիները՝ Արդինե: Որոշ գիտնականների կարծիքով Մ. նշանակում է «օձի որջ», «մորեխ» և այլն: Մ. «երկիրը» տարածվում էր Մեծ Զաբ գետի վերին հոսանքի ավազանում, Ուրմիա լճից հարավ-արևմուտք /ներկայիս Ռևանդուզի շրջանում/: Մ. միացվել է Ուրարտուին IXդ. վերջում Իշպուինե և Մինուա թագավորների կողմից, Մ. քաղաքում էր գտնվում Խալդե աստվածության պաշտամունքի կենտրոնը, նրա տաճարը:

Ուրարտուի կազմում Մ. եղել է նրա դաշնակից կիսանկախ իշխանություն, ուր տիրել են Տուշպայի /Վանի/ արքայական տան ներկայացուցիչները, որոնք միաժամանակ ողջ պետության հոգևոր պետերն էին: Մ-ի տաճարում են թագադրվել Ուրարտուի արքաները, դրվել են աստվածացված ուրարտական արքաների արձանները, այդ թվում Խալդեի և նրա կնոջ Բագբարտուի: Մուսասիր «երկիրը» ավերվել է, իսկ Խալդեի տաճարը կողոպտվել մ.թ.ա. 714թ. Ասորեստանի Սարգոն Բ թագավորի արշավանքի ժամանակ, հսկայական հարստություններ, այդ թվում և Խալդեի արձանը, հափշտակվել և տարվել են Ասորեստան:

Իմանալով Մ-ի կողոպուտի և կործանման մասին՝ ուրարտական Ռուսա Ա թագավորը ինքնասպան է եղել:

Գրկ. *Ս. Հմայակյան*, Վանի թագավորության պետական կրոնը, եր., 1990: *Նիկողայոս Ադոնց*, Հայաստանի պատմություն, եր., 1972: Տես նաև նախորդ հոդվածի գրականությունը:

ԲԱԺԻՆ IV

ԶԱՐԳԱՑԱԾ ՖԵՈԴԱԼԻԶՄԻ ԴԱՐԱՇՐՋԱՆ

Բագրատունիների քաղաքական տիրապետությունը IX-XIդդ. համընկնում է ֆեոդալական հասարակարգի նոր փուլի հետ, որը պատմագիտության մեջ կոչվում է զարգացած ֆեոդալիզմ: Համեմատած վաղ միջնադարի հետ /III-VIIIդդ./ նա բնորոշվում է մի քանի էական հատկանիշներով: Բագրատունյաց Հայաստանի քաղաքական անցուդարձը պատմական ճիշտ ելակետից ու չափանիշներով պարզաբանելու համար անհրաժեշտ է հաշվի առնել սոցիալ-տնտեսական գործոնների նոր դրսևորումների հետ, դիտել այդ գործոնները ներքին քաղաքական կյանքի հետ ներդաշնակ, որպես մի միասնական գործընթաց:

ա. ՆԱԽԱՐԱՐԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱԶՄԱԼՈՒԾՈՒՄ

IXդ. սկզբից նախարարական համակարգին բնորոշ հողերի միանձնյա տնօրինումը նախարարի կողմից տեղի էր տվել նոր ձևի՝ տոհմի նախկին կրտսերները՝ «սեպուհները» դարձել էին ինքնուրույն ժառանգատեր սեփականատերեր, նախարարությունը մասնատվել էր մի շարք ճյուղերի՝ սեպուհները, որոնք այժմ կոչվում էին «իշխան», հիմնել էին առանձին ինքնուրույն իշխանություններ: Իշխանները կազմակերպում են տնտեսություն, ունեն զորք, արքունիք /կառավարման մարմին/, դատարան և այլն:

Այսպես, Արծրունիների նախկին նախարարությունը IXդ. առաջին քառորդում արդեն մասնատված էր 16 իշխանությունների, նոր տոհմանյուղերը կոչվում էին «ազգ», իսկ միասին նրանք կազմում էին «ազգատոհմ»: Սյունիքում առաջ էին եկել 5 գլխավոր իշխանություններ: Մասնատման գործընթացը տեղի էր ունենում նաև Բագրատունիների մոտ, Արցախ-Ուտիքում և այլուր:

Ֆեոդալիզմի այս նոր փուլը բնորոշվում է նրանով, որ հասարակարգին որակ տվող երևույթները, նրա հնստիտուտները հասնում են զարգացման բարձրակետին: Առաջին հերթին դա վերաբերում է գլխավոր հնստիտուտներին՝ հողատիրությանը, վասալիտետին, գյուղացիության հորտացմանը, փոխվում է նաև պետական կառուցվածքը: Ձևավորվում է ֆեոդալական քաղաքը, որը փոխարինում է /մեծ ուշացումով/ հելլենիստական քաղաքին: Ձևավորվում է հասարակության դասային նոր կառուցվածքն ու քաղաքային դասը: Էական փոփոխություններ է կրում վասալա-սյուզերենային հարաբերությունների համակարգը, ձևավորվում է վասալիտետի նոր ձևը:

Այսպիսով, IXդ. սկզբից Հայաստանը արդեն ոչ թե նախարարական, այլ իշխանական երկիր էր:

Սոցիալ-տնտեսական հարաբերությունների նման զարգացումը նպաստում է երկրի տնտեսական ու ռազմական առաջընթացին, նրա զորեղացմանը: Այդ բոլորը նախադրյալներ են ստեղծում IXդ. վերջում Հայաստանի անկախությունը վերականգնելու համար:

բ. ԺԱՌԱՆԳԱԿԱՆ ՀՈՂԱՏԻՐՈՒԹՅՈՒՆ

Իշխանների ժառանգական հողաբաժինները՝ գավառները, ամբողջ երկրամասերը, կոչվում էին «սեփական իշխանություն», «բնիկ տերություն», «հայրենի տերություն», «հայրենիք»: Այսպիսի տիրույթները վերածվում էին «կալվածք-պետություններ», այստեղ հողի գերագույն սեփականատիրական իրավունքը պատկանում էր միայն տվյալ իշխանին, որը տիրույթում օժտված էր նաև պետական իշխանության ատրիբուտներով /իրավունքներով/: Նա ուներ բանակ, դատարան, վարչակազմ: Դատական և հարկահանության իրավունքը /իշխանությունը/ նույնպես պատկանում էր տվյալ «երկրի» իշխանին: «Կալվածք-պետություն» հատկանիշներ ունեցող տիրույթը իրենից ներկայացնում է «սենյորիա»՝ տիրույթ, օժտված պետական իշխանության ֆունկցիաներով, իսկ նրա տերը՝ սենյոր: Եվրոպական այդ տերմիններին հայերենում համապատասխանում են «իշխանություն», «իշխան» և «տեր» անվանումները:

Այսպիսով IXդ. սկզբին Հայաստանում ձևավորվում է սենյորալ տիպի «տերունի» կամ «հայրենիք» կալվածքը, որտեղ նրա իշխանը, որպես «տեր»՝ ժառանգական հողատեր, կատարում էր պետության հատուկ վարչա-դատական ֆունկցիաներ և միաժամանակ վասալների խմբակցության պարագլուխ էր:

Տերունի կալվածքի որոշ մասում /բավական ընդարձակ/ ապրում էր գյուղական բնակչություն, որը մշակում էր իշխանին պատկանող հողերը, վճարելով նրան հարկեր և եկամուտի մի մասը: IXդ. տարածվում է հորտատիրությունը:

Այդ դարաշրջանում, ինչպես և նախորդում, կային նաև գանձագին, ընտրատվական և այլ տիպի հողաբաժիններ:

Արևմտյան Եվրոպայի հողատիրության ձևերի համեմատ հայկական «հայրենիքը» համապատասխանում է եվրոպական allod-ին կամ ռուսական вотчина-ին, զինվորական կամ վարչական ծառայության համար որպես պարգև ցկյանս տրվող հողաբաժինները՝ «պարգևականքը» համապատասխանում են beneficium-ին /պ. ստացողի ժառանգների կողմից պարտավորությունները շարունակելու դեպքում պարգևական հողերը անցնում էին նրանց ցկյանս օգտագործման/:

Ռուսաստանում պարգևական հողերը կոչվում էին милость, հետագայում՝ поместье, արաբական երկրներում՝ իկտա: Հողաբաժինը, որը պայմա-

գրով տրվում էր իշխանի կողմից իր վասալին զինվորական, արքունի գործակալության, սահմանապահության, կայազորային /ամրոցներում/ և այլ տիպի ծառայության դիմաց, Եվրոպայում կոչվում էր feod /այստեղից էլ հասարակարգի անվանումը՝ ֆեոդալիզմ/: Ֆեոդալատերը ձգտում էր ստացած հողաբաժինը դարձնել ժառանգական, որը հաճախ վեճերի և ընդհարումների պատճառ էր դառնում:

Գ. ՎԱՍԱԼԻՏԵՏ

Սոցիալ-տնտեսական կյանքում տեղի ունեցած տեղաշարժերի հետևանքով IXդ. նոր հիմունքներով է ձևավորվում ֆեոդալական հիերարխիան, նոր տեսք են ստանում միջֆեոդալական կապերի ձևերը, որոնք պայմանավորում են երկրի քաղաքական կենտրոնի՝ թագավորական իշխանության և ազդեցիկ, հայրենասեր իշխանների փոխհարաբերությունները:

Տվյալ դարաշրջանում, ինչպես վերը նշվեց, նախկին նախարարությունները կազմալուծվել էին, հողային սեփականությունը ապակենտրոնացել, հողատիրությունը մասնատված բնույթ է ձեռք բերել: Դրա հետ միաժամանակ մասնատվում, ապակենտրոնանում է քաղաքական իշխանությունը: Սակայն, ինչպես քաղաքական, այն է՝ երկրի, սեփական տիրույթների պաշտպանության խնդիրը, այնպես էլ տնտեսական շահերը /առևտուր, ճանապարհներից օգտվելու հնարավորություն և այլ/ ստիպում էին իշխաններին փնտրելու երկկողմանի շահավետ համագործակցության ձևեր: Տվյալ տարածաշրջանի /նահանգի կամ խոշոր երկրամասի/ իշխաններից որևէ մեկի՝ ամենազորեղի շուրջ համախմբվում են տվյալ նահանգի /օր. Սյունիքի, Վասպուրականի, Տարոնի, Արցախ-Ուտիքի/ մյուս /գահակալ/ իշխանները և նահանջում նրան գահերեց, գահագլուխ: Նրանց փոխադարձ կապերի հիմքը նահանգում էր պայմանագրի սկզբունքը. իշխանները և գահագլուխը կնքում էին համաձայնագիր, որը կոչվում էր «ուխտ», «դաշինք», դրա շնորհիվ կողմերի միջև հաստատվում էր «միաբանություն»: «Ուխտը» ուղեկցվում էր ծեսով՝ «միջնորդությամբ ս.Նշան խաչի» /Հովհաննես Դրասխանակերտցու վկայությունը/: Կրտսեր իշխանը՝ վասալը, ըստ այդ «դաշինքի», պետք է «ծառայություն» կատարեր իր գահերեցի, գերադասի նկատմամբ /վերջինը եվրոպական գործածական տերմինով անվանվում է «սյուզերեն»՝ գերադաս/:

Ավագը /սյուզերեն-սենյորը կամ գահագլուխ իշխանը/ համարվում էր վասալի «հայրը», իսկ վասալը՝ նրա «որդին» /ավելի հազվադեպ՝ «եղբայրը»/: Իշխանի բարյացակամ վերաբերմունքը կոչվում էր «սեր», իսկ դժգոհությունը՝ /եթե վասալը խախտում էր դաշինքը/ «բարկություն»: Պարտականությունների խախտման, ըմբոստության դեպքում սենյորը կարող էր դիմել խիստ միջոցների /ինչպես օր.՝ Աշոտ Բ թագավորը կուրացրեց իր վասալ Սահակ Սևադա իշխանին/:

«ՏԷՐՈՒԹԻՒՆ». Վասալա-սյուզերենական հարաբերությունները ոչ միայն փոխադարձ կապերի համակարգ էին, այլև պետության կազմակերպման միջոց: Նշված հարաբերությունների ամբողջությունը IX-XIդդ. /և XII-XIIIդդ./ արտահայտվել է «տերուբիւն» բառ-տերմինով: /«Տէրութիւն» բառը գործածվել է մի քանի իմաստով՝ բացի նշածից, այն նշանակել է նաև ժառանգական հողատիրություն, խոշոր պետություն՝ օր. Բյուզանդիա, Արաբական խալիֆայություն/:

IXդ. առաջին կեսին Հայաստանում ձևավորվել էին երեք տերություններ՝ Վասպուրականի, Սյունիքի և Բագրատունյաց երկու տերություններ՝ Տարոնում և Աշոտ Մսակերի ու Սմբատ սպարապետի գլխավորած հյուսիսայինը /ավելի ուշ՝ Շիրակի տունը/: «Տէրության» ներսում գոյություն ուներ հիերարխիկ շերտավորում. այն գլխավորում էր «տերը» կամ գերագույն գերադասը, որը միաժամանակ և գահագլուխ իշխան էր: Խոշոր հողատերերը իրենց վասալներով կազմում էին բարձր խավը, իսկ դրանցից ցած ազատներն էին, որոնք կատարում էին զինվորական ծառայություն /«գունդ ազատաց»/: Տ-ն ուներ իր վարչակազմը, որը կոչվում էր «իշխանական պետություն»:

«Տերությունների» ներսում իշխանները «ուխտերով» կապված էին իրենց «տերի» /«գահագլուխ» իշխանի/ հետ, որը նրանց «հայրն» էր և «առաջինը հավասարների մեջ», իսկ Վասպուրականի, Սյունիքի, Արցախ-Ուտիքի «տէր»-երը վասալիտետով կապված էին Բագրատունի «տերի» հետ, որն իր հերթին մյուս «տերերի» հանդեպ համարվում էր «առաջինը հավասարների մեջ /"primus inter pares"/:

Այսպիսով «տերուբիւնը» նույն իշխանությունն է, եթե այն դիտենք վասալա-սյուզերենական կապերի տեսանկյունից, և հակառակը՝ վասալա-սյուզերենական կապերի շնորհիվ առաջ էին գալիս խոշոր քաղաքական կազմավորումներ՝ Վասպուրականի իշխանությունը /որպես Արծրունիների և նրանց վասալ իշխանների դաշինք/, Սյունիքի իշխանությունը /որպես Սյունիքի հինգ գահակալ իշխանությունների դաշինք/ և Բագրատունիների իշխանությունը /որպես Բագրատունի գահագլխի և նրա վասալների դաշինք/: Այսպիսով՝ երեք իշխանություններն էլ խարսխվում էին սյուզերեն-վասալ հարաբերությունների վրա, որոնց հիմքը «դաշինքն» էր: Ուստի երեք իշխանությունները կամ «տերությունները» կալվածք-պետությունների դաշինքի արդյունք էին, այն է՝ դաշնապետություններ: Դաշինքն է կազմում այդ իշխանությունների, հետագայում թագավորությունների, այսինքն միջնադարյան պետությունների իրավաքաղաքական հիմքը: Այդ առումով միջնադարյան պետությունը, ինչպես Հայաստանում, այնպես էլ բոլոր այն երկրներում, որոնք ունեցել են զարգացած ֆեոդալիզմի փուլ, իրենից ներկայացնում է սենյորների /գահագլուխ իշխանների/ և նրանց վասալների միություն, այն կառուցվում է վասալական դաշինքների /«ուխտերի»/ համակարգի վրա և իրենից ներկայացնում է դաշնապետություն կամ ֆեոդալական ֆեդերացիա:

Գրկ. *Բարկեն Առաքելյան*, Քաղաքները և արհեստները Հայաստանում IX-XIIIդդ., հ. 1, եր., 1958, էջ 37-41: Հայ ժողովրդի պատմություն, հ. 3, եր., 1971, էջ 157-181: *Ռ. Մաթևոսյան*, Բագրատունյաց Հայաստանի պետական կառուցվածքն ու վարչական կարգը, եր., 1990, էջ 47-86: *Ս. Պողոսյան*, Գյուղացիների ճորտացումը և գյուղացիական շարժումները Հայաստանում IX-XIIIդդ., եր., 1956, էջ 46-110: *А. Гуревич*, Проблемы генезиса феодализма в Зап. Европе, М., 1970, с. 57-61. Նույնի՝ Категории средневековой культуры, М., 1984. *А. Ястребицкая*, Западная Европа в XI-XIIIвв., М., 1978, с. 137-140.

դ. ՔԱՂԱՔՆԵՐ

Նոր դարաշրջանին բնորոշ երևույթներից էր քաղաքային կյանքի մեծ վերելքը:

IVդ. պարսից Շապուհ շահի բազմաթիվ արշավանքների ժամանակ Հայաստանի քաղաքները խիստ տուժեցին, նրանցից շատերը /ինչպես Տիգրանակերտը, Արտաշատը, Երվանդաշատը/ այլևս չվերականգնվեցին: Մյուսները վերածվեցին սովորական բնակավայրերի: Որպես քաղաք պահպանվեց և հետագա դարերում գոյատևեց միայն Դվինը:

IXդ. սկսած տնտեսական առաջընթացը նախապայմաններ ստեղծեց, որպեսզի անկախության վերականգնումից հետո վերականգնվեն և զարգացում ապրեն քաղաքները:

920-ական թթ. հետո սկսած երկարատև խաղաղ շրջանում Հայաստանի տարածքով էին անցնում միջազգային տարանցիկ առևտրական մայրուղիներ՝ Բյուզանդիայից դեպի խալիֆայություն, այնուհետև Իրան և ավելի հեռավոր երկրներ, ինչպես նաև խալիֆայությունից դեպի Անդրկովկաս, Սև ծով և այլ ուղղություններով: Հայաստանի քաղաքները, գտնվելով այդ մայրուղիների վրա, աշխույժ մասնակցություն ունեին այդ առևտրում իրենց արհեստագործական արտադրանքով, ինչպես վկայում են հայ և օտար մատենագիրները և հնագիտական պեղումների գտածոները:

Հայաստանի Բագրատունյաց ժամանակաշրջանի քաղաքները, ըստ իրենց տիպերի, կարելի է բաժանել մի քանի խմբի.

1. Խոշոր առևտրա-արհեստավորական կենտրոններ, որոնք տեղավորված էին տեղական և միջազգային առևտրական մայրուղիների վրա և նրանց ճյուղավորումների՝ Արաբիայից դեպի Հայաստան՝ Այրարատյան դաշտավայր - Դվին - Սև ծով: Դրանք էին Դվինը, Անին, Կարսը, Արտանուջը:

2. Գյուղաքաղաքներ՝ քաղաքատիպ ավաններ, որտեղ բնակչությունը զբաղվում էր գյուղատնտեսական աշխատանքով, բայց որոնք ունեին նաև արհեստանոցներ, շուկա, խանութներ: Նրանք սպասարկում էին գլխավորապես շրջակա բնակչության կարիքները, բայց կապված էին այս կամ այն չափով նաև խոշոր քաղաքների հետ:

Դրանցից էին Բագարանը, Երազգավորսը, Կողբը, Մրենը, Գառնին, Թալինը, Երևանը, Կաղզվանը և այլն:

3. Այսպես կոչված «ազատ քաղաքներ», որոնց առաջ գալու հանգամանքները և կարգավիճակը դեռևս ուսումնասիրված չեն:

Խոշոր և միջին մեծությամբ քաղաքներում X-XIդդ. ձևավորվում է քաղաքային դասը, որոնք դառնում են կրթության, գիտության տարբեր բնագավառների կենտրոններ:

Գրկ. *Հ. Մանանդյան*, Քաղաքները Հայաստանում 10-11 դարերում, «Երկեր», հ. 2, եր., 1985, էջ 314-347:

ԴՎԻՆ. - Միակ քաղաքը, որը IVդ. մինչև IXդ. պահպանել էր առևտրա-արհեստավորական կենտրոնի դերը: IX-XIդդ. Հայաստանի խոշոր քաղաքներից էր, մինչև «Արմենիա» փոխարքայության վերացումը նրա վարչական կենտրոնը: Ավանդաբար, նույնիսկ Xդ. կոչվում էր «մայրաքաղաք»: Դվինը արաբ ոստիկանի նստավայրն էր, բայց 890-ական թթ. սկզբին Սմբատ Ա Բագրատունին գրավեց քաղաքը, այն դարձավ թագավորական տան սեփականություն, 918թ. այստեղ թագադրվեց Աշոտ Երկաթի մրցակից Աշոտ Շապուհյանը: Նշված ժամանակաշրջանում այն նշանավոր առևտրական հանգույց էր, առևտրական ճանապարհներով կապված էր Անդրկովկասի, Ատրպատականի և Իրանի, Միջագետքի և Բյուզանդական կայսրության արևելյան շրջանների հետ: Միաժամանակ այն արհեստավորական խոշոր կենտրոն էր, այստեղ կազմակերպված էր գորգերի և գործվածքների, ներկերի /որդան կարմիր/ արտադրությունը, մետաղամշակությունը, բրուտագործությունը և այլ արհեստներ: Քաղաքի տները կառուցված էին քարից և աղյուսից, ուներ քարավանատներ, հյուրատներ, լավ ամրացված էր, ուներ մի քանի դարպաս: X-XIդդ. Դվինը ուներ 80-100 հազար բնակչություն: Դվինի մասին մեծ գովեստով են խոսում արաբ հեղինակներ ալ-Իստաքրին, ալ-Մուկադասին, իբն-Հաուկալը և ուրիշներ: Բնակչության մեծ մասը քրիստոնյա էր, չնայած X-XIդդ. մերթ ընդ մերթ քաղաքը գրավում էին արաբ և քուրդ ամիրաները:

Աշոտ Բ-ի շրջանից մինչև Գագիկ Ա-ի գահակալումը ներառյալ Դվինը Բագրատունյաց թագավորության կազմում էր, 1020-ին անցել է Աշոտ Դ-ին, սակայն շուտով քաղաքին տիրանում են Շադդյան տոհմի քուրդ ամիրաները, հիմնվում է Դվինի ամիրայությունը:

Գրկ. *А. Шахназарян*, Двин. Историко-географический очерк. Ер., 1940. *Կ. Ղաֆադարյան*, Դվին քաղաքը և նրա պեղումները, հ. 1, /եր., 1952/, հ. 2 /եր., 1982/: *Բ. Առաքելյան*, Քաղաքները և արհեստները Հայաստանում IX-XIIIդդ., հ. 1, էջ 71-75:

ԱՆԻ. - /Մինչև 961թ.՝ տես «Անի» հոդվածը/

Անին դարձնելով մայրաքաղաք, Աշոտ Գ Ողորմածը Ախուրյանի և Անի գետակի միջև տարածվող հրվանդանի ամենաանեղ մասում կառուցեց պա-

բիսպներ, սակայն մայրաքաղաքի արագ աճը ստիպեց նրա հաջորդին՝ Սմբատ Բ-ին կառուցել նոր պարիսպներ, ընդգրկելով նրանց մեջ ավելի մեծ տարածք: Նոր ժամանակներում նրանք կոչվեցին «Սմբատյան»: Այդ ժամանակ արդեն գոյացել էին արվարձաններ, որոնք գտնվում էին պարսպից դուրս: Այնպիսով, նույնիսկ Սմբատի կառուցած պարիսպները իրենց մեջ չէին ներառել ամբողջ քաղաքը: «Սմբատյան» պարիսպների բարձրությունը հասնում է միջին 10 մ., երկարությունը՝ 2,5 կմ.: Նրանց առջև՝ Իգաձորի և Գլիձորի /Գայլաձորի/ միջև ընկած հարթության վրա, պարսպի խոցելի մասում կառուցված էր խրամատ, որը լցվում էր ջրով /երկարությունը 500մ, լայնությունը՝ 10-12/:

Անին X-XIդդ. /մինչև անկումը/ Հայաստանի խոշորագույն արհեստավորական քաղաք էր, միջազգային առևտրի հանգույց և մշակույթի կենտրոն: Այստեղ և մոտակայքում հիմնվել են վանական դպրոցներ, այդ թվում և Դպրեվանքի բարձր տիպի դպրոցը, վանքեր, որոնք միջնադարյան կրոնական և գիտական հաստատություններ էին: Մատենադարանում Անին «բազմամբոխ քաղաք էր», որտեղ բնակվում էին «Բիւր բիւրոց» այր և կին, ուներ «հազար ու մեկ եկեղեցի»: Նրա փարթամությունը նշել են նաև օտար մատենագիրները, օր.՝ բյուզանդական պատմագիր Միքայել Ատտալիատեսը /XIդ./, արաբ պատմիչ ալ-Ասիրը և ուրիշներ:

Անին զարդարված էր բարձրարվեստ հուշարձաններով, այստեղ կային բազմաթիվ շուկաներ, քարավանատներ, հյուրանոցներ օտարների համար, բազմաթիվ արհեստավորներ, զարգացած էին ավանդական և նոր պահանջներից բխող արհեստներ՝ շինարարական գործը, դարբնությունը, պղնձագործությունը, հախճապակու արտադրությունը, խեցեգործությունը, գրչության արվեստը և այլն:

Անիում կար նաև չքավոր բնակչություն, նրա մի զգալի մասը բնակվում էր այսպես կոչված «ստորգետնյա Անիում»: Ստորգետնյա քաղաքը կազմում էին քարանձավները, որոնք փորված էին քաղաքը եզերող գետաձորերի զառիթափ ափերին: Ժամանակին նրանք փորվել են 5-6 շարքով /յարուսներով/, սակայն մեր ժամանակներում պահպանվել են 3 շարքերը: Ստորգետնյա սենյակները տարբեր բնույթի են՝ բնակատեղիներ /բնակելի սենյակներ/՝ մեկ կամ մի քանի սենյականոց, փոքր եկեղեցիներ /թաղային և բնակարանային/, գերեզմանոցներ, իջևանատուն, հաղորդակցման ուղիներ և այլն: Անիի ծաղկման շրջանում ստորգետնյա քարանձավների թիվը հասնում էր մեկ ու կես հազարի:

Մայրաքաղաքի արվարձանները հասնում էին մինչև Հոռոմոսի վանք, Բագնայր, Արջոյ Առիճ և սրանց նման 4-10 կմ հեռավորությամբ, այժմ ավերակ գյուղեր, որոնք անմիջական կապ ունեին քաղաքի ներքին տնտեսական ու վարչական կյանքի հետ:

Միանգամայն ճիշտ նշվում է, որ Անիի արագ աճին և մեծ հռչակին մեծապես նպաստեց նրա մայրաքաղաք լինելու հանգամանքը: Նա Բագրատունյաց թագավորության մայրաքաղաքն էր, որին ենթակա էին մյուս ավատական թագավորություններն ու արաբական ամիրայությունները, նա միաժամանակ նաև Հայոց թագավորության՝ հայկական բոլոր թագավորություններից կազմված դաշնապետության մայրաքաղաքն էր: Տնտեսական գործոնների հետ մեկտեղ նրա աճին զգալիորեն նպաստեցին նաև քաղաքական գործոնները:

Գրկ. *Թ. Թորամանյան*, նշված հոդվածը: Ռ. Առաքելյան, նշված աշխատութ., էջ 75-80: *Ռ. Մարտիրոսյան*, Անիի պատմությունը Ն. Մառի գնահատմամբ, «Անի», 1992, N3-4: *H. Токарский*, Из истории пещерного строительства в Ани, "По страницам истории армянской архитектуры", Ер., 1973, с. 51-65. *И. Орбели*, Городище Ани и его раскопки, "Исбранные труды", Ер., 1963.

ԿԱՐՍ. - Կարսը որպես քաղաք ձևավորվեց Xդ.: IXդ. վերջում Կարսը և Վանանդ գավառը խլվեցին տեղական ավատատերերից և դարձան Բագրատունիների տիրույթ: Կարսը բաժին հասավ Աշոտ Ա-ի եղբայր Աբաս սպարապետին: Այնուհետև գահաժառանգության պատճառով գժտություն առաջացավ Աբասի և Սմբատ Ա-ի միջև, վերջինը հաղթում է, խլում հորեղբորից Կարսը գավառով և ամրոցը դարձնում արքայական ռազմավարական կայան: Հետագայում Կարսը անցնում է Աշոտ Բ-ի եղբորը՝ Աբասին և դառնում վերջինի իշխանանիստ ամրոց: 928-ին, Աբասի գահակալությամբ, Կարսը դառնում է Հայաստանի մայրաքաղաք: Աբասի օրոք /928-953/ նախկին իշխանանիստը զարգանում է որպես քաղաք և ժամանակի ընթացքում իր ռազմատնտեսական նշանակությամբ դառնում Բագրատունիների երրորդ քաղաքը Անիից ու Դվինից հետո: 961-ից Կարսը դառնում է Վանանդի ավատատիրական թագավորության /ավելի ճիշտ՝ փոխարքայության/ կենտրոն:

Xդ. կեսերից մինչև անկումը /1065թ./ Կարսը Հայաստանի կարևոր առևտրա-արհեստագործական քաղաք էր, մասնակցում էր ներքին և միջազգային առևտրին, տարանցիկ մայրուղիներով կապված էր Սև ծովի /Տրապիզոն/, Արևմտյան Հայաստանի, Վրաստանի հետ: Պատմիչ Արիստակես Լաստիվերտցին գրում է, որ Կարսը հարստանում էր ծովային և ցամաքային առևտրի եկամուտներից: Քաղաքը խիստ տուժեց սելջուկների 1053թ. հարձակման ժամանակ:

Գրկ. *Բ. Առաքելյան*, Քաղաքները... էջ 80-81: *Я. Манандян*, О торговле и городах Армении в связи с мировой торговлей древних времен, Ер., 1954.

ԲԱԳԱՐԱՆ. - Հայաստանի հնագույն բնակավայրերից, մ.թ.ա. IIդ. երվանդ Վերջին թագավորը այստեղ տեղափոխեց հեթանոսական կուռքերը, որի պատճառով կոչվեց «Բագարան»: Հեթանոսական շրջանից մինչև IXդ.

աղբյուրներում չի հիշատակվում: IXդ. երկրորդ կեսին Աշոտ իշխանաց իշխանի նստավայրն էր, իսկ վերջինի գահակալումով՝ մայրաքաղաք /«թագավորանիստ ավան» ըստ Հովհ. Դրասխանակերտցու/: IX-XIդդ. Բագարանը տիպիկ գյուղաքաղաք էր, ունեցել է զարգացած այգեգործություն, հինգ եկեղեցի:

ԵՐԱԶԳԱՎՈՐՍ - VII-VIIIդդ. գյուղ էր, իսկ IXդ. գյուղաքաղաք: 855թ. այստեղ է հրավիրվել եկեղեցական ժողովը, որը Զաքարիա Ձագեցուն ընտրել է կաթողիկոս: Սմբատ Ա-ի և Աշոտ Բ-ի գահակալության տարիներին նրանց «թագավորանիստն» էր, Սմբատը այստեղ կառուցել է գեղեցիկ եկեղեցի, որը քանդվել է XXդ.:

ՄՐԵՆ. - Վաղ միջնադարում Կամսարականների տիրույթ Շիրակում, հիշատակվում է Vդ-ից, VIIդ. այստեղ կառուցվել է եկեղեցի:

IX-Xդդ. սահմանագլխին Մրենը այգիներով շրջապատված գյուղաքաղաք էր, ունեցել է պարիսպ և ամրոց:

ՏԵԿՈՐ. - Նույնպես հին բնակավայր, պատկանել է Կամսարականներին. այստեղ Vդ. կառուցվել է նշանավոր բազիլիկ եկեղեցի, որն ավերվել է XXդ.: X-XIդդ. գյուղաքաղաք էր, Գագիկ Ա-ի, Հովհաննես-Սմբատի սեփականություն:

ԹԱԼԻՆ. - Առաջին անգամ հիշատակում է Սեբեոսը VIIդ., Կամսարականներին պատկանող ավան: IXդ. գյուղաքաղաք էր, պատկանել է Բագրատունի թագավորին /IXդ.՝ Աշոտ Դ-ին/:

ԿՈՂԲ. - Հին բնակավայր, ուներ արքունի աղահանքեր, որը շահագործում էին թագավորները, իսկ VIIդ.՝ կաթողիկոսարանը: IXդ. պատկանել է Բագրատունիներին, այդ ժամանակ գյուղաքաղաք էր և դաստակերտ:

Xդ. սկզբին պատկանել է Աշոտ Շապուհյան սպարապետին, գահակալական պայքարի ժամանակ դիմադրել է Աշոտ Երկաթին: XIդ. պատկանել է Հովհաննես-Սմբատին:

ԿԱՂԶՎԱՆ. - Արշարունիքի բնակավայրերից, առաջին անգամ հիշատակվում է 863թ. որպես զորակայան. այստեղ կար գյուղ և ամրոց: Մնաց այդպիսին Բագրատունիների տիրապետության ամբողջ շրջանում: Xդ. սկզբին պատկանում էր Սմբատ Ա-ին: Նրա տնտեսական զարգացմանը նպաստեցին տեղի աղահանքերը:

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ. - IVդ. ավերվել է Շապուհ շահի արշավանքների ժամանակ, բայց IXդ. գյուղաքաղաք էր, արքունի սեփականություն: Xդ. սկզբին պատկանում էր Սմբատ Ա-ին, ապա իր որդի Աբաս թագավորին, XIդ.՝ Գագիկ Բ-ին:

ԳԱՌՆԻ. - V-VIIդդ. ամրոց էր, որի կողքին տարածվում էր ավան: IXդ. վերջերից գյուղաքաղաք էր և այդպիսին մնաց X-XIդդ.: Կաթողիկոս Գևորգ Գառնեցու ծննդավայրը:

Կային նաև այլ գյուղաքաղաքներ՝ Բյուրական, Եղվարդ, Օշական, Կոշ, Երևան և այլք: Սրանք սպասարկում էին տեղական շուկաների պահանջները, բայց որոշ չափով կապված էին հարևան քաղաքների հետ:

Գրկ. *Բ. Առաքելյան*, Քաղաքներ..., էջ 83, 89: Հ. Պետրոսյան, Գառնիի IX-XIVդդ., Եր., 1988:

ԼՈՌԻ. - Հիմնադրվել է X-XIդդ. սահմանագլխին Լոռու թագավոր Դավիթ Անհողինի կողմից որպես ամրոց, որի շուրջ XIդ. աստիճանաբար առաջացել է բնակավայր և ձևավորվել բերդաքաղաք: Բերդը կամ ամրոցը կառուցվել է հրվանդանի սարահարթի վրա, հրվանդանի երեք կողմերից /բացի հյուսիսային/ հոսում են Ձորագետ /հին անունը՝ Տաշրաջուր/ և Միխխանա /հին անունը՝ Բովածոր/ գետերը: Նրանց ափերը կազմում են խոր կիրճեր, նման տեղագրական դիրքը հրվանդանը պաշտպանական կառույցի համար դարձնում է հարմար բնական պատվանդան: Հրվանդանի հյուսիսային կողմում կառուցվել են ամուր պարիսպներ: Բերդաքաղաքը տարածվել է հյուսիսային ուղղությամբ, այդ պատճառով կառուցվել է երկրորդ արտաքին պարիսպը /առաջինից 700մ. հեռավորությամբ/: Արտաքին պարիսպներով ամփոփված քաղաքի տարածքը կազմում է 34 հա.: Հետագա դարերում /XII-XIIIդդ./ հրվանդանին հարևան սարահարթերում, որոնք անջատված են իրարից գետերի կիրճերով, առաջանում են արվարձաններ:

Բերդաքաղաքը ունեցել է պաշտպանական կառույցներ, բաղկացած երկու գծերից արտաքին ու ներքին: Առաջինը մի պարիսպ է 400մ. երկարությամբ, հարթավայրի վրա, երկու գետերի կիրճերի միջև, այն չի պահպանվել: Ժամանակին այն պաշտպանում էր քաղաքի կենտրոնական՝ «Աղ-Շահար» /Սպիտակ քաղաք/ կոչված մասը: Ամրությունների երկրորդ գիծը անջատում է իրարից բերդը և «Աղ Շահարը», նրա երկարությունն էր 214մ.: Որոշ հատվածներում պարսպի բարձրությունը հասնում է 20-22մ.: Պարիսպները ժամանակի ընթացքում ճորոգվել և ամրացվել են, այդ պատճառով մասամբ փոխվել է նրանց արտաքին գծագրությունը: Արևելյան հատվածում պահպանվել են կլոր և ուղղանկյուն աշտարակներ: Պաշտպանական կառույցներ ունի նաև բերդի մուտքը: Կիրճերում կառուցած ոչ մեծ ծավալի ամրություններ /բուրգեր/ պաշտպանում էին բերդաքաղաքի ստորոտները: Միխխանայի ափ հասնում էր գաղտնուղի, որի վերջնամասում կառուցված էր աշտարակ:

Լոռի բերդաքաղաքը հաղորդակցվում էր հարևան բնակավայրերի և դաշտավայրերի հետ նաև երկու գետերի վրա կառուցված կամուրջներով: Միխխանայի կամուրջը պահպանվել է /վերջերս վերանորոգվել է/, իսկ Ձորագետի /երկուսի միախառնման տեղում/ կամրջից պահպանվել է միայն միջին հենարանը: Նրա վրա քանդակված է առյուծի պատկեր: Քանդակը հետաքրքիր նշան է, ընդ որում ոչ թե Լոռվա թագավորների /Կյուրիկյանների/, որոնց զինանշանը հովազն էր, այլ Բագրատունի ազգապետներից որևէ մեկի: Այդ հանգամանքը հաստատում է, որ կամուրջը կառուցվել է Xդ. երկրորդ կեսին, մինչև Դավիթ Անհողինի գահակալումը /մոտ 996/:

Լոռին իր տեղանքի պայմաններով, միջնաբերդի և քաղաքի կապով, պաշտպանական համակարգի սկզբունքով նմանվում է Անիին, նրա ավելի փոքր չափերի օրինակն է:

Գրկ. *Վ. Հարությունյան*, Լոռի-բերդ քաղաքը, ՊԲՀ, 1962, N3: *Ի. Ղարիբյան*, Լոռի քաղաքի պեղումները, ԲԵՀ, 1969, N1:

ԲԱԺԻՆ V

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԲԱԳՐԱՏՈՒՆԻՆԵՐԻ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ

IXդ. վերջում՝ 885թ. օգոստոսի 26-ին ճոչակված թագավորությունը ընդգրկում էր պատմական Հայաստանի զգալի մասը, նրա կազմում չէին միայն որոշ արևմտյան և հարավային շրջաններ, որոնք VIIIդ. վարչականորեն միացված էին տարբեր արաբական կամ քրդական ամիրայություններին: IXդ. արևմտյան շրջանները՝ Բարձր Հայքը իր գավառներով արաբներից խլեց բյուզանդական կայսրությունը, ուստի արևմտյան շրջանները այդպես էլ չմիավորվեցին հայ պետության մեջ:

Դրանով հանդերձ, Աշոտ Ա-ի թագավորական իշխանության ներքո էին ոչ միայն Բագրատունիների ոստանը, այլ նաև Վասպուրականը, Սյունիքը, Արցախ-Ուտիքը, այդ փաստը արձանագրել է պատմագիր Հովհաննես Դրասխանակերտցին, գրելով, որ կաթողիկոս Գևորգ Գառնեցին պսակեց Աշոտին «ի վերայ Ասքանազեան ազգին... եւ այսպէս ի նորոգատուր թագաւորութեանն բարձրացուցաներ զազգս Թորգոմեան»: Այս խոսքերով պատմագիրը հաստատում է, որ Աշոտը թագավորում էր ամբողջ Թորգոմյան-Ասքանազյան «ազգի» վրա, որը տվյալ դեպքում նշանակում է ամբողջ Հայաստանը: Պատմագիր Ասողիկը Աշոտ Ա-ի մասին գրում է, որ Տրդատից հետո /նկատի ունի Տրդատ Ա Արշակունուն/ եղավ «նորոգումն թագաւորութեանս Հայոց ի ձեռն Աշոտոյ Բագրատունւոյ»: Սա Հայոց թագավորություն է, այլ ոչ թե Բագրատունյաց, ինչպես սովորաբար անվանում են այն պատմագիտության մեջ: Այդ թագավորությունը առաջացավ երեք /գուցե չորս՝ դեռևս պարզված չէ, թե Արցախը առանձին «տերութիւն» էր, թե Բագրատունիների «տերութեան» առանձին իշխանություն/ «տերությունների» միությունից՝ Վասպուրականի, Սյունիքի «տէրութիւնները» Բագրատունի «տէր» և ազգապետ Աշոտ իշխանաց իշխանին կամավոր ճանաչեցին թագավոր Հայոց: Այսպիսով 885թ. հիմնվեց Հայոց թագավորություն Բագրատունի արքայատոհմի /դինաստիայի/ գլխավորությամբ:

ա. ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Պետական կառուցվածքի տեսակետից այդ թագավորությունը իրենից ներկայացնում էր երեք կազմավորումների միություն՝ «Ունիա»:

Ունիան մի քանի պետությունների կամ իշխանությունների միացում է

մեկ միապետ-գահակալի իշխանության ներքո, այն ունի կառավարման ընդհանուր, համապետական մարմիններ, ընդհանուր մայրաքաղաք: Ունիայի անդամները համաձայնում են ունենալ մեկ միապետ /որի թագավորական իշխանությունը ժառանգական է/, օգնել միմյանց արտաքին վտանգի ժամանակ, վարել միասնական արտաքին քաղաքականություն:

Ներքին գործերում Ունիայի անդամները ինքնուրույն են: Ունիան միասնական պետություն էր և կոչվում էր «Տուն Հայոց»: Այդ տերմինը արտացոլում է Հայոց թագավորության միասնական պետություն լինելու փաստը:

Սակայն ժամանակի ընթացքում Ունիան աստիճանաբար կազմալուծվում է, 908թ. առաջանում է Վասպուրականի թագավորությունը, 950-ական թթ. բարդանում են հարաբերությունները Արցախի և Սյունիքի հետ, և չնայած Աշոտ Գ-ին հաջողվում է որոշ ժամանակ կանխել նրանց անջատողականությունը, այնուհանդերձ 970թ. Սյունիքում հիմնվում է ավատատիրական թագավորություն:

Xդ. կեսերին Ունիան սպառել էր իրեն, և Բագրատունիներին անհրաժեշտ էր նոր միջոցներ կիրառել, որպեսզի գոյատևի համաճայնական վասալա-սյուզերենական կապերի համակարգը և նրա միջոցով կազմակերպվի պետական մարմինը: Եվ Աշոտ Գ-ն գտավ այդ եղանակը՝ դա պետական կառուցվածքի նոր ձևն էր՝ դաշնապետությունը:

Դաշնապետությունը /ֆեդերացիան/ պետություն է, որի սուբյեկտները անկախությամբ օժտված ինքնուրույն պետական կազմավորումներ են: Նրանք համախմբվում են ամենազորեղի, գլխավորի շուրջ, կազմում բարդ կառուցվածքով պետություն, ունենում ընդհանուր մայրաքաղաք, կառավարման մարմիններ:

961թ. Հայաստանում հիմնվեց այդպիսի մի դաշնապետություն, որի մայրաքաղաքը դարձավ Անին, իսկ գլխավոր սուբյեկտը՝ Բագրատունիների պետական կազմավորումը, արդեն հանդես էր գալիս որպես թագավորություն:

Համահայկական պետականությունը նորից հանդես է գալիս որպես Հայոց թագավորություն, բայց այն բաղկացած է մի քանի ավատատիրական թագավորություններից ու խոշոր իշխանություններից: Վերջինները Հայոց թագավորության սուբյեկտներն են:

Նոր՝ դաշնապետական կառուցվածքը պարզ և ակնառու արտացոլված է պատմագիր Մատթեոս Ուռհայեցու շարադրանքում, ուր պատմվում է 974թ. Աշոտ Գ Ողորմածի գլխավորած զորահավաքի մասին; որը կազմակերպվել էր բյուզանդական կայսր Ջմշկիկի Հայաստան մտնելու կապակցությամբ:

Այդ զորահավաքին մասնակցել են Վասպուրականի, Սյունյաց, Կարսի, Լոռու /Տաշիրի-Ջորագետի/, Վասպուրականի թագավորները /առաջին երկուսի անունները շփոթված են/ Սասուն, Անձևաց և շատ այլ իշխաններ և ազատներ: Նրանց գլխավորել է Բագրատունի ազգապետ Աշոտ Գ Հայոց թագավո-

րը: Բոլորը միասին կազմել են Հայոց թագավորություն և «ամենայն տունն Հայոց»: Վերջին բառատերմինը արտահայտում է Հայոց թագավորության ներքին /պետական/ կառուցվածքը՝ Հայոց թագավորությունը առաջանում էր Բագրատունյաց, Վասպուրականի, Սյունիքի, Կարսի և Լոռու թագավորությունների, մի շարք խոշոր իշխանությունների գումարից: «Ամենայն տունն Հայոցը» գլխավորում էր Շիրակի ֆեոդալական տունը, այն է՝ Բագրատունյաց թագավորությունը, որը «դաշինքներով» /վասալական կապերով/ քաղաքական միություն էր կազմակերպում և այդ եղանակով հիմնվում էր համապետական կազմավորումը՝ Հայոց դաշնապետական թագավորությունը: Նրանում Բագրատունյաց թագավորությունը ֆեդերատիվ կենտրոնի դեր էր կատարում, իսկ Բագրատունի թագավորը հավասարների մեջ «առաջինն էր»: Մայրաքաղաք Անին ամբողջ ֆեդերացիայի քաղաքական կենտրոնն էր, այսպիսով 961-ին սկիզբ առավ «Անիական շրջանը» /դաշնապետությունը/, որը տևեց մինչև 1045 թիվը:

Գրկ. *Ռ. Մաթևոսյան,* Բագրատունյաց Հայաստանի պետական կառուցվածքը..., էջ 194-205:

բ. ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Բագրատունիների տիրապետության շրջանում պետական կառուցվածքին համապատասխան ստեղծվեց վարչակառավարական համակարգ, բաղկացած կենտրոնական՝ արքունի գործակալություններից և տեղական կառավարման մարմիններից:

Ունիայի շրջան /IXդ. վերջ - Xդ. առաջին կես/: - Գոյություն ուներ համապետական արքունիք գործակալություններով: Արքունիքը /ներկայիս իմաստով՝ կառավարությունը/ գլխավորում էր թագավորը: Նա և պետության /թագավորության/ գլուխն էր, և կառավարության: Արքունիքը միշտ գտնվում էր «թագավորանիստ» քաղաքում:

Այս շրջանում պետական գործակալությունները /ծառայություն-պաշտոնները/ հետևյալներն էին.

ՍՊԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ- զորքի հրամանատար, մինչև Անիական շրջանը այդ պաշտոնը տրվում էր բացառապես Բագրա-տունիների ներկայացուցիչներին:

ԻՇԽԱՆՆԱՑ-ԻՇԽԱՆ - Թագավորից հետո երկրորդ բարձրաստիճան պաշտոնյան էր արքունիքում, 862-885թթ. այդ պաշտոնը վարում էր Աշոտ Բագրատունի «ազգապետը», որը կարգավորում էր Արմինիայի խոշոր ֆեոդալների հարաբերությունները արաբական իշխանությունների հետ: 885թ. հռչակվելով թագավոր, Աշոտը այդ պաշտոնը հանձնեց թագաժառանգ որդուն՝ Սմբատին: Ամենայն հավանականությամբ պետականության շրջանում իշխանաց իշխանը կարգավորում էր նույն բնույթի խնդիրները Հայոց թագավորի և հայ ու Անդրկովկասի գահերեց իշխանավորների միջև:

ՏԷՐԱՆՑ ՏԷՐ - կարգավորում էր Բագրատունի «տերի» և մյուս իշխանությունների /հետագայում՝ թագավորությունների/ «տեր»-երի /Վասպուրականի, Սյունիքի/ փոխհարաբերությունները, որոնք ընդգրկում էին վասալա-սյուզերենական կապերի համակարգը:

Վերջին երկու պաշտոնները մինչև Անիական շրջանը նույնպես տրվում էին միայն Բագրատունիների ներկայացուցիչներին:

ԻՇԽԱՆ ՀԱՅՈՑ - Մեկ անգամ հիշատակում է պատմիչ Հովհաննես Դրասխանակերտցին, նրա պարտականությունների մասին որևէ եզրակացություն անել հնարավոր չէ:

ՄԱՐԶՊԱՆ ՀԱՅՈՑ - Միակ գործակալությունը, որը տրվում էր ոչ Բագրատունի ֆեոդալին, տվյալ դեպքում՝ Արծրունիներին: Նրա պարտականությունների մասին գիտնականները արտահայտել են տարբեր կարծիքներ, նույնիսկ կապել Սասանյան շրջանի մարզպանի ֆունկցիաների հետ: Կարծիքներից ոչ մեկը հիմնավորված չէ, և այդ պաշտոնատարի պարտականությունները դեռևս բացատրելի չեն:

ԶՈՐԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՈՑ ՄԵԾԱՑ - Կապված է բանակի հրամանատարության հետ, բայց նրա և սպարապետի տարբերությունը առայժմ պարզված չէ:

Արքունիքներ, համապատասխան գործակալություններով, ունեին նաև Վասպուրականի, Սյունիքի իշխանությունները:

Բագրատունիներն ունեին նաև վարչական ապարատ, որի միջոցով կառավարում էին տոհմական ոստանը:

Ապարատի պաշտոնյա գործակալներն էին մաներ ազնվականության ներկայացուցիչները: Նրանք վերակացուներ էին և վերակացությունը կատարում էին որպես վասալական ծառայություն: Նրանք միաժամանակ «հավատարիմներ» էին /fidelis/, իսկ պաշտոնները կոչվում էին «հավատարիմ և հրամանատար ամենայն տան արքայի», «հրամանատար տան արքունի» և նման անուններով: Նրանք հսկում էին թագավորական ոստանի և անձամբ արքայի բերդերը, նրա գանձարանը, նրանցից թագավորին ավելի մոտ կանգնածը արքայի խորհրդատուն էր, նրա ընտանիքի թիկնապահը: «Արքունի տան» հրամանատարի ֆունկցիաները նմանվում են Արշակունիների արքունի բարձր պաշտոնյա՝ «հայր մարդպետի» ֆունկցիաներին:

Բացի այդ, Բագրատունիների /և մյուս տոհմերի/ տեղական պաշտոնյաների թվում կային գավառակալներ, հազարապետներ, «քաղաքացիներ» /քաղաքում պաշտոններ վարողներ՝ ի տարբերություն գավառների/:

Նրանք կառավարում էին վարչական միավորները՝ գավառները, կատարում տարբեր ծառայություններ:

Այսպիսով, գործում էր կառավարման համակարգը, որտեղ ֆեոդալի արքունիքը հանդիսանում էր նրա տիրույթների վարչական կենտրոնը: Իշխանական կալվածատիրության պայմաններում գործող նման վարչածևը կոչվում

է արքունի-տերունական, արքունի-բաժնետիրական՝ ի տարբերություն համապետականի:

***

ԱՆԻԱԿԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ նախադրյալներ էին ստեղծվել վարչական համակարգը ավելի կատարելագործելու և ժամանակի նոր պահանջներին ծառայեցնելու համար: Նախկինը չէր բավարարում ներքին իրավիճակին /դաշնապետական կառուցվածքին/ և միջազգային դրության նոր պայմաններին: Փոխվում է Բագրատունյաց ոստանի կառավարման եղանակը, նախկինում այն կառավարում էր մեկ պաշտոնյա՝ «հավատարիմը»: Նախ ոստանի տարածքը շատ մեծ էր մեկ կառավարչի համար, երկրորդ. ոստանի երեք խոշոր մարզերը՝ Վանանդ-Արշարունիքը, Շիրակ-Այրարատը և Տաշիր-Ձորագետը կարիք ունեին առանձին և ավելի կատարյալ վարչակազմի:

Շիրակ-Այրարատը, որը պատկանում էր Բագրատունի ազգապետի և նրա գլխավորած Շիրակի ֆեոդալական տանը, մնում էր թագավորի «հավատարիմի» կառավարման ներքո, բայց այժմ վարչակազմը գլխավորում էր «գլխավոր» ազատներից մեկը, որը և «հոգաբարձու» էր՝ թագավորի խորհրդականը, կալվածքների և գանձարանի վերահսկողը: Հովհաննես-Սմբատի տարիներին հոգաբարձուն ազդեցիկ իշխան Վեստ-Սարգիսն էր, որը քաջ հայտնի է 1042-1045թթ. ճգնաժամի տարիներին իր կատարած դերով:

Ինչ վերաբերում է մյուս երկու խոշոր երկրամասերին, ապա նրանք հանձնվեցին ի կառավարումն թագավորական տան անդամներին, Վանանդը մյուս գավառներով՝ Աշոտ Գ-ի եղբայր Մուշեղին, իսկ Տաշիր-Ձորագետը /Լոռի և Աղստևի հովիտ/՝ Աշոտի կրտսեր որդի Գուրգենին: Նրանք նշանակվեցին փոխարքա տվյալ մարզերում, բայց ստացան «թագավորի» կարգավիճակ, թագավոր-տվյալ դեպքում չի նշանակում պետության /թագավորության/ գահակալ, այլ փոխարքա-կառավարիչ, որը թագավորելու, այն է՝ կառավարելու իրավունքը ստացել է իր գերադաս-«ազգապետից» որպես «արքունի» /պետական/ ծառայություն: Այդ եղանակով 961թ. առաջացել է Կարսի, իսկ 966-ին Լոռվա կամ Կյուրիկյան /գրականության մեջ անվանում են նաև Տաշիր-Ձորագետի, Գուգարքի/ թագավորությունները:

Այդ երկուսի առաջացումը ոչ մի կապ չունի ֆեոդալների անջատողականության հետ, ինչպես սովորաբար նշվում է մասնագիտական գրականության մեջ: Այդ երկու փոխարքայություն-թագավորությունների կազմավորումով ավելի կատարելագործվեց Բագրատունիների տոհմական ոստանի կառավարման համակարգը: Այլ բան է, որ հետագայում որոշ հակասություններ առաջ եկան Բագրատունի շահնշահների /ազգապետերի/ և տեղական թագավորների միջև: Բայց դրանք ավելի շատ պայմանավորված էին Կարսի ու Լոռվա

թագավորների կողմից իրենց կախումը շահնշահից թուլացնելու, բայց ոչ երբեք անջատվելու մղումով:

Անիական շրջանում Բագրատունիները արքունի բարձր պաշտոններ էին հանձնարարում մյուս տոհմերի ներկայացուցիչներին, դրանով նրանց մասնակից դարձնում դաշնապետության կառավարմանը:

Արծրունիներին մի որոշ ժամանակ տրվում էր սպարապետությունը /Աշոտ Գ-ի օրոք/, մարզպանությունը, ապա նոր գործակալությունը՝ «Հայոց տանուտերությունը» /թագավորի և ֆեոդալների փոխհարաբերությունների խնդիրներ/: Xդ. երկրորդ կեսից մինչև անկումը մարզպանությունն ու սպարապետությունը տրվում է Պահլավունիներին: Նրանց է հանձնվում նաև իշխանաց իշխանի պաշտոնը: Սյունիքի ներկայացուցիչներ արքունի պաշտոններում չեն հիշատակվում, բայց առանձին դեպքերում տրվում էր կաթողիկոսական աթոռը՝ Վահան Սյունի /968թ./, Ստեփանոս Գ Սևանցի /969-972/ և Սարգիս Ա Սևանցի /992-1019/: Բայց պետք է հաշվի առնել, որ Գեղարքունիքը Սևանա կողով այդ ժամանակ պատկանում էր Բագրատունիներին:

Գրկ. *Խ. Մամիկոնյան*, Հին հայ իրավունքի պատմություն, եր., 1939: *Ռ. Մաթևոսյան*, Բագրատունյաց Հայաստանի պետական կառուցվածքը..., էջ 100-117, 178-194:

Գ. ՀԱՅ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՁԱՆԱՉՈՒՄ

Անկախ պետությունը պետք է լինի սուվերեն /ինքնիշխան/: Սուվերենիտետը պարունակում է երկու պարագա՝ տեղական իշխանության գերագույն գերադասություն երկրի ներսում և անկախություն միջազգային հարաբերություններում:

IXդ. վերջում Բագրատունիները, ի դեմս Աշոտ իշխանաց իշխանի, հասել էին քաղաքական գերադասությանը Հայաստանում: Բոլոր հայ իշխանները ճանաչում էին նրանց առաջնությունը երկրում, Սյունի և Արծրունի իշխանները դիմեցին խալիֆայությանը, առաջարկելով թագ շնորհել Աշոտին, այլ կերպ ասած՝ ճանաչել Հայաստանի անկախությունը: Խալիֆը բավարարեց այդ դիմումը: Աշոտին թագ տվեց, Հայոց թագավորությունը ճանաչեց նաև Բյուզանդիան:

Այսպիսով, 885թ. տեղի ունեցավ Հայաստանի անկախ պետության միջազգային ճանաչումը:

Հայոց թագավորության նոր փուլում, նրա Անիական շրջանում ստեղծվեց վերակազմավորված հայկական պետություն դաշնապետական կառուցվածքով: Այդ ճանաչեցին խալիֆայությունը, Բյուզանդիան. Աբխազիան /Վիրա-աբխազական թագավորությունը/:

Բագրատունյաց Հայաստանի բարձր միջազգային հեղինակությունը հաստատում է նրա գահակալներին բյուզանդական արքունիքի դիմելու ձևը:

Բյուզանդական կայսր Կոստանդին Միրանածինը գրի է առել օտար պետությունների դեկավարներին դիմելու ձևը և շարադրել այն իր «Բյուզանդական արքունիքի արարողությունների մասին» աշխատության II գրքի 48 գլխում, որը կոչվում է «Այլազգիներին ուղարկվող նամակների վերնագրերը»: Կայսրը գրում է, որ օտար պետությունների դեկավարների գրած նամակները կնքվում էին հատուկ կնիքով, որը կոչվում էր «իւրիսովուլ»: Որքան հեղինակավոր էր տվյալ պետությունն ու նրա գահակալը, այդքան ավելի մեծ կնիքով էր այն կնքվում: Բագրատունի թագավորին գրած նամակները, ըստ Միրանածինի վկայության, կնքվում էին երեք սոլիդանոց կնիքով /իւրիսովուլով/, ավելի ծանր կնիքով դրոշմվում էին միայն խալիֆին գրված նամակները:

Հայաստանը Աշոտ Ա-ի տարիներից մինչև Գագիկ Ա-ի գահակալության վերջը ռազմապես ուժեղ պետություն էր, որը կարող էր ռազմադաշտ դուրս բերել մինչև 80000-անոց բանակ: Նա ուներ միջազգային բարձր հեղինակություն, որն արտացոլվել է միջազգային էտիկետում և նրա միջազգային ճանաչման իրավական ակտերով:

Գրկ. *Կոստանդին Միրանածին*, թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ՝ Հրաչ Բարթիկյանի, Եր., 1970, էջ LIV-LV, 150: *Ռ. Մաթևոսյան*, Բագրատունյաց Հայաստանի պետական կառուցվածքը..., էջ 131-133:

դ. ԲԱԳՐԱՏՈՒՆԻՆԵՐԻ ԱՐՏԱԴԻՆ ԵՎ ՆԵՐԴԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴՈԿՏՐԻՆԱՆ

IXդ. կեսերին Հայաստանի և Արմինիայի ներքին կյանքում Բագրատունիները հասան քաղաքական դեկավարությանը, մշակվեց նրանց կոնցեպցիան՝ միավորել ամբողջ Հայաստանը և հասնել անկախության: Պետականության վերականգնումից հետո նրանց գիծը էր ամրապնդել արդեն գոյություն ունեցող դաշնակցությունը հայ ազդեցիկ իշխանական տների հետ, միավորել նրանց Բագրատունիների պետական իշխանության շրջանակներում, ստեղծել ուժեղ և միասնական պետություն: Ընդ որում, միասնական բառի ոչ բացարձակ իմաստով, քանզի զարգացած ֆեոդալիզմի դարաշրջանում միասնական պետություն ընդհանրապես հնարավոր չէ ստեղծել: IX-XIդդ. իշխանական համակարգի պայմաններում հնարավոր էր միավորել երկրի իշխանությունները կամ ունիայի, կամ դաշնապետական պետության մեջ, և Բագրատունիները կարողացան իրագործել այդ քաղաքական դժվարին պայմաններում, սկզբնական շրջանում միաժամանակ ստիպված լինելով պայքար մղել անկախությունը պահպանելու համար /Սմբատ Ա-ի և Աշոտ Բ-ի գահակալության շրջան/:

Երբ երկրի ներքին սոցիալ-տնտեսական զարգացումը հանգեցրեց խոշոր երկրամասերի կամ նահանգների /Վասպուրական, Սյունիք/ քաղաքական

հզորությանը, առաջ եկան տեղական ավատական թագավորություններ, և ունիան կազմալուծվեց, ապա Բագրատունիների քաղաքական հմտությունը գտավ երկիրը պետականորեն միավորելու նոր ձև՝ ստեղծվեց դաշնապետություն, և նախկին ունիայի սուբյեկտները նորից համախմբվեցին Բագրատունի թագավորական իշխանության հետ այս անգամ ֆեդերացիայի կազմում՝ «Տուն Հայոց»-ը դարձավ «ամենայն տունն Հայոց»:

Հայ պատմագիտության մեջ արտահայտվել է երկու կարծիք Բագրատունիների պետական իշխանության վերաբերյալ, մի մասը /չվերլուծելով պետական կառուցվածքը/ գտնում է, որ Բագրատունիներին հաջողվեց միավորել երկիրը, մյուսները գտնում են, որ չհաջողվեց: Ճշմարիտը առաջինն է:

ԱՐՏԱԴԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴՈԿՏՐԻՆԱՆ. 862-ին խալիֆից ստանալով ամբողջ Արմինիայի ներքին կառավարման ֆունկցիաները /իշխանաց իշխան հայոց, վրաց և աղվանից/, Բագրատունիները այնուհետև ձգտում էին հասնել Հայաստանի և Անդրկովկասի ֆեոդալական վերամիավորման, ստեղծել ֆեոդալական հիերարխիայի սկզբունքով կազմակերպված երկրամիջյան պետություն: Այդպիսի համախմբման անհրաժեշտությունը բխում էր ֆեոդալների արտաքին քաղաքականության, ներքին խնդիրների շահերից /տնտեսական զարգացում, դասակարգային պայքարի սրում/:

IX-XIդդ. հայ /Շիրակի/ Բագրատունիները հաջողությամբ առաջ էին տանում միավորման գործը, որը հանգեցրեց յուրատեսակ ֆեոդալական կոնֆեդերացիայի: Աշոտ Բ-ից սկսած Բագրատունի ազգապետները խալիֆից հանձնվեցին շահինշահ և պահպանեցին այդ տիտղոսը մինչև 1045թ.: Շահընշահը միայն տիտղոս չէր, այլ նաև որպես «առաջինի» կարգավիճակ մյուս ֆեոդալների համեմատ և Բագրատունի բոլոր ճյուղերի ավագ, դինաստիայի գլուխ՝ «ազգապետ»:

Արաբական Արմինիայի վերացումով /885/ նրա երկրների իշխանավորների միջֆեոդալական կապերը չխզվեցին, այլ ստացան նոր բովանդակություն: Դա պաշտոնապես հաստատվեց Աշոտ Բ-ին շահինշահ հանձնելով: Սակայն բյուզանդական կայսրության ագրեսիան, Հայաստանի նվաճումը վերացրեց Բագրատունիների սուբորդինացիան և կոնֆեդերատիվ կապերը:

Գրկ. *Ա. Հովհաննիսյան*, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, 1, Եր. 1957, էջ 110, 117, 118, 122, 123, 126-128: *Ա. Տեր-Ղևոնդյան*, Արաբական ամիրայությունները Բագրատունյաց Հայաստանում, Եր., 1965, էջ 164, 168-171, 236: Նույնի՝ Հաղթափառ արաբերեն արձանագրությունը...: ԳԱ «Լրաբեր», 1979, հ. 1: *A. Грен*, Династия Багратидов в Армении, ЖМНП, 1893, ноябрь, с. 72, 94. *С. Еремян*, Общность судеб и культурно-политическое содружество народов Закавказья в IX-XIIIвв."Кавказ и Византия", вып. I, Ер., 1979, с.5-7. *Ռ. Մաթևոսյան*, Բագրատունյաց Հայաստանի պետական կառուցվածքը..., էջ 223-238:

ՀԻՆ ՕՐԵՐԻՑ ՄԻՆՉԵՎ IXԴ. ՍԿԻԶԲԸ. - Անիի տարածքում ամրացված բնակավայր գոյություն է ունեցել հնագույն ժամանակներից, այդ հաստատում են վաղագույն շրջանի նյութական մշակույթի նմուշները՝ կառույցների մնացորդներ, կիրառական արվեստի նմուշներ, խեցեղեն, դրամներ, որոնք պատկերացում են տալիս նրա վիճակի մասին մինչ Կամսարականների շրջանը /IVդ./: Շատ հին է նաև նրա անունը: Թ. Թորոմանյանի կարծիքով Անիի հնագույն բերդը հավանաբար IV-Vդդ. կառույց է, ըստ ժողովրդական ավանդության նրա տեղում գոյություն է ունեցել հեթանոսական տաճար, որը կործանել է Գրիգոր Լուսավորիչը և նույն տեղում կառուցել եկեղեցի:

Արշակունյաց շրջանում, ինչպես կարծում են գիտնականները, Անին արդեն ամուր բերդ էր, բայց ոչ իշխանանիստ, կարևոր ռազմական հենակետ, որն արդեն պատկանում էր Կամսարականներին /Շիրակը Կամսարականներն ստացել էին Տրդատ Դ-ից 321թ./:

Հայ պատմագրության մեջ Անին առաջին անգամ հիշատակվում է Vդ.՝ Վարդանանց պատերազմի առնչությամբ՝ պատմիչ Եղիշեի վկայությամբ Վարդան Մամիկոնյանը հարձակվել էր այն ամրոցների վրա, որտեղ տեղավորված էին պարսկական կայազորները, այդ թվում Գառնիի, Արտագերսի և Անիի, խլում այդ ամրոցները իրենց ավաններով: Ուրեմն Անին այդ ժամանակ ուներ ավան և բերդ, ենթադրվում է, որ այս բերդը Xդ. դարձավ Անի մայրաքաղաքի միջնաբերդ:

Երկրորդ անգամ Անին հիշատակվում է Վահանանց պատերազմի տարիներին՝ ապստամբության սկզբին այստեղ էր փակվել պարսիկ մարզպանը, որը հետո հեռանում է Արտաշատ:

VIդ. Անին հիշատակվում է «Ճառընտիր»-ում /ձեռագիր ժողովածու/, որպես Տեկորի վանքին մոտ քաղաքագյուղ: Այնուհետև, VI-VIIդդ. այս բնակավայրը հիշվում է Մորիկ կայսեր /582-603/ հետ կապված մի ավանդության մեջ: Ավանդությունը կայսրին վերագրում է հայկական ծագում, իսկ նրա հայրը իբր ապրում էր Անիում: Մեկ ուրիշ ավանդությամբ նույն Մորիկը կառուցել է Անի բերդաքաղաքը: Հնարավոր է, որ ավանդության մեջ արտացոլվել է այն իրական փաստը, որ կայսրը Անիում կառուցել է ամրություններ կամ գուցե վերակառուցել բերդաքաղաքը: Բացառված չէ, որ ավանդության մեջ ակնարկվում է Մաղասբերդը:

Հնագիտական պեղումները վկայում են, որ Բագրատունիների շրջանում Անիի միջնաբերդը ձևավորվել է Կամսարականների հին ամրոցի հիման վրա: Կամսարականների շրջանում են կառուցվել նաև «պալատական» կոչվող եկեղեցին /VIIդ./, որը X-XIդդ. վերակառուցվել է, «Նոերով» եկեղեցին /VII-VIIIդդ./ (այդպես է կոչվել նոան զարդեր ունենալու պատճառով): Այսպիսով,

Կամսարականների շրջանից հասած նյութական մշակույթի նմուշները կապված են ամրոցաշինության և եկեղեցաշինության, բայց ոչ արհեստագործական գործունեության հետ:

VIIIդ. վերջում թուլացած և մոտ երկու հարյուր տարով ասպարեզից հեռացած Կամսարականներից 783թ. Շիրակն ու Արշափունիքը գնում են Բագրատունիները /Xդ. երկրորդ կեսին Կամսարականները նորից ասպարեզ են մտնում որպես «նոր Պահլավունիներ», տես «Պահլավունիներ» հոդվածը/: Պատմիչ Ասողիկը /Ստ. Տարոնեցին/ գրում է, որ Աշոտ Մսակերը «Գանձագին արար զգաւառն Արշարունեաց յազգէն Կամսարականաց», նոր տերերի արքունանիստը դառնում է Կալմախը Տայքում, հետո Բագարանը, /Բագարանում էլ Աշոտ Ա-ն թագադրվեց թագավոր 885թ./, իսկ Անին IXդ. մնում էր որպես ամրոց-բերդավան: Նրա մասին գրավոր աղբյուրներում հակիրճ տեղեկություններ հանդիպում են գալիս Xդ. առաջին կեսին, իսկ 961թ. այն դառնում է Հայաստանի մայրաքաղաք:

Գրկ. *Թ. Թորոմանյան*, Անի քաղաք թե ամրոց, «Ա.Հ», գիրք XXII, Թիֆլիս, 1912, N1-2, էջ 61-70: *Թ. Հակոբյան*, Անիի պատմություն /հնագ. ժամ. մինչև 1045/ Եր., 1980, էջ 18-53:

Անին Xդ. առաջին կեսին

Այս շրջանում Անին Բագրատունի թագավորների ռազմական ամրոց-հենակետերից էր, այստեղ էր պահվում թագավորի կաճ-կարասին: Հովհ. Դրասխանակերտցին այն անվանում է բերդ: Այդ տիպի ամրոց-կայաններից էր նաև Կարսը:

Գեղարքունիքի իշխան Գրիգոր Սուփանը Xդ. սկզբին /901/ Անիում ուներ հինգ կրպակ-խանութ, այդ արտոնությունը բացատրվում է նրանով, որ Սուփանը ամուսնացած էր Աշոտ Ա. Բագրատունու դստեր՝ Մարիամի հետ և թագավորի մտերիմներից էր, նրա հավատարիմ վասալը: Բացի այդ, նշված փաստը վկայում է, որ Անին բացի ամրոցից նաև գյուղաքաղաք /կամ բերդաքաղաք/ էր, որտեղ կային կրպակ /արհեստանոց/-խանութներ, բայց որպես բնակավայր դեռևս իսկական քաղաք չէր /XVIIդ. մատենագիր Դավիթ Բաղիշեցու հիշատակությունը, որ Աշոտ Բ թագավորը «յԱնի, ի տեղի ճօր իւրոյ» շփոթության արդյունք է/:

Այնուհետև Անին մինչև Աշոտ Գ Ողորմածի գահակալումը առ այսօր մեզ հայտնի աղբյուրներում չի հիշատակվում, իսկ 961-ին այն հռչակվում է մայրաքաղաք: Սկիզբ է առնում Բագրատունյաց Հայաստանի պատմության նոր դարաշրջանը:

Անիի Հայաստանի մայրաքաղաք

IXդ. վերջում, Հայաստանի անկախության վերականգնումից հետո, պետության մայրաքաղաքը մի քանի անգամ տեղափոխվել է քաղաքից քաղաք. յուրաքանչյուր թագավոր մայրաքաղաք էր դարձնում իր աթոռանիստը: 65 տարիների ընթացքում մայրաքաղաքներ էին Բագարանը /Աշոտ Ա-ի օրոք/, Երազգավորսը /Սմբատ Ա-ի և Աշոտ Բ-ի/ և Կարսը /Աբասի և Աշոտ Գ-ի առաջին 8 տարիներին/: Այդպիսի հաճախակի տեղափոխումները բացատրվում են մայրաքաղաքների սենյորալ բնույթով՝ յուրաքանչյուր գահակալ պետության կենտրոն էր դարձնում իր աթոռանիստը, ուստի գահակալների հաջորդականությանը զուգընթաց մեկը մյուսին հաջորդում էին նաև մայրաքաղաքները: Նման տեղաշարժերը հնարավորություն չէին տալիս, որպեսզի տվյալ աթոռանիստ-մայրաքաղաքը դառնար կայուն համապետական կենտրոն: Դրա համար անհրաժեշտ էր ունենալ մշտական մայրաքաղաք:

Աբաս Բագրատունու գահակալության տարիներին սկիզբ առած խաղաղ շրջանը, հայ պետության միջազգային դրության կայունացումը հնարավորություն ստեղծեցին ձեռնամուխ լինելու այդ առաջնահերթ խնդրի լուծմանը:

Աստիճանաբար Կարսում կենտրոնացավ արքունիքը, Աղթամարից այստեղ տեղափոխվեց կաթողիկոսարանը, կառուցվեց Կաթողիկե եկեղեցին՝ մայր աթոռը: Կարսը դարձավ «թագավորանիստ շահաստան» /մինչ այդ նախորդ երկու մայրաքաղաքները այդպիսի անվանում չունեին, որովհետև տվյալ գահակալի ժամանակ արդեն հայտնի էր, որ հաջորդի օրոք մայրաքաղաք է դառնալու հաջորդի աթոռանիստը/: Կարսը, սակայն, նախատեսվում էր որպես մշտական կենտրոն: Այն մայրաքաղաք էր նաև Աշոտ Ողորմածի առաջին 8 տարիներին /953-961/: Բայց 961-ին արքունիքը նորից տեղափոխվեց նոր նստավայր, այս անգամ Անի: Պատճառը արտաքին վտանգն էր՝ Բյուզանդիան աստիճանաբար արաբներից նվաճում էր Արևմտյան Հայաստանի շրջանները, 949թ. նա գավթեց Կարինի շրջանը, Հավնունիքը, Բասենը: Նվաճված շրջանները վարչականորեն կազմակերպվեցին որպես Կարին բանակաթեմ /թեմը կայսրության վարչական միավոր էր/: Նորաստեղծ բանակաթեմը Հայաստանի դեմ ագրեսիվ գործողությունների հենակետ դարձավ հայկական նոր շրջաններ նվաճելու համար: Բանակաթեմի հարևանությունը վտանգավոր էր հայոց մայրաքաղաքի համար, այս հանգամանքը ստիպեց Աշոտ Գ թագավորին Կարսից տեղափոխվել Անի և այնտեղ կազմակերպել մշտական մայրաքաղաք:

Նոր աթոռանիստում Բագրատունյաց արքունիքը ավարտին հասցրեց պետության ռազմավարչական բարեփոխումների լայնածավալ ծրագիրը:

Առաջադրված խնդիրը հաջողվեց լուծել այն բանի շնորհիվ, որ որպես

մայրաքաղաք ընտրվեց ոչ թե որևէ գահակալի իշխանանիստը, այլ ընդհանուր տոհմական /տվյալ դեպքում՝ Շիրակի տան/ սեփականություն հանդիսացող բնակավայրը /բերդաքաղաքը/: Հնարավոր է այլ վարկած՝ Աշոտ Գ-ն իր սեփական ամրոց-քաղաքը դարձրեց տոհմական սեփականություն: Դրա շնորհիվ նորընտիր աթոռանիստը /Անին/ դարձավ մշտական մայրաքաղաք. դրա լծակը կայանում էր նրանում, որ յուրաքանչյուր գահակալ, որը ժառանգում էր գահը /այն է Աշոտ Գ-ի հաջորդներ Սմբատ Բ, Գագիկ Ա, Հովհաննես-Սմբատ և Աշոտ Դ, Գագիկ Բ/ իր սենյորալ /իշխանական/ աթոռանիստը չէր դարձնում մայրաքաղաք, այլ տեղափոխվում էր Անի: Այդպես կշարունակվեր նաև 1045թ. հետո, եթե պահպանվեր Հայաստանի անկախությունը /ի դեպ, նույն սկզբունքը XIդ. վերջից - XIIIդ. կիրառում էին նաև Զաքարյանները, որոնց աթոռանիստը 1199-ից նույնպես Անին էր/: Միաժամանակ Շիրակը դարձավ այն միակ շրջանը /Բագրատունյաց ոստանի այն մարզը/, որտեղ կարող էր գտնվել Հայոց մայրաքաղաքը, քանի որ Անին ոչ միայն Բագրատունիների, այլև ամբողջ Հայաստանի մայրաքաղաքն էր: Այստեղ էին հաստատվել և համահայկական արքունիքը, և Կաթողիկոսարանը:

Նոր մայրաքաղաքի հռչակման կապակցությամբ Անիում կազմակերպվել էին մեծ հանդիսություններ: Նրանց նկարագրությունը տվել է XI-XIIդդ. պատմիչ Մատթեոս Ուռհայեցին, օգտվելով դեպքերին ժամանակակից աղբյուրներից: Զնայած 953թ. Աշոտ Գ-ն արդեն օծվել էր թագավոր, երբ գահակալել էր Կարսում, բայց 961-ին նորից օծվեց, այս անգամ Անիում «ի գահոյս առաջին թագաւորացն Հայոց ազգիս»: Օծմանը ներկա էին Հայաստանի բազմաթիվ վայրերից ժամանած հայ իշխանավորներ և եկեղեցականներ: Տեղի է ունենում զորահանդես՝ «լիներ հանդէս զօրաց նորա հարիւր հազարաց վառելոց ընտիր», շքերթին մասնակցում են նաև «մարզպետական գունդը» /45 հազարանոց/ և արքունական գունդը: Ներկա էին հյուրեր օտար երկրներից, «Աղվանից» /«Հայոց արևելից կողմանց»/ կաթողիկոսը քառասուն եպիսկոպոսներով, «Աղվանից» թագավորը: Այսպիսով Անիում եղավ «ժողով աճագին և մեծ ի քաղաքն յԱնի, որ եղեւ այժմիկ թագաւորանիստ քաղաք Հայոց»:

Եվ հարևան երկրները՝ Աբխազիան, Բյուզանդիան, խալիֆայությունը և պարսկա-արաբական ամիրայությունները /բնագրում՝ «պարսից»/ «սեր»՝ այն է բարեմաղթանքներ և ընծաներ են ուղարկում Հայոց թագավորին:

Մատթեոս Ուռհայեցու տեղեկություններից պարզ երևում է, որ 961-ին Աշոտ Գ-ն դառնում է Հայոց թագավոր նոր կարգավիճակով /հիմնվում է ֆեդերատիվ կառուցվածքով պետություն Բագրատունիների գլխավորությամբ/, իսկ Անին դառնում է այդ պետության մշտական մայրաքաղաքը որպես ֆեդերատիվ կենտրոն: 961-ից սկիզբ է առնում Բագրատունյաց Հայաստանի պատմության հեպես նոր փուլ, որը Լեոյի արտահայտությամբ պետք է անվանել «Անիական շրջան»:

Գրկ. *Ղուկաս Ինձինձյան*, Ստորագրութիւն հին Հայաստանեայց, Վնտ., 1822, էջ 416-426: *Թ. Հակոբյան*, նշված աշխատությունը, էջ 64-82: *Ռ. Մաթևոսյան*, Բագրատունյաց Հայաստանի պետական կառուցվածքը..., էջ 139-146: H. Mapp, Ани, Ер., 1939.

զ. ԿԱՐՍԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

Կարսի թագավորություն. - ֆեոդալական կազմավորում, ռազմավարչական միավոր-փոխարքայություն Բագրատունյաց թագավորությունում: Բացի Վանանդ-Արշարունիքից նրա կազմում էին ավելի փոքր գավառներ՝ Զարիշատը, Կարմիր փորակը, Աբեղյանքը, Կեչրորը, Զարեհավանը, Գաբեղյանքը /Կաղզվան/:

Նրա կազմավորումը թելադրված էր Բագրատունյաց թագավորության արևմտյան սահմանների պաշտպանության պահանջով. 949-ին ստեղծված Կարին բյուզանդական բանակաթեմը, որի կազմում էին Բասեն, Հավնունիք, Կարին և այլ գավառներ, անմիջականորեն սահմանակցում էր Բագրատունիների պետության հետ:

Այդ պատճառով, Աշոտ Գ-ն նախ մայրաքաղաքը Կարսից տեղափոխեց Անի, ապա ստեղծեց ռազմավարական գոտի պետության կենտրոն Շիրակի մատույցներում: Այդպես 961-ին հիմնվեց Կարսի փոխարքայություն-թագավորությունը: Կարմիր փորակի լեռները և Առջո Առիճի լեռնագագվածը բնական պատնեշ էին, որոնք պաշտպանում էին Կարս-Շիրակ տանող ճանապարհները:

Փոխարքայության կառավարիչ-թագավոր նշանակվեց արքաեղբայր Մուշեղը /տես N47/, որին այդ պաշտոնը տրված էր շահնշահի կողմից որպես արքունի ծառայություն: Մուշեղը և Աշոտ Գ-ի մյուս մերձավոր ազգակիցները, որդիներ Գագիկը, Սմբատն ու Գուրգենը արքունիքում վարում էին այս կամ այն պաշտոններ /Սմբատը գահակից էր եղբոր/ և համարվում էին «արքունի տան գահերեցներ» /այդպես էր պետականության վերականգնման և արքունիքի կազմակերպման սկզբից, ինչպես վկայում է պատմիչ Հովհաննես Դրասխանակերտցին/: «Արքունի տան գահերեցների» ինստիտուտը գոյություն ուներ արդեն Արշակունյաց թագավորությունում, գուցե և ավելի շուտ, Արտաշեսյանների օրոք: Նրանց հանձնարարվում էին կարևոր պետական պաշտոններ, գործակալություններ:

Այսպիսով, Բագրատունիները, հասնելով պետականության, սկզբից ևեթ վերականգնեցին արքունի այդ հին ինստիտուտը:

Այդ տեսանկյունից միանգամայն մերժելի է հայ պատմագիտության մեջ ընդունված վարկածը, իբր Կարսը հանդիսանում էր սպարապետների աթոռանիստը և վերջիններս, օգտվելով իրենց ռազմական ուժից, դրսևորում էին անջատողականություն: Դրա արդյունքն էր Կարսի թագավորության առաջացումը: Ուղիղ հակառակը՝ Կարսի կառավարիչները ստանում էին կառավարելու իրավունքը իրենց «ազգապետից» որպես արքունի ծառայություն և անհնազանդության դեպքում կորցնում էին այդ ծառայությունը: Այդպիսի վախճան ունեցավ Կարսի Բագրատունիների Մուշեղի շառավիղը, սկզբից նա կորցրեց Շատիկ ամրոցը, ապա զրկվեց «ծառայությունից» /թագավորելու իրավունքից/:

Կարսի /ինչպես և Լոռվա/ թագավորություն կազմավորումից հետո էլ արքայական ոստանի այդ երկրամասը ենթակա էր Հայոց թագավորի՝ շահընշահ ազգապետի վարչական վերահսկողությանը և դրա շնորհիվ է, որ Գագիկ Ա. շահնշահը զրկեց Մուշեղյաններին իշխանությունից:

Բացի այդ, Բագրատունի «ազգապետները» ոստանի ներսում օժտված էին «զավթախուժման», այսինքն անհնազանդության դեպքում նրա «երկիրը» ներխուժելու և պատժելու, տիրույթները բռնագրավելու իրավունքով: Բացառված չէ, որ Գագիկ շահնշահը հենց այդ եղանակով է զրկել Մուշեղյաններին իշխանությունից, չնայած այսօր հայտնի աղբյուրներում այդպիսի վկայություն չկա: Բայց այդպես եղավ Տաշիր-Ձորագետում:

Կարսի և Լոռվա թագավորությունները, որպես սահմանամերձ ռազմավարական գոտիներ, պաշտպանում էին Բագրատունյաց թագավորության անվտանգությունը արտաքին ներխուժումներից, կատարում էին նույն ֆունկցիաները, ինչ Արշակունյաց թագավորության բդեշխությունները:

Վանանդ-Արշարունիքի առանձնացումը որպես վարչատարածքային միավոր, այնտեղ տեղական կառավարում ստեղծելը, բնականաբար, մեծապես նպաստեցին տնտեսական և մշակութային զարգացմանը, մշակվեցին ալպիական դաշտերը, զարկ տրվեց անասնապահությանը /առանձնապես Արջո-Առիճի լեռներում/, այգեգործությանը: Երկրամասում կային նաև պղնձի, երկաթի և արծաթի հանքեր, որոնք սկսեցին արդյունահանվել: Ընդլայնվեց առևտրական փոխանակումը, Կարս քաղաք-ամրոցը աճելով դարձավ առևտրական և արհեստավորական կենտրոն: Կարսի թագավորությունում հիմնվում են վանքեր՝ Կարմրաձորը, Թրին, Սանդղկավանքը և այլն: Կարսի թագավորությունը գոյատևեց մինչև 1065թ.:

Գրկ. *С. Еремян*, Присоединение северо-западных областей Армении к Византии в XIв. «Լրաբեր», 1971, N3: Նույնի՝ Կարսը IX-XIդդ., /տես ՀԺՊ, հ. 1, էջ 93-100/: *Ռ. Մաթևոսյան*, Բագրատունյաց Հայաստանի պետական կառուցվածքը..., էջ 153-160:

է. ԿՅՈՒՐԻԿՅԱՆ ԿԱՄ ԼՈՌՎԱ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

Կյուրիկյան կամ Լոռվա թագավորություն. - ֆեոդալական կազմավորում, ռազմավարչական միավոր՝ փոխարքայություն Բագրատունյաց թագավորությունում: Ընդգրկում էր Գուգարաց աշխարհի Տաշիր-Ձորափոր /Լոռի-Աղստև գետի միջին հոսանք/ Կողբ, Մոփ, Կանգարք Փոքր գավառները և նրանց սահմանակից Ուտիքի Տավուշ-Գարդման գավառները:

Այս փոխարքայություն-թագավորության կազմավորումը նույնպես թելադրված էր Բագրատունյաց թագավորության անվտանգությամբ, նրա հյուսիսային սահմանները Տփղիսի արաբական և առանձնապես Ատրպատականի ամիրայությունների բշնամական գործողություններից պաշտպանելու անհրաժեշտությամբ: Դեռևս Xդ. սկզբին Սմբատ Ա-ի օրոք տարածաշրջանում կազմվել էին երկու «գավառներ» /տվյալ դեպքում վարչական միավորներ/՝ Տաշիր և «Ուտի», թագավորի կողմից նշանակված կառավարիչներով:

960-ական թթ. Աշոտ Գ-ի նախաձեռնությամբ այստեղ նույնպես կազմվեց փոխարքայություն: Կենտրոնն էր Շամշուլդե ամրոցը, իսկ 1065-ից՝ Լոռի բերդաքաղաքը: Սկզբնապես ապագա փոխարքայության տարածքը ենթարկվեց արքունի պաշտոնյային՝ Աշոտ գահակից Սմբատին, ապա նրան տեղում օգնական նշանակվեց շահնշահի մյուս որդի Գուրգենը: Երկուսն էլ «արքունի տան գահերեցներ» էին և մասնակից արքունիքում իրագործվող վարչական բարեփոխումներին: 966-ից Գուրգենը հոր կողմից ստացավ փոխարքա-թագավորի կարգավիճակ, իսկ 979-ին Սմբատը, գրավելով շահնշահի գահը Անիում, իր ֆունկցիաները հանձնեց Գուրգենին: Ինչպես և Կարսի թագավորությունը, Տաշիր-Ջորագետը տեղական թագավորների օրոք ենթակա էր Բագրատունի «ազգապետի» վերահսկողությանը և իրենից ներկայացնում էր Բագրատունյաց թագավորության վարչական ստորաբաժանում:

Լոռվա երկրորդ թագավորի Դավիթը փորձեց ինքնուրույնություն ձեռք բերել, ավելի հիշտ՝ ընդարձակել տեղական կառավարիչի իրավունքները /բայց ոչ անջատել/, այս դեպքում գործեց շահնշահի «զավթախուժման» իրավունքը՝ Գագիկը զորքով մտավ փոխարքայություն և նրա կեսը՝ Աղստևի շրջանը հանեց Դավթի իրավասությունից:

Այնուհետև ընդվզման դեպքեր տեղի չունեցան, Լոռվա թագավոր Կյուրիկե Ա-ն Անիի ու Կարսի անկումից հետո գլխավորեց Բագրատունյաց տոհմը Հայաստանում, փորձ արեց պահպանել անկախությունը Բյուզանդիային չմիացված շրջաններում, բայց սելջուկների ներխուժումը հնարավորություն չտվեց ավարտին հասցնելու այդ նպատակադրումը:

Գրկ. տես «Բագրատունի տոհմանյուղեր» ենթաբաժնի «Կյուրիկյաններ» պարագրաֆի գրականությունը:

ը. «ՀԱՅՈՑ ՏՈՒՆԸ» 1045Թ ՀԵՏՈ

Բագրատունի ազգապետ և շահնշահ Գագիկ Բ-ի գահազրկումից և Անիի Բյուզանդիային անցնելուց հետո «Հայոց տունը» դեռևս մի քանի տասնամյակ գոյատևեց, կրելով մասնակի ձևափոխություններ ժամանակի իրավիճակին համապատասխան:

1045թ. հետո Հայոց թագավորի և շահնշահի իրավունքները անցնում են

Կարսի Բագրատունիներին՝ Աբաս Բ Կարսեցուն /1020-1049/ և Գագիկ Բ Կարսեցուն /1049-1065/:

Նրանք էին գլխավորում «Հայոց տունը» 1045-1065թթ., իսկ երբ Գագիկ Կարսեցին 1065թ. Կարսը հանձնեց Բյուզանդիային, ժամանակակիցները դա համարեցին «...կատարած տանս Հայոց»:

«Հայոց տունը» հիմնականում բաղկացած էր Շիրակի տան ավագանուց, նրա կազմում էին նաև վերջինի մերձավոր վասալները՝ Պահլավունիները: Բագրատունիների ավագանու և նրանց վասալների մի մասը 1045թ. տեղափոխվեց Գագիկ Բ-ի մոտ՝ Ծամնդավ և Կիլիկիա, մի մասը անցավ Վրաստան, Պարսկաստան: Բայց ավագանու մի մասը վասալներով /նույնպես Պահլավունիներից և կրտսեր Բագրատունիներից/ մնաց Հայաստանում և նրանցից էր բաղկացած «Հայոց տունը» 1045-1065թթ., իհարկե ավելի թույլ վիճակով և նեղ շրջանակներում:

1065թ. հետո աղբյուրներում «Հայոց տուն» չի հիշվում, նրա փոխարեն հանդես է գալիս Կյուրիկյանների «տերությունը», և «ամենայն տունն հայոցը» նոր բովանդակությամբ: Խոսքը տվյալ դեպքում վերաբերում է Կյուրիկյանների հետ համագործակցող ֆեոդալական տների խմբակցությանը, որոնց թվում կային նաև Պահլավունիներ:

1065թ. մինչև XIդ. վերջը Կյուրիկյան Բագրատունիները փորձում էին պահպանել հայ պետականությունը թեկուզ շատ ավելի նեղ շրջանակներում, բայց նրանց այդ բանը չհաջողվեց սելջուկների ներխուժման պատճառով: Համենայն դեպս, Անիի անկումից հետո Բագրատունյաց իշխանությունը Հայաստանում միանգամից չվերացավ, այն պահպանվեց «դրուց աշխարհում», որը ժամանակին Աշոտ Գ-ի այուզերեցության տակ էր՝ 1020թ. այդ տիրույթները չեն նշվել Տրապիզոնում կնքված պայմանագրում և 1045թ. չեն անցել Բյուզանդիային:

ԳԱԳԻԿ Բ-Ի ՓՈՐՁԸ ՎԵՐԱԴԱՌՆԱԼ ԱՆԻ /տես «Գագիկ Բ» հոդվածը «Անձնանուններ» բաժնում:

Բ. ԲԱԳՐԱՏՈՒՆՅԱՑ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԱՆԿՈՒՄԸ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԻՐԱՎԱ-ՊԵՏԱԿԱՆ ԴՈԿՏՐԻՆԱՅԻ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ

Միջնադարյան հայ պատմիչները տարբեր չափանիշներով են մեկնաբանում Բագրատունիների պետության անկումը:

XIդ. պատմագիր, դեպքերին համարյա ժամանակակից Արիստակես Լաստիվերտցին անկումը համարում է 1045թ. Անիի և «աշխարհի» զավթումը Բյուզանդիայի կողմից:

Սամվել Անեցին՝ /XIIդ./ նույնպես Անիի անկումը, բայց 1065թ. սելջուկների գրավումով:

Շատ արժեքավոր տեսակետներ ունեն XIIIդ. պատմագիրները, որոնց աղբյուրներն են XI-XIIդդ. մատենագիրները, մասամբ մեզ չհասած:

Վարդանը հաշվի է առնում Գագիկ Բ-ի ժառանգների՝ որդի Հովհաննեսի և թոռ Աշոտի կարճատև ներկայությունը Անիում, ապա նրանց մահը և եզրակացնում, որ դրանից հետո «բարձան թագակալքն Անւոյ այսու օրինակաւ» /այդ հարցում նա համամիտ է Մատթ. Ուռհայեցու հետ/:

Ստեփանոս Օրբելյանը ընդունում է, որ Անին ընկավ սելջուկների նվաճման հետևանքով, բայց Բագրատունի վերջին թագավոր համարում է Գագիկ Բ Կարսեցուն:

Կիրակոս Գանձակեցին Անին համարում է Բագրատունիների գլխավոր «գավազան», և նրա անկումով ընկավ նրանց տերությունը /«Այլ մերն դադարեաց թագաւորական գաւազանն»/, չնայած դեռ կար Կյուրիկեի տերությունը Լոռիում և մյուս Գագիկը Կարս-Վանանդում /նրա մոտ զգացվում է Ար. Լաստիվերտցու ազդեցությունը/:

Բագրատունիների պետության անկումը ամենից մանրամասն ներկայացված է Մատթեոս Ուռհայեցու մոտ /XI-XIIդդ./: Նրա պատկերացմամբ դա մի քանի փուլից բաղկացած գործընթաց է: Նախ՝ հույները տիրում են Անիին, և դրանով փլվում է Բագրատունիների «տերութիւնը»: Ապա նշում է Գագիկ Կարսեցու հեռացումը Կարսից /Կարսի փոխանակում Մամիդավի հետ/, որի հետևանքով ընկավ «Հայոց տունը»:

Երրորդ անգամ անդրադառնում է նույն հարցին, նշելով Գագիկ Բ շահնշահի մահը Կիլիկիայում 1079թ.:

Դրանով դադարում է թագավորությունը Հայոց տանից և Բագրատունիների «ազգից», եզրափակում է պատմիչը:

XI-XIIIդդ. մատենագիրների տարակարծությունները բացատրվում են մի քանի պարագաներով: Պատմիչներից յուրաքանչյուրը հիմք է ընդունում նրանցից որևէ մեկը կամ երկուսը:

Նախ՝ չնայած 1045թ. Գագիկ Բ-ն հեռացվեց Հայաստանից, այնուհանդերձ շատերը նրան համարում էին օրինական թագավոր, բայց վտարանդի վիճակում: Նրա հեռացումով Անիից, ինչպես գրում է Մատթ. Ուռհայեցին, փլուզվեց Բագրատունիների «տերութիւնը», այն է՝ վասալական կապերի համակարգը, այն կապերը, որոնց միջոցով Բագրատունի «ազգապետը» համախմբում էր վասալ իշխանների կալվածք-պետությունները Շիրակի տան հետ: Գերադասի վտարումով կապերը կտրվեցին և «տերութիւնը», այսինքն պետությունը «կատարեց»՝ ընկավ: Ուրեմն Բագրատունյաց թագավորության անկումը դաշնակցային կապերի փլուզումն է, բայց այն անցել է երկու կամ երեք փուլ:

1045-ին փլուզվեց «գլխավոր գավազանի» կապերի համակարգը, բայց ոչ լրիվ, մնաց նրա հետնորդի՝ Կարսի Բագրատունիների դաշնակցությունը

/«Հայոց տուն» ավելի նեղ իմաստով/: 1065թ. ընկավ նաև այդ նեղ դաշնակցությունը, մնաց Լոռվա Կյուրիկյանների «տերութիւնը», բայց նա էլ ընկավ 1113 թվականին:

Այսպիսով, Բագրատունյաց պետականության անկումը դա Բագրատունիների դեկավարած դաշնակցային կապերի խզումն է, իշխանությունների համակարգի աստիճանական կազմալուծումը:

Մյուս կողմից Մատթեոս Ուռհայեցին պետության անկումը համարում է թագավորի՝ Գագիկ Բ-ի մահը: Պատճառը կայանում է նրանում, որ միջնադարյան պետությունը, թագավորական իշխանությունը անհատականացվում, նույնացվում էր թագավորի անձի հետ, քանի որ պետության միասնության կրողը, նրա կապող օղակը թագավորն էր: Այդ պատճառով էլ Գագիկի մահը հավասար էր այդ միասնության կորստի: Չկար այն անձը՝ պարագլուխը, որը միավորում էր իշխաններին մեկ կազմավորման մեջ:

Արիստակես Լաստիվերտցու և Մատթեոս Ուռհայեցու վկայությունները չեն հակասում միմյանց, ընդհակառակը, նրանք լրացնում են մեկը մյուսին. Լաստիվերտցին նշում է քաղաքական ակտը, արտաքին բարվածը, իսկ Ուռհայեցին նրա ներքին կապերի, կառուցվածքի փլուզումը:

Ժ. «ՆՈՐ ՊԱՀԼԱՎՈՒՆԻՆԵՐ»


X-XIդդ. Հայաստանի քաղաքական և մշակութային կյանքում հսկայական դեր են կատարել Պահլավունիների հին հայկական տոհմի ներկայացուցիչները:

Պահլավունիները եկել են Հայաստան հարևան Պարթևստանից 226թ., Սասանյանների կողմից նրանց պետության տապալումից հետո, IV-Vդդ. մեծ դիրք են ունեցել Արշակունյաց Հայաստանում, այդ տոհմից էին Գրիգոր Լուսավորիչը, Ներսես Ա Մեծ, Սահակ Պարթև կաթողիկոսները: Բայց Արշակունյաց թագավորության անկումից հետո նրանք հեռացել են ասպարեզից, գոյատևել է նրանց տոհմակից ճյուղը՝ Կամսարականների տունը:

Բագրևանդի ճակատամարտից հետո թուլանում են և որոշ ժամանակով դադարում երկրի կյանքում որևէ դեր կատարել նաև Կամսարականները:

Սակայն նրանց տոհմը իսպառ չի վերանում, Xդ. երկրորդ կեսից նորից Պահլավունիներ են իջնում ասպարեզ որպես Բագրատունյաց թագավորության երկրորդ նշանավոր և ազդեցիկ տոհմ, թագավորության հուսալի հենարան:

Պատմագիտության մեջ X-XIդդ. Պահլավունիներին, ի տարբերություն Արշակունյաց շրջանի նրանց տոհմակիցների, անվանում են «Նոր» կամ «Երկրորդ» Պահլավունիներ: Բայց «Նորերը» միշտ շեշտում են, որ ծագում են «ի ցեղեն Պահլավունի եւ ի զարմից սրբոյն Գրիգորի Հայոց Լուսավորչին»: Սրանց առաջին ներկայացուցիչն է Արտակ Կամսարյանը, որի որդին էր Ապուղամրը, թոռը՝ Համզա Գրիգորը: Մինչև XIդ. սկիզբը «Նոր Պահլավունիների» մայր տոհմաճյուղը հետևյալ կառույցն ուներ.



Xդ. երկրորդ կեսին Պահլավունիները արդեն Բագրատունիների վասալ իշխանների վերնախավի՝ «գլխավոր ազատների» առաջատար խմբակցությունն էին կազմում: Նրանց հանճարարվում էին ամենակարևոր արքունի պաշտոնները՝ սպարապետի, իշխանաց իշխանի, իսկ 1021-ից /Վասպուրականի թագավորության անկումից հետո/ նաև մարզպանի: Պահլավունիները պաշտպանեցին Բագրատունիների գահակալական իրավունքը 1042-1045թթ. քաղաքական եզնիժամի տարիներին, մեծապես նպաստեցին Գագիկ Ա-ի որդիների միջև համաձայնություն կնքելուն և երկրում խաղաղություն հաստատվելուն: Նրանք էին գլխավորում հայրենասեր խմբավորումը արքունիքում, երբ վճռվում էր Անիի /պետության/ ճակատագիրը բյուզանդական կայսրերի հավակնությունների տարիներին, վճռականորեն դեմ էին Գագիկ Բ-ի Կոստանդնուպոլիս մեկնելուն:

ՎԱՀՐԱՄ ԻՇԽԱՆԱՑ ԻՇԽԱՆ, ՍՊԱՐԱՊԵՏ, - քաջ և տաղանդավոր զորավար, մեծ հայրենասեր, Բագրատունիների նվիրյալ գործիչ: Մասնակցել է Մրվանյանների դեմ մղած կռիվներին, 1020թ. եզնիժամի ժամանակ մեծ ջանքեր է գործադրել հաշտեցնելու Գագիկ Ա-ի որդիներին, 1042թ. Գրիգոր Մագիստրոսի և մյուս Պահլավունի իշխանների հետ պաշտպանել է օրինական ժառանգ Գագիկի իրավունքները: Պատմիչ Արիստակես Լաստիվերտցու հաղորդմամբ Պահլավունիները թույլ չտվեցին, որ Վեստ Սարգիսը գրավի գահը՝ որ «Վահրամ այր հզօր և անուանի և բարեպաշտութեամբ յոյժ վեհ, ... հանդերձ իւրովք ազգակցօք, որդւովք և եղբօրորդւովք իբրև երեսուն ազատօք ...կոչեալ առինքեանս զԳագիկ որդի Աշոտոյ, թագաւորեցուցին ի վերայ իւրեանց»: 1042-1045թթ. հայոց բանակի սպարապետն էր, նրա հրամանատարությամբ հայերը չորս անգամ պարտության մատնեցին Անին պաշարող բյուզանդական զորքը: Թագավորության անկումից հետո Վահրամը մնացել է Անիում և ստիպված է եղել հայկական զորքով մասնակցել բյուզանդացիների կռիվներին Դվինի Շադդադյան ամիրայի դեմ, զոհվել է 1045թ. Դվինի պաշարման ժամանակ:

ՎԱՍԱԿ /ՀՈՒԼՈՒՄ/ ՍՊԱՐԱՊԵՏ ՀԱՅՈՑ, Վահրամի եղբայր - սպարապետ էր Գագիկ Ա շահնշահի օրոք, քաջ զորավար: Կոչվել է նաև «Բջնեցի», որովհետև կառուցել է Բջնի ամրոցը, որն իր իշխանանիստն էր: 1021թ. ծանր պարտության է մատնել Այրարատ ներխուժած դելմիկներին, բայց ճակատամարտից հետո սպանվել է պատահական դիպվածով, ննջելու ժամանակ:

ԳՐԻԳՈՐ ՄԱԳԻՍՏՐՈՍ - քաղաքական խոշոր գործիչ, գիտնական, մատենագիր: Արքունիքում Բագրատունիների շահերի պաշտպան, Վահրամ սպարապետի հետ թագավորեցրել է Գագիկ Բ-ին և պաշտպանել նրա իրավունքները Վեստ Սարգսի հավակնություններից: Պատմագիտության մեջ մինչև վերջերս սխալ է մեկնաբանվել նրա դիրքորոշումը 1045թ. Գագիկի Կոստանդնուպոլիս մեկնելու հարցում:

Հիմնվելով պատմիչ Սամվել Անեցու շփոթ հաղորդման վրա՝ Լեոն Գրիգոր Մագիստրոսին համարել է բյուզանդամետ գործիչ, այնինչ իրականում Գրիգորը մինչև վերջ պաշտպանել է Գագիկին և դեմ է եղել նրա մեկնելուն Բյուզանդիա: Անիի անկումից հետո իր տիրույթները հանձնել է կայսրությանը և Մոնոմախից նշանակվել Միջագետք բանակաթեմի կառավարիչ /որի կազմում էր նաև Վասպուրականը/: 1050-ական թթ. ճնշել է բոնդրակյան շարժումը:

ԱՊԼԽԱՐԻԲ ՄԱՐԶՊԱՆ. - արքունիքի բարձրաստիճյան պաշտոնյա, 1029-1040թթ. Հայոց մարզպան: 1035թ. Միքայել կայսրին հանձնել է Հովհաննես-Սմբատ թագավորի հրովարտակը և մեծ ջանքերով Կոստանդնուպոլսից բերել է ս.Խաչի մասը և կանգնեցրել որպես լուսյսի նշան: 1036թ. Անիում կառուցել է ս.Փրկչի եկեղեցին:

Գրկ. Գրիգոր Մագիստրոսի Թղթերը, ի լույս ընծայեց Կ. Կոստանյանց, Ալեքսանդրապոլ, 1910: *Ն. Ակինյան*, Պահլավունի և Լամբրոնի Հեթմեանց ազգաբանությունը: Ա. Պահլավունիք, «ՀԱ», 1954, N1-6: *Լեո*, Հայոց պատմություն, երկեր, հ. 2: *Ռ. Մաթևոսյան*, Բագրատունյաց Հայաստանի պետական կառուցվածքը..., էջ 185-194: *Լ. Խաչերյան*, Գրիգոր Մագիստրոս, Լոս Անջելես :

ԲԱԺԻՆ VI

ԲԱԳՐԱՏՈՒՆԻՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՑՆԵՐ ԵՎ ՋԻՆԱՆՇԱՆՆԵՐ

ա. ԱՄՐՈՑՆԵՐ ԵՎ ՎԱՆՔԵՐ

Բագրատունիների ամրոցները պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի՝ տոհմական հին տիրույթների ամրությունները, որոնք կառուցվել են անտիկ շրջանում և վաղ միջնադարում և այն ամրոցները, որոնք կառուցվել են Բագրատունյաց Հայաստանի շրջանում և պաշտպանել են մայրաքաղաքը, պետության սահմանները, կազմելով պաշտպանական տարբեր ֆունկցիաներ ունեցող կառույցների համակարգ:

Ամրոցներ

Անտիկ շրջան

ՍՄԲԱՏԱԲԵՐԴ /Բաբերդ/. - Սպեր գավառում, պատկանում էր Բագրատունիներին Արտաշեսյան շրջանից, երբ Սպերը նրանց «ձեռական» տիրույթն էր և մնաց նրանց ձեռքում մինչև XIդ., սելջուկների նվաճումը:

Վաղ միջնադար

ԴԱՐՈՅՆՔ. - IVդ. պատկանում էր Արշակունիներին, իսկ առնվազն VIIդ. սկզբից արդեն Բագրատունիների ամրոցն էր և տոհմական դամբարանը:

ԱՆԳՂ ԲԵՐԴ /Ծաղկոտն գավառ/- Հիշատակվում է Vդ., VIդ. պատկանում էր Բագրատունիներին:

ՏԵԿՈՐԻ և ՄՐԵՆԻ բերդեր, անցան Բագրատունիներին Կամսարականների անկումից հետո:

IX–XIդդ.

ԱՐՏԱԳԵՐՍ /Կապույտ/ ամրոց. - Վաղ միջնադարում պատկանում էր Կամսարականներին, IXդ. տիրացել են Բագրատունիները, Xդ. սկզբին Սմբատ Ա թագավորի ռազմակայաններից էր և կոչվում էր Կապույտ:

ԿԱՂԶՎԱՆԻ բերդ, հիշատակվում է IXդ-ից, Աշոտ Ա-ի եղբայր Աբաս սպարապետի ամրոցն էր:

ԳԵՂԻ. - Բագրատունիների ռազմակայան Խոսրովի անտառում /հին Մազազ գավառ/: Այստեղ 922թ. Գևորգ Մարզպետունի զորավարը պարտության մատնեց Բեշիր ամիրային:

ԿԱՊՈՒՏՈՒՆ բերդ, Բասեն գավառի Արջովիտ վայրում, հիշատակվում է XIդ.:

ՏԻԳՆԻՍ. - Շիրակում, Արգինայի դիմաց, կառուցվել է մինչև Xդ., իսկ Բագրատունիների օրոք պաշտպանում էր Անիի մատույցները և մայրաքաղաքի պաշտպանական գոտու կարևոր ռազմակետ էր:

ՄԱՂԱՍԲԵՐԴ, ըստ ավանդության կառուցվել է VIIդ., X-XIդդ. Անիի պաշտպանական համակարգի կարևոր ամրություններից էր:

ԹԱԼԻՆ. - Թալինի բնակավայրը հիշվում է շատ վաղ շրջանից, բայց ամրոցը հավանաբար VIIդ. կառույց է, IXդ. անցնում է Բագրատունիներին, XIդ. պատկանում էր Աշոտ Դ-ին:

ԼՈՌԻ բերդ. - կառուցել է Լոռվա թագավոր Դավիթը X-XIդդ. սահմանագլխին:

ԿԱՅԱՆ. - Բագրատունիների կարևոր ռազմավարական ամրոց Աղստև գետի հովտում, հիշվում է X դ. սկզբից /Հովհ. Դրասխանակերտցի/: Կառուցել է Աշոտ Բ երկաթը: Կայանը մայր-կառույցն է Աղստևի ձախ ափին, ունեցել է մի քանի օժանդակ դիտակետեր գետի ձախ և աջ ափերին:

Ամրոցի միջնաբերդը կառուցվել է բարձրադիր ժայռի հարթ կատարին, իսկ լանջերին ունեցել է պաշտպանական շինություններ: Բացի ռազմական ֆունկցիաներից օգտագործվել է նաև որպես ապաստանավայր թշնամի բանակի ներխուժման ժամանակ, ինչպես իշխանների, այնպես էլ գավառի բնակչության համար:

Կայանը այժմ կոչվում է Աղջկաբերդ, իսկ նրա գլխավոր աջափնյա դիտակետ-ամրոցը՝ Մանթաշ, /նաև Աշոտ Երկաթի բերդ, համապատասխանում է միջնադարյան Կայծոնին/: 966-ից՝ Կյուրիկյանների ամրոց:

ՏԱՎՈՒՇ. - մինչև IXդ. տեղական իշխանի ամրոցն էր, Xդ. սկզբից պատկանել է Բագրատունիներին, նրանց կուսակալի նստավայր: Xդ. երկրորդ կեսից Կյուրիկյանների ամրոց:

Կյուրիկյան-Բագրատունիների ամրոցներից են նաև Մածնաբերդը, Նորբերդը /ներկայումս նրանցտեղը անհայտ է/, Խալինճքարը /ներկայիս Նոյեմբերյան քաղաքատիպ ավանի մոտ/, Խորակերտը, Բազկերտը /Լոռիում/ և այլ ամրություններ:

Բագրատունիների ամրոցների հետ երկրի ռազմապաշտպանական համակարգի մեջ էին նաև վասալ իշխանությունների ամրությունները, առաջին հերթին Պահլավունիների: Վերջիններիի գլխավոր ամրոցներն էին Բջնին ու Ամբերդը:

Գրկ. *Մ. Հովհաննիսյան*, Հայաստանի բերդերը, Վնտ., 1970: *Ռ. Մաթևոսյան*, Կայան ամրոցը և նրա տեղորոշման խնդիրը, «Հուշարձան» տարեգիրք, Ք, 1993: Նույնի՝ Գեղաձորի միջնադարյան ամրոցը, «Գիտություն և տեխնիկա», 1990, N10:

ՎԱՆՔԵՐ - Պետականության վերականգնման շնորհիվ նախադրյալներ ստեղծվեցին հոգևոր և նյութական մշակույթի զարգացման համար, բարձր մակարդակի հասավ գիտությունը: Միջնադարում մշակույթի զարգացումը տեղի է ունենում գլխավորապես հոգևոր հաստատություններում, վանքերը, հանդիսանալով տվյալ իշխանության հոգևոր-վարչական /թեմական/ կենտ-

րոնցներ, միաժամանակ գիտության և արվեստի առանձին ճյուղերի /օր.՝ մանրանկարչության/ օջախներ էին:

Հայաստանում վանքաշինությունը մեծ տարածում է գտնում Xդ. 30-ական թթ., երբ սկսվում է խաղաղ շրջանը /Աբաս թագավորի գահակալումից/: Ինչպես ամբողջ երկրում, այնպես էլ Բագրատունյաց ոստանում, կառուցվում են նոր վանքեր և եկեղեցիներ, գործունեությունը վերսկսում հներից շատերը:

Բագրատունիների առաջին վանքը այս շրջանում հիմնվում է Սևանա կղզում 874թ., այստեղ Աշոտ իշխանաց իշխանի [illegible] Մարիամը կառուցում է երկու եկեղեցի՝ ս.Աստվածածին /մեծը/ և Առաքելոց /փոքրը/: Մեկ-երկու տասնամյակ անց Մարիամը կառուցում է Շողագա եկեղեցին /Գեղարքունիք/, իսկ 903թ. իր եղբայր սպարապետ Շապուհի հետ միասին հիմնում է Վանեվանի վանքը /նույնպես Գեղարքունիքում/:

Սևանի վանքը դարձավ եկեղեցական գործիչներ պատրաստելու կենտրոններից մեկը, այն վայելում էր Բագրատունիների հովանավորությունը:

Այստեղի եկեղեցականները հաճախ բարձր հոգևոր պաշտոններ էին գրավում Բագրատունիների արքունիքում, իսկ ոմանք զբաղեցրել են կաթողիկոսական աթոռը / Մաշտոց՝ 897-898, նրա աշակերտ Հովհաննես Դրասխանակերտցին՝ 898-929: Ստեփանոս Սևանցին՝ 969-972, Սարգիս Ա. Սևանցին՝ 992-1019/:

Նոր վանքեր են հիմնվում տոհմական ոստանի բոլոր մարզերում: Առաջինները էր Կամրջաձորի վանքը Արշարունիքում, հետագայում նշանավոր հոգևոր-մշակութային կենտրոն, այստեղ գործել է խոշոր գիտնական Սամվել Կամրջաձորեցին /Xդ./, նրա մասին պատմիչ Ասողիկը գրում է. "Բազմաշնորհն ի գիտութիւնս գրոց սրբոց և յերգս երաժշտութեանց":

Շիրակում հիմնվում են Հոռոմոսի, Դպրեվանքի և այլ վանքեր, նշված երկուսը նույնպես հոգևոր-գիտական կենտրոններ էին:

Xդ. վերսկսում է գործունեությունը Բագրատունիներին անցած Մրենի վանքը /նախկինում Կամսարականների վանք/:

Աշոտ Գ-ի օրոք հիմնվում են Լոռիում նոր ստեղծվելիք փոխարքայության թեմական կենտրոնները՝ սկզբից Սանահնի վանքը /առաջին եկեղեցին ս.Աստվածածինը՝ Աբաս թագավորի օրոք/, ապա Հաղարծին: Երկուսն էլ շուտով հայտնի են դառնում որպես կրոնական և գիտական հաստատություններ:

Այստեղ ձևավորվում է Լոռվա կրոնա-արվեստագիտական դպրոցը, որը սերտ կապ ուներ Անի-Շիրակի վանական կենտրոնների հետ: Սանահինում որոշ ժամանակ գործել է ժամանակի խոշորագույն գիտնական Գրիգոր Մագիստրոսը:

XIդ. Անիի մոտակայքում հիմնվում է խոշոր վանական համալիր՝ Խծկոնքը /կառուցող՝ հոգաբարձու Վեստ Սարգիսը/, վանքը այժմ խիստ վնասված վիճակում է: Բազմաթիվ եկեղեցիներ են կառուցվում մայրաքաղաքներում՝

Երազգավորսում, Կարսում, Անիում, իշխանանիստերում /Աշոտ Շապուհյանը՝ Կողբում/:

Արշարունիքում XIդ. կեսերին խոշոր գիտամշակութային կենտրոն էր Սանդղավանքը /Կաղզվանի մոտ/, որտեղ գրվել են ձեռագրեր, վանքը ունեցել է բարձրարվեստ նկարչական դպրոց: 1053թ. գրված ձեռագիրը, «Բեգյունց» և «Մողնու» ավետարան անուններով հայտնի ձեռագրերը ունեն նոխ մանրանկար-պատկերազարդեր: Նրանցից երկրորդը նկարիչ Հովհաննեսը ավարտել է Հաղարտում, ուր տեղափոխվել է 1065թ. հետո:

X-XIդդ. վանքեր են հիմնվել նաև Աղստևի հովտում, նրանք խիստ տուժել, ավերվել են սելջուկների ավերածությունների պատճառով: Գագիկ Ա-ի օրոք հիմնվել է Հաղարծնի վանքը, գլխավոր ս.Աստվածածին եկեղեցին ունի նրա քանդակ-զինանշանը: Եկեղեցու շինարարությունը ավարտվել է 1071թ. /վերակառուցվել 1281/: Xդ. հիմնվել է նաև Մակարավանքը, բայց ավերվել, XIIIդ. սկզբին այն վերականգնել և կառուցել է Իվանե Զաքարյանը:

XII-XIIIդդ. Տավուշ-Գարդմանում գործում էին Կյուրիկյանների փոքր իշխանությունների հոգևոր կենտրոնները՝ Նոր Վարագավանքն ու Խորանաշատը:

բ. ԶԻՆԱՆՇԱՆՆԵՐ

Զինանշանը գեղարվեստական հորինվածք ունեցող կամ առանձին պատկերաքանդակով խորհրդանիշ է, որը ներկայացնում է տվյալ երկիրը, քաղաքը, պետությունը, տոհմը, անհատը և այլն: Նրանում արտացոլվում են խորհրդանշվող օբյեկտի կամ սուբյեկտի անցյալը, ներկան, ապագայի իղձը, տոհմի ավանդապատումը, այլ կերպ ասած՝ գաղափարը պատմական տեսանկյունով՝ անցյալ- ներկա, հաճախ նաև հետանկարը /դոկտրինան/: Կայսրությունների կամ պետությունների նշաններում հաճախ արտացոլվում է նաև նրանց կառուցվածքը:

Հայաստանի բոլոր ազնվական տոհմերը նույնպես ունեցել են զինանշաններ, որոնք ունեն շատ խորը պատմական արմատներ և ավանդույթներ:

Տվյալներ կան, որ Բագրատունիների տոհմական զինանշանը ձևավորվել է ուրարտական շրջանում, հնագիտական պեղումներից հայտնաբերվել են ուրարտական կիրառական արվեստի նմուշներ, Խալդիի կնոջ Բագբարտուի պատկերներով՝ արծաթյա մեդալյոններ /Թեյշեբաինի/, ոսկե մեդալյոն / Թուիրրախ-Կալե/, բրոնզե արձանիկ /Վան/ և այլ նմուշներ: Նրանցում պատկերված է աստվածուհին, նստած գահի վրա /նկ. 1,2 /, ձեռքերը պարզած, կրծքին կախված է առյուծի պատկեր /Խալդ աստվածության խորհրդանիշ/: Նույն հորինվածքն ունի հելլենիստական քարե կնիքի պատկերը, պեղված Գառնիում՝ գահի վրա նստած կին, առյուծի գլխով, ձեռքերը պարզած, կողքից՝ կենաց ծառ և գավազան, գլխավերևում գունդ /նկ. 3/: Կնիքի հորինված-

քի բաղադրամասերը համապատասխանում են Բագբարտուի մեդալյոնների բաղադրամասերին, ընդ որում ուրարտական գլխավոր խորհրդանիշերից այստեղ առկա է նաև կենաց ծառը: Բագբարտուին հնարավոր է համարել Բագրատունի տոհմական անվանադիր, իսկ նշված գտածոների հորինվածքային եզակիությունը պարզորոշ է:

***

Բագրատունիների նախարարական-տոհմական զինանշանը, անկասկած, ձևավորվել է վաղ միջնադարում, բայց մեզ այսօր հայտնի ամենավաղ օրինակը 862թվականին գրված Ավետարանի մանրանկարն է, ձեռագիրը ժամանակին պատկանել է Գագիկ Արծրունի իշխանի /ապա՝ Վասպուրականի թագավոր/ կնոջը՝ Մլքեին: Սակայն Ավետարանը սկզբնապես պատկանել է Բագրատունիներին, ապա անցել Արծրունիներին, հավանաբար ազգակցական-խնամիական կապերի միջոցով: Գիտական գրականության մեջ այն կոչվում է «Մլքե թագուհու Ավետարան» պայմանական անունով:

Մանրանկարում /տես շապիկի առաջին երեսը/ պատկերված են զույգ առյուծներ /կամ հովազներ/ /«Մենող-զույգ»/, երանց միջև կենաց ծառ, ծառի ներքևի մասում օձեր են: Առյուծների /հովազների/ գլխավերևում՝ գնդեր:

Այս հորինվածքը ակունք-արմատներով կապված է Բագբարտու աստվածության խորհրդանշանի հետ, ունի նույն բաղադրիչները, բայց ձևափոխվել է հորինվածքի կառույցը: Ձևափոխումը կատարվել է Բագրատունյաց տոհմի ծագման ավանդության համապատասխան, առաջացել է վաղ միջնադարում և կապում է տոհմի ծագումնաբանությունը Դավիթ և Դանիել մարգարեների հետ:

Դրան համապատասխան ձևավորվել է նաև տոհմի զինանշանը, հարմարեցված այն ժամանակներում լայն տարածում գտած Դանիելի տեսիլքին: Տեսիլքի այուժեով քանդակապատկերը տեղադրված է Աղց գյուղի /Աշտարակի մոտ/ Արշակունիների արքայական դամբարանում: Մինչև IX դ. ձևավորվել է զինանշանի մայրօրինակը, որը պատկերված է 862թ. մանրանկարում: Այն ունի տարբերակներ, /կենաց ծառի փոխարեն՝ ռոմբ, ուղղանկյուն/: Զինանշանի պատկերը IX-XI դդ. լայն տարածում է գտել կիրառական արվեստում, քանդակագործության մեջ, XIդ. կեսերիԱրշարունիքի Սանդղակավանքում տաղանդավոր նկարիչ և գրիչ Հովհաննեսը, կատարելով արքայական պատվերը, ձևավորել է Ավետարան, որի մանրանկարների մեծ մասը հերալդիկ նշաններ են և կազմում են մի ամբողջ շարք /տես գունավոր պատկեր /: Նկարներից մեկում զինանշանները դասավորված են ֆեոդալական հիերարխիկ սկզբունքով՝ վերևում Բագրատունիների նշանը, երանից ներքև՝ վասալ իշխանների /նկ53/:

Քանդակ՝ զույգ առյուծներով ունի Թալինի ամրոցի գլխավոր մուտքը /նկ. 40/:

Բագրատունիների պետական խորհրդանիշ նշանի օրինակ է Անիի գլխավոր դարպասի վրա քանդակված պատկերաքանդակը՝ հովազ շրջանակի մեջ, որի վրա դրված է խաչ /նկ. 36/: Սա դաշնապետության զինանշան է:

Կան նաև անհատական զինանշանների օրինակներ՝ առյուծներ, որոնք Բագրատունի տարբեր գահակալների նշաններն են՝ Գագիկ Ա-ի /Անի, Հաղարծին/, Կարսի թագավոր Գագիկ Բ-ի /մանրանկար Կարսի ավետարանից/, Բագրատունի շահնշաններից մեկի /Զորագետ գետի կամուրջ, Xդ. երկրորդ կես/ /նկ. 39, 41/ և այլն:

Բագրատունի-Կյուրիկյանների հերալդիկ նշանները պահպանվել են ավելի ուշ շրջանի հուշարձաններում՝ Սանահնի Ամենափրկիչ եկեղեցու գավթի այուներից մեկը /1181-1184թթ./ խոյակի վրա ունի զույգ ցուլերի և զույգ հովազների գլուխների քանդակներ:

Հովազը, ինչպես երևում է մյուս օրինակներից, Կյուրիկյանների զինանշանն էր, ընդ որում նրանց չորս ճյուղերից յուրաքանչյուրն ուներ նշանի տարբերակը /կատվաընտանիքի գիշատիչ՝ հովազ, լուսան և այլն/: Նրանք տեղադրված են Դեբեդ գետի վրա կառուցած միջնադարյան կամրջում: Կամուրջը XIIդ. 70-ական թթ. վերջում կառուցել է Զաքարե ամիրսպասալարի քույր Վանենին, որը Մածնաբերդի Աբաս Կյուրիկյանի կինն էր և կառուցումը նվիրել է իր վաղամեռիկ ամուսնու հիշատակին, ինչպես նաև եղբոր և ծնողների բարեկեցության համար: Միաժամանակ կամուրջը իր չորս քանդակներով հարգանքի տուրք է Կյուրիկյան իշխանավորներին /Լոռվա, Մածնաբերդի, Տավուշի և Նոր բերդի/: Այդ տեսանկյունից Սանահնի կամուրջը պատմաճարտարապետական եզակի կառույց է և ունի պատմագիտական մեծ արժեք:

Կյուրիկյանների զինանշանների օրինակներ կան նաև նրանց իշխանությունների հոգևոր կենտրոններում՝ Նոր Վարագավանքի ս.Աստվածածին և Խորանաշատի գավթի քանդակներում /նկ. 45-46/:

Զինանշանների օրինակներ կան նաև Կարսի Մայր տաճարում, Սանահնի Աստվածածին եկեղեցում /Xդ./, առաջինում կա Բագրատունիների նշան, բայց հիմնականում երկուսում էլ եկեղեցիների կառուցմանը մասնակից Բագրատունիների վասալ իշխանների նշաններն են:

Բագրատունյաց հերալդիայի դարավոր աստիճանական զարգացումը տես 47-47ա նկարներում:

Գրկ. Վ. *Հացունի*, Հայ դրոշներր պատմության մեջ, Վենետիկ, 1930, *Ռ. Մաթևոսյան*, Հայկական զինանշաններ, I, եր., 1994:

ԲԱԺԻՆ VII

ԲԱԳՐԱՏՈՒՆՅԱՑ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՀԱՐԵՎԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

IX-XIդդ. Հայաստանի տարածքում գոյություն ունեին մի քանի արաբական իշխանություններ և Տայքի Բագրատունյաց իշխանությունը:

Արաբական ամիրայությունները Հայաստանի հարավ-արևմտյան շրջաններում առաջացել էին Բուղայի արշավանքից հետո /851-852թթ./, առաջինը Ապահունիքում հիմնվեց Սուլայմ կամ կայսիկ ցեղի ամիրայությունը: Կայսիկները Հայաստան էին գաղթել VIIIդ. վերջում, իսկ 860-ական թվականներին հիմնեցին իշխանություն Խլաթ և Մանազկերտ կենտրոններով: Համարյա նույն ժամանակ հիմնվեց ութմանիկ ցեղի ամիրայությունը Բերկրի կենտրոնով, Կարինի ամիրայությունը Բարձր Հայքում, Շայբանիներինը՝ Աղձնիքում, ապա Հերի և Սալմաստի ոչ մեծ ամիրայությունները:

Հայոց թագավորության հիմնումով այս ամիրայությունները դարձան ենթակա Աշոտ Ա-ին և պարտավոր էին հարկ վճարել և զորք տրամադրել:

Չնայած ամիրայությունները, տեղի տալով ուժին, հպատակվում էին Բագրատունի թագավորներին, նրանք ամեն կերպ ջանում էին դուրս գալ հպատակությունից:

Սմբատ Ա-ի ժամանակ /902թ./ կայսիկները ապստամբեցին, բայց ծանր պարտություն կրեցին և նորից ենթարկվեցին Բագրատունիներին:

Xդ. սկզբին Արաքսի հովտում առաջացավ Գողթնի ամիրայությունը, Սմբատ Ա-ի զոհվելուց հետո Դվինը գրավեցին Ատրպատականի ամիրաները /Յուսուփ/, նույն Յուսուփը ստեղծեց Գողթնի ամիրայությունը՝ Դվինը Ատրպատականի հետ կապելու նպատակով: Չնայած Աբաս թագավորը ազատագրեց Դվինը, 941-ին այն անցավ Ատրպատականի Դայսամ իբն Իբրահիմին:

Xդ. կեսերին Հայաստանի հարավ-արևմտյան շրջանները գտնվում էին աճորոշ վիճակում, նրանք կտրվել էին Հայոց թագավորությունից, Բյուզանդիան ձգտում էր զավթել այդ շրջանները, իսկ տեղական մահմեդական ամիրաները ամեն կերպ աշխատում էին պահել իրենց ձեռքում: Սակայն Կարինի ամիրայության անկումից հետո /949/ Բյուզանդիայի առջև ճանապարհ բացվեց Հայաստանի կենտրոնական շրջանները խուժելու համար:

***

951թ. Ատրպատականից եկած քուրդ Մուհամմադ իբն Շադդադը զավթեց Դվինը, իսկ 970թ. նրա ազգակիցները զավթեցին Գանձակը: 953թ. Աշոտ Գ-ն

փորձեց վերադարձնել Դվինը, բայց հաջողություն չունեցավ, հաջորդ տարին Դվինը գրավեցին Ատրպատականի քուրդ Սալաթյանները, մոտ չորս տասնամյակ անց նրանից խլեց Գողթնի ամիրան:

Գողթնի ամիրայությունը վերջին արաբական իշխանությունն էր Հայաստանում՝ Xդ. սկզբին ութմանիկների ամիրայությունը միացվեց կայսիկներին, սակայն վերջինը վերացավ Xդ. երկրորդ կեսին:

Դվինը ետ վերադարձնելու նոր, բայց անհաջող փորձ արեց Սմբատ Բ-ն, դա հաջողվեց Գագիկ Ա-ին, որը տիրացավ քաղաքին, ենթարկեց Գողթնի ամիրայությունը: Դվինում կառավարիչ նշանակվեց Դավիթ Դվինեցի անունով մեկը, որը ավելի ուշ խնամիացավ Գագիկ Բ-ի հետ:

Բագրատունիների երկարատև պայքարը Դվինի համար /Սմբատ Ա-ից մինչև Գագիկ Ա/ արտացոլում է գտել հայ մատենագրության մեջ՝ Մովսես Խորենացուն վերագրվում է գուշակում, որ կգա ժամանակ, և «Բագրատունիքդ թագաւորէք ի Դուին»:

Գանձակում հաստատված Շադդադյանները զավթեցին Փառիսոսի թագավորության մի մասը, իսկ 1003թ. այդ թագավորությունը բաժանվեց Գագիկ Ա-ի և Փատլուն ամիրայի միջև: Հովհաննես-Սմբատն և Աշոտ Դ-ի գահակալական պայքարի ժամանակ Շադդադյան Աբու-լ-Ասվարը /Ապուսուար/ նորից զավթեց Դվինը, Բագրատունիները ստիպված եղան շարունակել պայքարը քաղաքի համար: 1040թ. նույն Ասվարը ներխուժեց Լոռվա թագավորությունը, բայց պարտվեց Դավիթ Անհողինից: Նրա թշնամությունը Բագրատունիների դեմ օգտագործեց կայսր Մոնոմախը, Գագիկ Բ-ին թիկունքից հարվածելու համար՝ նրա դրդմամբ Ասվարը 1045թ., բյուզանդացիների հարձակումների ժամանակ, գրավեց մի քանի հայկական ամրոցներ: Բայց Անիի անկումից հետո բյուզանդացիները փորձեցին գրավել նաև Դվինը, սակայն չկարողացան, իսկ մարտերից մեկում զոհվեց հայ սպարապետ Վահրամ Պահլավունին:

Արաբական ամիրայությունները Հայաստանում լարված վիճակ էին ստեղծում հայ պետական կազմավորումների /Արծրունյաց, Բագրատունյաց, Սյունիք-Արցախի/ իշխանությունների և թագավորությունների համար: Նրանք մշտապես ջանում էին խզել վասալական կապը Բագրատունի թագավորներից և դաշնակցել Հայաստան ներխուժած նվաճողների հետ, պայքարը նրանց դեմ պահանջում էր ուժերի մեծ լարում և զոհություններ:

Ամիրայություններն ունեին առանձնահատուկ կողմ՝ նրանց ամիրաները կենտրոնացած էին քաղաքներում, իսկ գավառներում բնակչությունը զուտ հայկական էր:

Գրկ. *Ա. Տեր-Ղևոնդյան*, Արաբական ամիրայությունները Բագրատունյաց Հայաստանում, Եր., 1965: Հայ ժողովրդի պատմություն, հ. 3, էջ 58-69:

Բագրատունյաց թագավորությունը Կարսի թագավորության տարածքով բացի Կարին բանակաթեմից հյուսիս-արևմուտքից սահմանակից էր Տայքի Բագրատունիների իշխանությանը:

Տայքի իշխանություն /կյուրապաղատություն/. - Առաջացել է Xդ. 30-ական թվականներին: Հայաստանի հյուսիս-արևմտյան Տայք նահանգը վաղ միջնադարում՝ III-VIIIդդ. Մամիկոնյանների ժառանգական տիրույթն էր, բայց 774-775թթ. ապստամբության պարտությունից հետո նրանք ենթարկվեցին խիստ հալածանքների արաբական իշխանությունների կողմից, տոհմի վերնախավը ապաստան գտավ Բյուզանդիայում, ոմանք անցան Վրաստան: Սակայն մի մասը մնաց տոհմական ոստանում, նրանց թվում էին Թոռնիկյանները, Մամիկոնյանների մյուս ճյուղը՝ Խաղբակյանները Զաքարյան Հայաստանի /XIIIդ./ ճզոր իշխանություններից էր:

IXդ. սկզբին Տայքում Աշոտ Մսակերը կառուցեց Կալմախ ամրոցը և այնտեղ բնակեցրեց իր ընտանիքը: Մսակերի օգնությամբ Տայք տեղափոխվեցին Գնունիները, որոնք հալածվում էին արաբների կողմից:

Այնուհետև Տայքում անորոշ վիճակ էր, Տայքի հյուսիսային շրջանները միացված էին Վրաց թագավորությանը, որի հետ կյուրապաղատության սահմանը անցնում էր Բանակ-Օլքի գետերով: Իսկ Xդ. 30-ական թթ. այստեղ հիմնվեց նոր ֆեոդալական կազմավորում վրաց Բագրատունիների հյուղերից մեկի իշխանության ներքո: Այն կարճատև կյանք ունեցավ, 1000թ. նրա տարածքը միացվեց Բյուզանդիային:

Պատմագիտական գրականության մեջ սույն իշխանությունը անվանվում է «կյուրապաղատություն», քանի որ նրա իշխանավորները հաճախ էին կրում բյուզանդական «կյուրապաղատ» տիտղոսը:

Xդ. Տայքի հայկական բնակչության որոշ մասը, միանալով վրաց եկեղեցուն, հարել էր քաղկեդոնության, բայց չէր մոռացել մայրենի լեզուն:

Տայքի իշխանությունը ուժեղացավ Xդ. երկրորդ կեսին Դավիթ Կյուրապաղատի /966-1000/ օրոք: Այդ շրջանում Հայաստանի ու Անդրկովկասի ժողովուրդները դիմագրավում էին Ատրպատականի ամիրաների, առանձնապես Մրվան յանների ներխուժումներին: Այդ պաշտպանական կռիվներում Հայոց, Վիրա-աբխազաց թագավորությունները և Տայքի իշխանությունը սերտորեն համագործակցում էին /տես «Մումբի ճակատամարտ» հոդվածը/:

Դավիթ Կյուրապաղատի զորամասը բյուզանդական բանակի հետ, բյուզանդական զորավար Վարդ Փոկասի հրամանատարությամբ, մասնակցեց Վասիլ կայսեր դեմ /979/ Վարդ Սկլերոսի ապստամբության ճնշմանը՝ որպես փոխհատուցում ցկյանս /պայմանական տիրություն/ ստանալով Կարին բանակաթեմը և մի քանի այլ շրջաններ:

Նա միջնորդի և հաշտարարի դեր կատարեց Կարսի Մուշեղ և Սմբատ Բ շահնշահի միջադեպի ժամանակ:

Սակայն 980-ական թթ. Վասիլ կայսեր դեմ ծագած նոր ապստամբության ժամանակ, որոշակի քաղաքական դրդապատճառներով ցանկանալով օգնել գահի հավակնորդին, Դավթի զորքը միացավ ապստամբներին: Ապստամբությունը ճնշվեց, իսկ Դավիթը, պատժից խուսափելու համար, հպատակություն հայտնեց Վասիլին, հրաժարվեց պարգևական հողերից և, բացի այդ, ստիպված եղավ կայսրին կտակել Տայքի տիրույթները:

Դավիթը մահացավ 1000թ. և «Կտակի» համաձայն Տայքի իշխանության տարածքը միացվեց կայսրությանը:

Գրկ. Հայ ժողովրդի պատմություն, հ. 3, /ԳՍ հրատարակչություն/, էջ 105-113: *Մ. Ճանաշյան*, Դավիթ Կյուրապաղատ, Վնտ., 1972: *Ն. Ակինյան*, Զրուցք և իւսք առաջի թագաւորացն եւ իշխանացն զոր թարգմանեցին Դաւիթ Կուրապաղատին ի հայ լեզու ի տաճիկ լեզուէ», տես ՀԱ., 1958, N1-4: *К. Юзбашян*, Армянские государства эпохи Багратидов и Византия в IX-XIвв., М., 1988, с. 130-149. *В. Арутюнова-Фиданян*, Армяне-халкедониты на восточных границах Византийской империи, Ер., 1980.

ՀԱՎԵԼՎԱԾ

ԲԱԳՐԱՏՈՒՆՅԱՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻ ՊԱՐԲԵՐԱՑՈՒՄԸ

IX-XIդդ. Հայաստանի քաղաքական պատմությունը բաժանվում է մի քանի գլխավոր փուլերի, որոնք մասնատվում են առանձին ժամանակահատվածների.

I փուլ՝ 806-885թթ.

ա. 806-862՝ Աշոտ Մսակերի իշխանության տարիներից մինչև նրա թոռ Աշոտ Բագրատունու իշխանաց իշխանությունը ստանձնելու տարին: Այդ շրջանում առաջանում են երեք «տերությունները»: Տեղի են ունենում ապստամբություններ: 862թ. Հայաստանի և Արմինիայի տեղական կառավարումը հանձնվում է Աշոտ Բագրատունուն, Հայաստանը ձեռք է բերում ինքնավարություն:

բ. 862-885՝ ինքնավարության տարիներ, անկախությունը վերականգնելու պայքար: 869թ. հայ ֆեոդալները Աշոտ Բագրատունուն ճանաչում են թագավոր, իսկ 885թ.՝ խալիֆայությունը:

IIփուլ՝ 885-1045թթ. Բագրատունյաց Հայաստանի գլխավոր՝ Հայոց թագավորության շրջան:

ա. 885-914. Սկզբնական, հիմնականում խաղաղ շրջան /մինչև Ջկնավաճառի ճակատամարտը/: Դոմինիոնի կարգավիճակ:

բ. 914-922. Պայքար պետականության պահպանման համար:

Խալիֆայության ձգտումը վերականգնել Հայաստանի կախյալ վիճակը, Աշոտ Բ երկաթի կռիվները Ատրպատականի ամիրաների դեմ և նրա վճռական հաղթանակները: Աշոտ երկաթը խալիֆից ճանաչվում է «շահնշահ» /թագավորաց թագավոր/:

Հայոց թագավորության վերջնական լիիրավ սուվերենիտետը /անկախ ինքնիշխանությունը/:

Պետական կառուցվածքը՝ ունիա, «Հայոց տուն»:

գ. 922-961. «Հայոց տան» երկրորդ շրջան:

Խաղաղ շրջան, Բագրատունիների և Արծրունիների բշնամության վերացում և նրանց համագործակցության վերականգնում: Կարսը Հայաստանի մայրաքաղաք /929-953/:

Այս շրջանի վերջում կազմալուծվում է ունիան.

դ. 961-1045. Անիական շրջան՝ Բագրատունիները Աշոտ Գ-ի ջանքերով նորից համախմբում են հայկական ֆեոդալական կազմավորումները՝ թագավորություններն ու իշխանությունները մեկ պետական կառույցի՝ դաշնապետության մեջ, ձևավորվում է «ամենայն տունն Հայոցը»:

Աշոտ Գ-ն իրագործում է վարչական համակարգի լայնածավալ բարեկարգություններ, հիմնվում է պետության մշտական մայրաքաղաքը՝ Անին:

Բագրատունյաց Հայաստանի ամենահզոր շրջան /մինչև 1020թ./:

ե. 1020-1041. երկիշխանության շրջան՝ Հովհաննես-Սմբատի թագավորությունը Շիրակ-Այրարատում, իսկ Աշոտ Դ-ի՝ «դրուց աշխարհում»: Հովհաննեսի «կտակը» հօգուտ կայսրության:

զ. 1042-1045. Բագրատունյաց թագավորության վերջին շրջան, Գագիկ Բ-ի գահակալում, երկու բաժինների միավորում:

Բյուզանդիան պահանջում է հանձնել Բագրատունյաց թագավորությունը, հերոսական պայքար պետականությունը փրկելու համար: 1045թ. Հովհաննես-Սմբատի բաժնի զավթումը կայսրության կողմից և Անիի անկումը:

III փուլ. 1045-XIդ. վերջ՝ Հայաստանի պետականությունը Անիի անկումից հետո.

ա. «Հայոց տունը» 1045-1065թթ. Կարսի Բագրատունիների գլխավորությամբ:

բ. 1065-1113. Կարսի զավթումը, Կյուրիկյանների «տերությունը» և նրա անկումը 1113թ.: Մածնաբերդի, Տավուշի և Նոր Բերդի իշխանությունները Տավուշ-Գարդմանում: Մածնաբերդում մինչև XIIIդ. կեսերը:

ՎԵՐՋԱԲԱՆ

Բագրատունիների երկհազարամյա կենսագրությունը Հայաստանի, նրա ժողովրդի պատմության բաղադրամաս է կազմում: Նրանց մասնակցությունը արտաքին աշխարհի հետ հարաբերություններին և առանձնապես ներքին քաղաքական անցուդարձին, տոհմի գործունեության ոլորտ է ներգրավում նաև նրանց տիրույթների բնակչությանը: Պատերազմում, քաղաքական կողմնորոշման մեջ նախարարի հաջողությունը կամ անհաջողությունը ուղղակիորեն անդրադառնում է նրան ենթակա բնակչության վիճակի վրա: Այս պարզ ճշմարտությունը վերաբերում է բոլոր հայ նախարարական տներին: Նշանակում է որևէ նախարարության կամ առանձին խոշոր ֆեոդալի պատմությունը կամ ճակատագիրը սերտորեն շաղկապված է ժողովրդի ճակատագրի հետ: Տոհմի պատմության ուսումնասիրությունը նպաստում է ժողովրդի, նրա մի հատվածի պատմության ուսումնասիրմանը:

Հայաստանի պատմության փառավոր էջերը գրող արքայատոհմերից են Բագրատունիները: Նրանք Արծրունիների և Սյունիների հետ միասին կարողացան վերականգնել երկրի ռազմական ուժը Բագրևանդի 775թ. ողբերգական անհաջողությունից հետո, գլխավորել այդ ուժը, համախմբել հայ ֆեոդալական դասակարգը Բագրատունի ավագանու հետ՝ ուղղակի կամ միջնորդված կապերով: Նրանց ռազմական վարդապետությունն ու գործնական քայլերը նպատակադրված են եղել մի բախտորոշ նպատակի, որին հասան 885թ.: Անժխտելի է, որ նրանց այդ վարդապետությունը հավանություն էր գտնում Հայաստանի բնակչության բոլոր խավերի կողմից: Միայն դրա շնորհիվ նրանց հաջողվեց ավարտին հասցնել ծրագրված նպատակադրումը:

Անկախության շրջանում Բագրատունիները, գլխավորելով Հայաստանի պետականությունը, արեցին այն ամենը, ինչ հնարավոր էր անել դարաշրջանի սոցիալ-տնտեսական պայմաններում, երբ յուրաքանչյուր հողատեր իշխան տեր էր «կալվածք- պետությանը»: Ըստ արժանվույն պետք է գնահատել անկախացած երկիրը ունիայի, ապա դաշնապետության շրջանակներում միավորելու նրանց ջանքերը: Դա Բագրատունիների ամենագլխավոր հաջողությունն էր, առավել ևս, որ խալիֆայությունը, օգտագործելով «կալվածք-պետությունների» գոյությունը, ձգտում էր հակադրել նրանց Հայոց թագավորներին:

Հայոց թագավորության անկումը, անկախության կորուստը IX-XIդդ. կսերին հետևանք էր ոչ թե Բագրատունիների պետականության թուլության, ինչպես երբեմն գրվում է ուսումնասիրություններում, այլ բյուզանդական կայսրության ագրեսիայի և սելջուկ հորդաների համարյա միաժամանակյա ներխուժման:

Հայաստանը ընկավ երկկողմանի հարվածների տակ:

Բագրատունյաց պետական կազմավորումների անկումով և Բագրատունի

գահակալների հեռացումով նրանց տոհմը Հայաստանում իսպառ չվերացավ: Տոհմակիցների մի մասը այնուհանդերձ մնաց Հայաստանում, իսկ մյուս մասը անցան հարևան Վրաստան ու Պարսկաստան: Արիստակես Լաստիվերտցին, նկարագրելով Անիի անկումից հետո ստեղծված խառնակ վիճակը, գրում է. «Հեծելազորն անտերունչ շրջեալ ոմն ի Պարսս, ոմն ի Յոյնս, ոմն ի Վիրս: Սեպուհ գունդն ազատաց ելեալ ի հայրենեաց, անկեալ ի նոխութենէ...»:*

Հեծելազորը, սեպուհ գունդը՝ հայ ֆեոդալական միջին և ստորին դասերի ներկայացուցիչներն էին, որոնք զինվորական ծառայություն էին կատարում իրենց գերադասների /գահերեցների և թագավորների/ բանակում:

Նրանց թվում կային տարբեր իշխանական տներից ոչ միայն Բագրատունիների վասալներ, այլև Բագրատունիների տոհմակից միջին խավի ազատներ: Հայոց թագավորի վտարանդումից և նրա «տերութեան» փլուզումից հետո նրանք մնացել էին «անտերունչ»:

Պատմիչի հաղորդումից երևում է, որ նրանց մի մասը, չցանկանալով ծառայել բյուզանդացիներին, հեռացան Վրաստան ու Պարսկաստան, մյուսները գնացին «ի Յոյնս»», այսինքն Բյուզանդիա: Բայց, այնուհանդերձ, Բագրատունիների միջին և ստորին խավի՝ ազատների և սեպուհների մի մասը մնացել էր Հայաստանում և կապվել Բագրատունիների տան վերջին ներկայացուցիչների՝ Կյուրիկյանների հետ: Նրանցից շատերը XIIդ. երկրորդ կեսից կռվում էին Զաքարյանների բանակում և պետք է որ հիշատակված լինեն այդ ժամանակաշրջանի գրավոր աղբյուրներում /վիմագրության մեջ, հիշատակարաններում/: Խնդիրն այն է, որ կարողանանք գտնել նրանց, որովհետև Զաքարյանների շրջանում հին նախարարական-իշխանական տների ներկայացուցիչները հաճախ հանդես էին գալիս նոր ազգանուններով:

Ավելի պարզորոշ է Բագրատունիների հաջորդականության խնդիրը Կիլիկիայի հայկական թագավորության մեջ և իշխանական դասում: Մատենագրական աղբյուրները /Սամվել Անեցի և ուրիշ./ վկայում են, որ Կիլիկիայի իշխանության հիմնադիր Ռուբենը Գագիկ Բ-ի ազգականներից էր: Կիլիկիայում իշխող հայկական իշխանական տոհմը, որի ներկայացուցիչն էր նաև թագավորության հիմնադիր Լևոն Բ-ն, ինքն իրեն Ռուբինյան չի համարել: Այդ ազգանունը ստեղծել են նոր շրջանի պատմաբանները, նկատի ունենալով իշխանության հիմնադիր Ռուբենի անունը:

Բացի գրավոր հաղորդումներից Կիլիկիայի իշխանավորների կապը Բագրատունիների հետ հաստատվում է նաև նրանց արքունիքում հայկական գործակալությունների առկայությամբ: Նրանք տեղ են գտել նաև Լևոն Բ-ի, Լեվոն Գ-ի արքայական-պետական խորհրդանշանների, հատկապես զինանշանի

* Պատմութիւն Արիստակիսի Լաստիվերտցւոյ, աշխատասիրությամբ Կ.Ցուզբաշյանի, Եր., 1963, էջ 60:

վրա: Լևոն Բ-ի դրամի վրա պատկերված է առյուծ, որի մեջքին դրված է խաչ /նկ. 39 և 44/: Դա նույն Անիական շրջանի Բագրատունիների պետական զինանշանն է, որոշ չափով պարզեցված:

Կիլիկիայի պետական զինանշանը կրկնում է Բագրատունիների խորհրդանշանի պատկերը /տես շապկի առաջին էջը և լուսանկար 46 /:

Բագրատունիների ստեղծած քաղաքական համակարգը, ֆեոդալական հասարակության ինստիտուտները վերականգնվեցին Զաքարյանների իշխանության շրջանում, հարմարեցվելով ժամանակի պայմաններին:

Բագրատունյաց Հայաստանը, թեկուզ մասամբ, կորստից փրկեց հոգևոր և նյութական մշակույթի շատ արժեքներ:

Բագրատունիների գլխավորած Հայաստանի պետականությունը կապող կամուրջ եղավ նախորդ և հաջորդ դինաստիաների միջև, շատ բան վերցրեց Արշակունիների պետական կարգերից և յուրացնելով այն, փոխանցեց Զաքարյաններին:

Ի դեպ, Զաքարյաններից Իվանե Աբաբեկը և նրա քույր Վանենին վիմագրերում /Հաղարծնի վանք, Սանահնի կամուրջ/ իրենց սերած են համարում Բագրատունի «ազգից»:

ԲԱԳՐԱՏՈՒՆԻՆԵՐԻ ՏՈՀՄԱԾԱՌԸ

/ԱՌԱՆՑ ՏՈՀՄԱՁՑՈՒՂԵՐԻ/

ՀՆԱԳՈՒՅՆ ՇՐՋԱՆ
ՈՒՐԱՐՏՈՒ /VIIIդ. մ.թ.ա./

ԻՐԱՆԶՈՒ
|
ԱԶԱ
/
ԲԱԳԱԴԱՏԻ — ՈՒԼԼՈՒՍՈՒՆՈՒ
/716մ.թ.ա./

ԱՆՏԻԿ ՇՐՋԱՆ

ԱԽՇԱՀՐՈՄՐՏ /Արտաշես Ա-ի օրոք/
|
ՆԻԿԵՓՈՐ, թագադիր ասպետ,
ճուլց ՍՄԲԱՏ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ
/Արտաշես Ա-ի դայակ/

Ըստ Մովսես Խորենացու

ԱՍՈՒԴ, ասպետ
/Տիգրան Բ-ի օրոք/
|
.....

ԲԱԳԱՐԱՏ,
ՇԱՄԲԱՏ-ԲԱԳԱՐԱՏ
/Բագարատ Փառազյան,
Տրդատ Ա-ի օրոք/
|
.....

ԵՆԱՆՈՍ, ասպետ —— ՍԵՆԵՔԻՆ
մ.թ.Ի դ. | /ենաենոսի եղբայր/
ԱԶԱՐԻԱ ՍԱՓԱՏԻԱ

ՍԱՐԻԱ,
/ազգական ենաենոսի/

ՏՈՒԲԻԱ, մ.թ.Ի դ.
|
.....

Ըստ Մար-Աբաս Կատինացյի /Անանուն/

ԱՐԱՄԱՆԵԱԿ
|
ՈՐԴԻՆԵՐ
|
ԶԱՐԵՀ
|
ԱՐՄՈԳ
|
ՍԱՐԱՆԳ
|
ՇԱՎԱ(Ր)Շ
|
ՓԱՐՆԱՎԱԶ
ԲԱԳԱՄ — ԲԱԳԱՐԱՏ
|
ԲՅՈՒՐԱՏ
|
ԱՍՊԱՏ
/ = Անգեղ տուն/

ԲՅՈՒՐԱՏ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ
/Սաձատրուկ Բ թագավորի օրոք,
88-109/
|
ՍԱՆՈՏ, Բյուրատի քույր
/Խորեն Արծրունու կին/
|
ՍՄԲԱՏ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ
/Բյուրատի որդի,109թ./
|
ՍՄԲԱՏԱՆՈՒՇ / դուստր/ — ՍՄԲԱՏՈՒՀԻ / դուստր/
|
ՏՐԴԱՏ

ՄԻՋՆԱԴԱՐ

IVդար

ՍՄԲԱՏ, ասպետ /ուղեկցել է
Գրիգոր Լուսավորչին Կեսարիա, 301թ./

ԲԱԳԱՐԱՏ, ասպետ
/Խոսրով Կոտակ թագավորի օրոք, 335թ./

ԴԱՎԻԹ, ասպետ
/ուղեկցել է Ներսես Եպիսկոպոսին Կեսարիա, 353թ./

ՍՄԲԱՏ, ասպետ
/Պապ թագավորի օրոք, 371թ./

ՍԱՀԱԿ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ,սպարապետ
/Խոսրով Գ-ի օրոք, 387թ./

ԱՍՊԵՏ /աճունը աճիայտ, Վաղարշակ թագավորի
/Պապ թագավորի որդու/ փեսա, Սպերի իշխան,
380-ական թթ./

V դար

ՏԻՐՈՑ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ
/450-ական թթ./

ՍԱՀԱԿ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ, մարզպան
/Մ.Խորենացու մեկենաս, զոհվեց 482թ./

ՍՄԲԱՏ, ասպետ

VI դար


ՍՊԱՆԴԻԱՏ, ասպետ /† 506-507թթ./


ԱՇՈՏ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ
|
ՊԱՊ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ
/594-595/


ՍՊԵՐԻ ԲԱԳՐԱՏՈՒՆԻՆԵՐ /ԱՍՊԵՏՅԱՆՆԵՐ/
/ճիշատակում է Պրոկոպիոսը/

VII դար

ՄԱՆՎԵԼ
|
ՍՄԲԱՏ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ
/Մորիկ կայսեր օրոք/


ՔՋԻԿ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ
ՍՄԲԱՏ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ, ԹՈՍՐՈՎ ՇՈՒՄ /616-617/
ԳԻԳ
ՎՐԹԱՆԵՍ ՔԵՐԹՈՂ
ՎԱՐԱԶՏԻՐՈՑ I, մարզպան /628-633թթ./
ՎԱՐԱԶ ՍԱՀԱԿ
ՋԱՎԻՏՑԱՆ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ, ասպետ /† 646/
ՍՄԲԱՏ , Հայոց իշխան
ՍՄԲԱՏ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ, Կյուրապաղատ, ասպետ /† 654/
ՎԱՐԱԶՏԻՐՈՑ II /զոհվեց միջև 698թ./
ԱՇՈՏ ՊԱՏՐԻԿ, Հայոց իշխան /686-688/
ՍՄԲԱՏ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ, Հայոց իշխան /692-703, 705-726/
ՍԵԲԵՈՍ, պատմագիր
VIII դար
ՎԱՍԱԿ
ԲԱԳԱՐԱՏ
ԱՇՈՏ ԿՈՒՅՐ, Հայոց իշխան /732-750, † 761/
ՍԱՀԱԿ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ, Հայոց իշխան /753-770/
ՍԱՀԱԿ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ /774-775թթ. ապստամբության մասնակից, զոհվ.775թ./
ՍՄԲԱՏ, սպարապետ
ՎԱՍԱԿ /№33/ /775թ. անցավ Կղարջք/
ԱՇՈՏ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ, Հայոց իշխան/775-780/
/շարունակությունը տես հաջորդ էջում/
ԱՏՐՆԵՐՍԵՀ
ԱՇՈՏ ԿՅՈՒՐԱՊԱՂԱՏ
.....


I X դար - X դարի սկիզբ
/ՍՄԲԱՏ սպարապետ/
ԱՇՈՏ ՄՍԱԿԵՐ Հայոց իշխան/806-826/
ՇԱՊՈՒՀ, սպարապետ
ԱՇՈՏ /Սպերի իշխան/
ՍՄԲԱՏ սպարապետ /826-855/
ԲԱԳԱՐԱՏ իշխանաց իշխան /826-851/
ՍԱՀԱԿ Տարոնի իշխան
ԴԱՎԻԹ
ՀՌԻՓՍԻՄԵ /Համզե Արծրունու կինը/
ԱԲԱՍ
ՇԱՊՈՒՀ
ԱՇՈՏ իշխանաց իշխան, թագավոր /885-890/
ՄՈՒՇԵՂ
ՍՄԲԱՏ
ԹՈՐՆԻԿ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ
ՍՄԲԱՏ Ա. Հայոց թագավոր /890-914/
ՇԱՊՈՒՀ սպարապետ
ԴԱՎԻԹ իշխանաց իշխան /Xդ. սկիզբ/
ՍԱՀԱԿ
ՍՈՓԻ
ՄԱՐԻԱՄ
ՍՄԲԱՏ
ԱՇՈՏ Շապուհյան սպարապետ
ԴՈՒՍՏՐ
ԴՈՒՍՏՐ
ԱՇՈՏ Բ Հայոց թագավոր, շահնշահ
ԱԲԱՍ Հայոց թագավոր
ՄՈՒՇԵՂ /զոհվ. 910/
ԴՈՒՍՏՐ
/շարունակությունը տես հաջորդ էջում/



ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԱՀ - «Ազգագրական Հանդես», Թիֆլիս
ՀԱ - «Հանդես Ամսօրեայ», Վիեննա
ՊԲՀ - «Պատմա-բանասիրական հանդես», Երևան
ՊՊԹ - Պատմության պետական թանգարան
Վնտ - Վենետիկ
Վնն - Վիեննա
ԲԵՀ - «Բաներբ Երևանի Համալսարանի»
ЖМНП - Журнал Министерства Народного Просвещения, Санкт-Петербург

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԱԲԱՆ 5

ԲԱԺԻՆ I Անճանաւուններ 7
ա. Ուրարտական շրջան 9
բ. Անտիկ շրջան և միջնադար 10
գ. Բագրատունի տոհմանշուղեր 43

ԲԱԺԻՆ II Բագրատունիների ծագումը 55

ԲԱԺԻՆ III Բագրատունիները մինչև IXդ 66
ա. Բագրատունի տոհմի պատմական ուղին մինչև IXդ. վերջը 66
բ. Տոհմական տիրույթներ 69

ԲԱԺԻՆ IV Զարգացած ֆեոդալիզմի դարաշրջան 80
ա. Նախարարական համակարգի կազմալուծում 80
բ. Ժառանգական հողատիրություն 81
գ. Վասալիտետ 82
դ. Քաղաքներ 84

ԲԱԺԻՆ V Հայաստանի պետականությունը Բագրատունիների տիրապետության ժամանակ 90
ա. Պետական կառուցվածքը 90
բ. Կառավարման համակարգը 92
գ. Հայ պետականության միջազգային ճանաչումը 95
դ. Բագրատունիների արտաքին և ներքին քաղաքականության դոկտրինան 96
ե. Անի 98
զ. Կարսի թագավորություն 102
է. Կյուրիկյան կամ Լոռվա թագավորություն 103
ը. Հայոց տունը 1045թ. հետո 104
թ. Բագրատունյաց թագավորության անկումը միջնադարյան իրավա-պետական դոկտրինայի տեսանկյունից 105
ժ. Նոր Պահլավուններ 107

ԲԱԺԻՆ VI Բագրատունիների կառույցներ և զինանշաններ 110
ա. Ամրոցներ և վանքեր 110
բ. Զինանշաններ 113

ԲԱԺԻՆ VII Բագրատունյաց թագավորության հարևան իշխանությունները 116

ՀԱՎԵԼՎԱԾ Բագրատունյաց Հայաստանի ժամանակաշրջանի պարբերացումը 120

ՎԵՐՋԱԲԱՆ 122

Ռաֆայել Իվանի Մաթևոսյան
ԲԱԳՐԱՏՈՒՆԻՆԵՐ
Պատմա-տոհմաբանական հանրագիտարան

Հրատ. խմբագիր՝ Է. Սեդրակյան
Նկարիչներ՝ Լ. Առաքելյան, Վ. Կաթրճյան
Տեխ. խմբագիր՝ Վլ. Խաչատրյան
Համակարգ. շարվածք՝ Ս. Խաչատրյան

Չափսը՝ 60-84$^{1}/_{16}$, տառատեսակ՝ Արամյան, տպաքանակ՝ 800:

"Անահիտ" հրատարակչություն

"Հակոբ Մեղապարտ տպագրատուն"

Հեղինակը իր խորին շնորհակալությունն է
հայտնում հովանավոր
ԱՄՆ-ի Արեւելյան շրջանի եւ Կանադայի
Կիլիկյան Թեմի Առաջնորդ
Բարձրաշնորհ Տ. Մեսրոպ Արք. Աշճյանին
եւ մեկենասներ
տեր եւ տիկին Քարլ եւ Էմմա Սողոյաններին
սույն հատորի լուսընձայման
հնարավորության համար:

Ընտրված